



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



hkn

✓ 1640



1999



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Յ Ո Յ

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ա Շ Ի Ա Տ Ա Ս Ի Բ Ե Յ

Ստեփան Պաշաստեան

Հ Ա Տ ՈՐ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Բ Ա Ն Ա Ի ՈՐ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Տպագրութիւն Ներսիսեան Ազգային  
Հոգևոր Դպրոցի.

Թ Ի Յ Լ Ի Զ.

Ի ՏՊԱՐԱՆԻ Հ. ԷՆՇԻԱՃԵԱՆՅ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ:

1865



№ 210

С. ПЕТЕРБУРГЪ

№ 1112

С. ПЕТЕРБУРГЪ

№ 1112

015.000

Издательство

**ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ**

15-го Августа 1865 года Г. ТИФЛИСЪ.


Издательство

Издательство

Издательство

41640-60

Зр 1646







Բ Ա Ն Ա Ի Ո Ր  
Գ Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

100-110

110



110-111

110-111



## Ա.

Գրականական պատմութեան գիտութիւնը  
նոր չէ: Արդէն յոյն և հռոմայեցի մասնա-  
գիրներէց մի քանիսը, իրանց գրուածներումը,  
քիչ թէ շատ որոշ տեղեկութիւններ են տալի  
մեզ այս երկու ազգի գրականական գործունէու-  
թեան վրայ: Սակայն գրականութեան պատմու-  
թիւնը միայն այս վերջին ժամանակներումը ստա-  
ցաւ իր բուն նշանակութիւնը, երբ նոր — ռոման-  
տիկական դպրոցի հիմնադիրները Քերմանիայում՝  
Ա.դ. Ա.ելհէլմ և Ֆրիդրիխ Շէգէլ եղբարքը ցոյց  
տուին որ գրականական գիտութիւնը բանալի է ա-  
մենայն տեսակ պատմաբանական գիտութեան:  
Եւ ահա այնուհետեւ Քերմանիայում, Ֆրանսիա-  
յում, Անգլիայում և ուրիշ լուսաւորեալ ազ-  
գերում դուրս եկան բազմաթիւ գրուածներ թէ  
մասնաւոր և թէ ընդհանուր ազգերի գրակա-  
նութեան վերաբերեալ, որոնց մէջ պատուաւոր  
տեղ պիտի բռնէին անշուշտ Յոյներն ու հռո-  
մայեցիները իրանց փառաւոր կեանքովը: Բայց

գրականական գիտութեան հորիզոնը քանի զնաց ընդարձակուեցաւ, գիտնականները չքաւականացան միայն այս երկու ազգերի հոգևոր գործունէութեան պատկերը նկարագրելով. նրանք շուտով սկսեցին ուշադրութիւն դարձնել աշխարհիս հնագոյն ժամանակների վրայ: Մարդկային ազգի որորոցը—Սրբեկէքը կամաց կամաց սլարզուեցաւ. Եգիպտացոց, Հնդկաց, Ճենաց, Եբրայեցոց, Արաբացոց, Պարսից և ուրիշ ազգերի գրականութիւնները պատմական և բանասիրական քննութիւնների օգնութիւնով մշակուեցան, և ամէն էլ իրանց արժանաւոր տեղը ստացան ընդհանուր գրականութեան պատմութեան մէջ:

Հայոց ազգն իր պատկառելի հնութիւնովը չէր կարող ազատ մնալ Եւրոպական ուսումնականների նկատողութիւնից: Հայկական լեզուի մշակութիւնը մեծ ասպարէզ բաց արաւ բանասէրի, պատմաբանի, հնագէտի առաջին, խոսպացի, Ֆրանսիացի ու գերմանացի ուսումնականների աշխատութիւններով մեր պատմութեան, գրականութեան և առհասարակ մեր հին կեանքի վրայից մթութեան քողը վեր առնուեցաւ: Այս յառաջադիմութեան ոչ սակաւ օգնեցին և Մխիթարեանք. Հայկազեան ընդարձակ բառգիրքը Լոյս հանելով, ցոյց տուին մեր լեզուի ճոխութիւնն

ու հարատու թիւնը. մեր նշանաւոր մատենագիր-  
ների մտաւոր արդիւնքները հրատարակելով, ցոյց  
տուին թէ մեր գրականութիւնը ինչ թանկագին  
տեղեկութիւններ է պարունակում, ոչ միայն մեր,  
այլ և Յունաց ու Հռոմայեցոց, այլ և ասիական  
ազգերի կեանքի վրայ, որոնց մասին շատ քիչ  
բան է աւանդել մեզ հնութիւնը: Այսպիսի նշա-  
նակութիւն տաճարաց յետոյ՝ Հայոց գրականու-  
թեան ներկայացուցիչներից մի քանիսը թարգ-  
մանուեցան եւրոպական լեզուներով, որոնց առի-  
թով շատ ուսումնական յօդուածներ հրատարա-  
կուեցան, այլ և այլ խնդիրներ ու վէճեր բա-  
ցուեցան. բայց այս խնդիրների մեծ մասը չու-  
ծուած մնացին, որովհետեւ, ցաւալի է ասել,  
Հայոց ուսումնականութիւնը անտարբեր զանուե-  
ցաւ ու աններելի սառնասրտութիւնով չկամեցաւ  
այն խնդիրների մէջ մտնել, որով թերեւս կա-  
րելի լինէր շատ բանում՝ եւրոպացոց տարակոյսը  
փարատել:

Ներկայ աշխատութեանս նպատակն է ցոյց  
տալ Հայոց գրականութեան, ուրեմն և կեանքի  
ծագումը, աճիլն ու զարգանալը և զանազան փո-  
փոխութիւնների տակ ընկնելը սկզբից մինչև մեր  
օրերը: Բայց կարելի է այժմ մեզանում գրա-  
կանութեան պատմութիւն գրել, և եթէ կարե-

լի է, մինչև որ աստիճան այս պատմութիւնը  
կարող է իր նպատակին հասնել : Այս հարցմուն-  
քի պատասխանից յայտնի կը լինի և մեր ներ-  
կայ աշխատութեան արժանաւորութիւնը : Բայց  
այս հարցմունքին պատասխանելու համար, պէտք  
է առաջ տեսնենք թէ ինչ նշանակութիւն է  
տալի գրականութեան այժմեան գիտնական աշ-  
խարհը, և թէ մեր գիտնականները մինչև այժմ  
ինչ արդիւնք են ցոյց տուել գիտութեան այս  
ճիւղի մէջ :

Գրականութիւնը (1) բաղկանում է այն մը-  
տաւոր արդիւնքների բովանդակութիւնից, որոնց  
մէջ նկարագրվում է ազգային կեանքն ու բնա-  
ւորութիւնը : Եւ որովհետև ազգային կեանքը  
աւելի բանաստեղծութեան ու պերճախօսութեան  
մէջ է երևում, այս պատճառով բանաստեղծու-  
թեան և պերճախօսութեան պատմութիւնը գրա-  
խաւոր տեղն են բռնում գրականութեան պատ-

---

(1) Գր-ի-ն-ի-ն բառը Եւրոպացոյ , , litterature , , բառի  
թարգմանութիւնն է և յունա-հռոմէական լեզուներից է առ-  
նում իր ծագումը (λίω linea, litera), Ի դար կը լինէր հի-  
նների մէջ պարտել այս բառի բուն նշանակութիւնը : Հռոմա-  
յեցոյ մէջ , , literatura , , բացատրում էր Եունացի γραμμα-  
ταչի բառը և , , literator , , էր ասելում նրանց մէջ այն անձը,  
որ ոչ միայն քերականութիւնով էր պարտպում, այլ և բա-

մութեան մէջ : Միւս բոլոր գրուածները , ջնա-  
յելով որ մի ուսումնական կամ գործնական նը-  
պատակի են ծառայում , կարող են նոյնպէս տե-  
ղիք ունենալ գրականութեան պատմութեան մէջ ,  
եթէ միայն նոր հայեցումաճք ու հասկացողու-  
թիւն են մտցրել կեանքի մէջ , ուրեմն և օգ-  
նել են ժողովրդի առաջուայ կարծիքները փո-  
խելու և վերանորոգելու , և կամ ընդհակառակն՝  
այնպիսի գրուածներ , որոնք աշխատել են պահ-  
պանել հնութիւնը , պատերազմելով նոր կար-  
ծիքների դէմ :

Գրականութիւնը ձիգ կապուած ժողովրդի  
արտաքին ու ներքին կեանքի հետ : Երկրի բնու-  
թիւնը , ազգայնութեան հոգին , կրօնը , լուսա-  
ւորութեան աստիճանը , մտաւոր ու բարոյական

---

նաստեղծական գրուածները մեկնում ու պարզում էր : Նոյն  
նշանակութիւնն ունէին մեզանում հրեւեարիչը և հրեւեար-  
ջին գարեբումը «ars literatoria» ասելով հասկանում էին  
քերականութիւնը , որովհետեւ գրականական ուսմունքը նախ-  
ապատմութեան մէջ էր դարձնակալում : Իսկ բուն նշանա-  
կութիւնը գրականութեան վրայ , միայն այս վերջին ժամա-  
հակներումը ընդունուեցաւ և միևնոյն ժամանակ որոշուեցաւ  
գրականական պատմութեան նշանակութիւնը : Մեր մէջ ամանք  
տակի լուս են համարում գործ ածել հրեւեարիչի-ն բառը ,  
ընայելով որ մասունադրութիւն հնումը ասելի նշանակում էր  
հրեւեարիչի կամ հրեւեարիչի : Այս մտքով և ասիւմ մեզանում եր-  
բեմն «Մասունադրութիւն խորհնացուցչ և այլն :

վիճակը, մէկ [սօսքով] ժողովրդական կեանքի բո-  
լոր տարրերը տեղ են դանում գրականական յի-  
շատակարանների մէջ: Բիւֆոն ասել էր ժամա-  
նակով. «Ո՞՞ր նոյն ինքը մարտն է» (le style c'est  
l'homme). նոյն [սօսքը] կարելի է գրականութեան  
վերայ յարմարացնել, ասելով [թէ՛] «Գրականու-  
թիւնը է ազգ», վասն զի [ինչպէս որ ո՞՞՞ր մէջ  
երևում է մատենագրի անձնաւորութիւնը, այս-  
պէս էլ գրականութեան մէջ երևում է ազգի  
անձնաւորութիւնը, այսինքն ազգայնութիւնը:

Մրանից պարզ երևում է, որ գրականութեան  
պատմութիւնը պէտք է ներկայացնէ մեզ ազգա-  
յին կեանքի բոլոր տարրերը. բայց որովհետև  
մեզանում այդ կեանքի խնդիրներից շատը քննուած  
չեն, շատն էլ [թէ՛] պէտք քննուել, բայց տակաւին  
անլուծանելի են մնացել, [ինչպէս որ վերևը յի-  
շեցինք, ուրեմն և ներկայ պատմաբանին անհր-  
նարին է ժողովրդական կեանքի ամբողջ պատկերը  
ներկայացնել սկզբից մինչև մեր օրերը: Այլ և  
այլ դարերում ծագկած մատենագիրների անուն-  
ները ժամանակագրական կարգով յիշելը, նրանց  
կեանքի վերաբերեալ աւելի կամ պակաս տեղե-  
կութիւններ տալը, մինչև անգամ նրանց գրուած-  
ների համառօտ բովանդակութիւնը պատմելը, —  
այսպիսի գրուածքը, համարձակում ենք ասել,



չէ կարող պատմութիւն կազմել, այլ միայն մի պատմական ցանկ, որից անհնարին է ազգային կեանքին տեղեկանալ:

Այսպիսի նշանակութիւն ունին մեզ համար Հ. Սուքիաս Սոմալեան Մխիթարեան վարդապետի «Շրջան Հայաստանի գրականական պատմութեան» ասած աշխատութիւնը (1), Կ. Ֆ. Նէյման հայագէտ գերմանացու «Քննութիւն Հայոց գրականական պատմութեան վերայ» անունով գիրքը (2), և Պ. Ս. Նազարեանցի երկու աշխատութիւնները. «Հարեանցի հայեցումաձք հայկական գրականութեան պատմութեան վրայ մինչև ժԳ դարու վերջը և «Ծրագիր պատմութեան գրականութեան Հայոց նոր ժամանակներումը» (3): Ընթերցողը այս գրուածներէն կարող

---

(1) Quadro della Storia letteraria di Armenia, estesa da Mons. Placido Sukias Somal, Arcivescovo di Sionia et Abate Generale della Congregazione dei Monaci armeni Mechitaristi di St. Lazzaro. Venezia, 1829.

(2) Versuch einer Geschichte der armenischen Literatur, nach den Werken der Mechitaristen frei bearbeitet, von Carl Friedrich Neumann. Leipzig, 1836.

(3) Беглый взгляд на Исторію гайканской лив.

է արդարեւ տեսնել թէ այս կամ ժամանակում  
ինչ մատենագիրներ են դուրս եկել մեզանում, ինչ  
գրուածներ են թողել նրանք. այդ գրուածներից  
որոնք և ում ձեռքով են թարգմանուել, որոնք  
տպուել, կամ տակաւին ձեռագիր են մնացել,  
և այլն, բայց աղգային կեանքի պատմութեան չէ կարող  
տեղեկանալ, և այս բանը հէնց կարծես վեր-  
բերի գրուածների հեղինակները խոստովանում են,  
որովհետեւ ոչ մինը իր աշխատութիւնը պատմու-  
թիւն չէ անուանում: Բայց ինչ կուզէ լինի,  
մենք աւելի իրաւունք ունէինք Հ. Մամալեանի  
«Նըջանից» շատ բան սպասելու, որովհետեւ Մը-  
խիթարեան վարդապետը իր առաջին հարուստ  
աղբիւրներ ունէր, որոնցից կարող էր շատ բան  
քաղել, այն ինչ Պ. Պ. Նէյմանն ու Նաղարեանցը  
ոչ ինչ, կամ գէթ շատ քիչ միջոց ունէին և  
պէտք է բաւականաին զլսաւորապէս Հ. Մամա-  
լեանի աշխատանքովը, որ իր կողմից գոհ է եղել  
նոյնպէս Հ. Միքայէլ Չամչեանի պատմութեան  
մէջ դտած տեղեկութիւններով: Մեր ասածը  
նրանով է հաստատում, որ գերմանացի ուսումնա-

---

тературы до конца XIII столѣтія. Казань, 1844  
и Обзорніе исторіи гайканской письменности въ  
новѣйшія времена. Казань, 1846.

կանը համարեա թէ անսխտիտիս կրկնում է «Շըր-  
ջանի» խօսքերը մի քանի յաւելուածներով, միւս  
կողմից, Պ. Նազարեանցը կրկնում է «Քննութեան»  
խօսքերը մի քանի փոփոխութիւններով: Այս ճրջ-  
մարտութիւնը մեզ մի ուրիշ հետեանքի է տա-  
նում, այսինքն թէ՛ Պ. Պ. Նէյմանի ու Նազա-  
րեանցի աշխատութիւնները մի և նոյն նախատիպ  
գաղափարի օրինակներ լինելով, ոչ ինչ քայլ ա-  
նել չառնին Հայոց գրականական պատմութեանը,  
այն զանազանութիւնով միայն, որ ինչ որ Մխի-  
թարեան Միաբանութեան արքան խտայերէն գը-  
րել է խտալական հասարակութեան համար, Պ.  
Նէյմանը գերմաներէնի փոխելով գերմանական  
հասարակութեան սեպհականութիւն է դարձրել,  
և Պ. Նազարեանցը ռուսերէն գրելով Ռուսաց  
հասարակութեան հասկանալի է արել:


Վերևումը ասացինք թէ՛ գրականութիւնը  
ներկայացնում է մեզ ազգային կեանքի պատկերը,  
որ պատմաբանօրէն բացատրվում է ազգի մտքի ու  
երևակայութեան արդիւքների մեջ: Պատմութիւն  
կարող է ունենալ միայն այն բանը, որ աստիճանա-  
բար զարգանում է, իբրև մի սերմ, որից կազմվում  
է արմատը, արմատից առաջ է դալի ծառը իր ճիւ-  
ղերով ու տերեւներով, իր ծաղկներով ու տերեւներով:  
Եւ յիրաւի, իւրաքանչիւր ազգ՝ թէ և միջինաւոր

անհասանելից է բաղկանում, այսու ամենայնիւ նա  
մի կենդանի անձնաւորութիւն, մի հոգեւոր կազ-  
մուածք է, որ գոյանալու համար՝ հարկ է որ  
մարդու բոլոր հասակներէց անցկենայ : Առաջ ու  
առաջ նա լինում է մի սերմ, որից գոյանում  
է երեխան . երեխայական դրութիւնից կամաց  
կամաց ու աստիճանաբար նա անց է կենում պա-  
տանակութեան տարիքին, պատանակութիւնից էլ  
երիտասարդական ծաղիկ հասակին, որ ժամանակ  
նա ճանաչում է ինքն իրան, զգում է թէ ա-  
պրում է, կեանք ունի : Այսպէս էլ ճշմարիտ և  
բուն գրականութիւնը այն է, որ իր ազգի հետ  
միասին բոլոր այս հասակներէց անց է կենում,  
ծնում է նրա հետ և նրա սրտումը, յետոյ աստի-  
ճանաբար ծլում, ծաղկում է և վերջապէս գեղե-  
ցիկ պտուղներ է տալի : Այսպիսի բնական զարգաց-  
ման օրինակ տալիս է մեզ Յունաստանը, ուր նախնի  
սրբազան երգերը մի անսպառելի աղբիւր տուին  
գրամատիկական բանաստեղծութեան, և ուր կեան-  
քն ու գրականութիւնը սերտ կապով էին կա-  
պուած : Հելլենական փառաւոր կեանքի մէջ,  
երգիպտականին հակառակ, ամէն բան հասարա-  
կաց էր, ամէն բան հրատարակով էր կատար-  
վում : Ազգային կեանքի դիւցադնական ժամանակ-  
ներումը՝ երբոր դեռ գրի գործածութիւնը չէր

մտել Յունաց մէջ, ժողովրդական հագներգու երգիչները (rhapsodes) քնարները ձեռքերը՝ քաղաքէ քաղաք ու տնէ տուն ման գալով, խնջոյքների ու տօնախմբութիւնների ժամանակ զուարճացնում էին թագաւորներին ու ժողովրդներին հնագոյն կեանքի քաղցր յիշատակներով: Նոյն ինքը Հոմերոս և Հեսիոդէս բոլոր Յունաստանը ոտով անց կենալով երգում էին իրանց երգերը ժողովրդեան, մինը՝ Նդիական պատերազմի մէջ ընկած քաջերի դործողութիւնները և խմաստուն Ողիսեւսի գլխից անցած արկածները հնչեցնելով իր ներդաշնակ քնարի լարերի վրայ, միւսը՝ նահապետական կեանքի պարզ ու խաղաղ ժամանակները: Պատմական ասպարէզում ոտք կոխելուց յետոյ էլ Յունաց հասարակութեան մէջ բաժանում չընկաւ, ինչպէս որ պատահում է ուրիշ ազգերում, որովհետեւ հելլենական կրթութիւնն ու դաստիարակութիւնը իր առաջվայ հրապարակական ձևը պահպանեց: Այս պատճառով ժողովուրդը Յունաստանում, և մանաւանդ Աթէնքում, ոչ միայն մանակից էր լինում բանաստեղծի, պատմաբանի, ճարտասանի, փիլիսոփայի մտաւոր արդիւններին, այլ և իբրև անաչառ քննիչ ու դատաւոր, արժանաւորներին դափնեայ պսակով էր պարգարում և ծափահարութիւններով օգր

դնթացնում: Յունաստանի պատմութեան հայրը  
Երոզոտոս՝ Ողիմպիական խաղերի ժամանակ բո-  
լոր ժողովրդի առաջ կարդաց իր պատմութիւնը  
Պարսից արշաւանքների վրայ, իսկ երիտասարդ  
Թուկիասիդէսը, լսելով նրա խօսքերը, ուրախութեան  
արտասուքներ էր թափում, զգալով որ մէկ օր  
ինքը յաղթութեան մրցանակը պիտի տանի մի  
Լենոյն ասպարէզում: Հռչակաւոր դրամատիկա-  
կան բանաստեղծները Եսքիլէս, Սոփոկլէս, Եւրի-  
պիդէս, իրանց անմահ դրուածներով, ժողովրդեան  
գրաւում էին թատրոններում, որոնց դռները  
բաց էին ամէն աստիճանի ու կարգի մարդկե-  
րանց համար. մինչևանդամ նիւթական կարու-  
ղութիւն չունեցողները տէրութեան դանձարա-  
նից փող էին ստանում, որ տօնի օրերը թա-  
տրոնից յետ չմնան: Նոյն Սոփոկլէան էր որ ծե-  
րութեան հատակում իր ապերախտ որդկերան-  
ցից խելադարութեան մէջ ամբաստանուած լինե-  
լով՝ արդարացաւ ժողովրդի առաջ, իր Եդիպ  
ողբերդութեան մի քանի հատուածները կարդալով:  
Ամէն անգամ որ Պէրիկլէս ամբիոնի վրայ էր բար-  
ձրանում ժողովրդի առաջ բան խօսելու համար,  
աստուածներից խնդրում էր որ չլինի թէ մի ան-  
վայել կամ աւելորդ խօսք փախցնի բերանիցը:  
Սոկրատ իր կենդանի վարդապետութիւնը հա-

զորդում էր ժողովրդեան մարզարաններում, հը-  
 բապարակներում և փողոցներում. խուռն բազ-  
 թիւնով դիմում էին Աթենացիք ճեմարանի  
 պարտեզներում, բարձր խմաստութեան դասեր-  
 լսելու «աստուածախօս» Պլատոնի բերանից, ինչ-  
 պէս որ անուանում էին նրան Յոյները: Եւ ի՞նչ  
 զարմանք, սրանից յետոյ, որ միւսնոյն անձը Ա-  
 թէնքում կարող էր լինել և բանաստեղծ, և օրէ-  
 նրոջիւր, և պատերազմի մէջ զօրքերին առաջնոր-  
 դող, ինչպէս Սոլոնն էր, կամ Պերիկլէսի նման  
 երեւելի ճարտասան, հանձարեղ կառավարիչ ազ-  
 դի և քաջ զօրավար: Ի՞նչ զարմանք, որ Աթէն-  
 քի հասարակութեան մէջ ամբօխ ասած բանը  
 չկար, որ միայն իր նիւթա՛յան պիտոյքների վրայ  
 մտածում լինէր, որ միայն իր մարմնու պիտոյք-  
 ները լինէր կատարում և զուրկ լինէր ամէն տե-  
 սակ բարձր ու մաքուր գղացմունքներից. որով-  
 հետեւ յունական կրթութիւնը հասարակաց էր,  
 ընդհանուր էր, ազգային էր, և ոչ թէ մի քանի  
 ջոկովի ընտրեալ անձինքների սեպհականութիւն:  
 Ի՞նչ զարմանք, որ Յոյները ճանաչելով իրանց գե-  
 րազանցութիւնը ուրիշ ազգերի վրայ, միայն ի-  
 բանց էին համարում մարդիկ, իսկ ստարներին  
 բարբարոս էին անուանում, և չէին կամենում  
 մի և նոյն իրաւունքերը շնորհել նրանց, որոնց



No 210

հոր կամ մօր երակների մէջ մաքուր ու անխառն  
աթենական արիւն չէր խաղում :

Բայց Յունաստանը թերևս մէկ հատիկ երկիրն է , ուր մարդկութիւնը բնական ճանապարհով զարգացել և ուր գրականութիւնը , իբրև ամենաճիշդ հայելի այդ զարգացման , ժողովրդի հետ միասին առաջ է գնացել : Մի ուրիշ ազգոր Յունաց հետ հին կլասիկական , աշխարհը կազմում են , Հռոմայեցիքն են : Բայց Հռոմայեցոց գրականութիւնը ազգային կեանքից չէ բղխում , այլ մի տկար հետևողութիւն է յունական գրականութեան : Հռոմայ դիցաբանական պատմութեան և նրա գրականութեան մէջ ոչինչ կասրակցութիւն չկայ : Սյս պատճառով հռոմէական գրականութիւնը ազգային չէ , որովհետև առասպելական ժամանակների ժողովրդի աւանդութիւնների վրայ չէ հիմնուել , ինչպէս յունականը . սրա համար էլ ժողովուրդը Հռոմումը երբէք մասնակից չէ եղել գրականութեան և միայն հարստները ու մեծամեծները պարսպում էին նրանով , այն էլ պարսպ ժամերումը և աւելի զուարճութեան համար : Յունաց մէջ ընդհակառակն՝ գրականութիւնը , իբրև մի անհրաժեշտ պիտոյք հելլենական հոգու համար , ընդհանուր ժողովրդի մասն է եղել միշտ : Հռոմա-



յեցիք արուեստական ազդ չէին, ընդհակառակն՝  
նրանք աշխարհակալ ժողովուրդ էին. տիրապե-  
տութեան ցանկութիւնը նրանց մէջ միւս բոլոր  
ցանկութիւներին խղղեց: Հռոմայեցոց մէկ հա-  
տիկ նպատակն էր բոլոր աշխարքի վրայ իշխել, և  
երբ բոլոր ներքին ոյժերը այս տիեզերապետու-  
թեան իդէային իրագործուելուն էին դիմում,  
Հռոմայ հոգևոր գործունէութիւնը մի գործնա-  
կան ուղղութիւն պիտի ստանար: Այս ուղղու-  
թեան մէջ էր սրարունակվում ազգայնութեան  
այն սեպհական յատկութիւնը, որ իր կնիքը  
դրոշմեց հռոմէական լուսաւորութեան ու դրա-  
կանութեան վրայ: Արդ ի՞նչ բանի մէջ էր ե-  
րևում այս գործնական ուղղութիւնը: — Երբ  
տակաւին ոչ վերացական գիտութիւնները, ոչ  
արհեստները մտել էին Հռոմայ մէջ, մի գործ-  
նական գիտութիւն — իրաւագիտութիւնը ար-  
դէն ծաղկում էր Հռոմումը և ցոյց էր տալի  
Հռոմայեցոց բնական ուղղութիւնը: Իսկ երբ  
յունական գիտութիւնները սկսան մտնել Հռոմայ  
մէջ, փիլիսոփայական զանազան դրութիւններից  
ո՞րն էր որ աւելի դրաւեց Հռոմայեցոց միտքն  
ու սիրտը: — Մտոյիկեան վարդապետութիւնը,  
որովհետև սա աւելի յարմար էր կեանքի հետ:  
Գեղարուեստների մէջ ամենից աւելի ծաղկեցաւ

Հռոմումը ճարտարապետութիւնը, որովհետեւ այս  
արուեստը ամենից աւելի գործնական է և քա-  
ղաքական կեանքի զարգացման հետ միասին է  
զարգանում: Աերջապէս գրականութեան զանա-  
զան ճիւղերի մէջ Հռոմումը աւելի ճարտասա-  
նութիւնը ծաղկեցաւ, մանաւանդ պատմական և  
հրապարակախօսական տեսակները, որոնք երկուսն  
էլ պինդ կապուած էին կեանքի հետ, որովհե-  
տեւ պատմականը ներկայանցնում էր անցեալ  
կեանքը, իսկ հրապարակախօսականը ներգործում  
էր ներկայ կեանքի վրայ: Աերջապէս յունական  
գրականութիւնը ցոյց է տալիս մեզ, որ ճշմարիտ  
գրականութիւնը ազգի հասկացողութեան հետ  
միասին պիտի աճի, աստիճանաբար և բնական  
ճանապարհով պիտի զարգանայ. հռոմէականը  
բնդհակառակն՝ ցոյց է տալի, որ կարելի է մի  
օտար լուսաւորութիւն ու գրականութիւն վեր  
առնել, եթէ միայն փոխ առնող ազգը բաւա-  
կանին պատրաստուած է, որ կարողանայ օտարինը  
իրացնել ու սեպհականել:

Բայց ահա վերջապէս հին աշխարհը իր  
փառաւոր բնթացքը կատարելով՝ մահուան դու-  
ռն է հասնում. զառամեալ մարդկու թեան առա-  
ջին երկու ճանապարհ է բացվում— վերակենդանու-  
թիւն կամ մահ, որովհետեւ նրա կեանքի բո-

վանդակութիւնը նուազել, սպառել էր բոլորովին :  
Սակայն աշխարքի մի մտաւոյւած անկիւնում  
վաղուց արդէն հնչում էր աստուածային ձայնը,  
հեղութեամբ ու սիրով կանչելով. «Նկայք առ իս  
ամենայն աշխատեալք և բեռնաւորք և ես հան-  
դուցից զձեզ : Առէք զլուծն իմ, և ուսարուք  
յինէն. զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և դաջիք  
հանդիատ անձանց ձերոց. զի լուծն իմ քաղցր  
է և բեռն իմ փոքրոզի» : Եւ ահա հասաւ ժա-  
մանակը. . . ազգերը ճանաչեցին այն հովուի  
ձայնը, որ իր անձը դնում էր աշխարհների փրո-  
կութեան համար, և աշխարքը խաչելութեան  
դրօշակի հովանաւորութեան տակ մտաւ : Քրիս-  
տոնէութիւնը իր բարոյական վարդապետութեան  
վերամութիւնովն ու զօրութիւնովը հին աշխար-  
քը նուաճել էր. մարդկութեան համար մի նոր  
չրջան բացուեցաւ, մի ընդարձակ կրօնական շք-  
ջան : Աւետարանի հիմնական գաղափարը այն  
աստուածային սէրն է, որով Բանն Աստուած աշ-  
խարք գալով յանձն առաւ չարչարուել, խաչուել  
և վերջապէս արիւն թափել իր հօտի փրկու-  
թեան համար : Այս բարձր ու վսեմ գաղափարը, այս  
անսպարազրելի սէրը, իբրև մի անսպառելի սերմ, իր  
մէջ բովանդակում է բոլոր իր ապագայ ժամա-  
նակները ու երևոյթները, և մարդկային զարգաց-

ման անդատանը բեղմնաւորելով՝ աճեցրել է,  
աճեցնում է և յաւիտեան պիտի աճեցնէ բոլոր  
երկնային ծաղիկները ու պտուղները, որոնց վայել-  
ում է ու հետզհետէ պիտի վայելէ մարդկու-  
թիւնը: Արդարեւ քրիստոնէական կրօնը վերա-  
նորոգում աշխարհի առաջին այնպիսի հարուստ  
կեանք բաց արեց, որ յաւիտեան սպառելու չէ,  
ինչ որ այժմ կայ, ինչ բանով որ սրբաբնութ է  
այժմեան մարդկութիւնը, բոլորը Նոր — Ատակա-  
բանի յաւիտենական, անանց խօսքերի հետեւանք  
են: Միայն այս աստուածային զբքի մէջ կարե-  
լի է գտնել քրիստոնէայ ազգերի յաղթութեան  
գաղանի պատճառները հեթանոս ազգերի վրայ:  
Աւետարանից ծաղեցաւ յարգանք դէպ ՚ի մարդու  
անձնաւորութիւնը, մարդկերանց հաւասարութեան  
գաղափարից՝ Աստու դատարանի, առաջին  
իրաւունքների հաւասարութեան գաղափարից՝  
Աստու հայրական սիրոյ և զթութեան առա-  
ջին: Բայց մարդս իր մէջ այս արժանաւորու-  
թիւնը ճանաչելու համար՝ հարկ էր որ բնու-  
թիւնից հեռանար, որին մինչև այն ժամանակ  
բոլորովին գերի էր դառել. ինք իր վրայ աչք  
դարձնելու համար՝ մարդս պէտք էր, ասում եմ,  
բաժանուէր, հեռանար բնութիւնից, իբրև իր  
պմեկամեծ թշնամուց: Եւ ահա սրանից առաջ

Չայան կուտական կեանք, երկրային երջանկու  
թիւնից հրաժարում, միայնակեցութիւն. հին  
աշխարքի հեշտասէր զուարճութիւնների տեղ  
բռնեցին պահքը, աղօթքը ու ապաշխարանքը:  
Բայց այս տեղ պատահեցաւ այն, ինչ որ պատա-  
հում է միշտ, երբ մի նոր սկզբունք իր բոլոր  
զօրութիւնովը հին կարգերի դէմ է գնում: Քրիս-  
տոնէութիւնը, ասում է Ժան—Պօլ Ռիխտեր, բնա-  
ջինջ արաւ բոլոր հեշտասէր աշխարքը, իր ամէն  
վայելութիւններովը, մի բլրաձև գերեզմանի տակ  
թաղեց նրան, երկնային սանդուղքի պատուան-  
դան շինեց նրանից և նրա տեղը բարձրաձրեց մի  
հողևոր աշխարք, բոլոր ներկայ երկրաւոր կեան-  
քը զոհ բերուեցաւ ապագայ երկնային կեանքին:  
Այս պատճառով քրիստոնէութիւնը, սկզբնական  
ժամանակները, գեղարուեստների ու գիտութիւն-  
ների բոլորովին հակառակ ու թշնամի դանուե-  
ցաւ. ճնայելով որ Աւետարանի մէջ ոչինչ հա-  
կառակ բան չկայ ասած ոչ գիտութիւնների և  
ոչ գեղարուեստների դէմ. ընդհակառակն ինքը  
Փրկիչը իրան անուանեց որդի այն արքայազն  
Դաւթի, որ մի ևնոյն ժամանակ և երդիչ էր և  
մարդարէ: Մկեղեցու վարդապետները ու ճգնաւոր-  
ները, ինչպէս արևելեան նոյնպէս և արևմտեան  
քրիստոնեաների մէջ, մի անօրինակ նախանձայու-

զուժիւնով սկսան հալածել ու բնաջինջ անել  
հնութեան գեղարուեստների ու գիտութիւնների  
մնացորդները . ճարտարապետական փառաւոր շէն-  
քերը քարութանդեղան, երևելի անդրիապործ-  
ների արձանները կործանուեցան, թանկագին գը-  
րատուները այրուեցան, բանաստեղծական ու փի-  
լիսոփայական ամենագեղեցիկ պատուղները մեղան-  
չականութեան կնիքովը գրոշմեցան և իբրև մարդ-  
կային չար մտքի արդիւնքներ, եկեղեցու սուրբ  
Հարց բանադրանքի տակ ընկան : Հեթանոսական  
ուրախ ու զուարթ կեանքի աւերակների վրայ մի  
նոր վարդապետութիւն բարձրացաւ, որ խօսում  
էր մահուան ու ապագայ կեանքի վրայ : Բայց  
երբ Գանատիկոսութեան սատարիկ ժամանակները  
անցկացան, արևմտեան ազգերի մէջ նորից երևան  
ելաւ գեղարուեստների ու կրթութեան խնդիրը .  
իւրաքանչիւր մտածող մարդու հեշտ էր համո-  
զուել, թէ անհիմն է այն նոր լուսաւորութիւնը,  
որ հինը հերքում ու մերժում է բոլորովին զնա-  
յելով նոր մատենագիրների մէջ տիրապետած ներդ  
հասկացողութեանը, հարկ էր նոր շինութեան  
համար նոյն հեթանոսներից նիւթ վեր առնել,  
որոնց շատ ժամանակ չէ այնպէս սաստիկ ատում,  
արհամարհում էին : Եւ ահա հնութեան մնա-  
ցորդները նորից ժողովուեցան . փիլիսոփայական,

քանոստեղծական, պատմարանական, աշխարհա-  
գրական գրուածները մեծամեծ քննութիւնների  
առիթ տուին. ճարտարապետութեան աւերակ-  
ները, իբրև թանկագին մնացորդներ, նորոգուե-  
ցան. մէկ խօսքով գրականական և գեղարուես-  
տական նշանուոր արդիւնքները մեծ ջանքով  
ժողովուեցան, և իբրև մարդկային հանձարի կա-  
տարելագործութեան պտուղներ, յարգելի ու պատ-  
կասելի դառան նոր մարդկութեան համար :

Փոքր ինչ յետոյ կը տեսնենք, որ այս ներ-  
քին կապակցութիւնը հին ու նոր կեանքի մէջ  
միայն արեւմտեան աղգերի մէջ տեղիք ունեցաւ :  
Արեւելքի հին քրիստոնէութիւնը ընդհակա-  
ռակն, իր ճգնաւորական խառութիւնով, ոչինչ  
աշխարհային դիտութեան մշակութիւն չէր նե-  
րում. երկրային կեանքի թշնամի լինելով, այն-  
տեղ միայնակեաց ճգնաւորները նրա ամենագե-  
ղեցիկ զարդի՝ գեղարուեստի դէմ կանգնեցան :  
Սյս խիստ բնաւորութիւնը սրահպանեց քրիս-  
տոնէութիւնը գրեթէ բոլոր արեւելեան աղգերի  
մէջ : Իսկ Եւրոպայումը քրիստոնէութիւնը ուրիշ  
կերպարանք ստացաւ : Քերականական ժողովուրդ-  
ները հիւսիսային և հիւսիսային — արեւելեան կող-  
մերից հարաւային ու արեւմտեան կողմերը անց-  
նելով այն ընդհանուր յեղափոխութեան ժամա-

նակ, որ պատմութիւնը ազգերի գաղթականութիւնն է անուանում, հռոմէական կայսերութեան դաւառներին տիրեցին, տեղացի բնակիչներին հետ խառնուեցան և այս խառնուրդից կազմուեցան այն ազգերը, որ ընդհանուր անունով կոչուեցան «ռօմանական»: Նրանցից հարաւային ցեղերը իրանց զուարթ ու թիթե բնաւորութիւնովը միշտ աւելի մօտիկ էին եղել կեանքի զուարճութիւններին, և հիւսիսային խիստ ուսառն ցեղերի դարուստը այնպէս նորոզեց ու զօրացրեց նրանց, որ անասպատական ու ձգնողական կեանքը էլ չպէտք է հաւանել լինէր նրանց: «Ս. յս պատճառով, շատ գեղեցիկ է ասում մի գերմանացի բաւուրմանական, քրիստոնէութիւնը հարաւային ազգերի մէջ կաթողիկոսեան փոխուեցաւ, որ հեթանոսութեան աւանդութիւններից օգուտ քաղելով՝ իրա համար մի ամբողջ դիցարանութիւն ստեղծեց, այս դիցարանութեան զլուխը դասելով Ստուածածնին, հեթանոսական սովորութիւնները ու սօները քրիստոնէական անուններով շարունակեց, և եթէ սուրբ բան չը համարեց աշխարհային կեանքը, դէթ թողեց մինչև այն աստիճանի կեանքից բաւականութիւն ստանալ, որ մեղաւորի առաջին անգամ բաց էր անում երկնային թագաւորութեան ճանապարհը



եկեղեցական դժուրութեան լայն ու արձակ դռնե-  
րից : Ի հարկէ, կաթողիկոսութիւնը ինքն իրան  
չվնասելու համար, չէր կարող մերժել ոչ երկ-  
նային թագաւորութիւնը, ոչ դժոխքը, այսինքն  
առ հասարակ սուղագայ կեանքը, բայց միւս կող-  
մից ամէն բան ներում էր, որ այս աշխարքի կեան-  
քը որքան կարելի է հանդիստ ու զուարճալի անէ.  
Իր միջնորդութիւնովը Ֆէօդալական բռնաւորու-  
թեան կուտուրութիւնը մեղմացրեց և իր քահա-  
նայապետական իշխանութիւնովը ժողովրդի հա-  
մակրութիւնը վստահեցաւ . մէկ կողմից ազատեց  
ժողովրդին սոխամահ կորչելուց, մարդասիրական  
ապաստանարաններ հաստատելով, և միւս կողմից  
ազատեց նոյն ժողովրդեան կուտանալուց, իր ե-  
կեղեցական պաշտօնի վառաւոր արարողութիւն-  
ներովը ճաշակագիտական բաւականութիւն տալով  
նրան : Աթոլիկոսութիւնից ծնաւ Արեւմուտքի քը-  
րիատնէական գեղարուեստը . իր նպատակը լի-  
նելով մարդուս զգացմունքի ու սրտի վրայ ներ-  
դործել, կաթողիկոսութիւնը չէր կարող իր վախ-  
ճանին հասնել առանց բանաստեղծական խօսքի,  
առանց պատկերահանութեան և երաժշտու-  
թեան » : Եւ իրաւ որ Հռոմայ եկեղեցու պաշ-  
տօնեաները, Քրիզոստոմոսի պատի օրինակին  
հետեւելով, շուտով հասկացան, թէ ինչ եղա-

Նախով պէտք է ներդործել այն տղէտ ու խաւար  
ժողովրդներէ վրայ, որոնց մէջ քրիստոնէութիւնը  
տարածեցին: Նրանք փորձով տեսան թէ իրանց  
հողերը որդիքը, անչափահաս երեխանց նման,  
միայն այն բանը ըմբռնելու կարողութիւն ունին,  
որ աչքը շացնում, զգացմունքի ու երեւոյնու-  
թեան վրայ է ներդործում: Կատուր համար առ-  
նախաբութիւնները, թափօրները, Սառժու պաշ-  
տօնեաների ձեռնադրութիւնը և առ հասարակ  
բոլոր եկեղեցական արարողութիւնները այնպիսի  
շքեղութեան ու փառաւորութեան հասցրին,  
եկեղեցիները այնպէս զուգեցին ու զարդարեցին,  
որ հաւատացեալներէ զգացմունքն ու երեւոյնու-  
թիւնը բաւականութիւն գտնեն: Հողերական-  
ները որ առաջ դեղարուեալի հակառակ ու  
թշտափէին, այնուհետև սկսեցին պաշտպանել  
քանդակադործութիւնը, ճարտարապետութիւնը,  
նկարչութիւնը ու երաժշտութիւնը: Արդէն ինքը  
Գրիգոր Առաջին պապը եկեղեցիները փառաւոր  
արձաններով ու պատկերներով զարդարեց ու ե-  
կեղեցական երաժշտութիւնը կատարելադործեց:  
Նրանից յետոյ նաող պապերը Գրիգորի օրինա-  
կին հետևեցին. նրանք եկեղեցու մէջ երգեհոն  
մտցրին, ճրամանատի, ճրունելեօղու, և Միքէլ —  
Անջելոյի նման ճարտարապետներ առաջ բե-

ըին, Բաժայէլի և Նէօնարդօ-դէ-Վինչիի նման պատկերահաններ, Պալեստրինայի նման երաժիշտներ, և վերջապէս ժողովրդի ձգտողութեանը որ քանի գնում սաստկանում էր, բաւականութիւն տալու համար, եկեղեցիները թատրոնների փոխեցին, որոնց մէջ ներկայացնում էին զանազան կրօնական հատուածներ, սուրբ Գրքից և նշանաւոր սրբերի կեանքից նիւթ առնելով: Այս հատուածները, զանազան տեղերի նայելով, այլ և այլ անուններ ստացան. Ծրանախայումը ասուեցան *mystères* (խորհուրդք), Անգլիայումը *miracles* (հրաշք), Խաալիայումը *storie spiritali* (հոգևոր պատմութիւնք), և այլն:

Այսպէս կաթոլիկութիւնը քրիստոնեայ ազգերի դրամատիկական բանաստեղծութեան հիմը դնելով, միջնադարեան ազգերի բանաստեղծութեան գլխաւոր յատկութեանն էլ աղբիւր դառաւ, որ ուսմանական ազգերի անունով «Ռօմանօղիզմ» ասուեցաւ (1): Միջին դարու ուսմանախղմի

(1) Այստեղ պէտք է ասած՝ որ ուսմանախղմը միջին դարերի եւրոպական ազգերի առանձին սեպհականութիւն չէ ամենեին, որովհետեւ նա միայն բանաստեղծութեան չէ պատկանում, նրա աղբիւրը պէտք է պարտել այն տեղ, որ տեղից բխում են և բանաստեղծութիւնը և միւս զեղարուեստները — կեանքի մէջ: Իսկ արդ կեանքը այն տեղ է, որ տեղ է մարդը, եւ որ տեղ է մարդը, այն տեղ է և ուսմանախղմը: Ռօմանախղմը մարդկային հոգու ընդհանուր սեպհականութիւն է, որ ամէն ժամանակ ու ամէն ազգի մէջ էլ

հողին սէրն է, իբրև մի հողևոր կատարելա-  
գործութիւն, սէր առ Աստուած, յարգանք առ  
կին մարդ: Այս պատճառով միջին դարու ու-  
մանտիղմբ ուրիշ նշանակութիւն է տալի կնոջ,  
քան թէ հին Յոյները: Հին աշխարքի մէջ կեան-

կել է. Յոյների մէջ էլ կար նա, ասիական ազգերի մէջ էլ  
բայց որովհետև միջնադարեան ումանտիղմբ շատ բարձր էր  
համեմատելով արեւելեանին և նոյն իսկ յունականին հետ,  
միջին դարու ազգերի իբրև մի առանձին սեպհականութիւն  
համարուեցաւ, և ումական ազգերի անունը իր վրայ կրեց:  
Ռոմանտիղմբի դադանի աղբիւրը, ասում է մի երեւելի քննա-  
դատ, պարունակվում է մարդու սրտի մէջ. նրա շրջանը  
մարդու սրտը ներքին, հողեկան կեանքը, նրա հողու ու  
սրտի դադանի անդատանն է, որ տեղից բարձրանում են  
բոլոր ձգտութիւնները դէպ ի աւելի լաւն ու վսեմը, աշ-  
խատելով բաւականութիւն գտնել երեւակայութեան ստեղ-  
ծած իդէալների մէջ: Սէրը այն հողեկան զգացմունքն է,  
որով բացատրվում է առաւելագէս մարդու ումանտիկական  
կեանքը, և ազգերի սիրոյ վերաբերեալ ստեղծած առա-  
պելները նրանց ումանտիկական կեանքի ամէնից հաւատա-  
րիմ վիճակներն են: Արեւելեան ազգերի առասպելները առ հա-  
սարակ միայն մի անյագ ցանկութիւն են արտայայտում—  
հեշտասիրութիւն, մի իդէա—բնութեան անվերջ բազմա-  
րութիւն (reproduction): Յունաստանում սէրը իր զարգաց-  
ման աւելի բարձր կէտին է հասնում, այն տեղ հենց սկզբու-  
մը՝ Երոսի առասպելին երևան դալուց յետոյ (իբրև ընդհա-  
նուր սիրոյ դադափար), Յունաց երեւակայութիւնը ստեղծում  
է Ափրոդիտէին—կանացի գեղեցկութեան զիցուհուն, որ ծո-  
վի ալիքներից ծնելիս՝ օտը եզերքին դրաւ թէ շէ, իսկոյն  
միաւորուեցաւ նրա հետ սէրը: Այս գեղեցկութեան դադա-  
փարից երևում է Յունաց հասկացողութիւնը սիրոյ վրայ, ի-  
բրև հետեւանք գեղեցկութեան:

քի կեդրոնը այր մարդն էր հարմարվում, իբրև ներկայացուցիչ գործունէութեան . միջնադարեան ազգերումը ընդհակառակն կինը, իբրև հոգեկան զգացմունքի պատկեր : Միջնադարեան ուսմանդիպմի առաջին նպատակն էր ներկայացնել մարդուս ներքին պատերազմը քրիստոնէութեան բարոյական պատուէրների և բնութեան պահանջմունքների մէջ : Այս պատերազմը մինչև այն աստիճան բարձրացնում է մարդուս նիւթական աշխարհից, որ նա յաղթում է աշխարքի փորձութիւններին, բայց մի և նոյն ժամանակ նա չէ կարող բոլորովին բաժանուիլ աշխարհային կեանքից, և այս պատճառով մնում է միշտ անորոշ դրութեան մէջ, միշտ անբաւական իր ձգտողութիւնների մէջ :

Իսկ Արևելքումը քրիստոնէութիւնը իր սկզբնական խիստ բնաւորութիւնը պահպանեց : Այն տեղ չորրորդ դարու յունական եկեղեցու երևելի վարդապետները, Տարսեղ Աեաբացին, Գրիգոր Նազիանզացին, Յովհան Ասկերեբանը և ուրիշները իրանց դրուածներում՝ բոլորովին հակառակ դուրս եկան աշխարհային կեանքի ու զեղարուեստների, և քարոյլեցին հուսութիւնը, ճրգնաւորական կեանքը, միայնակեցութիւնը, մէկ խօսքով կատարեալ հրաժարում այս աշխարհից :

հայց որովհետև մարդս ամեն սեղ մարդ է, այս պատճառով և Սրբեկէքի քրիստոնեաները և Հայերը չէին կարող բոլորովին բաժանուիլ բնութիւնից, և մի ևնոյն ներքին պատերազմը այն սեղ էլ սեղիք ունեցաւ, պատերազմ քրիստոնէութեան պատուէրների և բնութեան պահանջմունքների միջ: Չնայելով այս խտութեանը, ժողովրդի մեծ մասը Հայաստանում իրա ճանապարհովը դնաց, և եթէ Հայոց քաղաքական կեանքը թշնամիների շարունակ բռնակալութիւնների տակ չճնշուէր, ժողովրդական տարրը ոյժ կը ստանար, և ազգային բանաստեղծութիւնը, Աւետարանի արդիւնաւոր ազդեցութեան տակ զարգանալով, ազգային գրականութիւնը կառաջացնէր, որի մէկ ճիւղը կը կազմէր մեր այժմեան կրօնական և միայն երկրորդական մաքով ազգային գրականութիւնը:

Այս կերպով արեւմտեան հողեորականութեան պատերազմը վճռուելով յօշուտ գեղարուեստների, ժողովրդական բանաստեղծութիւնն էլ սկսաւ կամաց կամաց զարգանալ բոլոր եւրոպական ազգերի մէջ: Ֆէօդալների և ասպետների պաշտոնները ժողովրդական երգիչներով լքցուեցան: ԺԳ դարումը Ֆրանսիայի ազգային երգիչները՝ «Տրուվէօրները», մեծ անուն հանեցին. նրանց բանաստեղծութիւնը արեւմտեան հողեորականութեան պատերազմը վճռուեց:

տեղծական արդիւնքները բոլոր արեւմտեան Նւրու-  
պայի բանաստեղծութեան աղբիւր դառան . նշանց  
հետքը երևում է Նտալացոյ , Սպանիացոյ , Անգ-  
լիացոյ և մինչև Պերսեանացոյ ամենալաւ բանաս-  
տեղծական արդիւնքների մէջ . Ֆրանսիական լե-  
զուն , որ նշանց երգերի ու դրոյցների մէջ կադ-  
մեւեցաւ ու կատարելագործուեցաւ , թ՛ք դարումը  
տիրապետեց բոլոր արեւմտեան Նւրուպայի վրայ :

Այս բնական ընթացքը կւրոպական աղգերի  
կեանքի ու գրականութեան մէջ շարունակվում է  
մինչև տասնութերորդ դարը , երբ յանկարծ Յը-  
բանսիայում մի սաստիկ սէր է մտնում Յունաց և  
Հռոմայեցոյ լեզուի ու գրականութեան վրայ և  
բանաստեղծութիւնը ասպետականից պաշտականի  
է փոխվում : Աւերապլի պաշտար բանաստեղծներին  
իր հովանաւորութեան տակն է առնում և իւ-  
րրե դործիք բանացնում իր նպատակին հասնե-  
լու . համար , այն է գրականութեան միջնորդու-  
թիւնով բնաջինջ անել ժողովրդի միջից միջնա-  
դարեան աւանդութիւնները ֆէօդալական իշխա-  
նութեան վրայ , որին սաստիկ հարուած էր տուել  
Ղուղովիկոս թ՛ք : Բանաստեղծները էլ ժողովրդի  
համար չեն գրում , այլ Աւերապլի պաշտի հա-  
մար , գրականութեան և ժողովրդի մէջ մինչև  
այն ժամանակ տիրապետած սերտ միութիւնը

քանդվում և բանաստեղծութիւնը իր բնական  
զարգացումը ընդհատում է : Պաշտական ուսու-  
մնականների փոքրիկ շրջանից տասնըվեցերորդ  
դարու կէսին կազմուեցաւ այն բանաստեղծական  
դպրոցը, որի հիմնադիրը դառաւ Բոնսար, և  
որն որ տղայական հպարտութիւնով անուանեց  
իրան «Ֆրանսիական աստղագումար» (la pléiade  
française) : Այս դպրոցից դուրս եկած անձինքը հի-  
մը դրին այն կոպիտ ու անկենդան հեռուողութեան  
հին յունական ու հռոմէական գրականութիւն-  
ների և պաշտական շողոքորթութեան, որ տեւեց  
մինչև ՔՂ դարու վերջը, այսինքն մինչև Ֆրանսիա-  
կան յեղափոխութեան ժամանակները : Նրանք նոր  
օրէնքներ սահմանեցին բոլոր բանաստեղծութեան  
անսակների դրութեան համար, հիմնուելով  
Սրիատտէլի և Որատիոսի գրուածների վրայ, ու-  
րոնց բոլորովին սխալ էին հասկացել : Այնու-  
հեռև միայն այն գրուածքը արժանի էր բանաս-  
տեղծական կոչուելու, որ այս օրէնքների հա-  
մեմատ էր գրուած : Բաժանուել միջնադարեան  
աւանդութիւններից, հեռանալ բոլորովին ազգա-  
յին կեանքից և նրա տեղ դրսից, օտարի կեան-  
քից և գլխաւորապէս յունական ու հռոմէա-  
կան պատմութիւնից, գիցարանութիւնից և բա-  
նաստեղծութիւնից նիւթ վեր առնել, պատմա-



կան և հոգեբանական ճշմարտութիւնից զուրկ  
բնաստութիւններ ստեղծել, ահա սրանք էին  
այս կեղծ—կլասիկական (pseudo—classique) դըպ-  
րոցի գլխաւոր պահանջումները: Յաջորդ տասնը-  
եօթներորդ դարումը՝ Աորնէյլների, Րասինների,  
Բուսպօների ժամանակ կեղծ—կլասիկական ուղ-  
ղութիւնը այնքան զօրացաւ, որ իր ազդեցու-  
թիւնը գրեթէ բոլոր եւրոպական ազգերի վրայ  
սարածեց, մինչև տասնըութերորդ դարու վեր-  
ջերը Վերամտայութիւն, այս ճշմարիտ կլասիկական  
աշխարհում, Աէսինգ երկերի խնայաստեղծ և քրն-  
նատառ առաջինը նշմարեց Ֆրանսիական բանա-  
տեղծների թուրութիւնը և ցոյց տուեց բանա-  
տեղծութեան բուն նշանակութիւնը: Իսկ այս  
դարու սկիզբները վերջապէս հաստատուեցաւ նոր—  
ուսմանաբանական դպրոցը, գլխաւորապէս Շլեգել  
և զբարց և Վուգվիզ Տիկ բանատեղծի ձեռքով,  
որի նպատակն էր հեռանալ բոլորովին այն ան-  
բնական ուղղութիւնից և դիմել միջնադարեան  
աւանդութիւններին, ժողովուրդեան ժողովրդի բե-  
րանումը ման եկող երգերն ու զրոյցները, քրն-  
նութեան տակ քցուեցան հին դերամանական լե-  
ղուն և դրականութիւնը: Այս նպատակին առա-  
ւելապէս ծառայեցին Յակոբ և Վիլհելմ Գրիմ  
և զբարցը, որոնց անունը իրանց դրուածներով

Տանօթ են բոլոր Եւրոպայի : Գերմանական ու  
Ֆրանսիոյ մեծամեծ հետեւանքների հասնելուց  
յետոյ, առանց ազդեցութեան չմնաց միւս եւ-  
րոպական ազգերի վրայ : Այն տեղ դիւանական-  
ները սկսեցին ուշադրութիւն դարձնել ազգային  
կեանքի վրայ, որին մինչև այն ժամանակ ար-  
համարհում, բանի տեղ չէին դնում : Ժողովեցին  
ու հետզհետէ էլ ժողովում են ինչ որ ժողովրդի  
յիշողութիւնը այնքան դարերից յետոյ պահ-  
պանել է. աշխատեցին և հետզհետէ աշխատում  
են դրականութիւնը ազգային կեանքի հետ միա-  
ցնել, որից երեք դար շարունակ բողոքովն բա-  
ժանուած էր : Այս նոր ուղղութեան օգտակար  
հետեւանքը այն եղաւ, որ դրականութեան վրայ  
եղած ծուռ ունեղ հասկացողութիւնը փոխուե-  
ցաւ ու այնպիսի ընդարձակ նշանակութիւն ստա-  
ցաւ, որ միայն ներկայ լուսաւորեալ ու մարդա-  
սիրական դարում կարող էր կազմուիլ : Առաջ-  
վայ ժամանակները դրականութեան ու դեղար-  
ուեւանների մէջ փայլող աստղերի վրայ էին մի-  
այն ուշադրութիւն դարձնում, այն էլ առաջին  
կարգի աստղերին. այսօր լաւ հասկանում են թէ  
դրանով դժուարին՝ մանաւանդ թէ անհնարին է  
ազգի ներքին կեանքին տեղեկանալ, ուստի և  
ամէնի ուշքն ու միտքը դարձած է անհողջ ժո-

դովրդի հասկացողութեան, նրա հայեցումաճքի  
ու համոզմունքի վրայ, նրա ուրախութեան ու  
տրտմութեան առարկաների վրայ: Քրիստոնէութեանը,  
դարևոր ժամանակներից յետոյ, վերջապէս  
մարդասիրական գեղեցիկ զգացմունքը հանդէս  
հանեց, որ պատուիրում է սիրել ու գին դրնել,  
ոչ միայն վերին կարգի հասարակութեան,  
այլև ստորին կարգի մարդկերանց ու ամբողջ ժողովրդին  
ընդհանրապէս: Գրականութեան պատմիչները  
տեսան, որ մեծանուն մտտե՛նագիրների չորս  
կողմը մի խումբ բազմութիւն կայ, որոնց  
անունը թէ և հռչակուած չէ, այսու ամենայնիւ  
իրանց համեատ արդիւնքներովը մեծ յառաջադիմութիւն  
անել են տուել ազգային լուսաւորութեան:

Մինչև հիմայ հրատարակուած Հայոց գրականական  
պատմութեան վերաբերեալ գրքերի ընդհանուր  
պակասութիւններից մինն էլ այն է, որ նրանք  
մի քանի սովորական ու անորոշ խօսքեր  
ասելով աշխարհի երեսին դանուած ազգերի ուրեմն  
և մեր ազգի սկզբնական կեանքի մթութեան  
վրայ, շտապում են Վաղարշակի Մարտիրոս  
Կատինայ ստորի գիտնականին նինուէ ուղարկելու  
պատմութիւնը անելու: Նրանք բոլորովին լուռ  
են կենում այն ընդարձակ ժամանա-



կամիջոցի վրայ, որ գրեթէ քսան դար է պարու-  
նակում իրա մէջ, սկսեալ մեր ազգի ծագումից  
մինչև Արշակունեաց հարստութեան Հայաստան  
գալը՝ Քրիստոսից 150 տարի առաջ : Եստ լաւ  
բայց ո՛ւր է ժողովրդի նախնական ժամանակների  
կեանքը, երբ նա վայրենի ու թախառական վիճա-  
կից կամաց կամաց ազատուելով, սկսում է մէկ  
կողմից խաշնարածութիւնով պարսպիլ, և միւս  
կողմից երկիրը մշակել, անտառները կտրել, քա-  
ղաքներ շինել, հայրենիքը վնասակար կենդանի-  
ներից մաքրել, ճանապարհներ բաց անել ւտար  
ազգերի հետ հաղորդակցութիւն ունենալու հա-  
մար, մէկ խօսքով, երբ նա ընկերական կեանքի  
սովորական աստիճաններից անցկենալով՝ պատրաստ-  
վում է պատմական ասպարէզի մէջ մտնելու :  
Եթէ ընդունենք թէ շատ դարերի ընթացքում  
բնաւ ամենևին շարժողութիւն չէ եղել Հայոց  
մէջ, որ անհնարին բան է, ո՞ր տեղից է ուրեմն  
առաջ գալի այն պատմական ժամանակը, որ իրա  
հետ գրի կարօտութիւնն էլ է առաջ բերում :  
Յայտնի բան է, որ պատմական ասպարէզի մէջ  
մտնելուց առաջ՝ իւրաքանչիւր ժողովուրդ ունի  
իւր առասպելական և դիւցազնական ժամանակ-  
ները, երբ կազմվում է արդէն նրա լեզուն, կրօ-  
նը, օրէնքները ու սովորութիւնները : Հայերը չէին

կարող այս բանում մի բացառութիւն անել, որովհետեւ ազգերի զարգացման օրէնքները ամէն տեղ մի և նոյնն են: Աւրիշ բան է թէ՛ ժողովուրդ ժողովրդից արագ է առաջ գնում, ուրեմն և շուտով իր երեխայական դրութիւնից ազատում, — և այս բանը կարելի է տեսնել, եթէ համեմատելու լինինք, օրինակի համար, Յունաց և Հայոց սկզբնական ժամանակների կեանքը: Բայց մի ժողովուրդ, որքան էլ խեղճ լինի, չէ կարող բոլորովին անշարժութեան մէջ մնալ, որովհետեւ բոլորովին անշարժ միայն մեռած բանն է: Եթէ այս այսպէս է, ուրեմն և մեր պապերն ու ապուպայերը իրանց կեանքը միայն ուտելով ու խմելով չեն անցկացրել, որ անբան կենդանիներին սեպհական է, այլ իբրև բանական և զգացող արարածներ, մտածել ու զգացել են, ունեցել են իրանց ուրախութեան և տրտմութեան: րոպէները, իրանց հասկացողութիւնն ու հայեցողացքը, իրանց համոզմունքն ու ձգտողութիւնները, որոնց բացատրել են երգով և զրոյցով, առածով ու հանելուկով, ուրիշ խօսքով, ունեցել են իրանց դրականութիւնը:

Թէ երբ և ինչ կերպով է սկսում մի ազգի դրականութիւնը, այդ այնպէս մութ է, ինչպէս որ մթութեան մէջ ծածկուած է իւրաքանչիւր:

չիւր ազգի կամ ժողովրդի ծագումը : Ժողովուրդը , նոյն իսկ իր դոյութեան ամենահին ժամանակներումը , ամենեւին չէ յիշում թէ երբ և իցէ հնարած լինի իր լեզուն , իր գիցարանութիւնը , իր օրէնքները , սովորութիւններն ու արարողութիւնները , որոնք կազմում են ազգայնութեան բարոյական հիմունքը : Բոլոր այս ազգայնութեան տարրերը , որ պատմական ժամանակներից առաջ կային ժողովրդի մէջ ու նրա հետ ապրում էին , բերանէ բերան անցնելով , իբրև մի սուրբ ժառանգութիւն յետագայ սերունդներին էին հասնում :

Ուրեմն զբաւոր ժամանակներից շատ առաջ ազգը իր հողէն դործունէութեան արդիւնքները որդոց որդի ու ցեղէ ցեղ աւանդում էր : Եւ որովհետև այս աւանդութիւնները բերանացի են լինում , ուրեմն և նրանց բովանդակութիւնը անուանում է « Բանաւոր » զբաղանութիւն : Բանաւոր զբաղանութիւնը , իբրև բնածին պտուղ ժողովրդական վառ երևակայութեան , հակառակ է բոլորովին զբաւոր զբաղանութեան , որ կանոնաւոր մտքի արդիւնքներ է պահանջում : Այս զբաղանութիւնը « ազգային » ասուելու արժանի է , որովհետև նրա ստեղծողը մի քանի անձինք չեն , ինչպէս որ պատահում է զբաւոր զբաղանութեան :

մէջ, այլ ամբողջ ժողովուրդը, որ իր բանաստեղծական գրոյցներէ մէջ կատարելապէս նկարագրուած է իր պատկերը :

Թէպէտ Հայաստանի գրականական պատմութիւնը գրելու փորձ անողները ոչինչ չեն խօսում սկզբնական բանաւոր գրականութեան վրայ, բայց այս մասին մի քանի յօդուածներ, մինչև անգամ առանձին գրուածներ հրատարակուեցան այլևայլ ժամանակներում : Առանձին գրուածների մէջ նշանաւոր է Պ. Մկրտիչ Կաթիկի «Ա. Կ. Պ. Հնոյն Հայաստանի» անունով աշխատութիւնը (1) : Պ. Կաթիկը իր գրուածքի մէջ աշխատում է ցոյց տալ թէ ուրիշ ազգերի նման՝ հին Հայերն էլ ունեցել են իրանց երգերը (ի հարկէ և գրոյցները, և բանաւոր գրականութեան միւս տարրերը), որոնց գոյութիւնը, աւելացնում է հեղինակը, «չգիտեմ էր վասն միակա՛ր յամենեցունց ժխտի» : Հնայելով որ Ա. Կ. Պ. Մկրտիչի Վիսիթարեան Աարդապեանները իրանից առաջ արդէն նշմարել էին, որ Խորենացու պատմութիւնը ազգային նախնի բանաստեղծութեան հետքեր է բովանդակում : Նոյն տարին Պ. Կաթիկի գրուածքից անկախ՝ Ա. Կ. Պ. Մկրտիչի Վիսիթարեան վանքի միաբան Հ. Յովսէփ Գաթրըճեանը հրատարակեց

(1) Ա. Կ. Պ. Հնոյն Հայաստանի, Գննութիւն Մկրտիչի Կաթիկի : Մոսկիւա, 1850 :

տարակեց իր աշխատութիւնը Հայոց սկզբնական  
գրականութեան վրայ (1):

Յայտնի է որ ժողովրդի սկզբնական կեանքը  
ու լուսաւորութիւնը աստիճանաբար և բնական  
ճանապարհով զարգանալով, բանաւոր գրականու-  
թիւնը, որ այս կեանքի ամենաճիշտ պատկերն է,  
գրաւոր գրականութեան հիմը կազմում է. այս  
վերջինը բղխում է առաջինից իբրև իր բնական  
արմատից: Այս ասածիս գեղեցիկ օրինակ տալիս

---

(1) Մխիթարեան վարդապետի այս գրուածքը նախ յօդ-  
ուած յօդուած տպուեցաւ Եւրոպա լրագրի 1850 տարու վեր-  
ջին և 1851 ի սկզբի թուերում: Յետոյ առանձին փոքրիկ  
տետրակով հրատարակուեցաւ Վեննա, 1851 ին: Հեղինակը  
իւր գրուածքը Պրաւոր ժամանակի հակառակ՝ անուանում է  
«Վնդիր ժամանակ»: Բայց այս սխալ է. որովհետև զիւր եղած  
ժամանակն էլ ժողովրդի մեծ մասը շարունակում է աւան-  
դութիւնով ապրել. աւանդութիւնը շատերի համար գոյրոց-  
ների ու գիտութիւնների տեղ է բռնում, ազգային կեանքի  
այլ և այլ դարերում, մէկ մասի համար մինչև այժմ էլ:

Այս տողերը գրելու ժամանակ պատահամբ մեր ձեռքը  
ընկաւ Վենետիոյ Մխիթարեան Միաբանութեան զրքերի նոր  
ցուցակը ֆրանսերէն լեզուով, որից իմացանք թէ այժմ ար-  
պաղբութեան մամուլի տակ է դանխում միաբաններից մէկին  
շարադրած Հայոց գրականութեան պատմութիւնը, այս վեր-  
նագրով. Histoire de la littérature arménienne, par  
le P. Karékin Zarbhanalian. (Հայերէն վերնագիրը մեզ  
անյայտ է:) Մենք շատ ցաւում ենք, որ այս աշխատութիւնը  
ձեռքի տակ չունենք այժմ. թերևս կարողանայինք նրանից  
օգուտ քաղել:



է Յունաստանը, ուր ինչպէս վերելք ասացինք, նախ-  
նի սրբազան երգերը ողբերգական բանաստեղծու-  
թեան հարուստ աղբիւր տուին: Բայց եթէ որ  
և իցէ արտաքին հանդամանքներ դալիս ու այս  
բնական ընթացքը խանդարում են, այն ժամա-  
նակ բնաւոր ու գրաւոր գրականութիւնները մի-  
մեանցից բաժանվում, առանձին ճանապարհով  
են առաջ գնում, առանց միմեանց վրայ փոփո-  
խակի ազդեցութիւն ունենալու: Այս բաղդին  
պատահեցաւ և Հայոց գրականութիւնը, և սրա  
պատճառը Հայաստանի լուսաւորութեան պատ-  
մական հանդամանքների մէջ է երևում: Հայաս-  
տանի քրիստոնէութիւն ընդունելովը միասին բա-  
կաւ հողերը կամ սրբազան գրականութիւնը,  
որի մէկ հատիկ նպատակն էր քրիստոնէական բա-  
կըրունքները տարածել ու արմատացնել ժողո-  
վրդեան մէջ: Հայաստանի առաջին գրագէտները  
հողերական անձինք լինելով, իրանց բոլոր ու-  
շաղբութիւնը դարձրին նորահաստատ հաւատի  
պահանջած կարօտութիւնները լքցնելու: Նրանք  
իրանց գրուածների մէջ, որոնք ուղղակի կրօնա-  
կան բնաւորութիւն ունէին, աշխատում էին լու-  
սաւորութեան առաջին սկզբունքները տարածել  
ժողովրդի մէջ: Այս կերպով մեր գրականութիւնը  
կրօնական ուղղութիւն ստանալով, չէր կարող ժո-

զովորդական գրականութեան հետ միաւորուիլ, որ  
հեթանոսական կրօնի վրայ հիմնուած ու նրա  
կարծիքներով զարգացած էր: Արդերի ու զրոյց-  
ների մէջ մեր սուրբ վարդապետները տեսնում էին  
հեթանոսական հնութիւնը, ուստի և շատ բը-  
նական ու ամենեւին մեղադրելի չէ, որ բանա-  
ւոր գրականութեան այս գլխաւոր տարրերը հե-  
թանոսութեան ուրիշ մնացորների հետ արհա-  
մարում ու հալածում լինէին, իբրև «պիղծ և  
ճիւղազական» բաներ (1): Չնայելով այս խստու-  
թեանը, ժողովրդի մէկ մեծ մասը իր առաջուայ  
ճանապարհովը դնաց ու հեթանոսական աւան-  
դութիւնները երկար ժամանակ պահպանեց, որով-  
հետև անհնարին էր նրան բաժանուիլ այն բա-  
նից, որի մէջ ամփոփուած տեսնում էր իր բոլոր  
անցեալը: Ճշմարիտ է, խորհնացին, իր պատմու-  
թեան մէջ մի տեղ, հին Հայոց տալիս է «ան-  
սիրելութիւն երգարանաց բանաւորաց» (2), բայց  
անսիրելութիւնը այս տեղ, պէտք է համարենք,  
աւելի այն երգերը գրով չթողածներուն համար-  
որովհետև յայտնի գիտենք ուրիշ վկայութիւնից  
որ Հայերը ոչ միայն հեթանոսութեան, այլ հէնց  
քրիստոնէութեան չորրորդ դարումը «դեզերեալ

(1) Բուզ. Դ. Կ. Ե. Գ. Լ. Ա.:

(2) Խորեն. Գիրք Ա. Գ. Գ.:

մաշէին . . . 'ի հնութիւն հեթանոսական սո-  
վորութեանց . . . և զերեւանց երգս առասպե-  
լաց զվիպասանութեանն սիրեցեալք 'ի վոյթ կրո-  
թութեանցն, և նսին հաւատացեալք, և 'ի նոյն  
հանապազորդեալք՝ (1): Մինչև անգամ այն ան-  
ձինքը որ զանազան ժամանակներում կամեցել են  
հեթանոսական կրօնը վերականգնել, լաւ միջոց  
էին համարում հին Հայոց երգերի գործածու-  
թիւնը մտցնել ժողովրդի մէջ: Այսպէս Վասակ  
Սիւնին, ասում է պատմիչը, «քաղցրացուցանէր  
ունանց զկարգս երաժշտութեան և զերգս հեթա-  
նոսականս (2): Տարակոյս չկայ, որ եթէ մէկ կող-  
մից Վասակի նման անձինք այսպիսի միջոցների  
դիմէին հին կեանքը կրկին ոտի կանգնացնելու,  
եկեղեցու վարդապետները ամենայն հնարք պէտք  
է գործ դնէին այն կեանքի տարրերը կործանելու  
ու բոլորովին բնաջինջ անելու:

Բայց դեռ գրաւոր գրականութեան հաս-  
նելուց առաջ՝ Հայաստանի մտաւորական կեանքի  
պատմութեան մէջ մի միջին ժամանակ էլ կայ,  
ժամանակ գրադիտութեան Հայոց, որ սկսում է  
Արշակունեաց Հայաստան դալու ժամանակից և  
տևում է մինչև քրիստոնէութեան չորրորդ դա-

(1) Բուդ. Գալլ. Գ. Գլ. ԺԳ:

(2) Եղիշ, Գ:

բու սկիզբները: Այս ընդարձակ ժամանակամիջոցը մենք անուանում ենք «Գրագիտութեան ժամանակ»: որովհետև այս շրջանում յիշուած մատենագիրները լոկ ուսումնասէր գրագէտներ էին, որոնց գործունէութեան կեդրոնը թագաւորական պալատների ու մեհեանների մօտ գտնուած գրատուններն էին, ուրիշ խօսքով քաղաքական ու կրօնական դիւանները: Քաղաքական դիւանների գոները բաց էին միայն այն անձինքների համար, որոնց թագաւորները յանձնում էին երկրի քաղաքական պատմութիւնը դրի անցնելու: Իսկ մեհեանական դիւանների պահապաններն էին քուրմերը, որոնց պաշտօնն էր, մի և նոյն ժամանակ, Հայաստանի դիցարանական պատմութիւնը գրել: Թէև այս դիւանատունները մեծ յարդ ունէին հին ժամանակ, թէև նրանց մէջ հարուստ դանձեր էին պարունակվում, բայց որովհետև նրանք ոչինչ ազդեցութիւն չեն ունեցել ժողովրդի զարգացման վրայ, իսկապէս մեծ նշանակութիւն չունին Հայոց զարգացման պատմութեան մէջ: Սակայն այս գրագիտական ժամանակն էլ ունի իրա նշանակութիւնը, և այս նշանակութիւնը այնքան մեծ է, որ գրագիտութիւնը հետևեալ դարերին աւանդեց այն, ինչ որ ժողովրդի յիշողութիւնը չէր կարող պահպանել: Գրու-

կանութեան պատմութիւնը մէկ կողմից գիտելով  
ժողովրդեան յիշողութեանը և միւս կողմից գի-  
ւաններէ մէջ պահպանուած հնապոյն յիշատա-  
կարաններին, քիչ թէ շատ պարզում է մեզ ժո-  
ղովրդական կեանքի սկզբնական ժամանակները:

Արջապէս քրիստոնէութեան հետ սկսում  
է Հայաստանի գրականութիւնն ու լուսաւորու-  
թիւնը, և ՆՈՒՍՅԱՆՈՐԻՉ մականունը որ ժողովուրդը  
տուել է Աւետարանի լոյսը տարածողին, մեր ա-  
սածին ամենից գեղեցիկ ապացոյցն է: Յայտնի է,  
որ մինչև այն ժամանակ էլ, հէնց քրիստոնէու-  
թեան առաջին դարումը, Փրկչի Աւետարանը քա-  
րողուցաւ Հայաստանում Թադէոս առաքեալի  
ձեռքով, որ եկաւ Նդեսիա, Արշամայ որդուն՝ Աբ-  
ղար թագաւորին անով տեղովը մկրտեց, իր տեղը  
Ադդէ անունով մէկին թողեց և ինքը գնաց Հա-  
յաստանի խորերը քարոզութիւն անելու: Բայց  
ինչպէս ամենայն տեղ, այսպէս էլ Հայաստանի  
մէջ քրիստոնէութիւնը չկարողացաւ մէկէն ար-  
մատանալ, հեթանոսութիւնը անհետանալու հա-  
մար մեծամեծ զոհեր էր պահանջում: Աբղարի  
յաջորդները Անանէ և Սանատրուկ կրկին կռա-  
պաշտութիւնը ձեռք առին ու սոսկալի հարս-  
ձանքեր հանեցին քրիստոնեաների դէմ: Այս հա-  
լածանքների ժամանակ Հայերից շատերը մարտի-

բնական պատկը առին, շատերն էլ ստիպուեցան  
տարերու՛մ, անասպաններու՛մ քաշուիլ ու գաղտ-  
նի երկրպագութիւն մատուցանել Քրիստոսին: Բայց  
չնայելով այս հաղածանքներին, թաղէոս և վեր-  
ջերը Բարդուղիմէոս առաքեալների ցանած սեր-  
մերը Հայ մարտիրոսների արիւնովը աճեցան ու  
ժողովրդին պատրաստեցին քրիստոնէութիւնը ըն-  
դունելու, Հայաստանի երկրորդ և բուն Վուսա-  
ւորչի՝ սուրբ Գրիգորի ձեռքով:

✠ Քրիստոնէութիւնից առաջ Հայոց վրայ մի-  
այն մէկ իշխանութիւն էր ծանրանում, Արշա-  
կունի թագաւորների ու նախարարների իշխանու-  
թիւնը: Յայտնի է որ այս եկովի, ատար իշխա-  
նութիւնը չէր կարող մի ամբողջ կազմել ժողո-  
վրդի հետ. իւրաքանչիւրը սրանցից իր հասկացո-  
ղութիւնները, իր օգուտները, իր համոզմունք-  
ները ունէր, ժողովուրդը իրանը՝ թագաւորը և  
նախարարները իրանցը: Հայկազանց նահապե-  
տութեան ժամանակ ժողովուրդը սովորել էր բը-  
նակել Հայաստանի ընդարձակ դաշտերի վրայ, եր-  
կիրը մշակում էր, հօտերը արածում, և իր վա-  
ճառականութիւնը ընդարձակում Պարսկաստանի,  
Նինուի ու Բաբելոնի հետ: Առաւմալարութեան  
եղանակը տանուտիրական էր, նահապետը ժողո-  
վրդի համար հայր էր, որին նա իր որդիերանց

պէս սիրում ու խնամում էր : Ժողովուրդը այս  
ազատ ու խաղաղ կառավարութեան ազդեցութեան  
տակ կամաց կամաց զարգանալով, իրա համար մի եր-  
ջանիկ ապագայ էր սրատրամատում : Տարակոյս չկայ որ  
այս զարգացումը թէև ցանցաղ, բայց հիմնաւոր լի-  
նելով, մեծ արդիւնքներ ցոյց կրտար ապագայում,  
եթէ յանկարծ մի օտար ու Հայերի հողուն հակա-  
ռակ իշխանութիւն շղար ու ամէն բան չխանդարէր,  
ուզում եմ ասել, Սելէկեանց իշխանութիւնը, Սելէ-  
կեանց բռնաւորական իշխանութիւնից պզուտ՝  
Հայերը ստիպուեցան վերջապէս պիմելու Պաշթե  
Սրշակունիներին, որոնք Մակեդոնական զանազան  
իշխանութիւնները Ասիայից քշելով, իրանց իշ-  
խանութեան դահը հաստատեցին Պարսկաստա-  
նում : Հայոց խնդիրքով առաջին Սրշակունի թա-  
ղաւորը՝ Սրշակ Մեծը, իր կրտսեր եղբօրը, ըստ  
ուհանց իր որդուն Վաղարշակին Հայաստանի վրայ  
թաղաւոր կարգեց և ահա Հայոց կեանքի հա-  
մար մի նոր շրջան է սկսվում : Մեզանում ըն-  
դունում է առ հասարակ, որ Սրշակունեաց իշ-  
խանութեան ժամանակը ամենափառաւոր ու պօ-  
րաւոր ժամանակն էր Հայոց համար, ընդունում  
ենք և մենք, բայց ինչո՞ւմն էր այդ փառաւորու-  
թիւնը : Մենք կարծում ենք թէ աւելի արտա-  
քին, աւելի աչք շլացնող փառաւորութիւն ու

զօրութիւն էր այդ: Աաղարշակ Հայաստան գա-  
լով՝ առաջին բանը գործը եղաւ իր եղբօր պա-  
լատում տեսած շքեղ ու փառաւոր կարգ կա-  
նոնը հաստատել իր իշխանութեան մէջ. նա ու-  
րիշ կարգադրութիւնների հետ՝ այլ և այլ նախա-  
րարութիւններ կարգեց, որոնցից իւրաքանչիւրին  
ընդարձակ երկիրներ պարզեց: Բայց ո՞ր տեղից  
առաւ նա այդ երկիրները. — ՚ի հարկէ ժողովրդից,  
և ահա այս տեղ արդէն մեծ աժգոհութիւն պէտք  
էր պատահէր ժողովրդի մէջ՝ նոր իշխանութեան  
դէմ: Աաղարշակի յաջորդները իրանց նախորդի  
ճանապարհով գնացին. նրանք մի զօրավարի ան-  
ձնական քօշութիւնը, մի կառավարչի հաւա-  
տարիմ ծառայութիւնը վարձատրելու համար,  
նախարարութեան բարձ ու պատուի հետ՝ նոր  
երկիրներ էին ընծայում: Ս. յապէսով այս նախա-  
րարական տները կարճ միջոցում այնպէս բազ-  
մացան, որ քրիստոնէութեան շորրորդ դարուն մի-  
ջև հարիւր եօթանասունի էին հասել: Թէ ի՞նչ  
մնասակար հետեւանքներ պէտք է առաջ դային  
սրանից, այդ շատ հասկանալի է. ժողովուրդը  
քիչ քիչ պէտք է աղքատանար ու խեղճանար և  
նրա տեղ առանձին անհատներ պէտք է հարստա-  
նային ու փարթամ կեանք անցկացնէին: Ս. յս  
բաւական չէ, և եթէ ներելի լինէր մեզ այս հա-



մե մատու թիւնը անել, մենք կ'ասէինք թէ նախարարները թագաւորի և ժողովրդի հետ այն յարաբերութիւնը ունէին, որ յարաբերութեան մէջ գտնվում էին Միջին դարերումը Եւրոպայում ֆեոդալները թագաւորի ու ժողովրդեան հետ: Նախարարը իր երկրի բացարձակ տէրն ու իշխանն էր. նա կատարեալ իրաւունք ունէր իր հպատակի կեանքի ու մահուան վրայ: Բայց մի և նոյն ժամանակ նախարարը թագաւորին էլ պարտաւորութիւններ ունէր հատուցանելու, որոնցից դիտարկներն էին նախ՝ պատերազմի ժամանակ իր զօրքովը օգնութիւն գնալ թագաւորին, պարտաւորութիւն, որ միշտ ճշգումթիւնով չէր կատարվում. երկրորդ, տարէց տարի հարկ հատուցանել նրան: Սրանից երևում է թէ խեղճ ժողովրդի վրայ ինչպէս պէտք է ծանրանային հարկերը ու տուրքերը: Նա այնքան պիտի հատուցանէր, որ թէ թագաւորական հարկը իր ժամանակին մանէր արքունի գանձը և թէ նախարարի սրախտը ու զօրքը պահպանուէր, Բայց ինչպէս և իցէ, չորս ու կէս դարու ընթացքում (Աղաքաւորից մինչև Տրդատ), ժողովուրդը սովորել էր այս կառավարութեան եղանակին. նա համբերութիւնով տանում էր Արշակունեաց լուծը երկրի ապահովութեան համար: Քրիստոնէութեան

հետ դալիս է մի ուրիշ իշխանութիւն, առաջինի նման օտար, բայց առաջինից աւելի մեծ դիտաւորութիւններով . նրա նպատակն էր արեւելաբարսանչիւր անհատի համոզմունքների, խղճի ու բարոյականութեան, մէկ խօսքով բոլոր ներքին կեանքի վրայ: Այս նոր իշխանութիւնը իր հետ բերեց այնպիսի հասկացողութիւններ, որ ժողովրդի համար բոլորովին օտար և նրա հասկացողութիւնների հակառակ էին: Ժողովուրդը թողնեց որ իրան մկրտեն, որովհետև առաջուայ իշխանութիւնը, որի հետ արդէն ընտելացել էր, մկրտուելով՝ նոր իշխանութեան կողմը անց կացաւ . բայց տարակոյս չկայ որ նա չէր հասկանում թէ ինչ են անում իրան, ինչ են ուզում իրանից Նփրատ գետը քշելով: Շատ հեշտ բան էր կուռքերը ու բաղինները կործանել, բայց նոյնքան հեշտ չէր ջնջել նրանց ժողովրդի երևակայութիւնից ու սրտից: Արամազդը, Անահիտը, Միհրը, մէկ խօսքով բոլոր առաջուայ կրօնը, որի հետ կապուած էր ժողովրդի բոլոր կեանքը, դեռ երկար ժամանակ մնացին ժողովրդի սրտի ու երևակայութեան մէջ, ինչպէս որ հաստատում են մեր պատմագիրները: Եւ ինչ անբնական բան կրկնէր, եթէ ժողովուրդը մէկէն փոխել էր իր համոզմունքները, իր կրօնական հասկացողութիւնը

ներք, որ շատ դարերի ընթացքում հետզհետե  
ստացել էր, որոնց հետ պինդ կապուած էր իր  
կեանքի ամեն մի քայլը, որոնք առանձին նշա-  
նակութիւն էին տալի իր ամենօրուայ կեանքի մէջ  
դանուած առարկաներին. անբնական կը լինէր, ա-  
սում ենք, որ իսկոյն թողնէր, բաժանուէր նրան-  
ցից ու նորերը ընդունէր, մանաւանդ որ բաւա-  
կան մարդ էլ չկար այս վերջինները բացատրելու:  
Ղուսաւորիչը՝ որքան բարձր ու վսեմ կերպով կա-  
տարեց իր առաքելական պաշտօնը, որքան մեծ  
լինէր նրա բարոյական ազդեցութիւնը ժողովըր-  
դի վրայ, այսու ամենայնիւ նա բաւական չէր  
միլիոնաւոր ժողովրդի բան հասկացնելու. իսկ  
հետը բերած Ասորի և Յոյն հողեւորականների  
թիւը այնքան փոքր էր, ինչպէս որ երևում է  
սուրբ Գրիգորի Արարիայի Աւոնդ հայրապետին  
գրած թղթից, որ բաւական չէին Հայաստանի  
բոլոր քաղաքների ու գիւղերի մէջ ժողովըրդներին  
ուսուցանելու, եթէ մինչև անգամ ժողովուրդը  
պատրաստ լինէր սիրով ընդունելու այն մարդկերանց,  
որոնք բոլորովին օտար էին իրան և արհամարհա-  
կան աչքով էին մտիկ տալի իր բոլոր կեանքի վրայ:  
Այս էլ կայ որ սուրբ Գրիգորի աշակերտների ու  
ւղնականների մէջ շատ քիչը կային, որոնք կա-  
րող լինէին ժողովրդի հետ իր մայրենի լեզուով

խօսել : Նրանք ըստ մեծի մասին Ստորի և Յոյն  
լինելով՝ մեծ դժուարութիւն պիտի քաշէին բա-  
ցատրելու ժողովրդեան քրիստոնէական բարձր մրա-  
քերը, որոնց ոչ միայն գիւղացիք և քաղաքա-  
ցիք, այլ և նախարարները, այլ և բարձր հասա-  
րակութեան անձինքը, ասում է ժամանակակից  
պատմագիրը, և ոչ մի ինչ, և ոչ մի բան, և ոչ  
կէս բանի, և ոչ դոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմա-  
րանս ինչ զոր լսէինն, և ոչ կարէին ինչ ունել 'ի  
մտի : (1) : Չնայելով որ Բուզանդին քիչ հաւատ են  
ընծայում առ հասարակ մեր հին և նոր մատե-  
նագիրները, այսու ամենայնիւ մենք կարծում ենք  
որ վերևի խօսքերը չպէտք է ճշմարտութիւնից  
բողորովին զուրկ համարուին :

Ս, հա այս դրութեան մէջ էր բանը Հայաս-  
տանի քրիստոնէութեան, ուրեմն և (գրաւոր) գրա-  
կանութեան սկզբում : Ժողովուրդը, թաղաւորը  
և նախարարները, որոնց հետ ընտելացել էր աղ-  
ղը, և հողեւորական դասը երեք գլխաւոր առար-  
կաներն են, որոնց միշտ պէտք է աչքի առած  
ունենայ գրականութեան պատմիչը : Նրանցից իւ-  
րաքանջիւրը իրանց օգուանները, իրանց ձգտողու-  
թիւնները, իրանց հասկացողութիւնները ունէին :

---

(1) Բուդ. Գալլ. Գ. Գլ. ԺԳ :

Սրոշ կերպով պարպել իւրաքանչիւրի ճշտողութիւններն ու հասկացողութիւնները, ցոյց տալ այն փոխադարձ յարաբերութիւնը, որ նրանք մէկըմէկու հետ ունեցել են զանազան ժամանակներում, ահա այս պէտք է լինի պատմի առաջին գործը, եթէ կամենում է ճիշդ կերպով քննել ու ցոյց տալ ազգային կեանքը:

Հոգեւորական դասը իր վարդապետութիւնը պրքերի վրայ հիմնելով, տարակոյս չկայ որ դրագիտութիւնը սեպհականելու անհրաժեշտ պիտոյքը պէտք է զգար: Եթէ թաղաւորներինց կամ նախարարներինց ունեք գրել կարդալ են սովորել, այն էլ կրօնական նպատակով է և ղել, — սուրբ Վիրքը կարդալու ու օրինակելու նպատակով: Իսկ քաղաքական կեանքի մէջ հայկական գրագիտութեան կարօտութիւնը չէր գգացվում. որովհետև ինչպէս հեթանոսութեան ժամանակ այսպէս էլ քրիստոնէութեան սկզբնական ժամանակները, թաղաւորական հրովարտակները հաշտութեան պայմանները, դաշնադրութիւնները, և այլն գրելու յունարէն և մանաւանդ պարսկերէն լիզուն էր գործածվում: Իսկ ժողովուրդը ևս առաւել ոչինչ կարօտութիւն չէր տեսնում գրել կարդալ սովորելու: Սրանով բացատրվում է թէ ինչու համար մեր հին գրականութիւնը կրօնական ուղղութիւն

է ստացել : Գրադիտութիւնը ղլխաւորապէս կրօնական անձինքների անհրաժեշտ պիտոյքը լինելով, հասկանալի է որ կրօնական նպատակի էլ պիտի ծառայէր : Աւրեմն և չէ կարելի ընդհանուր ժողովրդի վրայ դատել գրականութեան կրօնական բովանդակութիւնից, այլ կրօնական մատենագրի ու ազգային կեանքի մէջ եղած յարաբերութիւնից, այս տեղ կրօնական ձգտողութիւնն է բացատրում միայն մատենագրի անձնաւորութիւնը և ոչ թէ ամբողջ ժողովուրդը, Բայց ժողովրդի կեանքը և ձգտողութիւնները բացատրելու ղլխաւորապէս ծառայում են իր բուն երևակայութեան տեղծուածները, որոնց յանձնել է նա իր մտածմունքները, հասկացողութիւնները, հայեցումաձքը, զգացմունքները, բոլոր այն ներքին հոգեկան կեանքը, որ կազմուեցաւ իր մէջ բնու թեան սպիեցութեան տակ : Այսպէս են երգերը, զրոյցները, աւանդութիւնները, առածները, և այլն, որոնք առաջ ժողովրդի համար կրօնական նշանակութիւն ունէին և յետոյ ամէնօրոտ այ կեանքի սովորութիւն են դարձել : Աւ ահա այս բանի մէջ է երևում ղլխաւորապէս պատմարանի դժուարութիւնը, որովհետեւ մեր գրականութիւնը չէ պահպանել մեզ զանազան ժամանակներում ժողովուրդի մէջ ման եկած աւանդու-

Թիւնները, և պէտք է աշխատել նոր կեանքի մը պարտել հետի հետքերը և այնպէս կարելի եղածին շատ պարպել հետ-Թիւնը :

Այս տեղ առ ժամանակ մեր խօսքի թելը կտրում ենք, դառնալով դէպ ՚ի ընթերցողը : Կարելի է թէ ընթերցողը մեղադրէ, մեզ ասելով թէ՛ ինչ հարկ կար ընդհանուր ազգերի գրականութեանը դիմել, երբոր մեր խօսքը Հայոց գրականութեան և մասնաւորապէս բանաւոր գրականութեան վրայ է : Մեր պատասխանը այս է. Հայերը կազմելով մի անդամ այն մեծ մարմնի, մի ճիւղ այն ընդարձակ գերդաստանի, որ կոչվում է մարդկութիւն, մենք շենք կարող Հայոց հոգեւոր գործունէութեան պատկերը նկարագրել առանց ընդհանուր ազգերի վարդապետան պատմութեանը դիմելու : Կնչպէս որ այլ և այլ անհատներին կազմվում է մարդկութիւնը, այսպէս էլ զանազան ազգութիւններին կազմվում է մարդկային ազգը, որի հետ պինդ կապուած է և Հայը : Մասնաւոր երևոյթը ճիշդ կերպով բացատրելու համար՝ հարկ է անդադար ընդհանուրին դիմել, որովհետև ազգերի վարդապետան օրէնքները մի և նոյնն են. սրտամշի պարտքն է ցոյց տալ թէ երբ և ինչ բանում մասնաւորը ընդհանուրի համաձայն է, և երբ ու ինչ հանգա-

մանքներինց ստիպուած՝ ընդհանուրինց շեղվում աւառանձին ճանապարհով է գնում: Հէնց այս պատճառով մենք հարկաւոր համարեցինք մեր աշխատութեան առաջին գլուխը գոհել ընդհանուր ազգերի զարգացմանը, և յետոյ մի քանի խօսք ասել մեր գրաւոր գրականութեան սկզբնաւորութեան վրայ, կամենալով ցոյց տալ թէ ինչ կարծիքներն ալէտք է հետեւենք մեր աշխատութեան երկրորդ մասի մէջ, որի առաջին մասը տալիս ենք ահա ընթերցողներին: Այս հատորի ընդունելութիւնինց կախուած է և երկրորդի հրատարակութիւնը, որ մեր աշխատութեան գլխաւոր և աւելի ամբողջ մասը ալէտք է կազմէ:

Մենք ցաւում ենք, որ չյաջողեցանք այս առաջին մասին տալ այն խիստ բնաւորութիւնը, որ իւրաքանչիւր ուսումնական գրուածքինց պահանջովում է, և պատճառը յայտնի է. մթութեան քողը այնպէս թանձր պատել է մեր հին կեանքը, որ մենք երբեմն ստիպուած ենք զանվում մեր խօսքի թելը կտրել, 'նախ' այն կեանքի այս կամ այն երևոյթի գոյութիւնը հաստատելու և յետոյ ցոյց տալու նրա ինչ ձև ստացածը: Երկրորդ և աւելի մեծ պատճառը այն է, որ սկզբնական բանաւոր գրականութիւնինց շատ քիչ բան է պահպանել մեզ հետեւութիւնը, ուստի և ստիպուած



ենք շատ անգամ նոր կեանքին դի.Ս.Լու՝ հինք  
պարզելու համար: Բայց եթէ մենք շատ բան չենք  
տալի ընթերցող հասարակութեանը, շատ բան էլ  
չենք պահանջում նրանից: Մենք մեր աշխատու-  
թիւնը բոլորովին վարձատրուած կը համարենք,  
եթէ մեզանից յետոյ ուրիշները ասպարէզ դան  
և մեզանից աւելի արդիւնքներ ցոյց տան դիտու-  
թեան այս ճիւղի մէջ, որ ամէն հայ սրտի հա-  
մար սիրելի ու հետաքրքրական պէտք է լինի: Ս. յս  
յոյսն է, որ սիրտ է տալի մեզ լոյս հանել մեր  
աշխատութիւնը, ինչպէս նաև այն կենդա-  
նի համակրութիւնը, որ ցոյց կն տուել առար-  
կային մեր աշակերտները, մեր երկու տարուայ  
դասախօսութեան ընթացքում, որոնց այս առի-  
թով յայանում ենք մեր անկեղծ շնորհակալու-  
թիւնը:

Մենք կարծում ենք թէ ժամանակ է վեր-  
ջապէս թողնել այն սքոլաստիկական (1) չոր ու

---

(1) Մեր օրագրական հանդէսներում քանի ու քանի ան-  
գամ խօսք է եղել սքոլաստիկայի վրայ, բայց որքան մեզ  
յայանի է, դեռ ոչ ոք պարզ չէ ցոյց առել նրա բուն նշա-  
նակութիւնը: Շուրջինի ընդհանուր պատմութեան մէջ (Միջին  
Դար, Երես 256—57) թէև համատուր, բայց շատ ճիշդ տե-  
ղեկութիւն ենք գտնում սքոլաստիկական փիլիսոփայութեան  
բնատրութեան ու նրա նշանակութեան վրայ միջնադարեան  
կեանքի մէջ: Ե Չնայելով տեսակ տեսակ արդելքներին ու դրժ-  
ւարութիւններին, մտածող ողին չէր կարող բոլորովին հրա-

ցամաք դասատվութեան ձևը, որ միջնադարեան  
ժամանակներից մնացած և մինչև այժմ շարու-  
նակվում է մեր դպրոցներում, մանաւանդ հա-  
յերէն լեզուի դասախօսութեան մէջ: Եւրոպայի  
է վերջապէս դուրս անել մեր դպրոցներից Չամ-  
չեան ֆերականութիւնը, Ազոնց ճարտասանու-  
թիւնը, Ալբերտի Աստուածաբանութիւնը, Սու-  
աւէի Տրամաբանութիւնը, որոնց վրայ հայ պա-

---

ժարտիկ իրա բնաւորութիւնից և սկսեց դաստղութիւններ ա-  
նել Աստու, աշխարքի ու մարդու վրայ: Այս փիլիսոփա-  
յութիւնը ստատածարանական բնաւորութիւն ունէր: Նրա-  
նից առաջ եկաւ միջնադարեան նշանաւոր երկույթներից  
մինը, այն է ~~Վիլհելմ Էն Էլեմէնտար-Էն-Էլ~~: Սքոլաստիկական  
փիլիսոփայութեան զլխաւոր նպատակն էր չոր ու ցամաք  
փառանքով ապացուցանել Հռոմայ եկեղեցու վարդապետու-  
թեան ճշմարտութիւնը: Փիլիսոփան չէր համարձակում իր սեպ-  
հական խելքով դատած նոր ճշմարտութիւններ յայտնել, նա  
ոչէտք է բացատրէր և ապացուցանէր միայն այն բանը, ինչ  
բանում որ Հռոմը հրամայում էր հաստատել: Ճշմարիտ է, դուրս  
եկան այնպիսի մարդիկ, որոնք փորձ են արել ազատ հետե-  
ւանքներ ու եզրակացութիւններ անելու, բայց նրանք հե-  
րետիկոսի անուն ստացան: Սքոլաստիկան երկար ժամա-  
նակ արապետեց զխտութեան բոլոր ճիւղերի մէջ. միջին  
դարերի պատերազմական ոգուն համեմատ՝ սքոլաստիկան էլ  
պատերազմական բնաւորութիւն ստացաւ և ուսումնական  
ասպետութիւն դառաւ, նրա մենամարտութեան կրկէս-  
ճերը վէճերն էին, գէնքը—կենդանի խօսքը և գրիչը, պա-  
տերազմողները—արեղանները (մանաւանդ Գամինիկեանները),  
պատերազմի զլխաւոր կեղրոնը, — Փարիզ և Օքսֆորդ: . . .  
Սքոլաստիկան հիմնուեցաւ զլխաւորպէս Արիստատէլի փիլի-

տանիները իրանց ամենալաւ տարիները կորցնում են: Փորձը ցոյց տուեց, որ այս և սրանց նման դրքերը, փոխանակ աշակերտի հոգեւոր կարողութիւնները զարդացնելու, փոխանակ նրա միտքը հրահանգելու, երեւակայութիւնը սրելու, սիրտը կրթելու, ճաշակը մաքրելու, բոլորովին սպաննում են նրա մէջ ամէն տեսակ ընդունակութիւն, չոր ու ցամաք և անպտուղ տեղեկութիւններով լըք-

---

ստիպայութեան վրայ: Եւրոպան ծանօթացաւ Ս. Բիստոտեւի մտա մասին արարական թարգմանութիւնների և մեկնութիւնների միջնորդութիւնով, և բոլոր մասին երբայեցի բարանիների ձեռքով: ԺՆ. դարումը հազիւ են սկսում մտնել Եւրոպա յոյն փիլիսոփայի բնադիր գրուածները: Ս. Բիստոտեւի գրուածներին ցոյց տուած յարգանքը անշատի էր: Աքոլաստիկայի օգուտը պարունակելու է այն կրիստոսարդ աներկիւղութեան և աշխատանքի մէջ, որոնք չթողեցին որ խելքը դերութեան մէջ մնայ: Բայց արարական փիլիսոփայութեան ազդեցութիւնը և այն խելքն ու շրջափակուած նիւթը որ Հոսմայ կկեղեցին տալիս ու ներում էր քննելու, այնպիսի վնասակար ներդրութիւն ունեցաւ, որ չնայելով սքոլաստիկների սրամտութեանը, աշխուժին ու դիտնականութեանը, բոլոր մեծի մասին դատարի ու անդործադրելի վիճարանութիւններ տուած բերաւ կեանքի ու գիտութեան համար: Եւ դուր ենք օգտուում դրական գիտութիւններ սքոլաստիկայի դիզած բարձրատար դրքերի մէջ: Ընդհակառակն, սքոլաստիկան վնասակար ազդեցութիւն ունեցաւ բոլոր գիտութիւնների մըշակութեան և դատաւարութեան եզանակի վրայ, ազդեցութիւն որ երկար ժամանակ օրհնականուեցաւ բոլոր ուսումնարանների և մանաւանդ հոգեւոր դպրոցների մէջ: Սկոլաստիկները ոչ այնքան գիտութեան նիւթի վրայ էին ուշադրու-

ցնելով նրա գլուխը, որոնք կեանքի մէջ բոլորա-  
վին անգործադրելի են մութ, քանի' ու քանի'  
անձինք են պատահում ամենայն օր, որոնք Չամ-  
չեան ֆերահանութեան բոլոր կանոնները իրանց  
բացառութիւններով անգիր գիտեն, բայց երկու-  
տող չեն կարող գրել, առանց այնպիսի բառեր  
գործածելու, որոնց միտքը շատ անգամ իրանք էլ  
չեն հասկանում. խրթինը և անհասկանալին այն

---

թիւն դարձնում, որքան հետեւում էին բոլոր ուսմունքները  
պայմանական ձեւերի տակ քցելու: Ասանողների միտքը պա-  
րապեցնում էին բարակ դատարկարանութիւններով, նրանց  
ուշքն ու խելքը դարձնում էին բոլորով ին անպտուղ հարցմունք-  
ների վրայ, ինչպէս են, օրինակի համար. Գարունքին թէ աշ-  
նան ստեղծեց աշխարհս Սատուած: Ի՞նչ հասակի էր Գողիաթը:  
Ո՞րքան էր կշռում նրա գրահը կամ Յրիսողոմի ճաղերը: Եօթա-  
նասուն թարգմանիչները Սատուածաշունչը առանձին սենեակ-  
ներում թարգմանեցին, թէ չէ, եւ այլն: Երբեմն դիտնականը  
աշխատութիւն էր յանձն առնում հաշուելու թէ՛ քանի «նորեւեռ»  
անգամ մարդկային ըզըզի քանակութիւնը վտք է բարձր ախ-  
եղերքի քանակութիւնից, որբեմն և մարդուս խելքը որ-  
քան պակաս է այն խելքից, որ պարունակում է իրա մէջ բո-  
լոր ախեղերքը: Գծրապարար մեր գայրոցների ուսուցչական  
ամբիոնից մինչև այժմ էլ կարելի է լսել այս տեսակ հար-  
ցեր: Մեզ իսկ պատահել է լսել հետեւեալ ծիծաղելի հարցե-  
րը: Հ-ո՞՞. Ինչպէս են անուանուիւմ Գրիստոսի խաչելու-  
թեան մեխերը:— Պ-ո՞՞. Սթուս, մաթուս, դաթուս, դաթ-  
մաթուս:— Հ-ո՞՞. Արձնք են Գրիստոսի հետ խաչուած տա-  
ղակների անունները իրանց մեկնութիւններով:— Պ-ո՞՞. Կոստաս  
(այսինքն ի՞նչ արձուս) և Գոմինաս (այսինքն Գոմ-ճուս),  
եւ այլն:

խնդրելի համար վերին կատարելագործութեան  
նշան է : Քանիաները կան, որոնք ճարտասանու-  
թեան բոլոր կանոնները իրանց օրինակներովը սեր-  
ածել են, բայց որ հրատարակ են դալիս, երկու  
խօսք շնն կարող խօսել առանց կեկեմարու : Այն  
հին և ամենայն տեղ ընդունուած ճշմարտու-  
թիւնը թէ՛ «գիտութիւնը կեանքի համար է, և  
ոչ թէ կեանքը գիտութեան համար», դեռ շատ  
պէտք է կրկնուի հայ դաստիարակի ականջին, որ  
վերջապէս արձագանք դանէ նրա սրտում : Չխօ-  
սելով սկզբնական դաստիարակութեան վրայ, մեր  
կարծիքով, Հայոց լեզուի ու կեանքի գիտութեան  
համար մեզ բոլորովին նոր դասագրքեր են հար-  
կաւոր, որոնք այժմեան դաստիարակական պահանջ-  
մունքներին համաձայն լինէին : Անգուի գործնական  
գիտութեան համար, մենք ամէնից յարմար ենք  
կարծում մի համեմատական ֆերականութիւն  
Հայոց հին և նոր լեզուների, որովհետեւ մեր գը-  
րոց լեզուն շատ անգամ բացատրվում է մեր այժ-  
մեան լեզուի բարբառներով, ինչպէս որ մեր բար-  
բառները շատ բանում իրանց յայտարարութիւնը  
դանում են գրոց լեզուի մէջ : Այս համեմատա-  
կան միջոցը լեզուի դաստիարակութեան մէջ երկու  
գլխաւոր օգուտ ունի. 'նախ այն' որ երու կամ  
երեք միմեանց հետ մերձաւորութիւն ունեցող

կառարանները իրարու հետ համեմատելով, միշտ  
աւելի հեշտ է ըմբռնել իւրաքանչիւրի յատկու-  
թիւնները, և երկրորդ, մեր բարբառների հո-  
գուն տեղեկանայր, որ այնպէս քիչ ծանօթ են  
մեզ, չնայելով որ այժմ առ հասարակ ընդուն-  
ուած է մեզանում, թէ սրանցից պէտք է ա-  
ռաջ դայ մէկ օր մեր նոր գրականական լեզուն:  
Ղեզուի քերականութիւնից յետոյ գալիս է գրա-  
կանութեան տեսական մասը, այսինքն այն՝ ինչ  
որ ունանք շրջափակուած մտքով հասկանում են  
ճարտասանութիւնով: Տեսական գրականութեան  
կամ գրագիտութեան նպատակը պէտք է լինի ա-  
մէնից առաջ քննել մարդկային խօսքը կամ լեզուն,  
այսինքն իմանալ այն այլևայլ պայմանները, որից  
կախուած է խօսքի գեղեցիկութիւնը, և յետոյ  
բաժանել արձակ և բանաստեղծական գրուած-  
ների տեսակները, ցոյց տալով նրանցից իւրաքան-  
չիւրի գրութեան օրէնքները: Այս պատճառով  
տեսական գրականութիւնը երեք դիտար մաս  
է բաժանվում. տեսութիւն ոճոյ, տեսութիւն ար-  
ձակ շարադրութիւնների, որոնց մէջ մանում է  
և հակադրական արուեստը կամ ճարտասանու-  
թիւնը, և տեսութիւն բանաստեղծութեան: Աեր-  
ջապէս տեսական մասից յետոյ գալիս գրականու-  
թեան պատմական մասը, որի նպատակն է, ինչ-

պէս արդէն վերելք ասացինք, քննել ազդի մը  
տաւոր արդիւնքները, ցոյց տալով թէ որքան ազ-  
գեցութիւն է ունեցել ժողովրդի կեանքը գրա-  
կանութեան վրայ, նոյնպէս և այս վերջինը ա-  
ռաջինի վրայ: Թէ ինչ մեծ օգուտ ունի գրա-  
կանական պատմութեան գիտութիւնը դաստիա-  
րակութեան մէջ, այս էնդուրից է երևում, որ  
ինչպէս մասնաւոր, այնպէս և ընդհանուր գրա-  
կանութեան պատմութիւնը պատուաւոր տեղ է  
բռնում եւրոպական դպրոցներում և համարվում  
է բանալի ամէն տեսակ պատմաբանական գիտու-  
թիւններին: Մինչև անգամ պատմաբանները իւրա-  
քանչիւր ժողովրդի անցեալ կեանքը նկարագրելու  
ժամանակ մեծ ուշադրութիւն են դարձնում  
նոյն ազդի գրականութեան յառաջադիմութեան  
կամ յետադիմութեան վրայ: Նրանք ոչ միայն  
այն են նկարագրում, թէ ինչ ազգեցութիւն է  
ունեցել ազգային կեանքը գրականութեան վրայ,  
որով սա այս կամ այն ուղղութիւնն է օտացել,  
այլ և ցոյց են տալի, թէ ինչպէս գրականու-  
թիւնը ներդործութիւն է ունեցել ժողովրդի  
կեանքի վրայ, որն որ նոյնպէս փոփոխութիւն-  
ներ է կրում իր ընթացքում:

Աշխարհիս երեսին զամուսած այլ և այլ լե-  
 զուների մեկգմեկու հետ ունեցած ազգականու-  
 թիւնից սրարդ երեւում է, որ սկզբնական մարդ-  
 կային լեզուն մեկ էր, որից՝ իբրև մի լնհանուր  
 աղբիւրից առաջ եկան միւս բոլոր լեզուները:  
 Այս բանի վրայ գիտնականների մէջ այժմ զբ-  
 ուար թէ տարակոյս ցոյց տուող լինի: Բայց վար-  
 մային այն է, որ լեզուների քննիչները երկար ժա-  
 մանակ երկու կամ առեւել լեզուների մեկգմեկու  
 հետ ունեցած նմանութիւնը տեսնելով՝ միանելը  
 չէին բերում այն գլխաւոր խորհուրդը, թէ այդ  
 նմանութիւնը կամ ազգակցու թիւնը նոյն լեզու-  
 ների մեկ արմատից՝ մարդկային սկզբնական լե-  
 զուից առաջ եկած լինելու նշանն ու ապացոյցն է:  
 Աւստի և եթէ երկու գլխաւոր կամ մայր լեզու-  
 ների մէջ մի նմանութիւն գտնելին, աշխատում  
 էին ցոյց տալ, որ նրանցից մինը միւսից է ա-  
 ռաջ եկած. որովհետև այնպէս էին կարծում  
 թէ երկու լեզուի մէջ միայն այն ժամանակ կա-



բող է նմանութիւն լինել, երբ մինը միւսից առաջ եկած լինի: Այսպէս, օրինակի համար, երբայեցոց ու Քաղզէացոց լեզուների մէջ նմանութիւններ գտնելով, մինը միւսից ծագած էին համարում, հին Պարսից ու Հնդկաց և Գերմանաց լեզուները մէկըմէկու հետ բաղդատելով և նմանութիւններ գտնելով, ոմանք հնդկերէնը՝ պարսկերէնի ճումուղ կարծեցին, ոմանք պարսկերէնը՝ յունարէնից, լատիներէնից և Իտալացի հին լեզուներից ծագած համարեցին: Այս ընթացքը պահպանուեցաւ լեզուների քննութեան մէջ մինչև այս գարու սկիզբները, երբ Բոսյ գերմանացին առաջին անգամ ցոյց տուաւ այլ և այլ լեզուները մէկըմէկու հետ ճիշդ ու զիտնական կերպով համեմատելու օրէնքները: Նրանից յետոյ եկող երեւելի ուսումնականները, իրանց քննութիւնների մէջ առաջ գնալով, վերջապէս հասան այն կարգադրութեանը, որ աշխարհիս բոլոր լեզուները երեք գլխաւոր աղգատահմի կա՛ն խմբի են պատկանում, որոնք Նոյի երեք որդիերանց անունով ասվում են՝ Սեմեան, «Քամեան» և Յաբեթեան: Սեմեան աղգատահմի գլխաւոր ճիւղերն են Երբայեցոց, Փիւնիկիցոց, Ասորոց և Արարացոց լեզուները. Քամեան աղգատահմինը՝ Ալիանիայի, Ալթիկէի ու Սեբիկայի բազմաթիւ բարբառների

շատերը : Իսկ Յարեթեան ազգատոհմը՝ Ասիոյ մէջ  
Հնդկաց ու Եւրոպայի մէջ Գերմանաց լեզուների  
ցեղերը բովանդակելով, Հնդկա — եւրոպական կամ  
Հնդկա - գերմանական էլ է կոչուում : Հնդկա —  
եւրոպական ազգատոհմի գլխաւոր ճիւղերն են  
Հնդկաց, Պարսից, Հայոց, Յունաց, Ղաթինացոց,  
Աեզուաց, Գերմանացոց և Սլաւոնացոց լեզուները :  
Այս ազգատոհմի գլխաւոր սկիզբ կամ մայր հա-  
մարում է Սանսքրիտ կամ հին Հնդկաց լեզուն (1),  
որ Հնդկա — եւրոպական լեզուների մէջ ամէնից  
ճոխն ու հարուստն է, և նրանց գլխաւոր տար-  
բերը իր մէջն է բովանդակում :

Այն միջոցին՝ երբ մեր նախահայրը Հայկ

---

(1) Սանսքրիտը շատ հին ժամանակ գործ էր անում Հնդկ-  
կաստանի մէջ, իսկ այժմ միայն գրքերում մնացած է ևւ  
միայն բրամանները սովորում են, իբրև մի խորհրդաւոր ու  
սրբազան լեզու, որով գրուած են Հնդկաց ԱԷԴ — ասած կրօ-  
նական գրքերը : Թէև լեզուի քննիչները այս սանսքրիտ լե-  
զուն բոլոր Հնդկա — եւրոպական լեզուներին մ. յր են համա-  
րում, բայց նարկ չէ կարծել, թէ սրանք նրանից առաջ և-  
կած լինին, հապա միայն շախաղանց հարուստ ու կատա-  
րեալ լինելով, բոլոր մի ևւ նոյն գերդաստանի պատկա-  
նող լեզուների տարրերը իրա մէջ քիչ թէ շատ բովանդակում է :  
Սանսքրիտի այբուբենի թիւը յիսուն է ու մինչև քսան վան-  
կից բաղկացած բառեր ունի : Այս տառերը նոյն լեզուի մէջ  
դէմքն է են աւելում, որ նշանակում է — արտաշնէրէ քէ կամ  
քէ-ց-քէ, ևւ շատ կարգաւորեալ են ու ձախից դէպ ի աջ կողմն  
են գրում :

ըր որդկերանցով ու թողնելով Ասիոյ մէկ կողմն  
էր բնակվում ուրիշ ազգերի նախահարց հետ ,  
բոլորն էլ մի և նոյն լեզունովն էին խօսում (որի մէկ  
քանի յատկութիւնները պահպանեց Հնդկաց հին  
ու սրբազան լեզուն — սանսքրիտը) և մէկ ազգ էին  
կապում : Բայց յետոյ երբ այս ազգի մէկ մասը  
Ասիայում մնաց և գլխաւորապէս Հնդկաստանում,  
միւս մեծ մասը անցկացաւ Աւրոպա, ուր զանա-  
զան կողմեր ցրուելով՝ առանձին ազգութիւններ  
կապուցին և ամէն ազգ իրա համար առանձին  
լեզուով սկսաւ խօսիլ : Աւրոպայի գիտնականն աշ-  
խարհը , երկար վէճերից ու քննութիւններից յե-  
տոյ , վերջապէս որոշեց որ այն սկզբնական ցեղը  
Ծիւղերից մինն էր նաև մեր ազգի նախահարցը  
իր սերնդովը որ միւս ազգերի բաժանուելու ժա-  
մանակ ինքը եկաւ իր բնակութիւնը հաստատեց  
Վանայ լճի հիւսիսային-արևելեան կողմը , Եփ-  
րատի ու Տիգրիսի եզերքների մօտ, ուր մի առան-  
ձին ազգ կապուեցաւ իր սեպհական լեզուովը ու  
հայրենիքովը : Այս նախահարց անունովն է որ մենք  
'Հայք' կոչուեցանք, մեր լեզուն հայկական, ու  
մեր հայրենիքը «Հայաստան» : Այս հետևանքին  
հասաւ առաջին անգամ Պետերսբան հայազէս  
գերմանացին , որ իրանից առաջ եկած գիտնա-  
կանների և մանաւանդ հաշակաւոր Պատ քննիչի

անդեկու թիւններէից օգուտ քաղելով ցոյց տուաւ (1), որ հայկական լեզուն խորին մերձաւորու թիւն ունի Հնդկա-եւրոպական աղգաստհմի հետ, և Զենդաց կամ հին պարսկական լեզուի միջնորդութիւնով Սանսքրիտին շատ մօտ է կանգնած: Ս,յս կարծիքը որ Նէյմանն ու Վինդիշմանը աւելի էլ պարզեցին (2), այսօր իբրև հաստատ ընդունուած է, ոչ միայն եւրոպացի, այլ և հայուսումնականներէից, բայց ՚ի մի քանիսից, որոնք ոչ այնքան ճշմարտութեան հետեւելու նպատակով, որքան մի տրդայական փառասիրութիւնից շարժուած՝ չեն կամենում ընդունել թէ մեր լեզուն այն բարբառներէից մինն է, որ սուրբ Նքքի խօսքերին նայելով՝ աշտարակաշինութեան ժամանակ կազմուել են, այլ պնդում են թէ հայերէնը Սրարչին առաջին մարդուն շնորհած լեզուն է: Ս,յս կարծիքը ծագեցաւ Վիննետից Միսիթարեան վարդապետների մէջ, որոնք չնայելով երկրիս վրայ պատահած յեղափոխութիւններին, կամենում են որ նախնական լեզուն մարդուս ստեղծուած օրէից պահպանուած

---

(1) J. H. Petermann, Grammatica linguae armeniacae Berlin, 1837.

(2) Fried. Windischmann, Die Grundlage der Armenischen im Arischen Sprachstamme, Munich.

լինի Արարատեան երկրում, այն տեղ ուր դա-  
դարեցաւ Նոյի տապանը և ուր Աղամի մեղան-  
ջերուց առաջ գտնուում էր Նդեմական դրախտը,  
Այս կարծիքը յարուցանողներն են Չամչեան, Ին-  
ճիճեան և Ազերեան վարդապետները, մանա-  
ւանդ երկրորդը, որ իր առաջ բերածը ասացու-  
ցանելու համար՝ յիշում է գլխաւորապէս Հայաս-  
տանի նշանաւոր տեղերի անունները, որոնց ազ-  
գային աւանդութիւնների և սուրբ Գրքի մէջ  
պատմութեան համեմատ միտք է տալիս: «Նրե-  
ւան», ասում է նա, առաջին ցամաք երկիրն է,  
որ Նոյ ջրերի քաշուելու ժամանակ տեսաւ. «Նախ-  
իջեան», այն տեղը, ուր նա հապետը բնակեցաւ  
տապանից դուրս գալուց յետոյ. «Սկոռի» (իբր  
«արկ ուռի») — այդի տնկած տեղը. «Մարանդ»  
(իբր «մայր անդ») — մարդկութեան երկրորդ մօր՝  
Նոյեմվարայի թաղուած տեղը. «Սոնոյտուն» — Նոյի  
թաղուած տեղը, և այլն (1): Բայց այս փաստե-  
րը այնքան ծանրակշիռ չեն և ընդհանուր Ֆի-  
լոսոփայի առաջին նշանակութիւն չունին, որ իրա-  
հարաւար առանձին օրէնքների ունի: Ներուպական  
գիտնականութեան առաջ բերած փաստերը Հայոց  
լեզուն աշխարհիս միւս լեզուների նման՝ երեք ազ-

---

(1) Տես Հնախոս, Հայաստանի, Հատ. Գ, էջեր 12 և 13  
տեւեալները:

դատահման ընդ մէկին (Հնդկա-եւ ըստականին) պատ-  
կանելու և Սանսքրիտի հետ ներքին ազգակցու-  
թիւն ունենալու մասին, հակամատական Ֆիլո-  
լոգիայի օրհնութեան վրայ հիմնուած են: Բառական  
է մի քննողական աչք դարձնել հայկական բառ-  
ագրքի վրայ, որ կարելի լինի տեսնել, թէ որքան  
արմատական բառեր կան, որ ինչպէս հայերէնի  
նոյնպէս և սանսքրիտի ու պարսկականին են վե-  
րաբերում (1). և չէ կարելի ասել թէ այն ար-  
մատները վերջերը լեզուի հաստատութիւն ստա-  
նալու ժամանակին՝ փոխ առնուած են, որովհե-  
տե նրանք այնպիսի հասկացողութիւններն են վե-  
րաբերում, որոնք իւրաքանչիւր լեզուի հիմունքի  
մէջ են գտնուում, — մարդու առաջին զգացողու-  
թիւնները ու պիտոյքները բացատրող անուաներ:  
Պերանուանները, թուական անուանները, անկանոն  
բայերի խոնարհումները, շատ արմատական բա-  
ռեր, մանաւանդ հովուական, եր' բազործական և  
ընտանեկան յարաբերութիւնները բացատրող ա-  
ռաջին խօսքերը մեծ նմանութիւն ունին սան-  
սքրիտ, պարսիկ, հայ և առ հասարակ միւս Հնդկա-

---

(1) Հայերէնի մէջ գրեթէ չորս հարար արմատական բառ  
կայ, որոնցից շատը սանսքրիտի հետ մէկ են: Բոստիկ կազ-  
մութիւնը սանսքրիտի, յունարէնի ու դերմաներէնի մէջ պահ-  
պանուած կանոնների յարմար է լինում:

եւրոպական լեզուների բառերի հետ (1): Բայց այս մասին այսքանը բաւական համարելով, դառնանք մեր խօսքին :

(1) Ահաւասիկ այս տեսակ բառերից մի քանիսը: Հոչ սանսք. լեզուով դէր, յուն. պաթէր, լատ. pater, գերմ. fater, անգլ. father. հայերէնի մէջ որ տառը անհետացել է, ինչպէս ֆրանս. père, mère, frère բառերի մէջ. իսկ սանսք. ու հի փոխուելու մասին պէտք է ասել, որ այս փոփոխութիւնը շատ անգամ է պատահում հայերէնի մէջ: (Կ՛՛ սանսք. նշանակում է ընտանիք կերակրող, պահպանող:) Մոչ սանսք. մոր, լատ. mater, գերմ. multer, անգլ. mother, շվեդ. մոր: (Մ՛ սանսք. նշանակում է շափել:) Գոտոր, սանսք. դուտոր, պարսկ. դուտոր, գերմ. tochter, է տառը հայերէնի մէջ փոխուելու, փոփոխութիւն որ շատ անգամ է պատահում ու կանանուոր է ջենտաց, Պարսից ու Հայոց լեզուներում: (Գոտ սանսք. նշանակում է Կ՛Լ Կ՛ԵԼ Գոտոր — Կ՛ԵԼ Կ՛ԵԼ) Ոտոր սանսք. դուտոր, փոխանակ Գոտոր կամ Գոտոր, պարսկ. դուտոր, սրանից լատ. puer: (Պտ սանսք. նշանակում է Կ՛ԵԼ Կ՛ԵԼ Գոտոր — Ե՛ԵԼ Կ՛ԵԼ Կ՛ԵԼ) Կէն, սանսք. զան, առս. жона: (Ջտ սանսք. նշանակում է Զտանել:) — Ուրիշ անուններ. Կ՛ԵԼ, յուն. օտէն, հայ. օտէ, լատ. և ֆրանս. os. ոտէ, գերմ. auge, հայ. օտէ, Կ՛ԵԼ, լատ. genu, հայ. քոտէ, Կ՛ԵԼ, լատ. dens, dentis, հայ. օտէ, հրէ. անգլ. heart, գերմ. herz, հայ. օտէ, առս. сердце, stern, հայ. օտէ, հայ. օտէ, յուն. նավ, լատ. navis. ghau, գերմ. kuh, հայ. Կ՛ԵԼ, ևայն: — Թուական անունները մեծ նմանութիւններ ունին այս լեզուների մէջ: Եւ (մէկ), գերմ. eins, լատ. unus, յիշեցնում է սանսք. êka, իսկ Դէ, Դ, յուն. Դէ, Գոտ կամ շտ, սանսք. շտոր, պարսկ. շտ, առս. четыре, լատ. quatuor, ֆրանս. quatre. Կ՛ԵԼ, սանսք. Կ՛ԵԼ, պարսկ.

Լեզուն կամ խօսելու կարողութիւնը այն սքանչելի ձիրքերից մինն է, որ Արարիչը մարդուն « ըստ պատկերի իւրում և ըստ նմանութեան » ստեղծելով՝ շնորհել է նրան, միւս անբան արարածներից զանազանելու համար:

Հին և մանաւանդ ասիական գրականութիւնների մէջ «ազգ» բառի տեղ՝ շատ անգամ «լեզու» բառն է գործածվում, այսինքն թէ ազգը ու լեզուն հնումը մի և նոյն նշանակութիւնը ունէին: Եւ իրաւ որ ազգը ու լեզուն մեծ կապակցութիւն ունին մէկմէկու հետ, բոլոր այն մարդիկը, որոնք ՚ի բնէ մէկ լեզուով են խօսում, մի առանձին ազգութիւն են կազմում, ինչպէս որ խօսելու կարողութիւնը ունեցող արարածներից առ հասարակ կազմվում է մարդկային ազգը: Անգու թի մէջ երևում է ժողովրդի հասկացողութիւնը և մտածողութեան աստիճանը, որով զանազանվում է նա ուրիշ ազգերից և մի սեպհական կեր-

ԴՆՆ լատ. quinque, ֆրանս. cinq, գերմ. fünf. ԷՅ, սանսք. ५, պարսկ. ٥, ԻՆՆ, սանսք. ७, լատ. septem, յուն. ևպտա, ար. սանսք. ٧, յուն. ٧, լատ. octo, գերմ. acht, ֆրանս. huit. ԻՆՆ, սանսք. ٩, լատ. novem, յուն. ٩, գերմ. neun. ԴՆՆ, սանսք. ١٠, լատ. decem, յուն. 10, գերմ. zehn, ֆրանս. dix, ար. 10, десять, հնդ. १०, պարս. 10, սանսք. 10



պատանք ստանում: Ինչպէս որ մարդս՝ առանց  
լեզուի՝ անբան կենդանիներին շատ չէր զանազան-  
ուելու, այնպէս էլ իր սեպհական լեզուն չունե-  
ցող ժողովրդին ուրիշ ազգերին զանազանել կա-  
րելի չէ: Ահա այս պատճառով ազգն ու լեզուն  
միմեանցից անբաժան են:

Լեզուն ժողովրդի հետ և նրա բերանումը  
սաղբելով՝ ժամանակ անցնելով իր սկզբական մի-  
ութիւնը կորցնում է: Հայկ Բաբելոնից գալով՝ իր  
բնակութեան կեդրոնը հաստատեց Անայ լճի  
հիւսիսային — արևելեան կողմերը, և Հայոց ազ-  
գութեան հետ լեզուի հիմն էլ դրաւ: Բայց յետոյ  
Արամների, Տիգրանների, Արտաշէսների և ուրիշ  
աշխարհականների օրովը, Հայաստանի սահմանները  
ընդարձակուելով, ժողովրդի միութիւնը քանի գնաց  
քանդուեցաւ, լեզուն էլ ժողովրդի բնակած տեղե-  
րին նայելով այլ և այլ փոփոխութիւններ պիտի  
կրէր: Սակայն այս փոփոխութիւնները այնքան նշա-  
նաւոր չէին, որևտի հայկական լեզուն առան-  
ձին լեզուների չբաժանուեցաւ, այլ մի և նոյն լե-  
զուն այլ և այլ խօսակցութեան ձևեր ստացաւ,  
ուրիշ խօսքով, զանազան օրարբաներ, ձևացան:  
Ազգային մատենագիրների վկայութիւնից գիտենք,  
որ արդէն շատ հին ժամանակ Հայաստանում այլ  
և այլ բարբառներ կային, օրոնք միմեանցից քիչ

չատ զանազանութեամբ էին տառերի կամ ամբողջ  
վանկերի վերանայով, աւելանայով ու փոխադրո-  
ւելով, և էին Սրարատեան, Կորդուաց, Սղու-  
անից, Գուդարաց, Փոքր Հայոց, Պարսկահայոց և  
ուրիշ բարբառները: Այս բարբառների ամէն մինն  
էլ հետզհետէ դարձեալ ուրիշ երկրորդական ու  
երրորդական բարբառների բաժանուեցան, որ նոյն-  
պէս մէկը մէկու հետ մերձաւորութիւն ունէին:  
Ժամանակ եղաւ որ այս բարբառները մինչև երե-  
սունի հասան, որոնցից իւրաքանչիւրը այն դա-  
ւառի անունն էր կրում, որի մէջ որ խօսվում  
էր, ուստի և բոլոր այս բարբառները ընդհա-  
նուր անուանով կոչվում էին «դաւառական» կամ  
«աւանական» բարբառք (patois):

Բայց ոչ այս երկրորդական և ոչ բուն բար-  
բառներով խօսող ժողովուրդները կարող են առան-  
ձին ազգութիւն կազմել: Եթէ այս վերջինները  
ժամանակ անցնելով առանձին ազգութիւն ձե-  
ւացնէին, նրանց բարբառն էլ առանձին լեզու  
կը դառնար, և ընդհանրապէս՝ եթէ մի բարբառ  
լեզու դառնալու առաջինին հասնի, այն ժա-  
մանակ տարակոյս չկայ որ այն լեզուով խօսող ժո-  
ղովուրդն էլ իրա համար առանձին ազգութիւն  
կը կազմէ: Այսպէս ուրեմն միայն այն ժողովուրդ-  
ները «ազգութիւն» են կազմում, որոնք առան-

ձին լեզուով» են խօսում, միայն ազգերը, կամ  
ինչպէս որ հիները գեղեցիկ ասում էին, «լեզու-  
ները» կարող են իրանց սեպհական կեանքը ու-  
նենալ և նշանաւոր ու յիշատակի արժանի գործ-  
քեր գործել : Ս. յս գործողութիւնները անդադար  
փոփոխութիւնների ենթակայ լինելով, ցոյց են  
տալիս թէ ինչպէս ազգերն էլ հետզհետէ փոխ-  
վում ու կատարելագործվում են և իրանց հետ  
միասին կատարելագործվում է բոլոր մարդկային  
ազգը : Եւ որովհետեւ միայն այն ինչ որ փոփո-  
խութիւններ է կրում ու կատարելագործվում ու-  
նի իր պատմութիւնը, ուրեմն միայն ազգերը  
կամ լեզուները կարող են պատմութիւն ունենալ :  
Իսկ երկրորդական բարբառներով կամ նոյն իսկ  
բուն բարբառներով խօսող ժողովուրդները առան-  
ձին պատմութիւն չունին, և նրանց կեանքը ազ-  
գի ընդհանուր պատմութեան հետ խառնվում ու  
միանում է : Բայց եթէ իր առանձին լեզուն չու-  
նեցող ժողովուրդը չէ կարող պատմութիւն ու-  
նենալ, դրանից չէ հետեւում թէ պատմութիւն  
ունենալու համար բաւական է լեզու ունենալ :  
Զկայ մի ազգ որ չունենայ իր սեպհական լեզուն,  
բայց կան պատմութիւն չունեցող ժողովուրդներ :  
Պատմական ազգը ոչ միայն իր սեպհական լեզուն  
ունի, այլ և կարող է այն կերպով գործածել նր-

բան, որ նախ բանաւոր գրականութեան և յի-  
տոյ գրադիտութեան միջնորդութիւնով գրաւոր  
գրականութիւն ունենալու վիճակին հասնի:

Բայց սրն է լեզուի այդ բարձր գործածու-  
թիւնը: Լեզուն՝ կամ խօսելու կարողութիւնը  
այն գեղեցիկ յատկութիւններէից մինն է, որով  
մարդս կարող է նախ մտածել և յետոյ իր միտ-  
քը ուրիշին հաղորդել: Մտածելու կամ խօսելու  
ժամանակ մենք մեր ուշքն ու միտքը շատ ան-  
գամ այնպիսի առարկաների վրայ ենք դարձնում,  
որ մեր օրական ապրուստին, կամ նիւթական  
հանգստութիւններին ու գուարձութիւններին ևն  
վերաբերում, և այս շատ բնական բան է: Մարդս՝  
քանի որ իր ամէնօրուայ պիտոյքները հողացած  
է, է կարող իր սովորական շրջանից դուրս գալ՝  
որովհետև նիւթական կարօտութիւնները արդելք  
են լինում նրան ուրիշ բաների վրայ մտածելու:  
Նոյն նեղ շրջանի մէջ է գտնվում և ամբողջ ժո-  
ղովուրդը իր գոյութեան ամենասհին ժամանակ-  
ները: Սակայն մարդկային մտածողութիւնը կա-  
մաց կամաց անուանում ու բարձրանում է: Մար-  
դը՝ ոչ միայն իր ապրուստի, իր նիւթական հան-  
գստութիւնների հոգան է քաշում, այլ աշխա-  
տում է իր անձը ուրիշ զրկանքներից պաշտպա-  
նել և իր վիճակը օրէնքներով ապահովացնել:

Այս էլ բաւական չէ. մարդս իր մտածողութիւնը  
կարող է աւելի էլ բարձրացնել : Իր ամէնօրուայ  
ապրուստը հողալուց, իր վիճակը ապահովացնե-  
լուց յետոյ, նա սկսում է մտածել ոչ միայն այն  
բաների վրայ, որոնցից կարող է օգուտ քաղել,  
այլ և այնպիսի առարկաների վրայ, որոնցից ոչինչ  
ակնկալութիւն չունի : Արդէն երեխան՝ հապի-  
թէ իր մտաւոր կարողութիւնները սկսում են բաց-  
ուիլ, որ իր հետաքրքրութիւնը ամէն մի քայ-  
լափոխի ցոյց է տալի, և մի առարկայ տեսնելիս՝  
բաւական չէ խմանալով թէ «ինչի՞նչ է պէտք դա-  
լի» այն առարկան. նա հետաքրքիր է խմանալ թէ  
«ինչ բան է այն», և թէ «ինչի՞նչ է որ նա  
այնպէս է : Երեխայի այս հարցմունքների մէջ  
երևում է արդէն այն գեղեցիկ ձգտումը, որով  
կառնում է իր չորս կողմը եղած առարկաների  
վրայ ուղիղ կամ «ճշմարիտ» հասկացողութիւն  
ունենալ. սարգ ասեմ, նրա մէջ երևում է ձրգ-  
տում պէս 'ի ճշմարտութիւնը :

Այս ձգտումը որ երեխայի մէջ իր մտաւոր  
հասակումն է զարթնում, քանի վնում ոյժ է  
ստանում, եթէ մի ձախորդ հանդամանք արգելք  
չլինի նրան : Այնպէս զարթնում ու զօրանում  
է ճշմարտութեան սէրը ամբողջ ազգի մէջ : Եւ

ահա այս տեղ երևում է արդէն լեզուի բարձր նշանակութիւնը :

Բայ 'ի այս վերջ ձգտողութիւնից, մի ուրիշ ձգտում էլ վաղ սկսում է պարթնել ժողովրդի մէջ: Մարդս նրանով էլ չէ բաւականանում, որ աշխարքիս մէջ եղած առարկաները ու երևոյթները խելքով ըմբռնել կարող է, նրանց վրայ ուղիղ ու ճշմարիտ հասկացողութիւն ունի. նա հետևում է այդ առարկաներին կամ երևոյթներին կենդանացնել, հետևում է կրկին ստեղծել նրանց իր երևակայութեան մէջ: Աստի և խելքով ըմբռնած հասկացողութիւններից, երևակայութեան օժանդակութիւնով, « պատկերներ » է յօրինում, և եթէ հասկացողութիւնները « ճշմարիտ » էին, երևակայութեան ստեղծած պատկերներն էլ « գեղեցիկ » կը լինին: Աերջապէս մարդու մտածողութիւնը աշխարքիս մէջ եղած երևոյթներին կեանք տալով, նրանց կրկին ստեղծելովն էլ չէ բաւականանում, իրական աշխարքը նրա համար փոքր է. նա աշխատում է այդ իրական աշխարքը իր սեպհական ստեղծումներով լրացնել: Միայն այս վերջին դիպուածում աշխարքս կատարելապէս « գեղեցիկ » է երևում մարդու, և բաւականութիւն է տալի նրա դէպ 'ի գեղեցիկն ունեցած ձգտմանը, որ ճշմար-

տութեան ձգտման հետ՝ մարդկային և մտածողութեան և կեանքն է կառնում: Մտածողութեան ստեղծած աշխարհը ասվում է «մտացածին», կամ աւելի ճիշդ եւրոպական բառով «իդէալական» (1) աշխարհ, իսկ բուն աշխարհը՝ այնպէս ինչպէս որ է ու կայ, ասվում է «իրական» աշխարհ, կամ մէկ բառով «իրողականութիւն» (2): Իրողականութիւնը փոքր երեխային արդէն չէ բաւականացնում. նրա միջ արդէն երեւում է մի մեծ, թէ և անորոշ ձգտում կեղծիքներ լսելու: Մի և նոյն բանը սրատաճում է և ամբողջ ժողովրդների մէջ, նրանց երեխայութեան ժամանակ: Քայց որովհետև այս նախնական ժողովրդները, որքան և իցէ, հասակաւոր մարդկերանցից են բաղկանում, այս սրատաճումով ամէն տեսակ կեղծիքները բաւականութիւն չեն տալի նրանց. նրանց կեղծիքը խորին միտք ունին: Քաղցր սխալք համարելով կենդանի սխալքն այն անձիւքների յիշատակը, որոնք իրանց կարծիքով մարդկային նշանակութիւնը կատարել են, սկզբնական ժողովրդները ոչ միայն վերանորոգում են նրանց գործքերը կենդանի ու գեղեցիկ սրատկերներով, այլ աւելի էլ զարդարում ու գեղեցկացնում են այն սրատկերները, մի այնպի-

(1) Idéal.

(2) Réel, réalité.

սի կերպարանք տալով նրանց, որ այս ժողովրդնե-  
ղի կարծիքով կատարելագործութեան նշան է, մէկ  
խօսքով իդէալներն կազմելով նրանցից (1) : Այս  
զրոյցներն միջ, որոնք մարդուս մի ուրիշ ձրգ-  
տողութեան բաւականութիւն են տալի, — ձրգ-  
տում դէպ 'ի գեղեցիկն ու մտացածիւնը կամ իդէ-  
ալականը — լեզուն դարձեալ իր բարձր նշանակու-  
թեանն է հասնում :

Ինչպէս փոքր երեխայի մէջ, այսպէս էլ իւ-  
րաքանչիւր ազգի երեխայութեան ժամանակ, այս  
երկու ձգտողութիւնները զարթնում են : Առանց  
այս երկու ձգտողութիւններին մարդիկ չեն կա-  
րող կենալ, ինչպէս որ անկարելի է կենալ առանց  
հացի ու ջրի : Բայց այս երկու ձգտումներից ո՞րը  
առաջ երևան է գալի և ո՞րը յետոյ : Արեւի է  
ասել թէ երկուսն էլ միասին են զարթնում, բայց  
աւելի հեշտ բաւականութիւն է գտնում, ուրեմն  
և աւելի շուտ աճում ու զարգանում է ժողո-  
վըրդի ձգտումը դէպ 'ի գեղեցիկը : Արա պատ-  
ճառն այն է, որ այս ձգտողութեան շարժառիթը  
սերեակայութիւնն է, որ աւելի շուտ ու հեշտ

---

(1) Իդէալ նշանակում է մարդուս մի որ և իդէալատարիայի  
վրայ ունեցած ամենաբարձր կատարելութեան օրինակ :  
Մենք այս բառը, ուրիշ շատերի նման, չկարողացանք հա-  
յերէն բառով բացատրել, որ մի և նոյն ժամանակ և ճիշտ  
լինէր և հասկանալի :



վարդանում է քան թէ ճշմարտի շարժառիթը,  
այսինքն է «խելքը»:

Ռւբենն ժողովրդեան հանձարի առաջին ծը-  
նունդն ու ծաղիկը «բանաստեղծութեան» մէջ է  
երևում, որ մարդս ստեղծում է իր կենդանի խօս-  
քին զանազան գեղեցիկ ձևեր տալով: Բայց մարդ-  
կային ստեղծական կարողութիւնը լոկ լեզուով չէ  
բացատրւում, հասլա նաև ուրիշ նիւթական բա-  
ներով. այսպէս օշի միջնորդութիւնով՝ մարդս  
ստեղծում է «երաժշտութիւնը». իր կերպարանքի  
փոփոխութիւնները ու մարմնի շարժումաձևերը  
գործ դնելով, ստեղծում է «մնջկատակութիւնը» (1)  
և «կաքաւը», փայտը, քարը և ուրիշ պինդ ու  
կոպիտ նիւթեր բանացնելով, զանազան գեղեցիկ  
կերպարանքներ ու շէնքերի նոր նոր ձևեր է հը-  
նարում, որով և ստեղծում է «քանդակագոր-  
ծութիւնը» (2) և «ճարտարապետութիւնը». վեր-  
ջապէս տեսակ տեսակ ներկեր գործ ածելով, նա  
ստեղծում է «նկարչութիւնը»: Մարդկային ըս-  
տեղծագործութեան այս տարրերը, բոլորը միա-  
սին առնելով, այսինքն՝ բանաստեղծութիւնը, ե-  
րաժշտութիւնը, մնջկատակութիւնը, կաքաւը,  
քանդակագործութիւնը, ճարտարապետութիւնը

(1) Mimique.

(2) Sculpture.

ու նկարչութիւնը կոչվում են «գեղարուեստք» (1) և կազմում են այն իդէալական աշխարհը, որ իրական աշխարհը լրացնելու ու վարդաբերելու է ծառայում: Այս կերպով բանաստեղծութիւնը կամ խօսուան գեղարուեստը մարդուս դէպ ՚ի գեղեցիկն ունեցած ձգտման բաւականութիւն տուող միջոցներից մինն է, բայց այս միջոցը ամէնից առաջ է երևան գալի, և այս շատ բնական ու հասկանալի բան է. այս սեղ մարդս ստեղծագործութեան նիւթը ինքն իր մէջն է գտնում, այն ներքին կարողութեան մէջ, որով կարող է նախ մտածել և յետոյ իր միտքը խօսքով յայտնել: Բայց այս արժանաւորութեան հետ բանաստեղծութիւնը ամէնից բարձր տեսակ գեղարուեստը լինելու յատկութիւնն էլ ունի: Միւս բոլոր գեղարուեստները, քիչ թէ շատ, շրջափակուած են իրանց ստեղծական գործունէութեան մէջ: Ճարտարապետութիւնը ապշեցնում է կամ իր մասների գեղեցիկ յորինումով, որոնցից մի հիանալի ամբողջ է կազմվում, և կամ իր ձևերի մեծ վաշխութիւնով ու շքեղութիւնով: Բայց սրանումն

(1) Beaux — arts. — Գեղարուեստք կամ գեղեցիկ-տեսչական արվեստն արանք մեքենայական արուեստներից կամ առելի ձեռքարհեստներից զանազանելու համար, որոնք զվստարասելիս մեր նիւթական օգտին ու հանդատութիւններին են ծառայում:

են սահմանափակում այս գեղարուեստի մեր հոգու վրայ ներգործելու միջոցները. նա չէ կարող մինչև անգամ մի միտք բացատրել որոշ կերպով, այլ միայն իր արդիւնքների արտաքին ձևերով խորհրդաւոր կերպով արտայայտում է նրանց մէջ պարունակուած նշանակութիւնը : Քանզագործութեան շրջանը աւելի ընդարձակ է, նրա միջոցները աւելի բազմակողմանի ու հարուստ են : Քանզակագործութեան արդիւնքները արտայայտում են արդէն մարդկային մարմնի ձևերի գեղեցկութիւնը, և արձանագործը մարդուս դէմքի գծագրութեանը կարող է իր ուղած միտքը տալ ու նշանակութիւնը, բայց սա էլ դէմքի գծագրութեան միայն մէկ նշանակած ժամանակն է ներկայացնում, մարմնի միայն մի անսփոփոխ գրութիւնը, այն էլ արտաքին ձևերով. մարդուն նկարագրում է քաջ վեհանձն և զօրեղ, կնոջ — գեղեցիկ ու շնորհալի : Նկարչութիւնը կարող է բացատրել բոլոր մարդկային բնութիւնը, մինչև անգամ ներքին, հոգեկան կեանքը, բայց այս գեղարուեստն էլ առարկայ իմիայն մի բուսական գրութիւնն է նկարագրում : Աերջասպէս բոլոր այս գեղարուեստները աւելի իրանց ձևերով զբաւելով՝ գլխաւորապէս երևակայութեան վրայ են ներգործում և շատ քիչ են ազդում զգացմունքների վրայ : Նրաժշտութիւնը

առաւելապէս մարդկային հոգու ներքին կեանքն է  
բացատրում. միայն ձայներով կարելի է բացատրել  
հոգու ներքին դադանիքները և սրտի այն շարժ-  
մունքները որոնց համար ոչ խօսք կայ, ոչ պատ-  
կեր : Բայց երաշժտութեան հնչիւնները որքան էլ  
շատ աղղում լինին հոգու վրայ, ոչ ինչ պարզ ու  
որոշ բան չեն ասում խելքին : Միայն բանաս-  
տեղծութիւնն է որ ամէն բան պարզ ու բազմա-  
կողմանի է բացատրում, և այս էնդուր համար է,  
որ բանաստեղծութեան զէնքը — մարդկային խօսքը  
մի և նոյն ժամանակ և ձայն է և պատկեր : Խօսքը  
ձայնի նման ճկուն, ոլորուն է և զգացմունքի բոլոր  
շարժմունքներին հնազանդ, իբրև պատկեր, մարդ-  
կային խօսքը ամէն բան ճիշդ ու որոշ կերպով է  
ձևակերպում : Ս,յս պատճառով բանաստեղծու-  
թիւնը քանդակագործութեան պէս կարող է բա-  
ցատրել արտաքին ձևերի գեղեցկութիւնը, երա-  
ժշտութեան նման ներքին զգացմունքները, կա-  
րող է պատկեր նկարագրել նկարչութեան նման,  
ուրեմն և բոլոր գեղարուեստների մէջ թէ ժամա-  
նակով և թէ արժանաւորութիւնով առաջին տե-  
ղըն է բռնում : Սակայն այս առաջին գեղարուեստին  
շատ շուտ օգնութիւն է հասնում մի ուրիշն էլ,  
խօսքը, ինչպէս ասինք, ոչ միայն արտաբերվում է,

այլ և չափով (1) ու ներդաշնակութիւնով հնչ-  
 վում : Նախնական ազգերի բանաստեղծական ար-  
 դիւնքները չափով ու ոտով են և այս ոտանաւորները  
 երգվում են : Չայնական երաշժառութեանն էլ շատ  
 շուտ միաւորվում է դործիական երաժշտութիւնը .  
 արդէն շատ հին ժամանակ ժողովրդական երգե-  
 րին մի որ և իցէ նուագարան ձայնակից է լինում :  
 Աերջապէս գեղեցկութեան զգացման բաւակա-  
 նութիւն տաող այս առաջին միջոցներին ուրիշ  
 արուեստներ էլ օգնութիւն են հասնում , որ մար-  
 դրս ստեղծում է իր արտաքին ձևերից ու մարմնի  
 շարժումաճքներից նիւթ առնելով : Երգերի հետ  
 ընկերանում է մեջկատակութիւնն ու կարգաւր : Բո-  
 լոր այս գեղարուեստները գրեթէ բանաստեղծու-  
 թեան հետ միասին են ծագում , մինչև ամէնից  
 բարբարոս ու վայրենի ժողովրդների մէջ , իրանց  
 դոյութեան հնագոյն ժամանակներումը : Իսկ մնա-  
 ցած գեղարուեստները , այսինքն քանդակագործու-  
 թիւնը , ճարտարապետութիւնն ու նկարչութիւնը  
 միայն այն ժողովրդների մէջ ծագում կամ գէթ  
 կատարելագործվում են , որոնք քաղաքակրթու-  
 թեան ասպարէզին մէջ առաջ գնալու ընդու-  
 նակ են :

Այսպէս ուրեմն բանաստեղծութիւնից յի-  
 սոյ , կամ աւելի լաւ ասել բանաստեղծութեան

(1) Rythme.



հետ միասին շատ հին ժամանակ ծագում են նաև  
միւս գեղարուեստները, որոնց բովանդակութիւնը  
ակն յայտնի ցոյց է սալի սկզբնական ժողովրդների  
ձգտումը դէպ ի գեղեցիկը. բայց այս ձգտման հետ  
շատ շուտ միաբանում է միւս ձգտումն էլ դէպ  
’ի ճշմարիտը: Միայն ինչպէս արդէն տեսանք, սկզ-  
բնական ժողովրդների ցանկութիւնը աւելի բը-  
նութեան երևոյթների սկիզբն ու պատճառն իմա-  
նալու մէջ էր երևում, քան թէ նրանց կազմու-  
թեան ու նշանակութեան վրայ կատարեալ հաս-  
կացողութիւն ունենալ: Նրանք չէին հետեւում  
իմանալ, թէ այս ինչ երևոյթը ի՞նչ է և ինչից  
է կազմուած, հասկա միայն հետաքրքիր էին լինում  
իմանալու թէ ինչից է առաջ եկել և ո՞վ է նրա  
գոյութեան պատճառը: Աւ այս խարէական՝ բայց  
ըստ ինքեան դժուար հարցման պատասխանը շատ  
հնչտ կերպով էր առայվում, որովհետև այս տեղ  
ներդործողը «խելքը, չէր, այլ միայն «բուռն երևա-  
կայութիւնը» (1): Խելքը ամենեին չէր աչխա-  
տում դանազան փորձերով բնական երևոյթների  
ճիշդ պատճառն իմանալու, հասկա երևակայու-  
թիւնը իրանից ստեղծում էր ամէն բանի սկիզբն ու  
պատճառը: Այս կա՛մ այն երևոյթին ինչից գոյացա-  
ծը վճռելու համար՝ երևակայութիւնը հետզհետէ

(1) Fantaisie.



գերբնական արարածներ է ստեղծում, որոնց մէջ  
 տեսնում է ամէն բանի սկիզբը ու պատճառը, եր-  
 ևւակայութեան ստեղծած այս գերբնական արարա-  
 ծներից յօրինվում են առասպելներ (2), և այս  
 առասպելներից կազմվում է կամայ կամաց ժողո-  
 վրդի «գիցարանութիւնը» : Ուրեմն գիցարանու-  
 թիւնը վառ երևակայութեան ծնունդ լինելով  
 կատարելապէս բաւականութիւն է սալիս ժողո-  
 վրդեան դէպ ի դեղեցիկն ունեցած ձգտմանը, բայց  
 մի և նոյն ժամանակ ճշմարտութեան զգացմունքն  
 էլ բաւականութիւն է գանում, որովհետև այդ  
 գիցարանական պատկերները ստեղծուելով խելքն  
 էլ ըստ մասին ընկերանում է երևակայութեան  
 հետ : Այսպէսով սկզբնական ժամանակները ճրշ-  
 մարտութեան զգացմունքը գիցարանութեան մէջ  
 է գանում իր բաւականութիւնը, այսինքն թէ ճրշ-  
 մարտը ու գեղեցիկը միակեանցից անբաժան են,  
 որովհետև խելքը անդադար երևակայութեան օգ-

---

(2) Mythes—Առաջին բառի նախնական և բուն նշանա-  
 կութիւնն է պատմութիւն, աւելի իրրեւ շէնք, և հին Հայերը  
 այս մտքով սէտք է դորձածում լինելին այս բառը :  
 Ետքերը՝ երբ քրիստոնէութիւնը տարածուեցաւ Հայաստան,  
 ժողովուրդը սկսաւ արհամարհական աչքով նայել առ հաստ-  
 բակ բոլոր հեթանոսական աւանդութիւնների վրայ, առաջ  
 ջուայ կրօնական բառերը իրանց բուն նշանակութիւնը կոր-  
 ցրին և սկսան վատ մտքով դորձ գրուիլ : Առաջին հարց մեր  
 այժմեան բարբառների մէջ նշանակում է շէնք բանից հասող հարց :

նութեանը կարօտ է լինում: Ինչպէս որ չկայ մի  
ժողովուրդ որ չունենայ երգեր, այսպէս էլ չկայ  
մի ժողովուրդ, որքան էլ կուպիտ լինի, որ չունե-  
նայ իր առասպելները կամ դիցարանութիւնը,  
քայց աւելի վարդացած ու առաջադէմ ազգերի  
մէջ՝ առասպելները ոչ միայն բանաստեղծութեան,  
այլ և քանդակագործութեան հետ են միարա-  
նում: առաջին արձանները՝ որ և իցէ ժողովրդի  
մէջ՝ դիցարանական առարկաներ են պատկերաց-  
նում: այսինքն թէ՛ այս գեղարուեստն էլ սկիզբները  
ոչ միայն գեղեցիկի, այլ և ճշմարտութեան գղաց-  
մանը բաւականութիւն էր տալի:

Մինչև հիւսկայ ասածներինցս տեսանք, թէ  
ժողովրդական սկզբնական գրականութիւնը ամ-  
բողջ բանաստեղծութիւն է, որ պատմական ժամա-  
նակներինց առաջ ծնում է ժողովրդի մէջ և շատ  
գարեր շարունակ նրա հետ աճում ու վարզւում  
է: Տեսանք նոյնպէս, թէ՛ ազգային հոգևոր վար-  
դացումը սկսում է առասպելների ստեղծուելովը,  
որոնց բովանդակութիւնինց կազմվում է ժողովրդի  
դիցարանութիւնը, բայց մի և՛նոյն ժամանակ և այն  
առասպելների հետ կազմվում է ազգային լեզուն  
ու բանաստեղծութիւնը:

Ուրեմն ազգային նախնական բանաստեղծու-  
թեան պատմութիւնը պիտոյ կապուած է ժողո-



վրդի կեանքի պատմութեան հետ նրա մէջ պարզ  
երևում է ամբողջ ժողովրդի կրօնական, բարոյա-  
կան ու մտաւորական դրութիւնը, նրա անցեալ  
ու ներկայ կեանքը: Այս պատճառով ժողովուրդը  
իր բանաստեղծութեան մեծ նշանակութիւն է  
տալի, և իբրև մի սուրբ ժառանգութիւն բերա-  
նացի աւանդում է նրան որդոյ որդի ու ցեղէ ցեղ:

Ազգային նախնական բանաստեղծութիւնը  
ընդհանուր անո՞նտի կոչում է («էպոս» կամ «էպի-  
պոսանական բանաստեղծութիւն») (1): Բայց այս  
վիպասանութիւնը ժամանակ անցնելով իր ամ-  
բողջութիւնը կորցրեց և այլ և այլ մասների կամ  
անդամների բաժանուէրացաւ: Այս անդամների գը-  
լտաւորներն են «երգը» և «ըրոյցը»: Բայց զբանց-  
մով չեն վերջանում բոլոր վիպասանական աւան-  
դութիւնները: Ժողովրդի հին կեանքը երևում է  
նոյնպէս «առածների», հանելուկների, կամ «առեղ-  
ծուածների», «երդումների» ու «անեծքների» և  
մինչև անգամ մասնաւոր բառերի մէջ, որովհե-  
տև լեզուն, ինչպէս վերը ասացինք, մի և նոյն  
պտեղծական ուժով կազմուեցաւ, որից ծնան առա-  
պելները, աւանդութիւնները այն առապելների  
վրայ և բանաստեղծութիւնը, որ առապելական  
աւանդութիւնները բացատրելու է ծառայում:

(1) Յարմարին հարկ է, որ բառ առ բառ նշանակում է «էպոս» կամ «էպոս»:  
Սակայն առջև եկած են եզրադասիան *épopée*, *épique*  
բառերը:

Վիսրասանական բանաստեղծութեան գրչաւոր ու հական սարրերը են, ինչպէս վերելք ասացինք, երդերն ու զրոյցները, որոնց հիմը մի և նոյն է, և միայն բովանդակութիւնով ու արտաքին ձևով են զանազանում միմեանցից:

Երդը ժողովրդի արտաքին կամ ներքին կեանքից է վեր առնում իր նիւթը: Եթե աստ բանաստեղծութեան արդիւնք, երդը շատ անգամ աղգային սուանդութիւնների վրայ անբնական ու մտացածին բաներ է աւելացնում, բայց դրանից պէտք չէ կարծել որ իրական կեանքի հետ ունեցած յարաբերութիւնը կորցնում լինի: Ար և իցէ նշանաւոր դիպուած պատմելիս՝ կամ մի դիւցազնի անձնաւորութիւնը նկարագրելիս՝ այն դիպուածի ժամանակն ու ակտը որոշում է, այն դիւցազնին քիչ շատ կենդանի ու ճիշդ գոյներով է նկարագրում: Ս, յս պատճառով մեր նախնիք աղգային երդիչներին « վիսրասան » էին անուանում, այսինքն եղած ու պատահած բաները

երգող (1): Բոլորովին ուրիշ է զրոյցը (2) այն-  
տեղ՝ հէնց առաջին խօսքերից երևում է, թէ  
աւելի կեղծիք կայ քան թէ պատմական ճշդու-  
թիւն: Զրոյցի ստեղծած աշխարհը իրական կեանքի  
հետ շատ քիչ յարաբերութիւն ունի և այդ յա-  
րաբերութիւնը քանի գնում՝ կորչում է: Աթէ  
երգերը անցքերի տեղն ու ժամանակը քիչ շատ  
ճիշդ կերպով որոշում են, զրոյցների մէջ ընդ-  
հակառակն՝ անյայտ են մնում գործողութեան  
տեղը, ժամանակը և նոյն խիզ գործող անձինքը:  
Նոյն ինքը ժողովուրդը, իբրև իրաւացի քննիչ  
ու պատաւոր իր զրականութեան մէջ, ցոյց է տա-  
լի իր կասկածը զրոյցների մէջ պատմուած ճրշ-  
մարտութեան վրայ: Մեր այժմեան զրոյցների  
կամ հէքիաթների մեծ մասը այս սովորական  
խօսքերովն են սկսում. «Այլևէ ու չէ էլի» (մի

---

(1) Աւել մեր հին գրա՛ւանութեան մէջ նշանակում է շատ  
անգամ երէն, որին բոլորովին համաձայն է մեր այժմեան  
Խո՛ւն գուրցուածքը, որ նշանակում է երէ՛ երէն ինչպէս որ  
Խո՛ւն նշանակում է երբեմն երէն: Այսպէս էլ շո՛ւն (որի ար-  
մատն է զրոյց,) նշանակում է մեր հին և նոր լեզուներում  
պատճէ, Խո՛ւն է շո՛ւն Պոլսոյ բարբառով նշանակում է  
պատճէն, ասում են: Ահա ստանի և Մորապիոյ բարբա-  
րոս ներում շո՛ւնն ասել է Խո՛ւն:

(2) Զրոյց ընդհանուր մտքով նշանակում է die Sage ска-  
зание, իսկ շրջափակուած մտքով—conte, сказка.

մարդ ու կնիկ է էլել) : կամ երբեմն « կար ու  
չկար (մի թագաւոր կար) » : Այս խօսքերը եթէ  
մէկ կողմից բացատրում են առ հասարակ զրոյց-  
ների խոր հնութիւնը, միւս կողմից աւելի այն  
էն ցոյց տալի . թէ ինչ քիչ հաւատ է ընծա-  
յում ժողովուրդը զրոյցների մէջ պատմուածնե-  
րին : Տարակոյս չկայ որ այս ընդհանուր ձեւը մեր  
զրոյցների մէջ հին ժամանակներից պէտք է մնա-  
ցած լինի, այսինքն թէ մեր նախնիքն էլ զրոյցի  
վրայ մի և նոյն հասկացողութիւնն են ունեցել :  
Երգերի մէջ էլ կարող են պատմական ու աշխար-  
հադրական անձնորութիւններ պատահել, բայց  
այդ անձնորութիւնները անդխտութիւնից են ա-  
ռաջ դալի : Կսկ զրոյցների մէջ պատմիչը դիտու-  
թեամբ ժամանակի և տարածութեան բոլոր սահ-  
մանները քանդում է, խօսում է չեղած երկիր-  
ների վրայ, պատմում է չպատահած ու չպատա-  
հելիք բաներ, և այսպէսով մի զտուած ու չտես-  
նուած աշխարք է բաց անում մեր առաջին : Այն-  
պատմական երգերի նիւթը միշտ ժողովրդական  
կեանքի պտտկանող անձինք ու անցքեր են : Եր-  
գերը միշտ ազգային են : Զրոյցը ընդհակառակն՝  
մէկ երկրից միւսը անց է կենում, և իբրև կեղ-  
ծիք՝ ամենայն տեղ գնում է : Այս կեղծիքների  
պատճառով է որ զրոյցների պատմիչները շատ ան-

գամ օտարի երևակայութիւնից օգուտ են քաղում. նրա համար է որ շատ զբոյցներ անբողջապէս մտել են մեր մէջ օտար ազգերից, շատերն էլ գնացել են մեզանից օտար երկիրներ (իհարկէ այս փոխանակութիւնը պատահում է աւելի դրացի ազգերի մէջ), ոմանք էլ փոփոխութիւններ են կրել, և գրեթէ բոլորն էլ հեռաւոր երկիրների վրայ են խօսում:

Իբրև զանազանութիւն երգերի ու զբոյցների արտաքին յատկութիւնների մէջ, պէտք է ասած՝ որ առաջինները ոտով ու շափով են, որով երգերը հաստատ ու երկար ժամանակ են մնում ժողովրդեան յիշողութեան մէջ. իսկ երկրորդները թէ և արձակ՝ բայց դարձեալ մի տեսակ չափ ու՛ ին: Զբոյցի միջնորդութիւնով վկայը հեռեակ շարադրութեան կամ արձակի է փոխվում, բայց սկիզբները երկուսն էլ խառն վիճակի մէջ են: Զբոյցների նիւթը թէ և շատ անգամ երգերի նիւթից հին է լինում, բայց երգը իր արտաքին ձևով զբոյցից հին է:

Թէպէտ և ժողովրդեան սկզբնական ժամանակների զարգացման պէս՝ նրա բանաստեղծութիւնն էլ երկար ժամանակ մի և նոյն անշարժ դրութեան մէջ է մնում, բայց պէտք չէ կարծել թէ նա ամենեւին փոփոխութիւններ չէ կր-

բում . կեանքի մէջ բարոյական անշարժ ու անսի-  
փական բան չկայ ու չէ կարող լինել : Իրաւ է որ  
նախնական բանաստեղծութիւնը լուսաւ որեւէ ժա-  
մանակների անդադար փոփոխութիւններ կրող բա-  
նաստեղծութեան հետ համեմատելով անշարժ է,  
բայց այդ անշարժութիւնը գլխաւ որապէս այն բանի  
մէջ է երևում , որ նոյն բանաստեղծութեան հը-  
նարոյն իդէալները վերջին ժամանակները տեղ-  
ծուած իդէալների հետ հաւասարապէս հաւա-  
նելի են երևում մշակուած բանաստեղծութիւն  
չունեցող ժողովուրդներին . ուրիշ խօսքով , բանա-  
ւոր բանաստեղծութեան հին տարրերը երբէք բո-  
լորովին չեն անհետանում . բայց այդ արդելք չէ  
նրան նոր տարրեր ընդունելու : 'Ն հարկէ , այս  
նոր տարրերը միայն այն ժողովուրդների բանաս-  
տեղծութեան մէջ տեղ են գտնում , որոնք իրանց  
կեանքի մէջ փոփոխութիւններ են կրում ու պատ-  
հական ազդ լինելու պատրաստվում են :

Այսպէս ուրեմն պատմական ժողովուրդների  
սկզբնական բանաստեղծութեան մէջ էլ կանայ  
կանաց նոր իդէալներ են ծնանում , և այն իդէալ-  
ները ժողովուրդի մէջ առաջացած նոր իդէանե-  
րի կամ կարծիքների նոր հայեցումաձևերի հե-  
տեանք են : Արդ ի՞նչ հայեցումաձևեր , կամ  
աւելի պարզ ասենք , ի՞նչ աչքով էր մտիկ տալի

սկզբումը մարդս ինքն իր վրայ և աշխարքիս մէջ  
եղած առարկաների վրայ : Նա ինքն իրան բոլո-  
րովին թոյլ ու տկար էր տեսնում իր չորս կող-  
մը եղած բնութեանը հանդէպ, ուտի և սիրտ  
չարաւ մաքառել նրա հետ, շիմացաւ յաղթել  
նրան : Նրա ամէն մի երևոյթի մէջ մարդս տես-  
նում էր մի կենդանի ու անյաղթելի գոյութիւն, որից  
դողում ու ակնածում էր. և ահա առաջ ու առաջ  
նա սկսեց այն կենդանի պատկերացած երևոյթների  
վրայ խօսել ու երգել . նրա երգերի առաջին խղէպլ-  
ները «աստուածները» կամ «դիքն» էին, առա-  
ջին երգերը աստուածների վրայ ստեղծած ա-  
ռասպելներ էին : Բայց ահա մարդս սկսում է  
կամաց կամաց բնութեան հետ մաքառել . նա կա-  
րողանում է արդէն բնութեան իր հանդէպ դը-  
րած մի քանի արդելքներին յաղթել . այն ժա-  
մանակ նա նշմարում է որ իր մէջ, մարդուս մէջ  
ոյժ կայ և զօրութիւն, բայց այդ զօրութիւնը  
կատարելապէս յայտնուելուց ու իրական աշխար-  
քի մէջ երևան գալուց առաջ՝ մարդս սկսում է  
երգել նրա խղէպլական քաջագործութիւնները :  
Որով և իր բանաստեղծութեան խղէպլները փոխ-  
վում են, աստուածների տեղ ուժեղ ու զօրաւոր մար-  
դիկ — «դիւ ցազուններ» են բռնում : Այս դիւցա-  
զունների քաջութեան գործքերը բնութեան և

ըւոյթների հետ սրտերստղւեւում և նրանց յաղթելումն ևն կայանում : Բայց այս սեղ այս բնութեան յաղթումած և ըւոյթները ոչ թէ սատուածներ ևն, այլ չար ոգիներ : Սակայն մարդկային զօրութեան այս խելայնութիւն, ուղում և մասել դիւցազուններին, մի արտաքոյ կարգի ոյժ ևն ընծայում, իբր թէ իրանց ունեցած ոյժը սատուածներից կամ գերբնական արարածներից ևն ստացել . այս սրտճառով էլ դիւցազունք, այսինքն « սատուածների ցեղից » կամ երբեմն էլ « կիսասատուած » ևն աւելում : Բայց կամաց կամաց աւելի էլ փոխւում է մարդու հայեցումքը . նասինքն իր մէջ գերբնական ոյժ ու զօրութիւն էլ չէ տեսնում, նա զգում է որ վիժխարի ու յաղթանդամ հսկաների կարօտութիւն չունին մարդիկ, հասկանում է թէ դիւցազուններն էլ մարդիկ ևն, որոնք շատ անդամ ևրկայնասհասակ չին ու մարմնաւոր ոյժ չունին, այլ իրանց հոգեւոր զօրութիւնովը շարժում ու առաջ ևն տանում մարդկային ազգը, այսինքն թէ բուն դիւցազունները սրտանական անձինք ևն : Եւ ահա հասկն թէ ժողովուրդը նշմարում է այս անձնաւորութիւնների բոլոր արժանաւորութիւնը, որ իր ևրեակայութիւնը արդէն սկսում է նկարագրել նրանց բուն պատկերը : Երեակայութիւնը ստեղ-



Տու՛մ է նոր «պատմական» խղէայներ, բայց սկզբ-  
ներումը դուրս չեն ձգվում դիւցազնական խղէալ-  
ները, հասար ընդհակառակն իբրև թէ օգնութիւն  
են հասնում նրանց. պատմական անձինքը կամ  
դիւցազուններով են շրջապատվում, և կամ թէ  
իրանք դիւցազունների են փոխվում, միայն այն դա-  
նազանութիւնով՝ որ դերբնական արարածների հետ  
չեն պատերազմում, այլ բուն պատմական թրշ-  
նամիների հետ: Արևակայութեան ստեղծած այս  
պատմական անձինքը՝ բուն պատմական անձինք-  
ներից շատ աւելի գործքեր են կատարում. ժո-  
ղովրդական բուռն երևակայութիւնը շատ անգամ  
այնպիսի յատկութիւններ է տալիս նրանց, որ ըստ  
ինքեան շունին, բայց ինքը ժողովուրդը վառիա-  
քում է որ ունենան:

Սկզբնական բանաստեղծութեան այս տեսակ  
տեսակ փոփոխութիւններին նայելով՝ երգերն էլ  
երեք զլիսաւ որ տեսակների են բաժանվում և են.  
«աստուածաբանական» կամ «դիցաբանական», «դիւ-  
ցազնական» և «պատմական»: Բոլոր այս ատոիճան-  
ներից անցկացաւ Հայոց բանաւոր բանաստեղծու-  
թիւնը. այն անշարժութիւնը որ իւրաքանչիւր  
ազգի բանաւոր բանաստեղծութեան սեպհական է  
էնդուրումն է երևում, որ պատմական երգերի հետ՝  
երկար ժամանակ մնացին ու երգուեցան դիւցազ-

Նաական երգերը • ժողովրդեան համար իր դիւցա-  
պունները այնքան սիրելի են, որ նա դժուարու-  
թիւնով է բաժանուիմ նրանցից. մինչև անգամ  
պատմական անձիւքներին, ինչպէս վերևը յիշե-  
ցինք, դիւցապունների արժանի գործողութիւններ  
է անել ստալի և նրանց կարգը դատում:

Հայոց հին երգերի նախնական գոյութեան  
և նրանց արտաքին ու ներքին յատկութիւնների  
վրայ մի փոքրիկ ճաշակ է ստալիս մեզ մեր պատ-  
մութեան հայրը՝ Մովսէս Խորենացին, որ իր ան-  
մահ աշխատութեան մէջ աւանդել է մեզ ազ-  
գային յիշատակների մի քանի հատուկատորները:  
Ս. յս թանկագին հատուածները երկուսի են բա-  
ժանուիմ • կան այնպիսիները, որոնք իրանց սկզբ-  
նական կերպարանքը դրելից, անխափա պահպա-  
նել են, ինչպէս որ երևում է նրանց մէջ յիշա-  
տակուած դիպուածներից, դարձուածներից և  
կցկցուն լեզուից • այնպիսիներ էլ կան, որոնք ի-  
րանց արտաքին յատկութիւնները կորցրել և ու-  
րիշ փոխախութիւններ են կրել, բայց նրանց մէջ  
գտնուած նախնական բառերից երևում է որ ազ-  
գային հին երգերից հանուած ու համարուած  
են: Ս. աջիւնները շատ փոքր են թուով, իսկ վերջին-  
ները աւելի են և ըստ մեծի մասին մեր նախնի  
Հայկազանց են վերարկոււմ: Ս. յս հատուկատորները

որքան էլ կհաստո ու թերատ լինին, յայտնի ցոյց  
են ստալե այն կենդանի համակրութիւնը, որով  
Հայերը մասնակից են եղել միշտ Հայաստանի պատ-  
մական վիճակին: Ծամանակակիցները իրանց օրովը  
սալրող նշանաւոր անձինքը ու նրանց դործողու-  
թիւնները երգում էին և հետեւեալ նորածին սե-  
րունդին աւանդում, որն որ իր հայրերից ու պա-  
պերից կսակուած հնու-թիւնը իբրև մի սուրբ ժա-  
ռանգութիւն պահպանելով, աւելացնում էր նրա  
վրայ իր ժամանակի երգերը և յետոյ իր դի-  
պած բանաստեղծական դանձերը զգուշութիւնով  
աւանդում էր յետագաներին: Այսպէսով մի սե-  
րունդ միւսի հետ պատմական աւանդութիւ-  
թիւնով կապուելով՝ երգերը, այս թանկագին պա-  
հարանները պատմական աւանդութիւնների, շատ  
դարեր շարունակ սալրեցան մնացին ոչ միայն հե-  
թանոս՝ այլ և քրիստոնեայ Հայերի բերանումը  
(1): Բայց ժողովրդական երգերը՝ որքան էլ հա-  
րուտ և տեղական լինին, երկրի ամէն կողմերը  
հաւասար կերպով ոչ ստեղծվում, ոչ էլ պահպան-  
վում են, և այս բանի պատճառը գլխաւորա-  
պէս կլիմայի փոփոխութիւնն է, որի ազդեցու-  
թիւնը մեծ է ժողովրդի վարդապանն ու նրա

(1) Խոր Գր. Ա. Գլ. 1, Ա. Գր. Բ. Գլ. Ծ: Գր. Մաղխա-  
րոս, Թուղթ առ Գրիգոր Մոկաց եպիսկոպոս և ուրիշները:

ատեղծական կարողութեան վրայ, Յունաստանի  
զանազան դաւառներից աւելի Յունիայի պարզ եր-  
կրների տակ ծաղկեցաւ բանաստեղծութիւնը, այն-  
տեղ կազմուեցան այն հազներգուների խմբերը, որոնց  
հայրն ու հայրենակիցը համարվում է Հոմերոս :  
Հայաստանում, ինչպէս երևում է, այս փառքը  
վայելեցին Գողթն (այժմեան Ս. դու լիս) « դինարէս  
դաւառի բնակիչները », և այս շատ բնական ու  
հասկանալի է : Զ յիշելով կլիմայի բարերար ազդե-  
ցութիւնը, Գողթն դաւառը նշանաւոր էր հնումը  
իր առատ ու բարեհամ դինիներով, յայտնի է թէ  
ուր կայ դինի, այն տեղ կայ զուարթութիւն, և  
զուարթութեան հետ միանում է միշտ երգն ու  
պարը : Ս. յս բանը հաստատում է խորենացին,  
որ իր պատմութեան ընթացքի մէջ մի քանի  
անգամ դիմում է Գողթնեցոց յիշողութեանը :

Փոքր ինչ վերելք ասածներիցս դու շակ-  
վում է արդէն որ երգերը՝ բաց 'ի վիպասա-  
նական նշանակութիւնից, ունին և պատմա-  
կան նշանակութիւն, և կարծենք թէ գայթակ-  
ղութեան առիթ չենք տալ, եթէ ասենք թէ  
Հայկազանց պատմութիւնը ըստ մեծի մասին ժո-  
ղովրդական երգերից հանուած ու ազդային ա-  
ւանդութիւնների վրայ հիւսուած է : Ս. յս բաղ-  
դին վիճակուած է ոչ միայն Հայոց, այլ և բոլոր

(մանաւանդ հին) ազգերի սկզբնական ժամանակների պատմութիւնը որոնց մէջ քաղաքական պատմիչները գրականութեան պատմիչների հետ՝ որոշ տեսնում են իւրաքանչիւրի առատագիւլական և դիւցազնական ժամանակները: Միայն Հայոց պատմութիւնը դեռևս առողջ քննադատութեան տակ ընկած ու մշակուած չլինելով, շատերը մինչև այժմ կարծում են մեղանում՝ թէ մեր Հայկազուն նահապետները վիթխարի ու յաղթանդամ հսկաներ են եղել և ոչ մեզ նման սովորական մարդիկ: Արանով մենք չենք կամենում մի որ և իցէ կասկած ցոյց տալ Հայոց նախնական պատմութեան ճշմարտութեանը վրայ, ամենևին ոչ այդ հսկառակ կը լինէր մեր ասածներին երգերի վրայ, որոնք պարունակում են իրանց մէջ ազգային աւանդութիւններ, այլ միայն յիշել ենք կամենում թէ քննադատի պարտքն է ճշմարտութիւնը զտել այն կեղծ իքներկոյ, որ ժողովրդի բուռն երեւակայութիւնը իրանից աւերացրել է, և որոնք մեծ նշանակութիւն ունին միայն գրականական պատմութեան համար: Այս պատճառով ահա այժմ պատմաբանները ազգային երգերը պատմութեան աղբիւրների կարգն են դասում և աշխատում են գրանել նրանց մէջ ժողովրդական ձայնի արձագանքը: Այս բանը սրանից գրեթէ տասնը չորս դար ա-

ուաջ հասկայել էր մեր պատմիչներին գլուխ՝ Մովսէս  
Խորենացին, որ մի պատմական երևոյթի գոյու-  
թիւնը, հաստատելու համար՝ ազգային երգերին  
ու աւանդութիւններին է դիմում : Բայց շատ ան-  
գամ երգերի սկզբնական կերպարանքը անխափա պա-  
հած չինելով առաջի բերան ազգային բանաս-  
տեղծութեան հետքերը չեն երևում վեր ի վերոյ  
մասից առողին : Միայն խիստ քննութիւնը ցոյց  
կրասց մեզ որ Խորենացու Հայկազուն նահապեա-  
ներին ու թաղաւորներին այստեղ այնտեղ տուած  
դովեասները հին երգերից հանուած են, որոն-  
ցից մի քանիսը ինքը իր ահանջովը լսել է վե-  
պասաններից, իսկ մնացածները Մար—Սբաս Աստի-  
նայի գրքից է հանել, որ մեր ազգի ծագման առաջին  
պատմութիւնը գրելու պատիւն ու պարծանքը ու-  
նի : Այսպէս, օրինակի համար, Արուանդեան Տի-  
գրանի քաջութիւնների վրայ պանծալով խօսելիս՝  
պատմարանը Մար—Սբասից առնելով հոմերա-  
կան գիւցապունների արժանի ածականներով է դո-  
վարանում նրան, որոնք հին երգերից հանուած  
լինելուն ամէկին տարակոյս չկայ : Եւ յիրաւի,  
մեր «ամէնից խոհեմ», քաջ ու հարուստ թա-  
գաւոյին արժանապէս դովելու բաւական խօսք  
չգտնելով, վիպասանների տուած դովասանքներին  
է դիմում ու իր սիրելի թագաւորին խարտե-

չահեր, գունեան, մեղուակն, անձնեայ, թի-  
կնաւէտ, առոյգարարձ, գեղեցկաւն» ամականներ  
տալիս, որոնց վրայ հնու-թեան կնիքը յայտնի ե-  
րևում է, որովհետև բոլորն էլ մարդու արտաքին  
յառիտ-թիւններին, մարմնաւոր ու ժի ու գեղեցկու-  
թեան են վերաբերում: Նոյն իսկ նախնական նա-  
հասկաների ու նրանց շինած կամ բնակած տե-  
ղերի անունները, որոնք պատմական նշանակու-  
թիւն ունին, յայտնի ցոյց են տալի որ ժողովրդական  
հնադոյն աւանդութիւններից առնուած են:  
Որովհետև որոշ գիտնեք որ հին և մանաւանդ  
արևելեան ազգերի սովորութեամբ՝ Հայերն էլ սո-  
վորութիւն ունէին իւրաքանչիւր անձի յատկու-  
թեանը կամ բարքին համեմատ՝ մի նշանական  
անուն տալ նոյն անձին (Անուշաւան Պարեա, Սուր,  
Գոռակ, Պերձ, Արբուն, Բապուկ, Սկայորդի), ինչ-  
պէս որ շատ տեղերի բնակիչները կամ շինողները  
նոյն տեղերի անուանակոչութեան ը առիթ են տու-  
ել (Հարթ, Հայկաշէն, Ալմաւիւր, Մասիա, Գեղա-  
քունի, Փառախոտ, Զողակերտ, և այլն): Այս գե-  
ղեցիկ հնարքն էին գործ դնում հիները նշա-  
նաւոր դիպուածները յիշողութեան մէջ պահե-  
լու. պատմական անձինքներին ու տեղերին այս-  
պիսի նշանական անուններ տալով, նրանք այն  
անձինքների ու տեղերի վրայ և նրանց առիթով

հիւսուած գրոյցները հեշտու թիւնով միաներն էին պահում ու բերանէ բերան անցընելով յետագայ սերունդներին էին աւանդում (1):

Այստեղ մի ուշադրութեան արժանի խորհրդէր է ելանում մեր առաջին, որի վրայ չենք ուզում լռութեամբ անցկենալ: Ասացինք թէ հայկական հին երգերի մէկ քանի նշխարները Խորենացին իր ժամանակի վիպասանների բերանից է քաղել մի քանիսն էլ Մար—Արասից առնելով մեզ աւանդել է: Բայց ի՞նչպէս կարող էին Հայոց բերանացի աւանդութիւնները, երգերն ու աշխարհագրական յիշատակարանները Մար—Արասի գրքումը տեղիք ունենալ, մինչդեռ յայտնի է որ նա մեր ազգի ծագման ու Հայկազուն նահապետների յաջորդութեան վրայ տուած տեղեկութիւնները Նիւնուէի դիւանատան մէջ գտած Ասորեստանցոց կամ Քաղզէացոց յիշատակարանից է հանել, որ ասորի պատմագրի վիպութեանը նայելով բոլոր հին ազգերի սկզբնական պատմութիւնը բովանդակում էր և Մեծին Աղէքսանդրի օրովը ու նրա հրամանովը յունարէն թարգմանուած էր: Այս ուշադրութեան արժանի խնդրի վրայ վեր 'ի վերայ նայողը շղանդաղիք անշուշտ Մար—Արասի

---

(1) Խոր. Գր. Ա. Գլ. 2:



Տեանաբար և Մովսէս Խորենացու անկեղծութեան վրայ կասկածելու : Սակայն այն տարակուսական դրութիւնից ազատելու մի հեշտ միջոց կայ. հարկ է միայն խմանալ թէ հին Ասորեասանցիք ի՞նչ ազգ են եղել և ի՞նչ հազարդակցութիւններ են ունեցել Հայոց հետ : Ասիոյ հին ժողովրդների մէջ Ասորեասանցիք խմաստատութիւնով, քաղաքականութիւնով ու դրացիատութիւնով առաջին ազգն էին : Այս ազգը Հայոց ոչ միայն ժամանակակից, այլ և դրացի. էր ու երկար ժամանակ մերձաւոր ազգերի հետ՝ Հայոց վրայ էլ մի տեսակ աւազութիւն ունէր. մինչև անգամ մեր նահապեաները մէկ ժամանակ նրանց կողմից իշխան էին կարգվում Հայաստանի վրայ : Երբև պատմական և ուրիշ ժողովրդների վրայ առաջագէմ ազգ, Ասորեասանցիք աշխարհիս նըշանաւոր դէպքերը գրի անցրնելու ու աւանդելու բաղձանքը այն գլխից ունեցել են, նրանց գրականութեան մէջ աշխարհիս ամենահին դիպուածները գրի անցուցած են, ինչպէս են ջրհեղեղի պատմութիւնը, լեզուների խառնակութիւնը և մինչև անգամ ջրհեղեղից առաջ եղած նահապեաների թիւը ու տարիները, որ Աստուածաշնչի աւանդութիւնների գրեթէ նոյն

և նման են (1): Աչքի առաջև ունենալով այն  
չարունակ հաղորդակցութիւնները որ այս երկու  
ազգերը՝ Ասորեաւանցիք ու Հայերը մէկդմէկու  
հետ ունեցել են, ոչ ինչ դժուարութիւն չէ մը-  
նում ընդունելու, թէ մի այնպիսի ժողովուրդ  
իր դրացի և ըստ մասին հպատակ ազգի պատ-  
մութեան զիստ որ մասները իր յիշատակարան-  
ների մէջ անցրել է. ժամանակակից դիպումաճ-  
նեքը անդն 'ի սեղը պատմելով, իսկ հնագոյն  
տեղեկութիւնների հստակ ժողովրդի յիշողու-  
թեանը դիմելով: Երբև հատուտութիւն մեր ա-  
սածնեքին, բաւական է Մովսէս Խորենացու Մար—  
Աբասից հանած վկայութիւնը մէջ բերել, որով  
ասորի պատմադիրը, Սրամի արշաւանքները պատ-  
մելիս, որոշ ասում է թէ «'ի փոքունց ոմանց և  
յաննչանից արանց 'ի գուսանականէն այս գտանի  
ժողովեալ 'ի դիւանի արքունեաց» (2): Նոյն ինքը  
Խորենացին Մար—Աբասի առաջ բերած Հայոց  
աւանդութիւնները ու աշխարհագրական յիշա-

---

(1) Մեր առաջ բերածին մի փոքրիկ ապացոյց էլ կարող  
է լինել Խորենացու պերողից մէջ բերած մէկ հատուածը, որ  
Մեծին Աղէքսանդրի ժամանակ Քաղկեդոնոց պատմութիւնը  
գրեց Ասիոյ հին դիւանների յիշատակարաններից քաղելով:  
Գր Ա. Գլ. 2:

2) Խոր. Գր. Ա. Գլ. ԺԴ:

տակարանները Հայաստանի քրիստոնէութեան ժա-  
մանակները ժողովրդի մէջ մնացած աւանդու-  
թիւնների հետ համեմատելով, ասորի զիանա-  
կանին պատմածների ստոյգ ու հաւատարիմ լի-  
նելը հաստատում է:

Արդէն ասացինք թէ վիպասանական բա-  
նաստեղծութեան հիմք առասպելներն են, որոնք  
ժողովրդի երևակայութեան տեղծած գերբնական  
արարածների վրայ կազմուեցան. այս պատճառով  
էլ ժողովրդական երգերի մէջ հնու թիւնով առա-  
ջին տեղը բռնում են առասպելաբանական կամ  
գիցաբանական երգերը, որոնց մէջ երևում է ժողո-  
վրդի ձգտումը դէպ 'ի գերբնականը ու հրա-  
շալին: Գիցաբանական երգերը արտայայտում են  
մարդու՝ բնութեան երևոյթների հետ ունեցած  
խորհրդաւոր կապակցութիւնը: Այս տեղ մարդս  
իրիւ թոյլ ու անխորձ արարած՝ իր չորս կողմը  
եղած ոյժերին կեանք է տալի, որոնք իրանք ի-  
րանց մէջ, երբեմն էլ հսկաների հետ պատե-  
րազմում են ու մարդկերանց վրայ տիրում:

Մար — Սբաա Աստիւնայի հաւաքած ու Մով-  
սէս Խորենացու համառօտած պատմութիւնը մի  
առասպելական աւանդութիւնով է սկսում, ուր  
աստուածները համարվում են ամէն բանի ըս-  
կիզբը և աշխարհիս բոլոր լաւութիւնների պատ-

ճառք : Ահա առիկ այն հատուածը , որի իր ըս-  
կընական կերպարանքը կորցրած ոչ միայն էա-  
կան մասները պահածը յայտնի երևում է :

«Ահա ք եւ երևելիք առաջինքն ի դիցն , եւ աշ-  
խարհի մեծամեծ բարեաց պատճառք , որ սկիզբն աշ-  
խարհի եւ բազմամարդութեան : Յւ ի սոցանէ հասեալ  
դասն աղղ սկսյիցն , անհեղեղք , յաղթանդամք մարմ-  
նով եւ վիթխարիք , որք յղացեալ ամբարտաւանու-  
թեամբ ծնան դամպարիշտ խորհուրդ աշտարակաշինու-  
թեանն , եւ ի նոյն վնէլին ի գործ անկեալք , յոր հողմ  
ահաղին իմն եւ աստուածային շնչեցեալ ի դիցն ցան-  
մանէ , ցրէ դամբարտակն , եւ մարդկանն անլոր բար-  
բառս իւրաքանչիւր ումնք բաշխեալ , տշմուկ շփոթի  
ի մէջ արկանելին Յորոց մի էր եւ յասկտութեանն  
Հայկ , անուանի եւ քաջ նախարարն , կորովաձիգ եւ  
հաստաղեղն » ( 1 ) :

Իսկ երբ առասպելական ժամանակներին յա-  
ջորդում են դիւցադնական ժամանակները , հայ-  
կական հանձարը էլ չէ բաւականանում հին  
առասպելներով , ուստի եւ աստուածների հետ  
իրական անձինքների գործքերն էլ է խառնում :  
Այս տեղ արդէն յայտնի երևում է , թէ ինչպէս  
Հայոց նախնական բրտութիւնը կամաց կամաց  
անհետանում է եւ նրա բարքն ու զգացմունքները

---

( 1 ) Խոր. Գր. Ա. Գլ. Թ :

փոքր առ փոքր փափկանում ու ազնուանում են :  
Ժողովուրդը սկսում է ուշադրութիւն դարձնել  
այն նշանաւոր անցքերի վրայ, որոնք իր կեանքի  
վրայ ազդեցութիւն են ունենում : Աստուածների  
հետ ժողովուրդը սկսում է երգել այն դիւցազուն-  
ների, որոնք իրանց երեւելի գործքերովը առա-  
ջինների կարգը դասուելու արժանի են եղել,  
թէպէտ և պատմաբանները նրանց գոյութիւնը  
հաստատում են :

Այսպէս ահա հայ երգիչները բանաստեղ-  
ծորէն երգեցին Նրուանդեան Տիգրանի կրտսեր որ-  
դու՝ Ահազանի ծնունդը և նրան նմանեցրին  
Յունաց Հերակլէսին ու Հարպոկրատէսին, որ նար-  
դիս ասած ծաղկիցն է ծնուել : Եւ յիրաւի . Աա-  
հազան իր մեծամեծ քաջութիւններովը այ՛քան մեծ  
անուն հանեց, որ իր մահուանից յետոյ Հա-  
յերը աստուածների կարգը դասեցին, Արացիք էլ  
արձան կանգնեցին ու զոհեր մատուցանելով եր-  
կար ժամանակ պաշտեցին նրան : Ախպասանները  
այս ազգային դիւցազնի սիրովը յափշտակուած  
նրա այլ և այլ քաջութեան գործքերը բանաս-  
տեղծական գոյներով նկարագրեցին իրանց երգերի  
մէջ, որոնք հնութեան ու անխնայ ժամանակին  
զոհ են գնացել : Մի հաստուած մնաց միայն Աա-  
հազանի ծննդեան վրայ, որ շատ հետաքրքիր է և

ցոյց է տալի հին Հայոց բանաստեղծական հան-  
ձարի գեղեցկութիւնը ու վսեմութիւնը: Այստեղ  
հայկական երգիչներէ երևակայութիւնը այն աս-  
տիճանի վառվում է, որ դիւցազնի մարդկային  
ճնունդը մոռանալով բնութեան տարրերին է դի-  
մում, ու երկնքին, երկրին և ծիրանի ծովին ցա-  
ւից բռնուած նկարագրելով՝ ծուխից ու բոցից  
ճնուած է համարում նրան: Այս երգի հա-  
տուկատորը, որ սրանից գրեթէ երկու հազար ե-  
րեք հարիւր տարի առաջ վիպասանին մէկը եր-  
գել և մինչև քրիստոսն,ութեան դարերում երկար  
ժամանակ պահպանուել է, մեր դրականութեան  
ամէնից հին յիշատակարանը կարող է համարուիլ.  
Խորենացին իր ժամանակի Գողթնեցոյ երգերից  
հանել ու մեզ աւանդել է.

«Երկնէր երկին և երկիր»  
Երկնէր և ծիրանի ծով.  
Երկն ի ծովուն ունէր  
Զկարմրիկ եղեգնիկն.  
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր,  
Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր,  
Եւ ի բոցոյն պատանակիկ վաղէր,  
Նա հուր հեր ունէր,  
Ապա թէ բոց ունէր մօրուս՝  
Եւ աչկունքն էին արեգակունքս (1):»

(1) Խորենացի. Գր. Ա. Գլ. ԼԱ:

Պիւցաղունների քաջութեան դործքերը՝  
ինչպէս արդէն ասացինք, դերբնական արարած-  
ների հետ պատերազմելումն ու նրանց յաղթե-  
լումն է երևում, բայց այս արարածները աստ-  
ուածներ չեն, այլ չար ոգիներ կամ փնասակար  
գաղաններ, որոնցից դիւցաղնը ազատում է մարդ-  
կային ազգին: Այսպէս, ազգային աւանդութիւն-  
ներին նայելով, Աւհագն վիշապների հետ է կրու-  
վում ու յաղթում նրանց, որով և իր ժամա-  
նակակիցներից «Վիշապաքաղ» ասուելու արժանի  
եղաւ (1): Նոյն աւանդութիւնով հին Հայոց մէջ  
պատմվում էր որ իբր թէ Աւհագն ձմեռ ժամա-  
նակ՝ Բարշամ Ասորեստանցոց աստու յարդը  
դողացել է երկնքից և ճանապարհին թափթփած  
մանր յարդերից ծիր Աթինը գոյացաւ, որ այս  
պատճառով մեղանում «Յարդգող» էլ է ասվում:  
Այս և սրա նման շատ զրոյցներ պատմվում էին  
Աւհագնի վրայ, որի անունը այն աստիճանի ժո-  
ղովրդականութիւն էր գտել Հայոց մէջ, որ մինչ-  
և քրիստոնէութեան ժամանակները նրա յի-  
շատակը երկար ժամանակ անջինջ մնացել էր ժո-  
ղովրդի յիշողութեան մէջ: Մինչև անգամ Թարգ-  
մանիչները Աստուածաշնչի մէջ Հերակլէսի տեղ

(1) Խոր վերը յիշուած դիւումը և Աղաթ. եր. 603»

Վահագնի անունը դրին (1), որովհետև, ինչպէս  
ինքը Խորենացին ասում է, վիպասանները հայ դիւ-  
ցազնի քաջութիւնները երգելով՝ Հերակլէսին էին  
նմանեցնում նրան :

Դիւցազնական երգերը փոխվում են պատ-  
մական երգերի այն ժամանակ՝ երբ ժողովուրդը պատ-  
մական ասպարէզի մէջ ոտք է կոխում, բայց այս  
պատմական ժամանակին հասնելուց առաջ՝ մի միջին  
ժամանակ էլ կայ, որ ոչ բողբոջին դիւցազնական է  
և ոչ պատմական, և այս բանը ինչպէս կեանքի, այն-  
պէս և բանաստեղծութեան մէջ է երևում : Այս  
էնդուր համար է որ ժողովրդի բանաստեղծութեան  
մէջ անբնական ցայտումն չկայ ու չէ կարող լինել .  
ազգային զարգացումը մէկ աստիճանից միւսը եր-  
բէք յանկարծ ու զգալի կերպով չէ փոխվում,  
այլ աստիճանաբար ու բնական ճանապարհով մինը  
միւսի հետ է կապվում, ինչպէս որ շղթայի օղակ-  
ները մէկըմէկու հետ կապվում ու մի կանոնաւոր  
ամբողջ են կազմում : Այս փոխադրական միջոցին  
են վերաբերում հայ վիպասանների Տորք անունով  
նահապետին վրայ երգածները, որՎաղարշակի օրոմն  
էր ասլում : Հայկակի Պասքամ թուանը որդին  
էր Տորք, որ դժնահայեաց, տախաբիթ, մարմնով

(1) Բ. Մակար. Դ, 19 :



կուպիտ. ու դէմքով սաստիկ տղեղ լինելուն համար, ժամանակակիցները «Սնգեղեայ» անուանեցին նրան. վաղարշակ էլ Հայաստանի արեւմտեան կողմերի կուսակալ կարգեց նրան ու բոլոր ցեղը «Սնգեղ Տուն» անուանեց : Վիպասանները այնպիսի կարգէ դուրս բաներ էին պատմում այս դիւցազնի ուժին վրայ, որ Խորենացու ասածին նայելով ոչ Սամսոնին, ոչ Հերակլէսին և ոչ հարիւր քսան վիղի ոյժ ունեցող Ռոստոմ Սաղճիկ անունով պարսիկ դիւցազնին են յարմարում (1) : Թրինակի համար, պատմում են թէ Տորք պինդ ու անտաշ քարեր ձեռքն առած՝ ճեղքում և ուզած մեծու թիւնն ու շափր տալիս էր նրանց, յետոյ ըղունդներովը քերելով տախտակի ձև էր տալի և դարձեալ ըղունդներովը արծիւներ ու վանազան նկարներ էր դժադրում նրանց վրայ : Չնայելով որ վիպասանները Տորքին վիթխարի հասակ ու զերբնական ոյժ են ընծայում, այսու ամենայնիւ ոչ նրա ապրած ժամանակը, և ոչ մանաւանդ գործողութիւնները իրաւունք են տալի նրան առաջին կարգի դիւցազունների շարքումը դասուելու, որովհետև նրա

---

(1) Ռոստոմը Ֆէրդուսի վիպասանին յիշած Ռուստեմն է ևւ Շահ համէի գլխաւոր դիւցազուններից մինը : Միայն պարսիկ վիպասանը իր դիւցազնին Ս-է-է մականունը չէ տալի, որի ինչ նշանակութիւն ունեցածը յայտնի չէ :

ուժի փորձը առնույնները մտայածին էակներ չեն,  
հասկա իր նման սովորական մարդիկ. նրա թշնամիները բուն դիւցազունների թշնամիների նման՝  
դերբնական արարածներ չեն, այլ իրական անձինք :  
Ս, յապէս՝ մի անգամ, ասում է երգը, Պանտոսի ե-  
զերքը թշնամիների նաւերին պատահելով՝ նրանց  
վրայ է դիմում . բայց նաւերը ուժը ասպարէզ  
անդ ծովեզերքից հեռանում են, այնպէս որ Տորք  
չէ կորողանում ետևներիցը հասնել : Ս, յն ժա-  
մանակ վեր է առնում նա բլրալե քարեր ու նրանց  
քամակից այնպէս սաստիկ ձղում, որ ծովը պա-  
տառվում է ու ալիքները բարձրանալով նաւերի  
կէտը ընկղմում, միւս կէսն էլ հեռաւոր տեղեր են  
քշում, Հայ երգիչների այս նկարագրութիւնը  
զարմանալի նմանութիւն ունի Հոմերոսի իր Որդի-  
տականին մէջ **Սիկլոպեան Պոլիփեմի** վրայ երգածի  
հետ : Հոմերեան հսկան էլ իր Ուղիս թշնամու վրայ  
սաստիկ զայրացած՝

• • • • • Ի Բոց ցաւման անդ զարտեւանն անարի  
Արդեաց զլերին, արկ սա նաւուն տարի շեկէն վայրիկ մի,  
Դայան բոմբեաց, ծով դիզոցաւ, յորձանք ալեաց զարձ առին,  
Նոսն ալէկոժ վարէր զնանն եւ մօտ ձրդէր ցամաքին • • •

Եւ որովհետեւ Ուղիս իր կծու խօսքերով նրա  
սիրտը խայթելուց չէր դադարում, այս պատճա-  
ռով Պոլիփեմ վերատին

••• Մոլեալ՝ առ միւսանդամ վէժ առաւել ահապին՝  
Շրջանակեաց, թափ եւ ուժոյն յաղթարարուկ կորովին,  
Արկ յետնառուն կշիռ ի խելս, դողցես ի ծայրըն գեկին  
Ծալն ի վիճէն ծփեալ ըզնաւն ի կոյս վարէր ցամաքին (1):

Այսպիսի նմանութիւններ շատ ու շատ են  
պատահում սկզբնական ազգերի երգերի, զրոյցների  
և ուրիշ աւանդութիւնների մէջ, և պատճառը  
յայտնի է: Արովհետև ազգերը իրանց գոյութեան  
սկզբնական ժամանակները՝ իրանց սովորութիւն  
ներովը իրանց հողէօր կեանքովը միմեանցից այն-  
քան շին զանազանում, ուրեմն և նրանց սկզբնա-  
կան գրականութիւնների մէջ շատ նմանութիւն-  
ներ կան: Իսկ երբ ազգերը այնքան առաջ են  
գնում, որ գրագիտութեան միջնորդութիւնով ի-  
րանց գրաւոր գրականութիւնները ունենալու վի-  
ճակին են հասնում այն ժամանակ խրաքանչիւր  
ազգի գրականութիւնը իր սեպհական յատկու-  
թիւնները, սեպհական պատկերը կունենայ:

Վահագնի և Տորքի վրայ պատմուած ա-  
ւանդութիւններից պարզ երևում է թէ ինչպէս  
ժողովրդի իդէալները աստիճանաբար փոխվում,  
ազնուանում են, և թէպէտ երկուսին էլ գերբնա-  
կան ոյժ է տրուած, երկուսն էլ հսկայածե ու

---

(1) Աղիսական, Թարգ. Հ. Եղիա Թոմաճեան, Հատո Ա՞  
Հագներգ. Թ. կր 264—66:

յաղթանդամ են, բայց երկուսն էլ մի և նոյն քա-  
ջութեան գործքերը չեն գործում, մինը վայ-  
րենի գազանների դէմ է կռւում, իսկ միւսը իր  
նման մարդկերանց հետ, առաջինը երկրիս վրայ  
գործած քաջութիւններովը ջբաւականանալով եր-  
կինքն է բարձրանում ու մարդկային ճնունդը մոռա-  
ցուելով աստուածանալու պատուին է հասնում,  
երկրորդը թէ և նոյնպէս դիւցապն՝ այսու ա-  
մենայնիւ երկրիս վրայ է մնում և մարդկային  
ճնունդ ունի : Բայս այս բաւական չէ : Քանի որ  
ժողովուրդը զարգանում է, նրա հայեցուածքը  
նոյնպէս փոխւում է, նա սկսում է վերջապէս  
ուշադրութիւն դարձրնել այն անձինքների վրայ,  
որոնք իր ամբողջութիւնից դուրս գալով ջանք  
ու ճիգ են անում ժողովրդներին առաջ տանե-  
լու, նա հասկանում է որ այն անձինքը իրանց  
բարձր նպատակին հասնելու համար՝ արտաքին  
ու մարմնաւոր ոյժ ունենալու կարօտ չեն, այլ  
ներքին հոգեւոր կարողութեան պէտք ունին : Եւ  
ահա ժողովրդի այս նոր հասկացողութեան հետ  
նրա իդէալներն էլ փոխւում են, նա էլ չէ բա-  
ւականանում գերբնական արարածների դէմ պա-  
տերազմող դիւցապունների հսկայական քաջու-  
թիւնները երգելով, նա սկսում է այն անձինքների  
միտներ հռչակել, որոնք իրանց կեանքը ժողովուր-

դեան օգտի և հայրենեաց երջանկութեան համար աշխատելով ևն անցկացնում :

Մեր թագաւորնեցի մէջ թերևս չկայ մէկը, որ Արտաշէս Երկրորդի շտի սէր ու համակրութիւն վաստկած լինի Հայոց մէջ : Թագաւորական գահը բարձրանալուց ու Հայաստանի քաղաքական վիճակը ապահովացնելուց յետոյ, Արտաշէս իր բոլոր ուշադրութիւնը երկրի ներքին բարեկարգութեան վրայ դարձրեց : Բոլոր Հայաստանը զանազան սահմանների բաժանեց և օտար ազգերի գաղթականութիւններ բերելով՝ անբնակ դաշտերումը ու լեռնե լումը բնակեցրեց : Աածառականութիւնը և արուեստները ծաղկեցնելու հոգ տանելով՝ շատ կամուրջներ շինեց և բոլոր դեռերն ու ծովափները անթիւ նաւերով լքցրեց : Երկրագործութիւնը առաջ տանելու համար՝ ամէն տեսակ միջոց գործ դրաւ և առհասարակ այնպիսի գործունէութիւն մտցրեց Հայոց մէջ, որ սրասմութիւնը ասում է թէ իր ժամանակին երկիր չէր մնացել որ անմշակ լինի, մարդ չէր մնացել որ դառարկ ու անգործ շքի : Բայ ի դրանից Արտաշէսի օրովը մեհեաններ շինուեցան, վարժարաններ և մարզարաններ հաստատուեցան, բանաստեղծութիւնը ծաղկեցաւ, (որի սիրելիներէից մինն էր թագաւորի որդին Արոյր Վամատուն և

բանաստեղծ») և այս բոլոր բարերարութիւններէ  
փոխարէն այնքան ժողովրդականութիւն գտաւ ազ-  
գին մէջ, որ իր մահուան լուրը առնելով բոլոր  
Հայաստանը սուգ մտաւ, շատերն էլ այսպէսի խելացի  
ու բարերար թագաւորից յետոյ լոյս տեսնել չու-  
զելով իրանք իրանց սպաննեցին ու Արտաշէսի  
հետ միասին թաղուեցան :

Արտաշէս թէպէտ մեռաւ, բայց իր քաղցր  
յիշատակը երկար ժամանակ մնաց ժողովրդի սրտումն  
ու մտքումը : Խորենացին վկայում է թէ մինչև իր  
օրերը Գողթն գաւառի բնակիչները երգում էին  
Արտաշէսի գործքերը. Նրուանդի հետ ունեցած  
պատերազմը, Արտաշատ քաղաքի շինելը Ալա-  
նաց դէմ տուած պատերազմը և յետոյնրանց  
հետ արած խնամութիւնը, որդկերանց ծնունդը,  
Մաթինիկ տիկնոջ իբր վիշապազունների (այսինքն  
Մասիսի ստորոտը բնակող Մարաց) կամ աւելի  
ճիշդ Արզամայ վրայ սէր ձգելը, հետեւաբար և  
Ծերունի Արզամայ անպատուիլը ու անով տեղով  
ջնջուիլը. Արտաշէսի որդկերանց իր ամուսիններից  
զրգուած և մէկը Ռէկու դէմ ունեցած նախան-  
ձը, — այս բոլոր հանգամանքները վիպասանների  
երգերից հանելով՝ մեզ պատմում է Խորենացին (1) :

---

(1) Խոր., Գր. Բ. Գլ. ԽԹ :

Արանցից Արտաշէսի Ալանաց հետ ունեցած խնամութեան վրայ ասուած երգը մէջ է բերուած, մէկ մասը խօսակցութեան ձևով, իսկ միւսը անսխալօրէն պահելով՝ այսպէս:

«Հեծաւ արի արքայն Արտաշէս ի Սեան գեղեցիկ,  
Եւ նանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,  
Եւ անցեալ օրպէս դարձուի սրաթեւ ընդ գեան,  
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,  
Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց,  
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,  
Այսպէս հասուցանելով ի բանակն իւրս (1):»

Երկրորդ և չորրորդ տողերի մէջ յիշուած «ոսկէօղ շիկափոկ պարանն» այլաբանութիւն է և նշանակում է «կարմիր մորթ, լայքա ու կաշի», որ Ալանաց աչքին շատ յարդի էին, և որոնցից ընծայ ուղարկեց նրանց Արտաշէս՝ Սաթինիկին առնելու ժամանակ:

Այսպէս էլ հարսանիքի հանդէսի վրայ երգում էին.

«Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,  
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինիկան ք:»

Արովհետև, աւելացնում է Խորենացին, երբ մեր թագաւորները փեսայացած իրանց՝ պալատի դուռը հասնում էին, Հռոմայեցոց հիւպատոսներին նման ոսկի էին ցրվում, թագուհիներն էլ

(1) Խոր. Գր. Բ. Գլ. Ծ.

իրանց առաջատի մէջ մարդարիտ էին ցանում, սովորութիւն որ մինչև այժմ էլ տեղ տեղ մը նայել է (1):

Բայց եթէ Արտաշէս մեծ համակրութիւն էր գտել ժողովրդի մէջ, պատճառը ըստ մեծի մասին իր հաւատարիմ խորհրդատու ու ազատարարն էր — Սմբատ Բիւրատեան Բաղրատունի նախարարը: Պատմութիւնից գիտենք որ Սանատրուկի մահուանից յետոյ՝ երբ Երուանդ Արշակունին նրա ցեղը անով տեղով ջնջելու վրայ էր, Արտաշէս փախչում է Սմբատ Բաղրատունու մօտ: Ծերունի նախարարը հօր պէս է ընդունում թագազուրկ Արտաշէսին ու հետը միասին Պարսից դուռը ապաւինում: Այնտեղ իր անձնական քաջութիւններովը Սմբատ շուտով թագաւորի ուշադրութիւնը իր վրայ է դարձնում, որ կամենալով վարձատրել նրան, կատարում է նրա միակ խնդիրը ու շատ դօրքով Հայաստան է ուղարկում, որ Սանատրուկի թագը Երուանդից յետ առնէ:

---

(1) Նոր Զուգայի մէջ մինչև այժմ էլ փեամն ու հարսը եկեղեցուց տուն դառնալիս, եթէ հարուստ են, ազդականներից երկուսը ձեռքերը երկու սկուաղ փողով լիքը՝ դիմատրում են նրանց տան առաջին, եւ մէկը փետի՝ իսկ միւսը հարսի գլխին է ցանում սկուաղի մէջ եղած փողը: Եմին, Վէպք Հայ, եր. 36:



ու Սրտաշէսին թագաւորեցնէ Հայոց վրայ: Ս. յուհեանէ նորապսակ թագաւորը առանց իր բարերարի խորհրդին ոչինչ չէր անում, ոչ պատերազմի, ոչ խաղաղութեան ժամանակ: Տարակոյս չկայ որ Սմբատի պէս անձնաւորութիւնը չէր կարող ազատ մնալ ազգային երգիչների նկատողութիւնից, որոնց խօսքերը բոլորովին հաստատում է խորենացին, այս ծերունի նախարի բնաւորութիւնը ու յատկութիւնները նկարագրելիս. « Քանզի արդարև ըստ առասպելին ոչինչ հեռի 'ի ճշմարտութենէն (էր քաջն Սմբատ). որ ունէր հասակ անդամոց համեմատ քաջութեանն, և առաքինութեան ուղեոցն որսորդ, և դեղեցկութեան ալեօք վայելչացեալ. սակաւ ինչ արեան նիշ ունելով յաչն՝ որպէս գրականատիկոն 'ի վերայ ոսկւոյ և 'ի մէջ մարդարտոյ ծագէր. և 'ի վերայ շոյտ անձին և մարմնոյ՝ զզոյշ յամենայնի, և տուչութիւն յաջողուածոց ունէր ի մարտս առաւել քան զամենայն որ» (1):

Սմբատի անունը ու համբաւը աւելի հրաշակուեցաւ մանաւանդ այն ժամանակ, երբ կասբից երկրումը յանձն արած արշաւանքը յաջող կերպով դուրս տարաւ, որի պատճառով Սրտա-

---

(1) Խոր. Գր. Բ. Գլ. ԾԲ:

չէսի անդրանիկ որդին՝ փառասէր Արտաւազդը  
կամենում է սպանել նրան ու Հայոց զօրքերի ըս-  
պարապետութիւնը խլել նրանից, ինչպէս որ նը-  
րանից առաջ նոյն Արտաւազդը աչք ունենալով  
Արզամ Մուրացան իշխանի երկրողական գահի  
վրայ, մատնում է նրան Արտաշէսին, որ իբր թէ  
Արզամայ միտքը թագաւորական իշխանութեան  
հասնել է: Այս պատճառով Արտաշէս բոլոր պա-  
տիւները խլում է նրանից ու Արտաւազդին տա-  
լիս, որ և սպանեց նրան. թէպէտ և այս Արզամայ  
սպանութեան պատճառը ըստ մասին կարծւում է  
այն սէրը, որ Սաթինիկ ցոյց էր տուել Մուրացան  
նախարարին, որովհետեւ երդը ասում է՝ թէ

«Տենչայ Սաթինիկ տիկին տե՛նչանս՝ զարտախոյր խաւարս  
և զտից խաւարժի ի բարձիցն Արզաւանայ» (1):

Սմբատ հասկանալով Արտաւազդի դիտաւորու-  
թիւնը և ճանաչելով նրա բնաւորութիւնը  
առանց տրտնջելու քաշվում է Ասորեստանի կող-  
մերը, հրաժարուելով բոլորովին Հայոց զօրքերի  
սպարապետութիւնից, որ Արտաւազդ շտապում  
է իրան սեպհականելու. և ահա այս պատճա-  
ռով մեծ խռովութիւններ ծագեցան թագաւո-

---

(1) Երդի մէջ Արզամ անունը աղաւաղուելով Արտաւազդ է փո-  
խուել:

րի որդկերանց մէջ: Բայց Սմբատ շուտով առիթ  
ունեցաւ ցոյց տալու իր հաւատարմութիւնը ու  
անյիշաչար բնաւորութիւնը: Հռովմայեցոյ կայսրը  
Գովեաթիանոս սաստիկ զայրանալով Արտաշէսի վրայ,  
որ էլ չէր կամենում իր հարկատուութեան պարտ-  
քերը ձանաչել, շատ զօրք է ուղարկում Հայաս-  
տան: Արտաշէս Հռովմայեցոյ առաջը առնելու  
համար՝ իր որդկերանց ձեռքը զօրք է տալի, որոնք  
թէ և երկար ընդիմանում են թշնամուն, բայց  
վերջապէս վտանգի մէջ են ընկնում: Այս միջո-  
ցին Սմբատ, որ թէպէտ ծերացած՝ բայց դեռ ե-  
րիտասարդի պէս էր պատերազմում, հալածում  
է թշնամիներին, որոնց՝ ինչպէս երգը ասում է,  
Գովեա անունով մէկը առաջնորդում էր (1), և  
թաղաւորի որդկերանց մահաց ազատում:

Արդերը, թաղաւորների ու իշխանների այս  
անաչառ դատաւորները, որքան մէկ կողմից գո-  
վասանքով խօսում են Արտաշէսի ու Սմբատ Բա-  
ղրատունու վրայ, միւս կողմից այնքան աւելի սև  
գոյներով են նկարագրում Արտաշէսի որդու ու  
յաջորդի—Արտաւազդի մոլի ու նախանձոտ բնա-  
ւորութիւնը, որի պատճառը նրա մանկութիւ-  
նից վիշապաղունների ձեռքը մնալն են համա-

---

(1) Խոր. Գր. Բ. Գլ. ԾԴ:

րում երգերը, և այս հանդամանքը մի այլաբանական  
ձևով յայտնում են, իբր թէ ճննդեան ժամանակ

«Ախարադունք դողացան զմանուկն Արտաւազդ, և զեւ փո-  
խանակ եղին»:

Նախանձու և ատելութեան բոցը այնպէս  
սաստիկ վառուել էր Արտաւազդի սրտումը, որ  
սա չբաւականանալով Արդամայ ու Սմբատի զը-  
լուխը բերած չարիքներովը, չբաւականանալով և  
եղբարց մէջ ձգած կռիւներովը, մինչև անգամ  
իր հօր փառքի վրայ էլ նախանձեց: Արովհետև ար-  
քայորդին իր հօր մահուան ժամանակ եղած կամա-  
ւոր մահերը տեսնելով՝ կատաղած կանչեց մեռած  
հօր քամակից.

«Մինչ դու գնացեր և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,  
ես աւերակայս սրպէս թաղաւորեմ»:

Արտաշէսի ուրուականը այս մեղադրական խօս-  
քերը լսելով՝ անիծեց նրան ստելով.

«Եթէ դու յորս հեծցիս յաղատ ի վեր ի Մասիս,  
Զքեզ կալցին քաջք, տարցին յաղատ ի վեր ի Մասիս,  
Անդ կացցես և զլոյս մի տեսցես»(1)

Տարակոյս չկայ որ որդու անօրէնութիւնները ա-  
ւելի էլ պէտք է յիշեցնէին ժողովուրդին հօր իշ-

---

(1) Խոր. Գր. Բ. ԳԼ ԿԱ:

խանութեան քաղցր ժամանակները, որի կեանքի բոլոր հանգամանքները քրիստոնեայ Հայոց մէջ երկար ժամանակ երգվում ու պատմվում էին, մինչև անդամ դիւղականների մէջ, որոնց համար այնքան բան էր արել Արտաշէս : Արանց բերանից է քաղել Մազիատրոս տասներմէկերորդ դարումը՝ հետեւեալ կարճիկ բայց սրտաշարժ հատուկատրը, որ վերաբերում է թագաւորի կեանքի վերջին րոպէներին : Արտաշէս յիշելով կեանքի ու տարուայ դարունը, երբ առաւօտեան լոյսը ցօղի հետ խառնած բարակ մէղի պէս գեղերի ու քաղաքների վրայ էր տարածվում, միտը բերելով նոյնպէս իր որսական զուարճութիւնները, կանչում է .

«Մտայր ինձ դժուխ ծխանի և զառաւօան նաւասարդի,  
Զվազելն եղանց և զվազելն կղջերուացս .

Իսկ ժողովուրդը իր սիրելի թագաւորին փափաքը անկատար մնացած տեսնելով՝ սուգ է կատարում .

«Մեք վոչ հարուաք և թմրկի հարկանէաք :

Ահա հագնի, Տորքի, Արտաշէսի, Վերատի և Արտաւազդի վրայ երգուած երգերի բովանդակութիւնից պարզ երևում է թէ ինչպէս հետզհետէ ժողովրդեան իդէալները փոխվում ու այնուանում են. գերբնականը ու հրաշալին տեղ է տալիս բնականին, մարմնաւոր ոյժը—հոգեւոր կարո-

դու թեան : Ահա հաղն ու Տորք միայն իրանց անձ-  
նական ուժովը չսուած բաներ են անում . կա-  
տաղի զաղանների դէմ պատերազմում , ժայռեր  
տեղից շարժում են , առանց մարդու օգնութեան  
կարօտ լինելու : Իսկ Արտաշէս արդէն ինչ որ ա-  
նում է , բոլորը բազմութեան համակրութիւնովն  
է անում . որովհետեւ նրա վրայ ասուած երգերը  
այն ժամանակ են ստեղծուել , երբ ժողովուրդը  
զգում էր արդէն որ առանց իր օգնութեանը  
պատմական անձը ոչինչ չէ կարող անել : Այս բա-  
նը երևում է և հետեւեալ փոքրիկ՝ բայց մեր ա-  
սածը ապացուցանելու համար բաւական նշանա-  
ւոր հասուածից՝ Արուանդի քեռայր Աարդդէսի  
վրայ , որ իր « Ընկերներով » Արախմէզ քաղաքը  
շինեց .

« Հատուած գնացեալ Աարդդէս մանուկ ի Տուհայ դաւանէն  
Ըղբասաղ գետով ,  
Նիկայ նստեալ զՆրէշ բլրով , զԱրախմէզ քաղաքաւ ,  
Ըղբասաղ գետով ,  
Կսել կոփել զդուան Արուանդայ արքայի » (1) :

Արանք են ահա ժողովրդական սկզբնական  
երգերի տեսակները , որոնցից պարզ երևում է  
թէ բանաստեղծութիւնը ինչ մեծ կապակցու-  
թիւն ունի ժողովրդի պատմութեան հետ , այն-

(1) Խոր. Դր. Բ. Գլ. ԿԵ :

պէս որ մի ազգի պատմութիւնը բանաստեղծութիւնով կարելի է պարզել և բանաստեղծութիւնը պատմութիւնով: Գծրազգար մեր ազգային բանաստեղծութեան յիշատակարանները շատ փոքր ու թերատ են, որ կարողանայինք կատարելապէս ցոյց տալ հին Հայոց հոգին ու կեանքը: Մենք յոյս ունինք թէ գոնէ այն կարողացանք ցոյց տալ թէ ինչպէս ժողովրդի հասկացողութիւնը հետզհետէ փոխւում ու կատարելագործւում է, բնութեան և մարդու վրայ: Բայց որովհետև ժողովուրդը երբէք անշարժութեան մէջ չէ կարող մնալ, այս պատճառով նրա իդէալների մէջ էլ շարունակ փոփոխութիւններ են լինում: Քանի որ ժողովուրդը պատմական ասպարէզին մէջ առաջ է գնում, այնքան աւելի զգում ու հասկանում է թէ իրան ու պատմական անձիւնքների մէջ ներքին կապակցութիւն ու մերձաւորութիւն կայ, թէ այն անձիւնքը ժողովրդի միջից դուրս են եկել, թէ նրանք իրանց դիւսից չեն հնարել այն նպատակները, որոնց դիմում են, այլ դիմում են այն նպատակներին դուշակելով իրանց ժողովրդի գաղանի զգացմունքները, պիտոյքները ու ձգտումը, թէ վերջապէս նրանք միայն բազմութեան համակրութիւնով և օգնութիւնով ոյժ ունին: Ժողովուրդը սկսում է տեսնել որ ոչ

միայն մի քանի սակաւաթիւ ընտրեալ անձինք  
արժանաւորութիւն ունին, այլ բոլոր ժողովուրդը,  
ուրեմն և «իւրաքանչիւր անհատը» այն ժողո-  
վըղից, այսինքն «բոլոր մարդիկը»: Այս նոր հա-  
յեցուածքը իր կատարելութեանը հասնում է  
միայն քրիստոնէութեան բարերար ազդեցու-  
թեան տակ, որ ամէն մի անհատի մեծ արժո-  
ղութիւն է տալի միայն էնդուր համար՝ որ մարդ է:  
Այսպէսով բանաստեղծութիւնը, մինչև անդամ  
բանաւորը, քրիստոնէութեան ազդեցութեան տակ  
մտնելով, ոչ միայն դիւցազուններին ու պատմա-  
կան անձինքներին է երդում, այլ ամէնին, մինչև  
անդամ ամէնից հասարակ մարդկերանց հաւասար  
սիրով երդում է:

Արանից պարզ երևում է որ վիպասանական  
երգերի զանազան տեսակները բաժանուիլը պա-  
տահական ու ըստ կամաց չէ, այլ այս բաժա-  
նումը ինքն ըստ ինքեան առաջ է դալի բուն եր-  
գերի նիւթից, որոնց մէջ որոշ ցոյց տուինք ժո-  
ղովրդի վարդացման չորս գլխաւոր ժամանակները,  
և այս ժամանակները նայելով չորս տեսակ վի-  
պասանական երգեր՝ դիցարանական, դիւցազնա-  
կան, պատմական և վերջապէս «անձնական» կամ



Նախահատականս(1): Այս վերջին տեսակ երգերը, որ  
ինչպէս ասացինք, քրիստոնէութեան ազդեցու-  
թեան տակ աւելի աճում ու զարգանում են, ցոյց  
են տալիս նոյնպէս թէ բանաստեղծութիւնը անդա-  
դար պատմութիւնից առաջ է անց կենում. և  
թէ նրա իդէալներն են որ ժողովրդի առաջ


(1) Խորհնացին վիպասանական երգերի հետ երբեմն թու-  
լեաց երգեր էլ է յիշում: Այս թուելեաց երգերով ոմանք եր-  
գերի շեշտը հասկանում են (իրը թէ երգերը կա-  
րող են առանց շարի լինել, ) ուրիշները թուում են եր-  
գեր. բայց մենք դիտենք որ երգերը առ հասարակ ժամաւ  
նակագրութեան են հետեւում, այս նրանց գլխաւոր յատկու-  
թիւններից մինն է: Աւրիշները դարձեալ թուելեաց երգերը  
վիպասանական երգերի մէկ տեսակը համարում են, բայց  
այս կարծիքն էլ վերելիւնների նման մեզ բոլորովին սխալ է  
երեւում: Մեր կարծիքով թուելեաց երգերը մի ևւ նոյն վի-  
պասանական երգերն են, ևւ այս բանը ըստ մասին հաս-  
տատում է Խորհնացին, որ Արտաշէս Արիւորդի գործքերը  
պատմելու ժամանակ՝ ասումէ. «Արտաշիսի վերջնոյ գործք բա-  
զում ինչ յայտնի են քեզ է վերջնոյն որ պատմին ի  
Գողթան, ևւ վաքր ինչ յետոյ. «Այս ամենայն յայտնի են  
քեզ յերդս վերջնոյն» (Գր. Բ. Գլ. ԽԹ): Իսկ առաջին զըր-  
քումը, Գլ. Լ. Տիգրան Ա. աջինի բերած Մարաց գաղթա-  
կանութեան բնակութիւնը նկարագրելուց յետոյ՝ ասում է.  
«Յայտնեն զայս ճշմարտապէս ևւ թուելեաց երգք, զոր պա-  
հեցին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն զինաւէտ  
գաւառին Գողթան. յորա շարին բանք երգոցն զԱրտաշէս  
զըրդոյն յոր. . . » Այս խօսքերը կարծեմ, բաւական են հաս-  
տատելու համար թէ թուելեաց երգերը միեւնոյն վիպասա-  
նների երգերն են, որ մեր թագաւորների ու իշխանների գործ-  
քերը ըստուով, համարում էին իրանց երգերի մէջ:

Ճանապարհ են բաց անում : Այս պատճառով շատ  
հարկաւոր է խմանալ ժողովրդեան իղէալները և  
նրանց պատմական զարգացումը : Այս պատճառով  
նոյնպէս կարելի է համարձակ ասել թէ շատ ու  
շատ առաջ կը գնայ այն ազգը որի սկզբնական  
(քիչ թէ շատ անշարժ) բանաստեղծութեան մէջ  
էլ իղէալները յաւիտեան մի և նոյնը ջնն մը  
նում, այլ անց են կենում վերելք յիշուած աս-  
տիճաններէից : Մենք տեսանք որ մեր հին բա-  
նաստեղծութիւնը այս յաջող հանդամանքի մէջ  
էր գանձում . բայց Հայաստանի քաղաքական կեան-  
քը արտաքին թշնամիներէի շարունակ բռնակա-  
լութիւններէի տակ . ճնշուելով բանաստեղծու-  
թիւնը, այս քնքոյշ ծաղիկը, որ կարող է աճել  
ու զարգանալ միայն ազատութեան հողի վրայ,  
շունենալով իր հարկաւոր պայմանները, հետզհե-  
տէ թողնում ու թօշնում է Հայոց մէջ և իր բնա-  
կան զարգացումը ընդհատում :

Թէպէտ և այս պատմական երգերը կրօնա-  
կան երգերի վրայ հիմնուած են և նրանց հետ  
կապ ունին, բայց զիւցադնական ժամանակներումը  
արդէն քաղաքական երգերը առանձին ճանապար-  
հով են սկսում զարգանալ և կրօնականները ա-  
ռանձին : Այս կրօնական երգերի նշանակութիւնը  
և ինչ հանդամանքներէի մէջ երգուածները խմա-

Նայու համար՝ հարկ է Հայոց հին կրօնին դիմել :  
Չնայելով որ հնութեան յիշատակարան-  
ները ոչինչ որոշ յիշատակութիւն չեն անում  
Հայաստանի նախնական կրօնի վրայ, այսու ամե-  
նայնիւ մեզանում ընդունված է առհասարակ՝ որ  
մեր նախնի նահապետները Թորոգովի աւանդած  
կրօնին հետեւեցան ու ճշմարիտ Աստուծոն երկր-  
պագութիւն արին : Յետոյ ինչպէս բոլոր աշխարքի  
մէջ, այսպէս էլ Հայաստանում աստուածապաշ-  
տութիւնը կամաց կամաց խանդարուեցաւ և ու-  
րիշ զանազան կրօնների տեղիք տուաւ : Այս տեղ  
արեւապաշտութիւնը իր պաշտօնը հաստատեց,  
մոգութիւնը զրադաշտական կարծիքները տարա-  
ծեց, Յունաստանը իր աստուածները բերաւ. մին-  
չև անգամ Հնդկաստանը Հայաստանի վրայ կրօ-  
նական ազդեցութիւն ունեցաւ : Արդէն հաւաս-  
տի գիտենք որ Արշակունի թագաւորների օրովը՝  
Հայերը իրանց դրացի Պարթևաց կրօնին էին հե-  
տեւում (1). և մոգութեան կամ զրադաշտական  
վարդապետութեան հետ յունական դիցարանու-  
թիւնն էլ էին ընդունում, ինչպէս նաև ուրիշ  
շատ աւելորդապաշտութիւններ, որ հետոյհետէ  
մտան ժողովրդի մէջ : Սրանից երևում է որ հին

1 Ստրաբոն, Գր. ԺԱ, Գչ. ԺԴ:



Հայոց կրօնը բազմաստուածութիւնից ու միաստուածութիւնից ձեւացած մի խառնուրդ էր, որ թէ Արևելքի ու թէ Արևմտքի կրօններից կազմուեցաւ : Այսպէս ահա պատմութիւնը որոշ ասում է՝ թէ Հայաստանի մեհեանները Փոքր Ասիայից Միջագետքից և Յունաստանից բերուած աստուածների արձաններովը լիքն էին, որոնց տեսակ տեսակ կենդանիներ էին զոհում Հայերը : Բայց այս բողոքովին հակառակ էր զրադաշտական վարդապետութեանը, որ Մովսիսական օրէնքի հետ շատ նմանութիւններ ունէր (1) և միայն մէկ աստուածութիւն էր ճանաչում, այն է « Անաստասիան Դամանակը », որին անուանում էին Զրուան, ըստ Յունաց կրօնու, ըստ Ասորինացոց Սատուրնոս : Յաւալի է որ քրիստոնէութեան հաստատուելովը Մեհեանական դրքերը կորան ու ոչնչացան, որոնք եթէ մեր ձեռքը հասած լինէին, թանկագին տեղեկութիւններ կարող էին տալ մեզ անշուշտ Հայոց հին կրօնի և մասնաւորապէս մութութեան վրայ, որ մեր քրիստոնեայ պատմագիրներից մէկին վկայութեանը նայելով՝ Հայերը երբէք ընդունած չեն (2) : Բայց եթէ մեր հին

---

(1) Renan, Hist. du peuple d'Israël.

(2) Ապոստ. Փարսկ. եր. 142:

լեզուին դիմենք, մի քանի բառեր կը գտնենք, որոնք հին Պարսից լեզուին են պատկանում ու գրեթէ բոլոր զրադաշտական վարդապետութեան բովանդակութիւնը բացատրում են: Եւ յիշաւի՛ Արամազդ (հին պարսկ. «Աուրոմազդա», որից կազմվում է «Աստուած» բառը (1)), Հրեշտակ (նոր պարսկ. «Տերիշթէ»), Դեւ (հին պարսկ. Դևա), Դժոխք (հին պարսկ. Դուգախ) անունները իրանց նախնականնշանակութիւնովը պէտք է պարսկերէնից առնուած և յետոյ քրիստոնէական դադափարներէ հետ միաւորուած լինին (2):

Աւրեմն Հայոց հին կրօնը երեք գլխաւոր տարրերից է բաղկանում, որոնք կատարելապէս ծանօթ չեն մեզ և որոշ կերպով բաժանուած

---

(1) Ինչպէ՛ս որ Յունաց Զևս կամ Գևս անունից (որի սեռականն է Գէոս) ամանցուած է Աստինացոց Deus—Աստուած բառը, այսպէս էլ շատերը Արամազդից հանում են Հայոց Աստուած բառը: Օլմազդ կամ Արամազդ կազմվում է եւր կամ —ւր արմատից, որ նշանակում է ուշտեւ և որից-՛ տասի աւելանալովը կազմվում է Քաղզէացոց Դւր ընդունելութիւնը, որ նշանակում է եւրէ՛ կամ աստծուն ուշտեւ: Միևնոյն —ւր միտմանկի կրկնուելովը կազմվում է Աւր—ւր բառը, որ այս կերպով նշանակում է —ւր—ւրէ՛ —ւր—ւր . 7 տասը առաջին վանկի մէջ —րի փոխուելու: Աստուած բառի նըշանակութիւնը—Աստուածների աստուած բոլորովին համաձայն է Տոգերի վարդապետութեանը:

2 Հ. Յովս. Գաթրընեան, Անգլիոյ Ժամանակ, Եր. 13:

չեն. պաշտկական, յունական և բուն հայկական  
աստուածներ (1): «է պէ» հայկական դիցաբա-  
նութիւնը բազմակողմանի ու հարուստ է, բայց  
և այնպէս նրա մէջ յունական աստուածների  
նման նշանաւոր անձնաւորութիւններ չեն երև-  
ւում: Աստուածների վրայ յորինուած առաս-  
պելներից ժողովրդական երևակայութիւնը չյա-  
ջողեցաւ ստեղծել Չլևսի, Պոսիդոնի, Արէսի նման  
կատարեալ պատկերներ: Այսպիսի որոշ բնաւո-  
րութիւններ չունին հին հայկական աստուած-  
ները. մենք ամենևին ստեղծութիւն չունինք նը-  
րանց քաջագործութիւնների ու ճանապարհոր-

---

1 Արքան մեզ յայտնի է, Հայոց հին կրօնի քիչ շատ ստե-  
րողջ պատկերը առաջին անգամ ներկայացրեց դիւնական  
աշխարհին այս դարու սկիզբները Շահան Զրպեաթ, որի  
ստեղծութիւններից երբևէն օգուտ քաղեցինք մեր աշխատու-  
թեան մ'ջ: Հայ ուսումնականի այս աշխատութիւնը ֆրանս-  
սերէնից թարգմանուեցաւ հայերէն և արտեցաւ Մեղու Հայ,  
Կրօնի 1860 տարուայ թերթերում:— 1864 ին Պ. Մկրտիչ  
Էմին հրատարակեց իր սուսերէն աշխատութիւնը այս վեր-  
նագրով, «Очеркъ религии древнихъ Армянъ»: Ճշմարտութիւնը  
պահանջում է ասել որ Պ. Էմինը շատ քիչ բան է ասել իրա-  
նից, որ մինչև իր ժամանակը յայտնի չլինէր Շ Զրպեաթի  
և ուրիշների գրուածներից այս նիւթի վրայ: Բայց զարմա-  
նալին այն է, որ ինքը Պ. Էմինը ոչինչ յիշատակութիւն չէ  
անում Շ. Զրպեաթի աշխատութեան վրայ. քնդհակառակն նա  
երբևէն այնպիսի դիւտեր է սեպհականում իրան, որ իրանից  
առաջ Շ. Զրպեաթի աշխատութեան մ'ջ ենք դանում:

գութիւնների վրայ, որոնք նունաց միջ ամբողջ  
քերթուածների նիւթ են տուել : Մենք գիտենք  
միայն որ Հայերը բնութեան ոյժերին ու երկոյթ-  
ներին անձնաւորութիւններ տուին, և այս տե-  
սակ աստուածներից է կազմվում գլխաւորապէս  
հեթանոս Հայաստանի բուն կրօնը :

Հայոց ամենակարող աստուածն էր Սրա-  
մազը, ըստ Պարսից Օրմուզդ, ըստ Յունաց Զևս  
կամ Գևս : Հայերը նրան անուանում էին «ճար-  
տարապետ փեղեբաց, արարիչ երկնի և երկրի»  
Սրամազը համարվում էր գլուխ ազգի մարդ-  
կան և հայր ամենայն աստուածների և գիւցա-  
զունների : Նրա անունով այլ և այլ տաճարներ  
էին շինուել ու բաղիններ և արձաններ կանդնուել  
Արմաւիր, Անի և Բաղարատ քաղաքներում, որ  
յետոյ մեր սուրբ Լուսաւորիչը քանդեց ու բոլոր  
հարստութիւնները եկեղեցիներին ընծայեց : Ազա-  
թանգեղոսի պատմածների՛ն նայելով Սրամազի  
երկրորդական մականուններն էին «հիւրընկալ» և  
«վանատուր», և այս համաձայն է Նւսեբիոսի  
տուած վկայութեանը, որ ասում է՝ թէ Անտիո-  
քոս մի մեհեան շինեց «Յտարասէր» Սրամազի  
անունով (1) :

---

1 Նւս. Մասն Բ, եր, 240 :

Հին Հայոց կարծիքով աստուածներին հօր  
Սրամազդին կողմից ուղարկուած մի ան մարմին ողի  
կար երկրիս վրայ, որի պարտաւորութիւնն էր մարդ-  
կերանց վրայ հսկել, և նրանց բարի ու չար գործ-  
քերը «Աննայ Գրքի» մէջ գրել: Ս.յս ողին հա-  
տարակ անունով կոչվում էր «Գրող», իսկ քուրմերը  
«Սրամազդի քարտուղար» էին անուանում նրան  
և հաւատացնում էին ժողովրդին՝ թէ մարդկերանց  
մեռնելուց յետոյ՝ հողիները առնում տանում է  
Սրամազդի առաջին, որոնց դատաստանը Աննայ  
Գրքի մէջ գրուածներին նայելով կատարվում է:  
Մի գիւղում՝ Աղարշապատի մօտ՝ Գրող աս-  
տուած անունին նուիրուած մատուռ կար, որի քուր-  
մերը Գրողին պատգամներ հարցնելով երանելի  
մեկնութիւններ էին տալի ու մարդկերանց ապա-  
գան գուշակում: Ս.յս ազգային աստուած ազգե-  
ցութիւնը մեծ էր Հայոց վրայ, իբրև երկիւղի և  
յուսոյ առարկայ միանգամայն, նրա ազգեցու-  
թեան հետքերը մինչև այժմ էլ լեզուի մէջ մնա-  
ցին: Մէկին անիծելիս՝ սովորական բան է ասելը.  
«Գրողը տանի քեզ, Գրողից սև խարարդ լսեմ»  
(այսինքն մահուանդ լուրը առնեմ), կամ մի  
գժբաղտութիւն պատահելիս՝ այս խօսքերը կրկնելը.  
Թէ՛ «Կս էր իմ ճակտի գիրը, ճակտիս՝ էսպէս էր  
գրուած»:



Արամազդի որդի և ընդհանուր հրոյ նշանակ էր համարվում Միհրը, ըստ Ասորեացիացոց Միթրայ որի պաշտօնը Պարսկաստանից էր եկել Հայաստան : Միհրը առաջնորդում էր քաջերին պատերազմի ժամանակ և յաղթութեան պահը նրանց շնորհում . այս պատճառով նրանունով երգում էին ուսում ու հաշտութեան և բարեկամական դաշինքներ կապում : Այս աստուածութեան անունով զանազան տաճարներ կային Արամաշիր, Բաղարան քաղաքներում և Բաղառինջ գիւղում (Դերջան գաւառի մէջ) : Այս վերջինս անուանվում էր «Մրհակահան մեհեան», որ յետոյ Լուսաւորիչը քանդեց ու բոլոր գանձերը աղքատներին բաժանեց (1) : Երևելի էին նոյնպէս Փայտակարանի բաղինները, որ մէկ քարի մէջ փորուած լինելուն՝ «Եօթնփորակեան» բաղինք էին ասվում : Կարծիք կայ թէ առաջին տաճարը որ շինուեցաւ Հայաստանում՝ այս աստուածութեան ընծայուեցաւ, որովհետեւ տաճարը, որ կռապաշտութեան ժամատակ «մեհեան» կամ «միհրեան» էր ասվում, Միհրից է ածանցուած . ինչպէս որ Հայոց ամիսներից մինը՝ նոյնպէս Միհրի անունով «Մեհեան» կոչուեցաւ : Կան դարձեալ շատ յա-

---

(1) Աղաթ. ՃԱ :

տուկ անուաններ, որոնք Միհր բառից են կազմուել,  
այսպէս են Միհրան, Միհրդատ, Միհրներսէհ,  
Մեհրուժան, Լայլն, որ հին ժամանակ Հայերն  
ու Պարսիկները հաւասարապէս գործ էին ածում:

Հայոց հեթանոսական կրօնը ընդունում էր  
այլ և այլ տօներ, որ առանձին ծէսերով ու եր-  
գերով էին կատարւում: Արամազդ ասածու տօնը  
մեծ հանդէսով էին կատարում Հայերը տարին  
մէկ անգամ՝ նաւասարդի առաջին օրը՝ Փայտա-  
կարանում, ուր ամէն կողմից ժողովում էին աստ-  
ուածներին հօրը երկրպագու թիւն մատուցանելու:  
Սյն օրը ամէն տեսակ սպիտակ կենդանիներ էին  
դահում նրան, ինչպէս ուլ նախար ձի ու ջորի,  
և նրանց արիւնը ոսկի ու արծաթի ամանների  
մէջ ընդունում (1): Արամազդի պաշտօնը, ինչպէս  
երևում է, արեգակի ու կրակի պաշտօնի հետ էլ  
էր միաւորւում, ինչպէս որ Մովսէս Խորենացին  
վկայում է. պամազդիքը ասում է թէ Արտաշէր  
Պարսից թագաւորը Հայաստան դալով հրամայում  
է որ Բաղարանի ռոմկղական հուրը միշտ անշէջ  
պահուի (2):

(1) Աղաթ. Ա.:

(2) Նոյն իսկ Օրհմուտ կամ ինչպէս որ Վանի սեպածեւ ար-  
ձանագրութիւններում կարդացւում է Հրհմուտ բառի առա-  
ջի վանկը—հմ— որ ինչպէս պարսկ. նոյնպէս և հայ. նը-

Աւելի ընդհանուր և շքեղ կերպով էր կատարվում Միհրի տօնը: Չարնան սկզբում նուիրական կրակ էին անում մի փայտակոյտ վառելով հրասպարակի մէջ ու երկնքի օգնութիւնը կարգալով: Մի կանգեղ այս կրակի վրայ վառած պահվում էր ամբողջ տարին բոլոր մեհեաններին մէջ: Այս սովորութիւնը՝ որ խիտ հին ժամանակներից Պարսկաստանից անց էր կացել Հայաստան: այժման տարածում էր, որ նրա հետքերը միւշև այժմ երևում են մեր ժողովրդների մէջ և մանաւանդ Հայաստանի գիւղերումը, ուր իհարկէ աւելի երկար պիտի տևէին հին սովորութիւնները: Նրանք կատարում են այս արարողութիւնը Տեառնընդառաջի նախատօնակին, տեղ տեղ էլ տօնի օրը: Եթէ նոյն օրուայ եղանակը արդէլք լինի այս արարողութեան բաց երկնքի տակ կատարուելուն, այն ժամանակ եկեղեցու մէջ են կատարում, մի և նոյն սովորական արարողութիւնները պահելով, միայն փայտակոյտի տեղ՝ մի մանդալի մէջ դիւրավառ նիւթերից կրակ են վառում: Դակ եթէ օրը լաւ լինի, եկեղեցու բակումը կամ մի ուրիշ ընդարձակ տեղ փայտակոյտ

---

Հանակումէ կու, ցոյց է տալիս որ կրակի պաշտօնը ստոր էր այս աստուղն:

են պատրաստու լ ձիթենու և ուրիշ ծառերի  
ձիւղերից և պանազան տեսակ ծաղկներից , որոնց  
վրայ աւելացնում են փոքր ինչ ցորեն , մի բու-  
ռը խունկ , նոյնչափ էլ ոչխարի բուրդ : Ժամեր-  
գութիւնից յետոյ եկեղեցականք և աշխարհա-  
կանք ձեռքերը անվառ մոմեր բռնած՝ գնում են  
Թափօրով փայտակոյտի պատրաստուած տեղը : Մի  
քանի սովորական աղօթքներից յետոյ , քահա-  
նաները վառում են այն տարուայ նորաստակ ան-  
ձինքների մոմերը , որոնք ամէն կողմից վառում  
են փայտակոյտը և յետոյ կարգով բոլոր ներկայ  
զանուողների մոմերը : Այստեղ քահանայք և  
ժողովրդականք սկսում են դարձեալ երգել ու  
աղօթքներ ասել , մինչև որ բոլորը այրվում մո-  
խիր է դառնում : Այն ժամանակ ժողովուրդը  
չտապելով փայտակոյտին մօտ է գնում , և ամէն  
մարդ մի խանձողի կոտոր կամ մի քիչ մոխիր ժո-  
ղովելով տանում է տուն և մեծ հաւատով ու  
երկիւղածութեամբ պահում :

Թէ և Պարսիկները ու Հայերը հաւատա-  
բարտէս էին պաշտում կրակը Մեհրի անունով ,  
բայց նրանց մէջ մեծ պանազանութիւն կար : Հա-  
յոց սրբազան կրակը էր մի անտեսանելի հուր ,  
որ տարին մէկ անգամ ներկայացնում էին խա-  
րոյկի ձևով իսկ Պարսից կրակը նիթական էր և միշտ

անշէջ պահւում ու պաշտում էր բոլոր մեհեան-  
ների մէջ: Այս պատճառով էլ Հայերը Պարսիկ-  
ներին անուանում էին «կրակապաշտ», այսինքն  
նիւթական հուրը պաշտող, որովհետեւ կրակ բա-  
ռը մեղանում ատուղարանում է «ծախիչ նիւթ»:  
Սակայն Հայերն էլ ունէին իրանց նիւթական ու  
տեսանելի աստուածը— Սրեզակը, որի պաշտօնը  
աւելի ընդհանուր և դուրէ առաջինն էր որ հաս-  
տատուեցաւ Հայաստանում: Երկրի ամէն կող-  
մերը կային նրա մեհեանները ու բաղնիները,  
և ամէն տեղ պաշտում էին նրան յետադայ ա-  
նուներով: Սրեւ, Սրեզ, Սրեզակ կամ Սրէս:  
Հայոց ամիսներից մէկը այս աստուածութեան ա-  
նուներով: Սրեզ, ասուեցաւ, նոյնպէս Հայաստանի  
զաւառներից մինը՝ Նրասխի հիւսիսակողմը՝ կոչ-  
վում է «Սրեխիք», այսինքն արևի կուսակիցներ:  
Քրիստոնէութեան շորրորդ դարումը երբ Նուսա-  
ւորիչը Աւետարանի լոյսը բերաւ Հայաստան, ընդ-  
հանուր հեթանոսութեան հետ աշխատեցաւ ա-  
րևապաշտութիւնն էլ անհետացնել, բայց ոչ նրա  
աշխատանքը, ոչ էլ նրա յաջորդների քարոզու-  
թիւնները կատարելապէս պատկուեցան. Սրեւա-  
պաշաները, որ ընդհանուր անուներով «Սրեւորդիք»  
էին կոչվում, երկար ժամանակ հաստատ մնացին  
իրանց կրօնական կարծիքների մէջ, մինչև ան-

գամ Անկթիմուրի կատաղութիւնը շկարողացաւ ջնջնել նրանց, և այսօր էլ նրանց սերունդների մի փոքրիկ մասը կենում է Տիգրիս ու Եփրատ գետերի ափերումը : Սրանից երևում է որ արևապաշտութիւնը շատ արմատացած էր Հայոց մէջ. այնպէս որ նրա ազդեցութիւնը քրիստոնէական գրականութեան և լիպուի վրայ էլ մնաց : Մեր աղօթքների ու շարականների մէջ շատ անգամ յիշվում է արեգակի անունը, իբրև բարի Աստուծու և աշխարքի Փրկչի նշանակ : Յովհ. Մըկրրտչի շարականը սկսվում է այս խօսքերով .

« Արեգական արդարութեան ծագման Արուսեակ առաւօտու նախընթաց ճանապարհին Տրդուոյն Աստուծոյ անօրէնութեամբ սուրբ Յովհաննէս և այլն : Ինչպէս հին ժամանակ՝ այնպէս էլ այժմ սովորական բան է մեղանում արևով երդուել (արևուդ մեռնիմ, ի՛մ որդու արևը վկայ) և գէպ ՚ի ալեւելք դարձած աղօթք անել :

Արևի հետ Հայերը Առանին էլ երկրպագութիւն էին տալի Աստղիկի անունով որ համապատասխանում է Վինիկեցոյ ու Միդոնացոյ Աստարտային : Տարօն գաւառումը մի մեհեան կար Աստղիկին ընծայուած, որ ասվում էր « Սենեակ Վահագնի » : Սրանից երևում է թէ այս աստուածուհին Վահագնի կին էր ըստ դիցա-

բանութեան : Աստղիկի պաշտօնն էր կանանց վը-  
րայ հողացողութիւն ունենալ, իրանց ծննդեան  
ժամանակ, և կոյսերին ու առհասարակ ամու-  
սիներին դժբաղդութիւնից պահպանել : Շատերը  
Աստղիկի պաշտօնը Անահիտի հետ են խառ-  
նում, և այս աստուծու անունով կատարուած  
արարողութիւնները Աստղիկին են ընծայում :

Անահիտը, ըստ Յունաց Արտեմիս, ըստ Լա-  
տինացոց Ղիանա, Հայոց հռչակաւոր աստուածու-  
թիւններից մինն էր, իբրև դօրութեան, խնաս-  
տութեան և նախատեսութեան դիցուհի, բարե-  
բար մարդկութեան և պահապան ու խնամակալ  
թագաւորութեան և ազգի : Նրա բազմաթիւ  
մեհեանները դանվում էին Նրէզ, Աշտիշատ, Անի,  
Բաղաւան և ուրիշ տեղեր : Հայերը ոսկի արձան  
էին կանգնել նրան Նրէզի մեհեանումը և «ոսկիա-  
մացր», «ոսկիածին» ու «ոսկիահատ» մականուն-  
ները տուել : Տարին մէկ անգամ մեծ հանդէ-  
սով էին կատարում Անահիտի տօնը ամառ ժա-  
մանակ, և նոյն օրը թռչուններից աղաւնին էին  
նուիրում նրան և ծաղկներից վարդը, որով պը-  
տակում էին դիցուհու ոսկի արձանը, քաղաքի  
հրապարակները ու փողոցները և տների ճակատ-  
ները, այս պատճառով այս հանդէսի օրը կոչ-  
վում էր «Աարդավառ» : Հայաստանի քրիստո-

Նեղութեան առաջին դարումը Անասիտի մեհեանս  
ները կոծանուեցան, տօնն էլ Քրիստոսի այլակեր-  
պութեան տօնին փոխուեցաւ: Բայց Վարդապա-  
անունը և աղաւնի թագներու ու մէկզմէկու վրայ  
ջուր սրսկելու սովորութիւնները մինչև այսօր մնա-  
ցին մեր ժողովուրդների մէջ: Հայաստանի մէջ տեղ  
տեղ մի ուրիշ սովորութիւն էլ կայ, որ Անասիտի  
տօնի յիշատակը միտներս է բերում: Վարդա-  
պապի օրը երիտասարդք և աղջկուիք բազմու-  
թեամբ դաշտն են գնում, զանազան ծաղկներ  
ժողովում ու փոփոխակի երգեր են ասում: Ո՛վ  
կարող է ասել թէ այս երգերը հեթանոսական  
կարծիքների հետքեր չեն բովանդակում:

Ահա սրանք են հին Հայաստանի գլխաւոր  
ու առաջին կարգի աստուածութիւնները, որոնց  
պաշտօնը իրանց տօներովը՝ ընդհանուր դարձած էր  
Հայոց համար: Բայց այս աստուածների հետ Հա-  
յերը օտարագրի դաղթականների աստուածնե-  
րին էլ պաշտօն էին մատուցանում, դաղթականներն  
էլ իրանց կողմից շուտով միանում էին բուն երկ-  
րացիների հետ, նրանց վարք ու բարքին ընտա-  
նենում էին և նրանց քաղաքական ու կրօնա-  
կան սովորութիւնները ընդունում: Փիւնիկեյի  
դաղթականները, որ Տիգրան Երկրորդ գերի բե-  
րաւ Հայաստան, իրանց Արամազդ Ամենին երկր-



բազում թիւն էին անում. բազում անում մի բա-  
զին կար այս աստուածութեան համար, որ կոչ-  
ւում էր Ամենոր կա՛ն աստուածութեան աստուած :  
Հայոց «ամանորարեր» բառը, որ այս օտար աս-  
տուածութեան մականունից է ածանցուած և  
նշանակում է «նոր տալի ու բերք բերող», ցոյց  
է տալի որ այս աստուած տօնը Հայոց տարեգրու-  
խին էր կատարվում : Արարացի և ասորի դադ-  
թականները պաշտում էին իրա՛ց Նարոզ, Բէլ,  
Բարշամ, Բաթնիքաղ և Թարաթա աստուած-  
ները, որոնց արձանները Աբգար Մծբինից Եղե-  
սիա փոխադրեց (1) : Արտաշէս Առաջին և նրա  
որդին ու յաջորդը՝ Տիգրան Երկրորդ յոյն գաղ-  
թականների հետ Յունաստանի դիւանոր աստ-  
ուածներն էլ յափշտակեցին բերին Հայաստան,  
որոնց արձանները զանազան մեհեանների մէջ  
դրուեցան այն աստուածների կողքին, որոնց հետ  
աւելի նմանութիւն ունէին : Արտեմիտի մէկ ար-  
ձանը դրուեցաւ Երէզնի մեհեանի մէջ՝ Անահիտի  
կողքին, և միւսը Ապողոնի հետ՝ Արամազդի և  
Միհրի մօտ՝ Արմաւիրի մեհեանի մէջ, Աթե-  
նասինը՝ Արամազդի մօտ՝ Անիի մեհեանի մէջ,  
Հեփեստոսինը՝ Բազառնի մեհեանի մէջ, Սի-

---

(1) Խոր. Գր. Բ. Գլ. Իկ :

բողիտիներ՝ Աստղիկի հետ՝ Աշտիշատի մեհեանի մէջ, և Հերակլէսիներ՝ Վահագնի հետ՝ Վահագնի մեհեանի մէջ (1):

Քանի որ ժողովուրդը չէր մտածել մեհեաններ շինել, այս բոլոր աստուածներին երկրպագութիւն և զոհեր մատուցանելու տեղերը անտառներն ու լեռներն էին: Արդէն գիտենք թէ Սուեաց անտառը, որ Արմաւիրի մտերն էր, խիստ հին ժամանակ մի սրբազան տեղ էր համարվում: Քուրմերը այս ծառերի տերեւների ստաւիւնին նայելով՝ երջանիկ կամ անյաջող դուշակութիւններ էին անում: Պատժութիւնը ասում է թէ՛ Արայի ուղիին Անուշաւանը՝ Սուեաց անտառի պաշտամանը նուիրուած լինելուն՝ Սուկոչուեցաւ: Բարձր տեղերը ու լեռները նոյնպէս նուիրական էին համարվում: Արեգակին միշտ սարերի գլխին էին երկրպագութիւն անում, ինչպէս որ այսօր էլ անում են Արեւորդիքը: Իսկ Նուսնին Մանի կամ Սեպուհ լեռան գլխին: Աւստադնացութեան սովորութիւնն էլ շատ վաղ ժամանակ կար Հայաստանում, ամէն տեղ հիւրանոցներ կային ուխտաւորների ընդունելութեան համար, ուր բնակում էին քրմապետները ու

---

(1) Խոր. Գր. Բ. Գլ. ԺԳ. ԺԴ:

քրակերը : Այս հիւրանոցները կոչվում էին «վան» կամ «վանք», որ նշանակում է իջևան կամ օթևան : Իւրաքանչիւր վանքի մէջ մասնաւոր աստուածութիւններ կային, որոնք ասվում էին «վանատուր» կամ «վանատ», այսինքն «հիւրընկալութիւն տուող» : Քրիստոնէութիւնը հաստատուելուց յետոյ, այս հիւրանոցները իրանց նախնական վանքանուան հետ՝ ուխտաւորներին ու ճանապարհորդներին ընդունելու սովորութիւնն էլ պահպանին :

Հայոց հին կրօնի վրայ մինչև հիմայ ասածներինցս կարելի էր նշմարել, որ մեր դիտաւորութիւնը չէր հեթանոս Հայաստանի կրօնի ամբողջ պատկերը ներկայացնել. այդ մեր նպատակից դուրս է : Ընդհակառակն՝ հարևանցի խօսելով հին կրօնի գլխաւոր տարրերի ու աստուածութիւնների վրայ, մենք աւելի աշխատեցինք ցոյց տալ այն ազդեցութեան հետքերը որ հեթանոսական կրօնը ունեցել է քրիստոնէական դրականութեան, լեզուի ու կեանքի վրայ, որ բոլորովին անտեղի չերևայ մեր առաջ բերելու կարծիքը, այսինքն՝ թէ այն մնացորդների հետ կրօնական երգերի հետքեր էլ մնացած լինին մեր մէջ : Եւ ճշմարիտ. աչքի առաջև ունենալով այն սովորութիւնները, որ հին հեթանոսական սո-

վորութիւններից մինչև այժմ մնացել են մեր  
ժողովրդների մէջ, և որոնք կրօնական երգերի  
մէջ են գտնուած իրանց բացատրութիւնը, յիշե-  
լով դարձեալ հին կրօնի ազդեցութիւնը քրիս-  
տոնեայ Հայոց գրականութեան և հին ու նոր  
լեզուների վրայ, կարելի է համարձակ տեսլ թէ  
կրօնական երգերը քրիստոնէութեան դարերումն  
էլ երկար ժամանակ մնացին ու երգուեցան ժո-  
ղովրդի մէջ, և ո՛ր դիտէ, թերևս նրանց մնա-  
ցորդները տեղ տեղ մինչև այժմ էլ կարելի է դա-  
նել: Տարակոյս չկայ որ այս երգերը, եթէ յիրաւի  
այժմ կան, դիւրին կերպով կարելի էր որոշել յե-  
տին ժամանակների երգերից, եթէ միայն մի  
հնասէր անձ, Եւրոպայի գիտնականների օրինա-  
կին հետևելով, յանձնառու լինէր ազգային բե-  
րանացի աւանդութիւնները ժողովելու: Արտհե-  
տե յայտնի է թէ ինչպէս որ ժողովրդի մէջ մնա-  
ցած հեթանոսական սովորութիւնները հետզհետեւ,  
փոփոխութիւններ կրած ու կրճատուած են, այս-  
պէս էլ այս կրօնական երգերը իրանց սկզբնական  
կերպարանքը կորցնում ու խանդարվում են: Հե-  
թանոսութիւնը այլ և այլ դարերի ընթացքում  
մեծամեծ զոհեր է արել քրիստոնէութեան, հին  
սովորութիւնները ու հասկացողութիւնները նոր  
սովորութիւնների ու հասկացողութիւնների հետ

փոխուեցան ու խառնուեցան, և այս երկու կրօն-  
ների խառնուրդը, ինչպէս անասնք, դրականու-  
թեան վրայ էլ ազդեցութիւն ունեցաւ: Բայց  
կրօնական երգերի բուն նշանակութիւնը քանի  
գնացել կորչել է ժողովրդի համար, որ սովորու-  
թիւն է արել երգել նրանց, իբրև հնութիւնից  
մնացած ժառանգութիւններ, առանց հասկանա-  
լու նրանց մէջ յիշատակուած ձեւերի նշանա-  
կութիւնը: Աւրեմն և այս երգերի նիւթը չէ  
կարող փոփոխութիւններ կրել, որովհետև քրիս-  
տոնէութեան հաստատուելովք՝ խափանուեցաւ  
ու անհետացաւ հեթանոսական կրօնը, որից ծա-  
ղել է սկզբնական բանաստեղծութիւնը: Նկեղե-  
ցու հովիւները աչքի առաջև ունենալով ժո-  
ղովրդի բարոյական կողմը, իրանց բոլոր ջանք ու  
ճիգը թափել են ճշմարիտ կրօնը հաստատելու  
ուստի և ամէն հնարք գործ են դրել արմատա-  
խիլ անել ժողովրդի միջից բոլոր այն բաները, որ  
կարող էին նրա միտք բերել հեթանոսութիւնը:

Արդէն յայտնի է որ այս կրօնական եր-  
գերը, որոնց մէջ ժողովուրդը օրհնում է և փա-  
ռաբանում է այն գերագոյն էակներին, որ իր  
կարծիքով ամէն բանի սկիզբ ու աշխարհիս բոլոր  
լաւութիւնների սրտածառն են, — ժամանակով ա-  
մէնից հին երգերն են: Բայց մի և նոյն ժամա-

նակ պէտք է խմանալ որ աստուածների առ իթով  
ստեղծուած գովարանական երգերը պատկանում  
են քնարական բանաստեղծութեան (1), ուրեմն  
և քնարերգութիւնը բանաստեղծութիւն անդ-  
րանիկ ծաղիկն է: Արդարև, մարդուս առաջին  
աղաղակը, որի մէջ երևում է արդէն նրա ինք-  
նաձանաչութիւնը, քնարերգական է: Բոլոր ազ-  
գերի մէջ առաջին տանաւոր երգերը քնարա-  
կան են, նրանցմով է սկսուել թէ ասիական ժո-  
ղովրդների, թէ հին՝ կլասիկական ազգերի և  
թէ նոր՝ բուսանտիկական ազգերի կեանքը: Ինչ  
որ մարդկային հոգուն սեպհական է՝ կրկնվում է  
իւրաքանչիւր ազգի մէջ, եթէ միայն մի ազգ իր  
կեանքը երեխայական ժամանակներից սկսած՝ ա-  
զատ ու բնական ճանապարհով է անցկացնում և  
իր հանձարի բոլոր արդիւնքները ամբողջապէս  
պահպանում: Հողերանական հետադուտութիւն-  
ները ցոյց են տալի նոյնպէս՝ որ մարդուս մէջ ա-  
մէն ընդունակութիւններից առաջ զարգանում  
ու կատարելագործվում է զգացմունքը, որ քնար-  
երգութեան հիմնական տարրն էր: Իմացական  
կարողութիւնը աշխարհիս մէջ եղած բազմաթիւ

---

(1) Poésie lyrique. — քնարական են ասվում այս երգերը,  
որովհետև Յոյները սրտի խորքից բղխած ձայները քնարի  
վրայ էին անում:

ու զանազան տեսակ առարկաներից յափշտակուե-  
լով շուտով չէ դադարում այն առարկաներից  
մէկի կամ միւսի վրայ, արտաքին տեսակ տեսակ  
երևոյթները շուտով ներքին միաւորութեան չէ  
բերում, որ մի կանոնաւոր ու հիմնաւոր հա-  
յեացք կազմէ բնութեան վրայ, մինչդեռ իւրա-  
քանչիւր մարդ իր կեանքի մէջ գէթ մի քանի  
րոպէ ունի սրտի զգացմունքները բացատրելու, և  
այս րոպէները գրեթէ միշտ ուրախացնում են իր  
կեանքի առաջին տարիները: Այս էլ չպէտք է  
մոռանալ որ իւրաքանչիւր մարդկային զգացմունք  
իր ելեւէջները ունի, և այս զգացմունքը յան-  
կարծ տիրապետելով մարդուս հոգուն վրայ, ազ-  
դելով նրա սրտի վրայ, վառելով նրա երեւակա-  
յութիւնը, միշտ ու ամէն տեղ արտայայտվում  
է քնարական երգերով:

Սեր ասածները քնարերգական բանատեղ-  
ծութեան նախնական հետ թեան վրայ, ամենևին  
չպէտքէ հակառակ երևան այն խօսքերին, որ վի-  
պասանական բանատեղծութեան առաջնութեան  
վրայ ասացինք: Չնայելով որ մարդուս առաջին  
աղաղակը ամէնտեղ ու ամէն ժամանակ քնարա-  
կան է, և այս մասին չէ կարելի համաձայնել  
մի իմաստուն քննադատի հետևեալ խօսքերի հետ  
թէ «քնարերգութիւնը է մայր ամէն տեսակ բա-

Նաստեղծութեան մի կայծ, որ Պրոմէթէոսի ան-  
պատկեր կրակի նման՝ կեանք է տալի բոլոր պատ-  
կերներին: Բայց խնդիրը պատմական կողմից քն-  
նելով՝ է կարելի ընդունել, թէ քնարերգու-  
թիւնը բանաստեղծութեան միւս բոլոր տեսակ-  
ներից առաջ ծաղկում լինի: Այս բանի մէջ օ-  
րինակ կարող ենք առնել հին Յոյներին, որով-  
հետեւ ոչ մէկ ազգի մէջ դեղարուեաները այն-  
պէս ազատ ու կանոնաւոր եղանակով չեն զար-  
գացել, ինչպէս Յունաց մէջ, որոնց հարուստ  
կեանքը գլխաւորապէս դեղարուեաների մէջ գը-  
տաւ իր բացատրութիւնը: Այս պատճառով յու-  
նական դեղարուեաների զարգացման եղանակը,  
մեզ համար պէտք է մեծ նշանակութիւն ու հե-  
ղինակութիւն ունենայ: Հելլենական կեանքի մէջ  
վէպը ամէնից առաջ զարգացաւ, ինչպէս որ դը-  
րամատիկան բանաստեղծութիւնից առաջ՝ երեւան  
եղաւ քնարերգութիւնը: Այս ընթացքը բանաստեղ-  
ծական զարգացման մէջ շատ հատկանալի է. իւրաքան-  
չիւր ժողովուրդ իր երեխայութեան ժամանակ՝ բնու-  
թեան ու կեանքի վրայ միշտ աւելի արտաքին կերպով  
է մտիկ տալի: Միայն այն ժամանակ երբ ժողովուր-  
դը երեխայական դրութիւնից ազատվում է, երբ  
նրա միութիւնը քանդվում է, երբ բաղձութիւնից  
բաժանվում դուրս են գալի մասնաւոր անհատներ, որ



իրանց հասկացողութիւնով ընդհանուրից բարձր են  
և իրանց սեպհական զգացմունքները ու տպաւոր-  
ութիւնները բացատրում են. — ծաղկում ու զար-  
դանում է քնարական բանաստեղծութիւնը: Աւրեմն  
վէպը մնում է դարձեալ բանաստեղծութեան սու-  
ջինեկ ծնունդը: Բայց մի և նոյն ժամանակ այն  
կարծիքը թէ քնարերգութիւնը բանաստեղծու-  
թեան հիմնաւոր տարրն է, դուրի չէ ճշմարտու-  
թիւնից: Քնարերգութիւնը ամէն տեսակ բա-  
նաստեղծութեան հողի ու կեանք է տալի. ընդ-  
ունելով նրա գոյութիւնը իբրև բանաստեղծութեան  
մի առանձին տեսակ, նա խառնվում է բանաստեղ-  
ծութեան մի և տեսակների հետ, ոչ միայն վիպասա-  
նականի՝ այլ և դրամատիկականի հետ, և կեանք  
է տալի նրանց, ինչպէս որ Արամ թէոսի անտեսա-  
նելի կրակը կենդանութիւն է տալի բոլոր Չլասի  
ստեղծուածներին:

Արանից երևում է որ քնարերգութիւնը  
մի որ և իցէ ազգի պատկանում չէ, այլ հա-  
սարակաց սեպհականութիւն է, որի մասնակից  
են բոլոր ազգերը: Այս պատճառով անտեղի կը  
լինէր քնարական բանաստեղծութեան սկիզբը այս  
կամ այն ազգի մէջ ստորտել, նրանցից մէկի կամ  
միւսի իրաւունքը համարելով նրան: Մի և նոյն  
պատճառով կարելի է համարձակ ասել թէ չկայ

այլ, որ չունենայ իր քնարական երգերը: Այս-  
պէս, թէպէտ և վիպասանական երգերի նման,  
հնաթիւնը և ոչ մէկ հատուած չէ աւանդել  
մեզ Հայոց քնարական երգերից, բայց անհնարին  
է ուրանալ այս տեսակ երգերի գոյութիւնը հին  
Հայոց կեանքի մէջ, և մեր ամենափոքրիկ կաս-  
կածն էլ կը կը փարատի, եթէ անուանենք մեր մա-  
տենագիրներէ յիշած հուազ, ցուցք, մրմունջք,  
և այլն ուրիշ անուններով երգերը, որո՞ք յայտ-  
նի քնարերգութեան տեսակներին են պատկանում:  
Բայց որովհետեւ բոլոր մարդկութիւնը առ հա-  
սարակ և իւրաքանչիւր ազգ մասնաւորապէս այլ  
և այլ հանդատներէն յանուելով զանա-  
զան մտքեր է բացատրում, որոնց մէջ երևում է  
նրանցից իւրաքանչիւրի ճաշակաղխտական կեանքը  
ու զգացմունքը, այս պատճառով և քնարական  
բանաստեղծութիւնը զանազան ազգերում աւե-  
լի կամ պակաս զեղեցիութիւն ունի, ընդհանուր  
կամ մասնաւոր նշանակութիւն, նայելով թէ  
ինչ մտքեր ու ի՞նչ եղանակով է բացատրում:  
Եւ ահա այս բանը անհնարին է ցոյց տալ Հա-  
յոց քնարական երգերի մէջ, որովհետեւ սրա հա-  
մար հարկաւոր էր գէթ նրանց բովանդակութիւ-  
թիւնը ունենալ:

Ծաննելով մարդկային հոգու խորքում, ուր

ճշմարտութեան, երջանկութեան ու դեղեցկու-  
թեան անվերջ գաղափարները մի խորհրդաւոր  
վարագոյրի տակ ծածկուած են, և թռչելով ու  
դեորուած երգչի կուրծքից, քնարերգութիւնը  
թափանցում է սրտի ամենանուրբ լարերի մէջ  
և բաց է անում այն գաղտնիքները, որ սառն  
բանականութիւնը չէ կարող ըմբռնել: Քնարեր-  
գական բանաստեղծութեան տարրը է, ասացիւնք,  
դժպտմունքը, մարդկային հոգու մի նշանակեալ  
դրութիւնը. և որովհետեւ մարդուս հոգեւոր դը-  
րութիւնները զանազան են, այս պատճառով և  
քնարական երգերը լինում են երբեմն բարձր ու  
վսեմ, երբեմն ուրախ ու զուարթ, երբեմն տը-  
խուր ու տրտում:

Արքան խոր թափանցե՛նք ժողովրդական կեանքի  
հնութեան մէջ, այնքան աւելի կը տեսնենք որ  
աւանդութիւնը՝ ինչպէս վիպասանական՝ այսպէս  
և քնարական երգերի համար մեծ նշանակութիւն  
ունէր, որովհետեւ սկզբնական ժամանակներումը  
քնարական երգերը վիպասանականների նման՝ հա-  
սարակաց էին և ոչ թէ այս կամ այն անհատի  
սեպհականութիւն: Այս բանը աւելի լաւ ըմ-  
բռնելու համար՝ բաւական է մեզ ուշադրութիւն  
դարձրնել այժմեան Հայաստանի գիւղականների  
կեանքի վրայ, որոնց մէջ տակաւին դրի կարօ-

տութիւնը չմանելով՝ դեռ ևս շարունակում են  
աւանդութիւնով ապրել : Աւանդութիւնը նրանց  
համար դպրոցների ու դիտութիւնների տեղն է  
բռնում . նրա ազդեցութեան տակ անց է կե-  
նում նրանց բոլոր կեանքը : Մի և նոյն աւան-  
դութեան բարերար ազդեցութեան տակ անց էր կե-  
նում և հին ժամանակ մարդուս բոլոր կեանքը ,  
օրօրոցից մինչև դերեզմանը : Նրեխան՝ իր մօր կա-  
թը ծծելիս արդէն՝ լսում ու սովորում էր այն  
«օրօրները» որ յետոյ ժամանակով ինքը իր դա-  
ւակներին պիտի երգէ : Ազգականները իրանց նրն-  
ջեցեալին ուղարկաւորելով՝ սովորական «մրմունջ-  
ներով» ողբում էին նրա վրայ , հաստատ խնա-  
նալով որ երբ և իցէ իրանց էլ մի և նոյն ողբե-  
րով պիտի ուղարկաւորեն իրանցից յետոյ ապրողները :

Ինչպէս որ շախահաս մարդիկ ունին իրանց  
մտածմունքները ու հոգսերը , այսպէս էլ երեխա-  
ները իրանց խաղերը ու երեխայական երգերը ու-  
նին : Այժմեան մանկական երգերը , որոնց մէջ  
երեխայքը կարողանում են արդէն ուշադրութիւն  
գարձընել երկնային լուսաւորների և բնութեան  
երևոյթների վրայ ( « Արև արև , դուս արի , հէրն-  
ումէրդ գալիս է , կամ «բուք կուգայ , անձրև  
կուգայ » և այլն ) , յայտնի ցոյց են տալի և հնե-  
րի գոյութիւնը , կարելի է ասել և նրանց բնաւորու-

Թիւնը , որովհետեւ երեխայքը ամէն ժամանակ  
ու ամէն տեղ նոյնն են . ժամանակը և մինչև  
անդամ ազգութիւնը որքան էլ հեռացնէ , բա-  
ժանէ նրանց միմեանցից , բայց էլի բնաւորութիւ-  
նով ու հասկացողութիւնով մէկզմէկու նման են : Սա-  
կայն որքան որ մարդս սարիքը առնում է , այնքան էլ  
աւելանում են նրա աշխատութիւնները ու նե-  
ղութիւնները , բայց ըստ այնմ միսիթարութիւն-  
ներն էլ մեծ ու թանգ են նրա համար : Ինքն  
իսկ բնութիւնը հրաւիրում է մարդուս օգուտ  
քաղել կեանքից , ուստի և կեանքի ամենապե-  
ղեցիկ բոպէները խաղով , երգով և ուրախութիւն-  
ներով անց էին կենում : Աւշադրութեան արժանի  
է Հայոց «խաղ ասել» զուրցուածքը , որից յայտ-  
նի երևում է թէ բանաստեղծութիւնը կեանքի  
խաղն է : Այսպէս էլ «խաղալ» նշանակում է շատ  
տեղ «պար դալ» , գեղեցիկ զուրցուածք , որ ցոյց  
է տալի թէ ինչ սերտ կապակցութիւն ունին մէկ-  
զմէկու հետ երգը , պարն ու խաղը : Խաղով ու  
երգով անց էր կացնում մարդս իր բոլոր ծանր  
աշխատութիւնները , դարունքին ասես , երբ իր  
հօտը դաշտը քշում կամ արտը սերմանում էր ,  
աշունքին՝ երբ իր խտը հնձում ու ցորենը ժո-  
ղովում էր : Այս բոլոր աշխատութիւններից յե-  
տոյ՝ տօն օրերումը՝ աւելի զգալի էր երգի ու պար-

րի կարօտութիւնը : Բանաստեղծութիւնը՝ որ բան-  
նի գործի ժամանակ՝ մարդու ամենաճանր աշ-  
խատանքները թեթեւացնելու ծառայում էր, ան-  
գործ ժամանակներումը զբօսեցնում ու զուար-  
ճացնում էր նրան : Այլատ ու տօն օրերումը առա-  
ւելապէս խաղում էր ժողովրդի բուն երեւակա-  
յութիւնը, և պարն ու երգերը ընկերանում էին  
հին սովորութիւնների հետ : որոնք աւանդու-  
թիւնների հետ միասին ժողովրդի յիշողութեան  
մէջ մնացել էին հնադոյն ժամանակներից :

Բանաստեղծութիւնը, որի նուիրուած էին  
սովորաբար ազատ ու տօնի օրերը, աւելի հա-  
րստների և իրանց օրուան ապրուստը ճակտի-  
քրտինքով ճարելու կարօտութիւն չունեցող ա-  
զատների յարկի տակ պէտք է ծաղկէր . նրանց  
փառաւոր ու զարդարուն օթեանների մէջ աւելի  
շուտ շուտ պէտք է հնչէին քնարի լարերը : Ինչ-  
պէս Յոյները ունէին ողիմպիական խաղերում ի-  
րանց քաջերի փառաբանող երգիչներ, կամ ինչ-  
պէս որ Միջին դարու ասպետների պաղատները  
լիքն էին ազգային երգիչներով, այսպէս և հայ  
երգիչները ազատ մուտք ունէին թագաւորների ու  
նախարարների պալատներում : Հայոց (մանաւանդ  
Արշակունի) թագաւորների գլխաւոր զուարճու-  
թիւնը խաղաղութեան ժամանակ՝ որսերն էին :

և գրեթէ իւրաքանչիւր նախարար իր որսի պարտեղը ունէր, որ լեքն էր ամէն տեսակ երէններով: Ինչպէս այս որսական ուրախութիւններին՝ այսպէս և սովորական խնջոյքներին, հացկերոյթներին ու գինարբուներին գլխաւոր զարդն էին «վարձակ» կամ «վարձկան» երգիչները ու երգեցիկ կանայքը, որ երգելով ու պար գալով զուարճացնում էին բազմականներին (1): Բայց այս երգիչներին երևակայութիւնը չէր կարող այնպէս ազատ խաղալ թագաւորներին ու մեծատուններին ներկայութեանը, ինչպէս առ հասարակ ժողովրդական անկեղծ ըզբօանքներին ու զուարճութիւններին ժամանակ: Արդէն «վարձակ» անունը՝ որ նրանք իրանց վրայ կրում էին, իրաւունք է տալիս կասկածելու նրանց անկեղծութեան վրայ: Բանաստեղծութիւնը բռնութիւն չէ սիրում, և ճշմարիտ բանաստեղծը այս կամ այն նպատակին չպէտք է ծառայէ, իսկ ուր որ «վարձուած» երգիչը իր ստացած վարձի, կամ «ազատի» աչքից չընկնելու համար՝ երբեքն ստիպւում է իր չճանաչած՝ շատ անգամ էլ իբրև վատ ճանաչուած անձը գովաբանել, այնտեղ ազատ ոգևորութիւնը տեղ է տալի սառն խօսքի, անկեղծութիւնը — շողորորթութեան: Արդ՞ էր ար-

---

(1) Խոր. Գր. Բ. ԳԼ. ԿԳ., և Գր. Գ. ԳԼ. ԺԹ: Բուդ. Գր. Ե. ԳԼ. ԼԲ:

դեօք երգիչը իր քնարի լարերին ազատութիւն տալով՝ սրտանց գովել Սրշակ Յրկրորդի նման թագաւորին, որ գինարբուների մէջ պարծենում էր Ս. քիլլէսի նման քաջ ու արի լինել, և պահանջում էր որ երգիչն էլ իրան Յունաց դիւցազնին նմանեցնէ, այն միջոցին՝ երբ ժամանակակիցները գգուելով նրանից, իբրև մի նոր Ներոնի վրայ էին մտիկ տալի, կամ աւելի լաւ ասել պատմիչ հետ, երբ նա « արդեամբք Թերսիսոեայ նմանէր կաղի և կորագլխոյ » (1):

Մարդկային կեանքի ամէնից նշանաւոր դիպումաճր՝ ծննդեան և մահուան մէջ՝ ամուսնութիւնն է, և ոչ թի արարողութիւն այնքան հարուստ է ուրախական երգերով ու աւանդութիւններով, ինչպէս հարսանիքը: Նթէ աշխարհից հեռացող մահկանացուն իր քամակից թողնում է սուգ ու տրտմութիւն, դեռ նոր « աշխարք մանող » (ամուսնացող) երիտասարդը հետը բերում էր ծիծաղ և ուրախութիւն: Մեր հին յաշատակարանների տուած հարեւանցի վկայութիւններից դուշակում ենք՝ որ Հայերը մեծ հանդէսով և ուրախութիւններով պէտք է կատարում լինէին հարսանիքը: Ս. յս հարսանիքի հանդէսները աւելի հրապարակական ձև էին ստանում թագաւորների ամուս-

(1) Խոր, վերը յիշուած դիպում:



նութեան ժամանակ երբ բոլոր երկիրը սափ էր  
կանդնում. այր և կին, երիտասարդք և աղջ-  
կունք ձեռք ձեռքի տուած՝ հրապարակներում  
պարում էին (սլար և սլարանցիկք) և տեսակ տե-  
սակ երգեր ասում: Այս հարսանեկան երգերը  
կոչվում էին «ցուցք» կամ «ցցոց երգք», որոնց  
ինչ բովանդակութիւն ու ձև ունեցածը դժբաղ-  
դարար յայտնի չէ:

Բայց որովհետև մարդկային կեանքը միայն  
խաղաղ աշխատանքից ու ազատ զուարճութիւնից  
չէ բաղկանում, ժողովրդական բանաստեղծութիւնն  
էլ միայն ուրախական երգերի մէջ չէ երևում:  
Պատահում են հիւանդութիւններ, անյաջողու-  
թիւններ, կորուսաներ և ուրիշ ցաւալի հանդա-  
մանքներ: Ի հարկէ ձախորդութիւնների մէջ խե-  
լացի խորհուրդն էլ օգնում է, որ առակների  
ձեռով ամէն հանդամանքի համար պատրաստ է,  
բայց խորհուրդն էլ երբեմն անօգուտ է լինում:  
Այլը իր կնոջ, մայրը որդուն, որդին ծնողացը  
կորցնելիս՝ բոլոր ծանօթները սուգ էին մանում,  
ուրախութեան երգերը փոխվում էին տրտմու-  
թեան երգերի ու ողբերի: Այսպիսի տխուր հան-  
դամանքներում յուսահատութիւնը որ ապագայ  
կեանքի յոյս չունեցող հեթանոս ժողովրդին սեպ-  
հական է, այնպէս սասափի տիրում էր այսոց 0 Ի



արանքին, որ արք և կանայք կուրծքերը խփում,  
մաղերը փետում, երեսները կնձռաւում էին :  
Ս, յս յուսահատական ողբ ու լացը աւելի սաստ-  
կանում էր մանաւանդ այն ժամանակ երբ ու-  
ղարկաւորութեան հանդէսի միշտ անպակաս և-  
զող փողի փան չափ ու վնի տխուր հնչիւնների հետ  
միաւորում էին երգեցիկ կանանց մրմունջները :  
Ննչպէս որ թաղաւորները ու նախարարները որ-  
սերի ու խնջոյքների համար առանձին վարձակ-  
ներ ունէին, այսպէս էլ ուղարկաւորութեան  
հանդէսի համար «եղերամարք» կամ «ձշնարկու-  
կուսանք» ասած լալկանները կային, որոնք սեւեր  
հագած, մաղերը արձակած ննջեցեալի քանակից  
զնում էին, և պար բռնելով ու ծափ տալով նրա  
կեանքի ու մահուան զանազան հանգամանքները  
պատմում (1) : Քրիստոնէութիւնը իր բարոյական  
ազդեցութիւնովը որքան էլ աշխատեցաւ՝ բայց  
բոլորովին չյաջողեցաւ վերացնել այս յուսահա-  
տական երգերը : «լալկանները» երկար ժամանակ  
մնացին մեր ժողովրդների մէջ, անդ անդ մինչև  
այժմ էլ կան : Թէպէտ այս տեսակ քնարական  
երգերի օրինակ չունինք մեր առաջը, բայց քրն-  
նելով մեր այժմեան ողբերի բանաստեղծական

---

(1) Բող. Գր. Ե. Գլ. 1, Ա :

գեղեցկութիւնը կարելի է ասել թէ եղերամարց  
ողբերը շատ գեղեցիկ ու սրտաշարժ պէտք է լի-  
նէին : Նորը՝ որ միշտ իր սկիզբը ու արմատը ունի  
հնի մէջ, այս տեղ պէտք է ծառայէ մեզ հետ թիւ-  
նը պարզելու : Ո՞վ չէ շարժուել ու մի քանի կաթիլ  
արտաունք չէ թափել մեր մայրերի ու քոյրերի դամբա-  
նական ողբերը լսելիս : որոնց բովանդակութիւնը  
թէպէտ շատ անգամ միակերպ է, բայց բանաստեղ-  
ծական բացատրութիւնը միշտ նոր, միշտ գեղեցիկ ու  
սրտաշարժ է : Ս, յն աղերսական խօսքերը, որով  
ողբասացը պաղատում է ննջեցեալին քնից վեր-  
կենալ ու իր սովորական գործքերով պարսպել,  
այն անէծքները որ նա թափում է ննջեցեալի գրե-  
խին՝ տեսնելով որ նա խուլ է մնում իր աղա-  
չանքներին և ոչ մի ձայն տալիս, ոչ մի ժպիտ ար-  
ձակում, հանդուցեալի ընտրած անդուռն ու ան-  
պատահան բնակարանի—գերեզմանի տխուր նը-  
կարագրութիւնը, նրա կենդանութեան ժամա-  
նակ արած ու գործածը, հիւանդ օրերին ասած  
ու խօսածը, վերջապէս այն փաղաքշահան ածա-  
կանները որ նա տալիս է ննջեցեալին՝ տեսնելով  
որ իր բոլոր գանգատական խօսքերը անպատասխան  
են մնում, այն վերջին հրաժարական ողջոյնը,  
որի հետ միասին ուրիշ բարեւներ է ուղարկում  
նրանից առաջ միւս աշխարհ գնացողներին, — այս

խօսքերը ասում եմ, մեր միտքը քցում են փարանձե-  
մոյիը Գնէլ ամուսնու մարմնի վրայ երգած ողբինկա-  
րագրութիւնը (1): Թէ ինչպիսի բանաստեղծական  
ճշդութիւնով հին լալկանները իրանց ողբերի մէջ  
բացադրում էին ննջեցեալի ազգականների սրտի  
ցաւը՝ երևում է այն վիպասանութեան հատուա-  
ծից, որ Դաւիթ անունով մէկը (գուցէ Դաւիթ  
Անյաղթը) շարադրել է Տիգրան Առաջինի վրայ:  
Բանաստեղծը Տիգրանուհու ուղարկաւորութեան  
հանդէսը նկարագրելիս՝ ազգային երգիչների յի-  
շողութեանը դիմում և նրանց խօսքերը իր վի-  
պասանութեան մէջ է խառնում, ուր յիշում է  
թէ «փողարը» (այսինքն դամբանական երգիչը)  
այնպէս ճարտար կերպով էր երգում ողբը, որ Տի-  
գրանի սրտից անցածը բացատրում էր. ահաւա-  
սիկ այն հատուածը .

«Եւ արդ ներդործող ի միտս երևի իւր առ խորհուրդս փողարին  
Մեծօգույ Տիգրանայ զեղանին Տիգրանուհի,  
Իւր ներդործեալ զկողարաղն նաև ողջամիտ աշխարհա-  
ծուհի» (2):

Մնաց մի քանի խօսք ասելու դրամատիկա-  
կան բանաստեղծութեան վրայ (3), որ սկզբումը

(1) Բուդ. Դպր. Դ. ԳԼ. ԺԵ :

(2) Բազմալէզ. Դեկտ. 1. 1850 :

(3) Poésie dramatique. — Մեղանում դրամատիկան բա-

Նոյնպէս երգի ձեռով է երևում այն ազգերի մէջ,  
որոնց կեանքը բնական կերպով է զարգանում:  
Ինչպէս տեսանք, վնասասնական բանաստեղծու-  
թիւնը ներկայացնում է արտաքին աշխարհը, քը-  
նարերգականը բացատրում է մարդու ներքին՝ հո-  
գեկան կեանքը. իսկ վնասասնականի ու քնարա-  
կանի միաւորութիւնից, այսինքն երբ ներքինը միա-  
նում է արտաքինի հետ ու գործով կատարվում՝  
առաջ է գալի դրամատիկական բանաստեղծու-  
թիւնը: Աէսքը պատմում է անցեալը, քնարեր-  
գութիւնը գուշակու՞մ է ապագան, իսկ դրաման  
ներկայացնում է, այսպէս ասել, ներկայումս՝ ընթեր-  
ցողի կամ հանդիսատեսի աչքի առաջ կատա-  
րուած գործողութիւնը: Դրաման բանաստեղծա-  
կան զարգացման ամէնից բարձր աստիճանը ու գե-  
ղարուեստի պատկն է: Ինչ որ վերելք ասացինք վէ-  
պի և քնարերգութեան ընդհանրութեան վրայ,  
նոյնը ջենք կարող ասել դրամայի համար: Դրա-  
մատիկական բանաստեղծութիւնը առաջ է գալի  
այն ազգերի մէջ, որոնք քաղաքակրթութեան սո-  
սիալիզմի մէջ առաջ գնալով՝ պատմական զարգաց-

---

Կատարելութեան տեղ առ հասարակ դորձ են անում «Ֆեւ-  
է-է» կամ ոմանք նաև «Բանաստեղծութիւն»:  
Մենք ասելի լաւ համարեցինք պահել յունական բարձր, որ  
բոլոր եւրոպական լեզուների մէջ բնորոնում է:

ման ծաղկած վիճակին են հասել: Այսպէս պատահեցաւ հելլենական կեանքի մէջ: Յունաց երևելի դրամատիկական բանաստեղծները — Եսքիլէս, Սոփոկլէս ու Եւրիպիդէս հետզհետէ ծաղկեցան հելլենական կեանքի ամենափառաւոր շրջանում: Սրանով մենք շենք ուղում ուրանալ դրամայի գոյութիւնը մի որ և իցէ ազգի մէջ. դրաման բանաստեղծութեան միւս տեսակների հետ՝ ժողովրդական կեանքի անհրաժեշտ տարրերից մինն է. միայն կան այնպիսի ժողովրդներ, որոնց մէջ դրաման ստոր՝ աստիճանի վրայ է մնում ու բարձր դեղարուեան լինելու՝ վիճակին չէ հասնում: Հին ազգերի մէջ իսկապէս դրամատիկական բանաստեղծութիւն ունեցել են Հնդկացիք, Յոյք և Հռոմեացիք. բայց Յունաց դրաման արդէն մեծ զանազանութիւն ունի հնդկականից, այս վերջինը շատ ստոր է առաջինից: Աեանքի մէջ ամէն բան բղխում է կրօնից և դարձեալ կրօնի հետ է խառնրվում: Յունաց դրաման ծաղկեցաւ այն կրօնական արարողութիւններից ու խաղերից, որ հրապարակաւ էին լինում՝ ՚ի պատիւ Բաքոսի և երդով ու պարով էին կատարվում տարին երկու անգամ, հին տարուայ վերջին և նորի սկզբին: Հին տարին ճանապարհ դնելիս՝ երգում էին ծանր ու խորհրդաւոր երգեր, նորը դիմաւորելու ժա-

մանասկ—թեթև և ուրախ երգեր : Արդէն այս  
երգերը թատրոնական ներկայացման ձև ունէին .  
ծանր երգերի մէջ՝ ծանր ու հանդարտ կերպով  
պատմվում և միանգամայն ներկայացվում էին  
Բաքուի գործողութիւնները ու բարերարութիւն-  
ները . իսկ ուրախական երգերի հետ ընկերանում  
էր ուրախ ու թեթև պարը և ծաղրածութիւ-  
նը : Յետոյ՝ ժամանակ անցնելով՝ Բաքուի գործո-  
ղութիւնների վրայ առեւտրի ն ուրիշ աստուած-  
ների և մինչև անգամ դիւցապունների գործո-  
ղութիւնները, և վերջապէս սկսեցին պատմութիւ-  
նից նիւթ առնել : Աւերջապէս՝ երբ Բաքուի սե-  
ղանը տեսարանի փոխուեցաւ , երգիչները դերա-  
սանների կրօնական արարողութիւնն էլ թատրո-  
նական ներկայացման փոխուեցաւ և գրամայի եր-  
կու գլխաւոր տեսակները առաջ եկան . տրագե-  
դիան և կոմեդիան կամ կատակերգութիւնը :  
Խորհրդաւոր երգերից և ծանր պատմութիւննե-  
րից կազմուեցաւ առաջինը , ուրախ երգերից և  
ծաղրածութիւններից— երկրորդը : Նոյն կրօնա-  
կան արարողութիւններից առաջ եկաւ Հնդկաց  
գրաման, որոնց կարծիքով թատրոնական խաղար-  
կութիւնները ստեղծուել են աստուածներից, ներ-  
կայացուեցան նախ երկնքումը, և յետոյ նոյն իսկ  
Բրահմայի ձեռքով հաղորդուեցան մարդկերանց :

Յունաց և Հնդկաց դրամատիկական բանաստեղծութեան սկիզբը հարեանցի յիշատակելով մեր նորատակն է ցոյց տալ որ դրաման, իբրև անհրաժեշտ տարր իւրաքանչիւր ժողովրդի կեանքի մէջ, պէտք է Հայոց մէջ էլ գտնուի լինէր: Հայաստանն էլ ունեցաւ իր «գուսանները» (1) որոնք երկրի աստուածների, գուցէ և գիւցապունների դործողութիւնները ներկայացնում էին ժողովրդեան առաջ: Միայն ինչպէս երևում է, դրամատիկական բանաստեղծութիւնը շրարդացաւ Հայոց մէջ, ու վերջացաւ այն անդ՝ որ անդից ըսկաւ յունական դրաման: Այս բանը աւելի հասկանալի կը լինի եթէ յիշենք մի ժողովուրդ՝ որ մինչև այժմ շարունակում է ներկայացնել հին ժամանակներից մնացած կրօնական արարողութիւնները, ուրեմն և մի քայլ առաջադիմութիւն արած չէ դրամատիկական բանաստեղծութեան մէջ: Յայտնի է որ Պարսից հին բանաստեղծութիւնը շատ հարուստ է վիպասանական ու քնարական տարրերով • բայց դրամատիկական տարրը ամենևին զարդացում չէ ստացել նրանց կեանքի մէջ, և միշտ իր սկզբնական դրութեան մէջ է մնացել: Այն ողբական երգերը որ Պար-

---

(1) Խոր. Գր. Ա. Գ. 372



սիկները հին ժամանակները երգում էին Ալի և  
Նրա որդիերանց Հասան — Հիւսէյնի վրայ, մինչև  
չէ այժմ էլ նոյն կերպով երգում են նրանց կեանս-  
քի ու մահուան արկածները հրապարակաւ ներ-  
կայացնելով: Աերջապէս թէպէտ յոյն և հռո-  
մայեցի մատենագիրները յիշում են թէ՛ Արտա-  
ւազդ Առաջին տրադեդիաներ է գրել, որոնց մի  
քանի հատուածները մինչև Պլուտարքոսի օրերը  
հասել էին. բայց յայտնի է որ նա իր տրադե-  
դիաների նիւթը հայկական կեանքից չէ առել,  
այլ յունական կեանքից, և յունարէն լեզուով էլ  
գրել է, որ հին ժամանակները իբրև ուսումնա-  
կան լեզու ծաղկում էր Ասիայի մէջ: Պատմու-  
թեան թերթերը վկայում են նոյնպէս՝ որ Տիգ-  
րան Երկրորդի օրովը Հայաստան թատրոններ կա-  
յին, բայց այն թատրոնների գուսանները կամ  
գերասանները անշուշտ Յոյներ էին, որոնք ժա-  
մանակաւոր եկել էին Տիգրանի շքեղ պալատը  
ըւարձացնելու (1):

(1) Հինդերորդ գարու սրբազան մատենագիրներից մինը՝  
Յովհ. Կանդակո ճառ թէ՛) թատրոնի ու գերասանների գէ՛մ  
խօսելով կարծես կամենում է ցոյց տալ թատերական խաղար-  
կութիւնների գոյութիւնը Հայաստանում: Մենք կարծում ենք  
թէ այդ մի լոկ հետեւողութիւն է շարքորդ գարու Յունաց  
սուրբ Հարց, որոնք իրանց հետտրական հանճարը ցոյց  
տաին շատ անգամ զգուշացնելով ժողովրդին Բիւզանդիայի  
անբարոյական թատրոններից:

Վերևը (Գլ. Բ.) դեղարուեացիների ստեղծագործութեան վրայ խօսելիս՝ տեսանք որ նրանցից մի քանիսը, երաժշտութիւնը, ձայնականութեան գործիականը, մնչկատակութիւնն՝ ու պարը այնքան մօտիկ կապակցութիւն ունին մէկըմէկու հետ, որ զրեթէ բոլորը միասին մի և նոյն ժամանակ երևան են դալի ու ամէն ժողովրդների մէջ գանձում են : Ինչպէս որ շկայ ազգ՝ որ շունկայ երգեր, մինչև անգամ պատմական աստղերէն ամէնից ասոր աստիճանի վրայ կանգնող ժողովրդները, այնպէս էլ շկայ ժողովուրդ, որի մէջ վիպասանական և քնարական երգերի հետ՝ բաց ի կենդանի ձայնից՝ մի նուագարան էլ ձայնակից շինի : Ի հարկէ այս նուագարանները թէ փողական լինին, թէ լարական կամ թնդական, սկզբնական ժամանակներումը շատ պարզ ու անպաճոյճ պէտք է լինէին, ինչպէս որ պարզ էր և ժողովրդների կեանքը, ու միայն վերջերը աւելի զարդարուն և բարդ ձև պէտք է ստանային : Տարակոյս շկայ որ շին հայոց փողական նուագարանների մէջ պարզ «հովուական սրինդը» և «եղեգնեաց փողը» աւելի վաղ պէտք է ծանօթ լինէին նրանց, քան թէ պղնձի՝ և մէկըմէկու հետ ձայների աստիճանների համեմատ կապուած եղեգնեաց փողը : Հայոց լարական նուագարանների

մէջ յիշվում են «քնարը, տաւիղը, վինը, փանդիւն», ու միայն Խորենացու յիշատակած և վիպասանական երգերի հետ գործածուած «բամբիւն», որոնք թէ ձեռով ու թէ լարերի շատ կամ քիչ լինելով մի ևեանցից զանազանվում էին: Երկու վերջինները իրանց արմատի մէջ են կրում իրանց բացատրու թիւնը, որովհետև բամբիւն կաղմուած է «բամբ» արմատից, որ նշանակում է «բարձր» (պարսկ. «պամ»), արաբ. «պէմմ») իսկ փանդիւն նոյն ձայնով, կարելի է և նշանակու թիւնով զանվում է յունարէնի մէջ. «փանդուռա» յունարէն նշանակում է «քնար երեքադեան» (1): Իսկ թնդական գործիքների մէջ աւելի յաճախ յիշվում է «ծնծղայն» ու «թմբուկը»: Յայանի է որ այս բոլոր նուագարանները իրանց գործածուելու տեղն ունէին: Արդէն յիշեցինք որ բամբիւն վիպասանական երգերի սեպհական նուագարանն էր՝ քնարը աւելի զուարճու թիւնների ու ընկերական մեղմ յարարելու թիւնների մէջ պէտք է գործածուէր. փողը, վինը փանդիւնն ու թմբուկը ննջեցեալների ու զարկաւորու թեան ժամանակ (2): Պթբաղպարսը այս նուագարանները միարանող կենդանի

---

1 Տես նոր բառգիրք, Վենետիկ:

(2) Տես վերելը յիշուած տեղերը:

ձայնի եղանակների բնաւորութեան ու նրանց  
յատկութիւնների վրայ ոչինչ որոշ բան չենք  
կարող ասել: Այս միայն յայտնի է, որ ինչպէս  
ամէն տեղ ու ամէն ժամանակ՝ այնպէս էլ Հայոց  
մէջ ուրախ նիւթերը բացատրող եղանակները թե-  
թեւ և զուարթ պէտք է լինէին, իսկ տխուր դէպ-  
քեր բացատրողները՝ ծանր ու սրտաշարժ, ինչպէս  
էին, օրինակի համար, եղերամարց կամ ձայնար-  
կու կուսանաց ողբերի եղանակները, երբ  
երգի հետ ընկերանում էր մի տեսակ ծանր ծա-  
փահարութիւն ու տրամական սլար: Պարն ու  
կաքաւն էլ հանդամանքների նայելով՝ զանազան  
բնաւորութիւն ունէին: Կաքաւել կարելի էր ա-  
ռանձին՝ իբրև «կաքաւք» (թռչունելով սլարել)  
և «կայթք» (տոները ու ձեռքերը խփելով սլար-  
զալ), կամ բազմութեամբ շրջան կազմելով իբ-  
րև «սլար» կամ «սլարանցիկք» (2):

---

(2) Պ. Մ. Էմինը (Վէպք. Հայ. եր. 97) ուր բառին լուկ  
չեզնի նշանակութիւն տալով սխալմամբ կարծում է թէ  
«Երէ՛ + ցո՛ց և ուրաւոց ոչ այլ ինչ յայտ ասնէ, բայց եթէ երգ ք  
գուսանաց եւ երգչաց վէպս ասողաց ժողովրդեան, զնո՛ստ ուր  
ուրէլոց»: Մենք ընդունում ենք որ ցցոց կրգերը գուսանների  
ասած երգերը լինին, որոնց նիւթը մի և նոյն ժամանակ  
ներկայացնում էր ժողովրդի առաջ, և շատ կարելի է՝ որ  
այդպիսի առիթներում ժողովուրդը գուսանների չորս կողմը  
սլար բռնում լինէր • բայց այս էլ անտարակոյս է որ երէ՛ +  
ուրաւոց նշանակում են այն երգերը, որ երա՛ն + երէ՛եւնե՛րը  
սի և նոյն ժամանակ սլար էին գուլի:

Վ զ.

Բանաւոր դրականութեան մէջ երգերից յետոյ, կամ թէ ասել երգերի հետ հաւասար ու շարքութեան արժանի են զըրոյցները, որոնք երգերի պէս կէս—առասպելական ու կէս—պատմական աւանդութիւնների վրայ հիմնուած ու հիւսուած են: Բայց ինչ որ երգերի ներքին ու արտաքին յատկութիւնների վրայ ասինք, նոյնը չենք կարող զըրոյցների համար ասել: Տեսանք որ ազգային երգերը իրանց սկզբնական կերպարանքը գրեթէ անփոփոխ պահում են, և ինչպէս առաջիններից առնվում՝ այնպէս էլ վերջիններին աւանդվում են, առանց նշանաւոր փոփոխութիւններ կրելու: Իսկ զըրոյցները, կամ այժմեան լեզուով խօսելով հեքիաթները, բերանէ բերան անցնելով՝ կերպարանափոխ են լինում, կամայ կամայ իրանց սկզբնական կերպարանքը կորցնում՝ օտար մասներ են ընդունում, և այլ և այլ ժամանակների ու տեղերի նայելով՝ այլ և այլ կերպարանք ու գոյն են ստանում: Աւրեմն զըրոյցները պատմութեան համար այնքան յարդ չունին՝ ինչպէս

երգերը, որովհետև աւելի կեղծիք են պարունա-  
կում քան թէ ճշմարտութիւն : Բայց եթէ ժողովրդի կեղծիքները պատմութեան համար մեծ նշանակութիւն չունին, ընդհակառակն՝ գրականութեան համար թանգ են, որ գիտէ կեղծիքներին էլ գին գնել, որովհետև նրանք ժողովրդի երևակայութեան ուղղութիւնը ցոյց են աւելի ու բացատրում են : Աստի և զրոյցները՝ որքան էլ իրանց սկզբնական կերպարանքը կորցնում լինին, բայց դարձեալ ունին իրանց գրականական նշանակութիւնը : Այս զրոյցների կրած փոփոխութիւնները երկու տեսակ են . մէկը ներքին, միւսը արտաքին : Ներքինները վերաբերում են զրոյցների նիւթին, արտաքինները նրանց յօրինուելու եղանակին :

Ինչպէս ծիսական երգերը, աւանդութիւնները ու սովորութիւնները, այսպէս էլ զրոյցները առասպելական հասկացողութիւնների վրայ հիմնուեցան. որոնք թէ առաջինների ու թէ վերջինների մէջ միշտ պահպանուել են, 'ի հարկէ սկիզբները աւելի անսխիտիս ու որոշ կերպով : Կակ երբ ժամանակ անցնելով՝ նախնական առասպելների ներքին նշանակութիւնը կորչում է, զրոյցների գլխաւոր իմաստը զանազան մանրամասն հանգամանքներով է վարդարվում . էլ նրանց մէջ յի-

շատակուած անցքերը ու արկածները իրանց բր-  
նական ընթացքով չեն պատմվում, այլ միայն ե-  
րևակայութեան կամքին հետևելով:

Արտհետև ժամանակ անցնելով առաջուայ  
հասկացողութիւններից ու սովորութիւններից շա-  
տը անհետանում են, զրոյցների հին հասկացողու-  
թիւնները՝ նոր հասկացողութիւնների են փոխվում:  
առասպելական էակների տեղը բռնում են զերբնա-  
կան արարածները կամ ողիները, յետոյ կամաց կա-  
մաց ողիներն էլ անհետանում են, կամ նրանց հետ  
միասին մարդ իկ էլ զրոյցների դիւցազնի օգնութեամբ  
զայլա՝ կամ նրա հետ պատերազմում են:

Ազգային հին զրոյցների մի քանիսի հա-  
մառօտ բովանդակութիւնը պահպանել է մեզ մեր  
հին գրականութիւնը և զխաւորապէս Մովսէս  
Խորենացու պատմութիւնը: Այս զրոյցները եր-  
գերի հետ՝ քրիստոնէութեան դարերումն էլ ան-  
սարակոյս երկար ժամանակ ապրեցան մնացին ժո-  
ղովրդեան մէջ, ինչպէս որ նոյն պատմագրի տուած  
վկայութիւններից էլ տեսնում ենք (1): Եւ ա-  
հա այս հանդամանքը հաստատում է արդէն՝ որ  
զրոյցները թէև անբնական կեղծիքներով լիքը, բայց  
երգերի հետ հաւատար նշանակութիւն ունին ժո-

---

(1) Խոր. Գր. Բ. Գլ. Է. ԼԶ. ԿԱ:

դովորի համար : Նրանց մէջ պատմուած զուար-  
ճալի ու զբօսեցուցիչ անցքերը միակերպ սիրելի  
են ժողովրդեան ամէն կարգի ու հասակի մարդ-  
կերանց, որոնց երևակայութեանը զրոյցը կատա-  
րելապէս բաւականութիւն է տալի : Այսպատեա-  
կան ժամանակներումը երբ նորածին սերունդի  
զուարճութիւնները հակառակ չէին երևում ծե-  
րերին, մարդկային կեանքի այս երկու ծայրի հա-  
սակները՝ ծերութիւնն ու երեխայութիւնը սկսով  
հանդիպում էին զրոյցների մէջ. կեանքից բաժան-  
վող սերունդը իր աւանդութիւնները հաղորդում  
էր նորահաս սերունդին : Մերը զրոյց է պատմում  
և խրատում է, փոքրը լսում է և խրատվում . մէ-  
կը զրոյցով միտն է բերում անցեալը, միւսը գու-  
շակում է ապագան : Զրոյցի նիւթը ( մեր խօսքը  
բոլոր զրոյցների վրայ է առ հասարակ, ոչ միայն  
հնութիւնից մնացած՝ այլ և մինչև այժմ ժո-  
ղովրդի մէջ պատմուած հէքիաթների վրայ ) դիւ-  
ցազունների գործողութիւններն են, նրանց պա-  
տերազմները ու յաղթութիւնները, և բոլոր այս  
նեղութիւնների ցանկալի վերջը — ամուսնութիւնը,  
որով զրոյցի դիւցազնը թագաւորի կամ երեւելի  
իշխանի աղջկայ հետ միանում է՝ ամբողջ թա-  
գաւորութիւն բաժին ստանալով : Զրոյցի մէջ է  
պարունասկիւմ այն մօտիկ համակրութիւնը որ



Ժողովրդի մէջ երկար ժամանակ պահպանում է նրա խղճանքի վրայ, մինչև անգամ վիպասանական աւանդութիւնների ազդեցութիւնը կորչող ժամանակներումը : Չրոյցի խղճան մարդկային կեանքի միջին ու փառաւոր ժամանակն է, այն առոյգ երիտասարդութիւնը, որ պատմող ծերունու համար անհասանելի է իբրև մի անդառնալի անցեալ, և ականջ դնող երեխայի համար՝ իբրև մի հեռաւոր ասլազայ, — այն խղճալը, որ ամէն հասակում մարդու իրողականութիւնից հանում տանում է, այսպէս սակ, դէպ 'ի մի կատարելագոյն աշխարհ, և լինելու բաներ է խոստանում :

Ազգերի զրոյցները շատ մեծ նմանութիւններ ունին մէկմէկու հետ, և այս նմանութիւնները որ ըստ մասին զրոյցների հիմնական դադարների և ըստ մասին բնաւորութիւնների նկարագրութեան մէջ են պարունակուիւմ, ոչ միայն դրացի ու ժամանակակից, այլ և անդու՛ռ ժամանակով միմեանցից հեռու գտնուող ժողովրդների զրոյցների մէջ երևում են : Բայց պէտք է կարծել թէ այս նմանութիւնները պատահական լինին, կամ թէ ըսկ զրոյցների մէկ եր'ջից միւսը անցնելուց առաջացել են, ոչ, այլ ազգերի՝ իրանց կեանքի դիւցազնական ժամանակներումը միակերպ հայեցումաճք ունենալուց բնութեան

վրայ, որի երևոյթներն ի վրայ հիմնվում են միշտ սկզբնական ժողովրդների կրօնական ու բարոյական համոզմունքները : Այս կողմից զբոյցները կարելի է համեմատել նմանաձայն բառերի, հետ (1), որոնք պատահում են մինչև անդամ ուրիշ ուրիշ ցեղերի պատկանող լեզուներում, որովհետև նրանց ամենի աղբիւրը մէկ է — հետևողութիւն բնութեան մէջ լսուած ձայներին ու հնչիւններին, որոնք ամեն տեղ միակերպ սպաւորութիւն են գործում ականջի վրայ : Բայց զբոյցների մէկգլուկու նմանելուն մի ուրիշ պատճառ էլ կայ, — աղբերի ծաղման նախնական միութիւնը, որոնք սկզբնական ժամանակներումը մէկ կեանք ունէին, և միայն վերջերը սկսան առանձին կեանքով ապրել : Բաժանուելով նոյնասեռ ցեղից, անցկենալով ուրիշ երկիրներ և իր սեպհական կեանքովը ապրել սկսելով, իւրաքանչիւր ազգ պահպանեց նախնական աւանդութիւնները, կրօնական կարծիքները և բանաստեղծութիւնը : Հնութիւնը զբոյցների անկախ զարգացման մէջ էլ բոլորովին չանհետացաւ, հազա միայն ուրիշ ձև ու կերպարանք ստացաւ :

Այսպէս, օրինակի համար, մեր հին զբոյցներից մինը՝ Արտաւազդ Երկրորդի այլաբանական

---

(1) Onomatopées.

մահուան վրայ, որ հինգերորդ դարումը տակա-  
ւին պատմվում էր Հայաստանի մէջ, շատ նմա-  
նութիւն ունի երկու յունական առասպելների  
հետ: Արտաշէս Երկրորդի որդին Արտաւազդը  
իր մօլի, նախանձոտ ու փառասէր բնաւորութիւ-  
նովը շատ ատելի էր դարձել ժողովրդին, և այս  
ատելութիւնը մինչև վիպասանների երգերի մէջ  
անցաւ, ուր ինչպէս յիշեցինք, Արտաւազդ դե-  
է նմանեցվում: Տեսանք դարձեալ որ նոյն երգերը  
պատմում են՝ թէ երբ Հայերից շատերը,  
Արտաշէսի պէս բարերար ու խելացի թագաւորից  
յետոյ լոյս տեսնել շուղելով, նրա հետ գերեզ-  
ման իջան, Արտաւազդի բնական նախանձը  
վառուեցաւ ու այս դանդաղատական խօսքերս ասել  
տուաւ նրան:

— Պառ որ գնացիր ու բոլոր երկիրս էլ  
հետդ տարիր, ևս աւերակների վրայ ի՞նչպէս թա-  
գաւորեմ:

Հայրն էլ անիծեց նրան այս օրհասական  
խօսքերով:

— Եթէ դու ձի նստած՝ որսի գնաս ա-  
զատ Մասիսի վրայ, քաջերը կը բռնեն՝ կը տա-  
նին քեզ ազատ Մասիսի վրայ, այնտեղ կը մնաս  
ու էլ լոյս չես տեսնիլ:

Հօր անկէքը շուտով հասնում է նախան-

ձոտ որդու գլխին, որովհետև մի օր՝ երբ Մատ-  
սեաց կողմերը որսի էր գնում Արտաւազդ, յան-  
կարճ ձիովը միասին մի անդունդի մէջ ընկաւ՝  
աներևոյթ եղաւ: Այնտեղ գանուող քաջերը,  
այսինքն ոգիները, առին տարին նրան Մասիսի  
գլուխը ու մի այրի մէջ շղթայակապ փակեցին,  
որ չկարողանայ ազատուիլ: Սակայն Արտաւազդի  
հետ մնացել էին իր երկու որսի շները. այս  
հաւատարիմ կենդանիները անդադար կրճուէն  
իրանց տիրոջ շղթաները, որնոր անհամբեր սպա-  
սում է ազատութիւն ստանալ ու աշխարքիս վերջ  
տալ: Բայց հազիւ թէ շղթաները մաշվում են,  
որ դարբինների կռանահարութիւնից նորից պնդ-  
վում ու ամրանում են նրանք և կատաղի թա-  
գաւորի վշտերը նորոգվում (1): — Ահա այս զը-  
րոյցը Աովկասի առորտը արդելվող Արոմոթէոսի և  
Տարտարոսի մէջ փակուած Սիսիփոսի վրայ պատմու-  
ած զրոյցների հետ ընդհանուր նմանութիւն ու-  
նի. երեքին էլ հիմնական զաղամարը մի և նոյնն

(1) Խոր. Գր. Բ. Գլ. ԿԱ: — Ինչպէս յայտնի երևում է,  
Արտաւազդի գանգաւը ու հոգից ընդունած անէծքը երդի  
մաս է, իսկ քաջերից բնւում ու Մասիսի վրայ շղթայա-  
կապ արդելուածը՝ զրոյց է: Եղնիկ Աղբրացին (եր. 105) այս  
զրոյցը Խորենացուց փոքր ինչ տարբեր է պատմում. այսինքն  
թէ Արտաւազդ ոչ թէ աշխարքիս վերջ տալու, այլ աշխար-  
քիս տիրելու համար պիտի ելլէ Մասիսի այրից:

է — անվերջ պատիժ: Աստուածների որդին Պրոմեթէոսը՝ տեսնելով որ իր հողից ստեղծած առաջին մարդը անշունչ ու անկենդան արձանի նման է, Աթենասի օգնութեանն է դիմում: Իմաստութեան դիցուհին Պրոմեթէոսին առնում՝ տանում է երկինք, ուր տիտանը տեսնելով թէ կրքակն է բոլոր երկնային մարմիններին հողի ու կեանք սուտը, գողանում է մի կայծ այն կրակից և երկրիս վրայ բերելով՝ իմաստութեան հողի ու կեանք է տալի իր ստեղծուածին: Ի դուր եղան Արամազդի բոլոր հնարները Պրոմեթէոսից վրէժ առնելու իր գողութեան համար, տիտանը յաջողեցաւ երկար ժամանակ ազատ մնալ նրա լարած որոգայթներից, մինչև որ աստուածների հայրը զայրանալով կասել է տալիս նրան Աովկասի ժայռերից մէկին վրայ և դատապարտում որ մի անդղ անդադար ցերեկը լիւրը կրծէ, ու գիշերը կրկին ածի՝ որ կրկին էլ կրծուի: Այս սարսափելի պատիժը քիչ քիչ երեսուն հազար տարի պիտի շարունակուէր, եթէ չերակէս անգղը չապանէր և այսպէսով թշուառ Պրոմեթէոսի տանջանքներին վերջ չտար: Իսկ Նեոդոսի որդին Սիսիփոսը, որ իր հիմնած Աորրնիթոսի տէրութիւնը հարստացնելու համար՝ ձեռքից եկած չարագործութիւնները անելու չէր խնայում, ծովի վրայ աս-

պատահութիւններ էր անում, իր երկրից անց-  
կացող ճանապարհորդներին բռնում՝ անողորմա-  
բար մեծ մեծ քարերի տակ ճնշում էր և ու-  
նեցած չունեցածները յախշտակում, — վերջապէս  
ինքն էլ Թեսէոսից սպանուեցաւ: Մահուան դու-  
ռը հասնող Միսիփոսը կամենալով վերջին անգամ  
իր կնոջ Մերգայէի հաւատարմութիւնը փորձել,  
պատուիրում է նրան որ իր մարմինը անթաղ թող-  
նի: Մեռնող ամուսնու պատուէրը կատարուեցաւ:  
Այն ժամանակ զայրանալով որ իր կախքը այդպէս  
ճիշդ կերպով կատարուել է և ուզելով վրէժխըն-  
դիր լինել, Միսիփոսը հրաման է առնում Պլու-  
տոնից մի քանի օրով լոյս աշխարհ գնալ, խոս-  
տանալով որ շուտով յետ կը դառնայ: Բայց հա-  
զու թէ Տարտարոսից դուրս եկաւ, որ բոլորո-  
վին մոռացաւ իր խոստմունքը ու իր սովորական  
անգթութիւնները ձեռք առաւ: Ատուածները  
ատիպվում են քամակիցը ուղարկել Հերմէսին, որ  
իր օձապատ դաւադանի զօրութեամբ բերում է  
նրան դժոխք: Իբրև պատիժ իր անհնազանդու-  
թեան և կեանքում արած անօրէնութիւնների  
համար, Միսիփոսը դատապարտվում է որ մի ծան-  
րաշարժ ժայռ լերան ստորոտից մինչև դուխք  
բարձրացնէ, բայց գաղաթը հասնելուն պէս՝ մի  
աներևոյթ զօրութիւն ժայռը ներքև է դնում

ու Սիսիփոսի աշխատանքը անպտուղ է անում .  
— ցաւալի պատկեր մարդկային կեանքի թշուա-  
ռութիւնների (1):

Բայց ազգերի զրոյցների մէկզմէկու հետ  
նմանութիւններ ունենալու երկու զլիտաւոր պատ-  
ճառների հետ՝ ( այսինքն նախ՝ առասպելական  
ժամանակներումը բոլոր ժողովրդների բնութեան  
վրայ միակերպ հայեցումաճք ունենալը, և երկ-  
րորդ, մի և նոյն ցեղի պատկանող ժողովրդները  
միմեանցից բաժանուելովն էլ հնազոյն աւանդու-  
թիւններից շատը պահպանելը, ) մի ուրիշ պատ-  
ճառ էլ կայ, — զրոյցների մէկ երկրից միւսը անց-  
կենալը: Եւ ճշմարիտ, աչքի առաջև ունենալով  
այլ և այլ ազգերի մէկզմէկու հետ ունեցած սերտ  
յարաբերութիւնները, հարկ է ընդունել որ դը-

---

(1) Համարու իր Աղիասականն մէջ այսպէս է նկարագրում  
Սիսիփոսի քաշած ասնջանքը Տ սրտարոսի մէջ՝ Աղիսեւոսի բե-  
րանով .

«Տեսի ևս անդ ևւ զՍիսիփոս տուայտեալ ցաւովք շարաշար,  
վէմ ահագին ևւ արաստոյ կրկին ձեռօքն բանայր .  
Չեռամբ սալւք, ճիղն թափէր ձրդիւ ըզվէմն յարտեւան,  
Քերեալ ծայրին անդուստ ընդ կրուի վանէր յուժոյն վերնական .  
Վայրահոսեալ վէմն անարին դայր հոլովէր ընդ գեաին,  
Նա թափ ուժով տայր միւսանդամ ձգել ի ծայրն լերին .  
Այսպէս 'դ իրան Սիսիփոսին յորդավըսակ քիրտն հոսէր,  
Եւ մրրկեալ ամբ մի վոշոյ զլիտոյն ի վեր դիպանէր»:  
(Աղիասական, Հաղ. ԺԱ. Թարղ. Հ. Եղ. Թամանեան):

ըացի ժողովրդները շատ զըոյցներ միմեանցից  
փոխ են առնում, երբեմն նրանց սկզբնական կեր-  
պարանքը անփոփոխ պահելով, և կամ միայն մի  
քանի երկրորդական հանգամանքները փոխելով:  
Օրինակի համար, Արաց Ամիրանի զըոյցը, որ մին-  
չև այժմ էլ պատմվում է նոյն ժողովրդի մէջ,  
մեր Արտաւազդի զըոյցի գլխթէ նոյն և նմանն  
է, և ինչպէս երևում է, հին ժամանակներից  
Հայաստանից Արատուն է անցկացել: Այս եր-  
կու զըոյցների մէջ եղած զանազանութիւնը զըւ-  
խաւորապէս էնդուրումն է երևում, որ առա-  
ջինը հեթանոսական ժամանակների պատկանելով  
հեթանոսական կարծիքներ է բովանդակում, իսկ  
երկրորդը քրիստոնէութեան ժամանակների վե-  
րաբերելով՝ քրիստոնէական կարծիքներ է պարու-  
նակում:

Ժողովրդական առասպելների մէկ երկրից  
միւսը փոխադրուելուն մի ուրիշ օրինակ էլ ու-  
նինք, որ շենք ուղում անյիշատակ թողնել: Պը-  
ղատոն իր Հասարակապետութեան գլխին միջ մի  
առասպելական զըոյց է առաջ բերում, որ հին  
Հայաստանի կրօնական հասկացողութեան վրայ է  
հիմնուած. իբր թէ Նր անունով քաջասիրտ հայ-  
կազնը, բնիկ Պամփիւլիացի, պատերազմի դաշար  
ընկնելուց տասն օր յետոյ, երբ հետը մեռնող



պատե րազմականներ զիակաները վերցնում էին ,  
տեսան որ իր մարմինը անարատ ու ամբողջ մը  
նացել է, ու առին տուն տարին որ ուղարկա-  
ւորու թեան հանդէսը կատարեն. բայց սասնելու և-  
րորդ օրը՝ երբ մարմինը խարոյկի վրայ դրած էր ,  
յանկարծ կենդանացաւ ու միւս աշխարքում տեսած  
բաները պատմել սկսաւ : Այս առասպելի միտքը  
պարզելու համար՝ հարկ է հին Հայոց կրօնական  
հասկացողութիւններից մինը առաջ բերել որ  
մեր Հայկազուն նահապետներից մէկի՝ Արա Գե-  
ղեցիկի պատմութեան հետ կապուած ենք գրո-  
նում ազգային հնագոյն յիշատակարանների մէջ :  
Այս յիշատակարանները յայտնում են մեզ այն  
պատերազմի պատճառը որ Շամիրամ յանձն է  
առել Արայի դէմ (1), և ուր Հայոց թագաւորը

(1) Խորենացին Շամիրամի կեանքի մի քանի հանդամանք-  
ները պատմելուց յետոյ, ինչպէս Մարաց կուսակալից յաղ-  
թուինը, Հայաստան փախչելը ու այն տեղ սպանուելը, իր-  
ասածը հաստատելու համար՝ վիպամանների երգերը վկայ է  
բերում ու Աեփաղիոն պատմչի գրածները հերքում : Այս  
երգերին նայելով՝ Աստեատանի թագուհին իր չինուսս որ,  
դու ձեռքից աղատելու համար՝ ստիպվում է ոտով Հայաս-  
տան փախչել, եւ այն միջոցին՝ երբ Վանայ ծովի եզերքը  
հասնելով՝ պապակամ բերանը թըջում էր, յանկարծ սու-  
սերաւորները վրայ են տալիս : Յուսահատուած թագուհին  
մահից փրկուելու հնարք չգտնելով՝ վղիցը քաշում հանում  
է իր յուսուէթները (թըլթըլները) ու ծովը ձգելով կանչում :



Ասորեատանի թագուհու կամքին հակառակ՝ ըստ  
պանվում է նրա զօրքերից : Շամիրաւ պատուի-  
րում է որ մեռած թագաւորի մարմինը պալատի  
վերնատան մէջ դնեն, որպէս զի աստուածները  
գան ու վէրքերը լցելով կենդանացնեն նրան :  
Բայց երբոր դիակը սկսաւ փտակ, հրամայեց մի  
խոր փոսի մէջ ձգել ու ծածկել : միանգամայն  
Հայոց սիրտը շահնում համար՝ իր մարդկերանցից  
մէկին, որ դէմքով Արայի շատ նման էր, նրա շո-  
րերը հազցրեց ու ժողորրդի առաջ հանելով  
ասաց. «Լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդա-  
նացուցեալ լցին զփափաք մեր և զհեշտու թիւն» :  
Այս հրաշալի համբաւը, որ Խորենացու ասածին  
նայելով բոլոր Հայոց մէջ տարածվում է, հետ-  
զհետէ պատմուելով իբրև աստուածների բարե-  
բարութեան դործ, զբոյցի կերպարանք ստացաւ  
ու Հայաստանի սահմաններից դուրս՝ օտար եր-  
կիրներ անցնելով կերպարանափոխ եղաւ : Այս  
կրօնական համոզմունքը այնպէս մեծ էր, որ մինչև  
քրիստոնէութեան չորրորդ դարումը կենդանի  
մնացել էր Հայոց մէջ : Հէնց այդ ժամանակնե-  
րումը պատահած մէկ անոթից իմանում ենք որ  
մեռելների կենդանութիւն տուող աստուածները

\* Ուր-նո՛ւ Շ-մեր-նո՛ւ է նո՛ւ . . . . .

Ինքն էլ Նիորէի նման իսկոյն քար է կարում (Խոր. Գր. Ա. Գլ. ԺԸ) :

կոչվում են «Սրայեզք», կամ (որ աւելի հաւանա-  
կան է) «Յարլեզք», այսինքն անդադար լիզող  
աստուածներ: Մի և նոյն անցքից երևում է  
'նոյնպէս' որ յարլեզները պիտաւորապէս պատե-  
րազմականների ու քաջերի պահապան աստուած-  
ներն էին: Արարողատի՛ թագաւորութեան օրովը  
Մուշեղ Մամիկոնեան ապարապետը Բատ Սահա-  
ռունու ձեռքով սպանուած լինելով, ազգական-  
ները պուխը մարմնի հետ կարեցին ու տան աշ-  
տարակի վրայ բարձրացրին, ասելով թէ որովհե-  
տեւ քաջ էր, արլեզները կիջնեն ու կենդանու-  
թիւն կը տան նրան. բայց մարմնը ապականուե-  
լով՝ ըստ սովորութեան թաղեցին (1):

Ինչպէս երգերի՛ այնպէս և զրոյցների դիւ-  
ցազն ամէն անձնաւորութիւն չէ կարող լինել.  
հարկ է որ պատմական անձը մի որ և իցէ բանով  
ժողովրդի ուշադրութիւնը գրաւած լինի, որ երգերի  
նիւթ դառնայ, զրոյցների մէջ անցկենայ: Այս-  
պէս ասա Նրուանդ արխասիրտ ու յաղթանդամ  
թագաւորի վրայ պատմուած զրոյցը, որ «հարստի  
ու խոշորագեղ» արշակունի միջից է ծնուել, պատ-  
մութեան մէջ է գտնում իր ստեղծուելու պատ-  
ճառը (2): Որովհետեւ Նրուանդ հասարակ վիճա-

(1) Բուդ. Գպր. Ե. Գլ. 1, 2:

(2) Խոպ. Գր. Բ. Գլ. 1, 5:

կից՝ իր անձնական յատկութիւններովը Հայոց զօր-  
քերի սպարապետութեան է հասնում և նախա-  
բարների գլուխ դառնում, մինչև որ վերջապէս  
Սանատրուկից յետոյ Հայոց վրայ թագաւորում է :

Այս Սանատրուկի մանկութեան վրայ էլ մի  
զրոյց ունինք հնութիւնից մնացած : Աբղարի քե-  
ռորդին Սանատրուկ՝ իր Յդէ մօր ու սանտուի հետ  
Աորդուաց լեռներից անցկենալիս, յանկարծ քամի  
ու ձիւն է բարձրանում և մօրը ու որդուն մի-  
մեանցից բաժանում : Դայեակը երեխան գիրկն  
առնելով՝ երեք օր երեք գիշեր ձիւնի մէջ թա-  
ղուած մնում է . բայց մի հրաշալի սպիտակ  
կենդանի աստուածներից ուղարկուելով՝ երկուսին  
էլ ողջ առողջ է պահում (1) :

Այս երկու զրոյցը, կամ թէ ասել զը-  
րոյցների հատուկությունները, աւելի իրական են ու  
պատմութեան հետ մօտիկ կապակցութիւն ունին,  
չնայելով որ երկրորդի մէջ աստուածներից ուղար-  
կուած հրաշալի կենդանու վրայ է խօսք լինում :  
Բայց աստուածներից ուղարկուած կենդանին ու-  
րիշ ոչինչ չէ, բայց եթէ մի շուն, որ իր տաք  
չնչովը զարթեցնում է դայեակին ու երեխային .  
գիպուած, որ մինչև այժմ էլ պատահում է

---

1 Խոր. Գր. Բ. Գ. 1, 2 :

Սլաւեան լեռների մէջ, ուր բերանարդեան շնորր  
մեր հրաշալի կենդանու պաշտօնն են կատարում :  
Ընդհակառակն՝ աւելի առապելական քան թէ  
պատմական կարելի է համարել ասորի զաղթա-  
կանութեան մականուան՝ այսինքն «Արծրունեաց»  
առիթով պատմուած զրոյցը . իբր թէ իրանց  
ցեղի ժառանգներից մի մանուկ իշխանորդի բաց  
տեղ քնելիս՝ անդադար երբեմն անձրևից թրը-  
ջվում, երբեմն էլ արեգակից այրվում է, և մի ար-  
ծիւ գալիս ու իր թևերովը նեղացած պատանու  
գլխին հովանի է կապում (1) :

Զրոյցները, որ բերանէ բերան անցնելով՝  
իրանց նախնական միութիւնը կորցնելու ու այլ  
և այլ հատուածների բաժանուելու ընդունակ են,  
իւրաքանչիւր հատուածը դարձեալ աւելի փոք-  
րիկ մասների կրճատուելով և մի և նոյն ժա-  
մանակ այն հատուածներից ամէն միւր առանձին  
զրոյց կազմելով՝ զրոյցները, ասում ենք, չեն կա-  
րող ներկայացնել երգերի նման ժողովրդական  
իդէալների կանոնաւոր վարդացումը ու փոփոխու-  
թիւնները : Այս բաւական չէ . քրիստոնէութեան  
ծանր ու դանդաղ ազդեցութեան պատճառով է  
նոյնպէս՝ որ հին և նոր կրօնի հասկացողութիւն-

---

(1) Նոյն. Գր. Բ. Գլ. Կ :

ներք իրարու հետ խառնուեցան զըոյցների մէջ :  
Այս երկու մէկըմէկու հակառակ հասկացողու-  
թիւնների վկայ ենք բերում մեր այժմեան զը-  
ոյցները, որոնց մէջ քրիստոնէական մտքերի հետ  
խառն ենք գտնում վիշապներ, աժգահաներ և  
ուրիշ առասպելական էակներ :

Արեւը առաջ բերուած զըոյցների մէջ  
մարդկերանց 'հետ յիշվում են և գերբնական  
կենդանիներ, ինչպէս յարկեցները (որ շնից ծը-  
նուած գերբնական արարածներ էին (1), Սանա-  
տուկին ազատող հրաշալի ստիտակ կենդանին,  
կամ սովորական անասուններ, ինչպէս Արտա-  
ւազդի շները Արծրունեաց իշխանորդու գլխին  
հովանի կազմող արծիւը, որոնք զըոյցների հերոսնե-  
րին օգնութիւն են գալի ու արտաքոյ կարգի կամ  
սովորական գործողութիւններ են անում : Այս  
հանգամանքը, ինչպէս նաև մեր այժմեան զըոյց-  
ների հարուստ բովանդակութիւնը ցոյց են տա-  
նա մեզ, որ հին Հայոց զըոյցներում պէտք է  
լինէին անշուշտ և այնպիսիները, որոնց մէջ գըլ-  
խաւոր հերոսները ոչ թէ մարդիկ, այլ կենդա-  
նիներն էին. այս բանը մէկ կողմից քիչ շատ հաս-  
տատում են Արա Գեղեցիկի զըոյցի մէջ ներդոր-

---

(1) Եղնիկ, երթ 98-100:

Ճող յարլեզները : Բայց եթէ մեր գրականութիւնը  
չէ պահպանել մեզ այս տեսակ զրոյցներ, պատ-  
ճառը, կարծում ենք, յայտնի է. մեր քրիստո-  
նեայ մատենագիրները առ հասարակ միայն այն  
ժամանակ էին դիմում հեթանոս Հայաստանի ա-  
ւանդութիւններին, երբ նրանք մի որ և իցէ պատ-  
մական երևոյթի դոյութիւնը հաստատելու էին  
ճառայում : Սակայն եթէ դիմենք մեր այժմեան  
ժողովրդական զրոյցներին, որոնց մեծ մասը հը-  
նութիւնից աւանդուած են, կը տեսնենք որ կան  
շատերը, որոնց մէջ գլխաւոր տեղը բռնում են  
կենդանիները, և աւելի վայրենի կենդանիները  
կամ դազանները. նրանք ոչ թէ երկրորդական  
ու լոկ մարդկերանց ճառայող անձնաւորութիւն-  
ներ են, այլ այս վերջիններից բոլորովին անկախ  
հերոսներ, իւրաքանչիւրը իր սեպհական կամքով  
ու բնաւորութիւնով : Ժողովրդական երևակայու-  
թիւնը այս անբան ու անխօս արարածներին տա-  
լիս է բանականութիւն, խօսք, զգացմունք ու այլ և  
այլ գերբնական կամ մարդկային յատկութիւն-  
ներ : Այս տեսակ զրոյցները կարելի է անուա-  
նել «կենդանական զրոյցներ», կամ «կենդանական  
վէպ» :

Կենդանական վէպը ժողովրդական բանաս-  
տեղծութեան միւս ճիւղերի նման՝ դիցարանու-

Թիւնից է առնում իր ծագումը : Բանաստեղծութիւնը նկարագրելով ազգերի վիճակը, մարդկերանց կեանքը, կամեցաւ նկարագրել և կենդանիների խորհրդաւոր կեանքը : Այս ձգտողութեան պատճառը պարունակվում է մարդուս՝ բնութեան հետ ունեցած ներքին կապակցութեան մէջ, և կենդանիների վրայ կազմուած աւանդութիւնները ժողովրդական կեանքի սկզբնական ժամանակներին են պատկանում, այն ժամանակներին՝ երբ բնութեան ազդեցութիւնը ծանրանում էր մարդուս վրայ, երբ ժողովուրդը տակաւին վայրենի ու հովուական կեանքից դուրս եկած չէր, երբ նա՝ իր բնութեան վրայ ունեցած համակրութեան և ամէնօրուայ զբաղմունքների պատճառով, շատ կենդանիների պիտանի ու սգտակար, շատերին էլ վնասակար լինելը յայտնի տեսնում էր : Մօտիկ յարաբերութիւն ունենալով կենդանիների հետ, մարդս ծանօթացաւ նրանց բնաւորութեան հետ, նշմարեց նրանց յատկութիւնները, և մէկ կողմից նրանց ու իր մէջ տարաբերութիւններ գտնելով, միւս կողմից շատ բանում իր հետ նմանութիւն ունեցածները յայտնի տեսնում էր : Կենդանիների ու իր մէջ եղած այս նմանութիւնը յորդորեց մարդուս անբան արարածներին ընծայել մարդկային գործողութիւններ, մտքեր, զգացմունքներ :



և մինչև անգամ խօսելու կարողութիւն : Այն  
համոզմունքը թէ կենդանիները խօսում են, մինչև  
այժմ էլ մնացել է ժողովրդեան մէջ : Իր դո-  
յութեան վայրենի ու կուպիտ ժամանակներումը՝  
մարդս կամ մի յօժար համամտութիւն էր ըզ-  
գում դէպ 'ի դազանները , և կամ զգուշանում  
ու վախենում էր նրանցից : Հովիւը դայլին իր  
հաւասար ընկերն էր համարում , որ ուժի և  
ճարտարութեան կողմից իրանից ստոր չէր և ոչ  
խարների հօտի վրայ մի և նոյն իրաւունքները  
ունէր, իսկ արջին — իբրև մի հերոս , որ ուժով  
իրանից էլ գերազանց էր և անտառների ու անա-  
պատների տէրը ու իշխողն էր : Որսորդի համար,  
դաշտերը չափող դայլը , անտառներում վազող  
աղուէսը իրա նման որսորդներ էին : Հովիւն էլ ,  
որսորդն էլ ցանկանում էին միշտ բարեկամ մնալ  
իրանց անտառաբնակ ընկերների հետ, և այս ոչ  
այնքան արտաքին վտանգներից վախենալով, որքան  
այն դիւական ուժից որ կենդանիների մէջ բնակ-  
վում էր : Անտառաբնակ դազանը համարակ ստեղ-  
ծուած չէր երևում մարդուս . նրա մէջ պարու-  
նակվում էր մի անտեսանելի, դիւթական ոյժ ,  
բնութեան և այս պատճառով եթէ մէկ կողմից  
մարդուս հաւասար էր, միւս կողմից գերազանցում  
էր նրանից և մարմնաւոր ոյժը բաւական չէր նը-  
րան նուաճելու :

Այսպէս ուրեմն, այն միջոցում՝ երբ մար-  
դըս բնութեան խորհրդաւոր ոյժերի ու նրա ե-  
րեւոյթների հետ կենդանիներից էլ ակնածում  
ու նրանց առաջ ինքն իրան թոյլ ու տկար ա-  
բարած էր համարում, բնական է որ նրա երե-  
ւակայութեան մէջ ճնանկին կենդանական ցեղե-  
վերաբերեալ բարերար ու շարաքար աստուածու-  
թիւններ, որոնցից մէկ քանիսին բռնն երեւակայու-  
թիւնը գերբնական պատկերներ ու գործողութիւն-  
ներ ընծայէր: Հայերն էլ ունէին իրանց կենդա-  
նական գիցարանութիւնը, որի անձնաւորութիւն-  
ները բնակւում էին անտառներում, սարերում,  
ջրերում ու աղբիւրների մօտ և երբեմն մարդ-  
կերանց էլ երեւում էին: Ասելի է ասել՝ թէ բուն  
հայկական երեւակայութեան ստեղծած այս գերբ-  
նական արարածները ժողովրդի հովուական ու  
երկրագործական կեանքի շրջանին են պատկանում,  
որովհետեւ մեծ մասը պտղաբերութեան ու արա-  
տութեան աստուածներ են: Այս աստուածներից  
մի քանիսին Հայերը կենդանու կերպարանք են  
տուել, ոմանք կէս մարդու, կէս կենդանու պատ-  
կեր ունէին, երրորդներն էլ երկու զանազան կեն-  
դանիներից կազմուած մի խառնորդ էին ձեւաց-  
նում:

« Համբարուն » էր համբարների կամ շտեմարանների պահապան աստուածը : « Շահապետ » համարվում էր արդիւնքների կամ բերքերի պահապան, և հսկում էր դաշտերի ու արտերի պաղարերութեան վրայ : « Նհանգը » (ձիադետի) ծովային աստուած էր. սա հոգում էր գետերի առատութեանը և ոչնչացնում էր ծովային գազաններին : Անասահար գազաններին ոչնչացնող և դաշտերի ու քաղաքների պահապան էր համարվում նոյնպէս Աահագն, որի վրայ մինչև այժմ էլ զանազան աւանդութիւններ ման կն դալի Հայաստանի մի քանի տեղերը : Այս աւանդութիւններին նայելով՝ Աահագն հռչակուած է ոչ այնքան իբրև նախադադախար քաջութեան, այլ աւելի իբրև բարեկամ մարդկութեան և մասնաւորապէս հովիւներին ու երկրագործներին. այս պատճառով նա համարվում է ծովի տէր և իշխան : Նրա շունչը, Խորենացու առաջ բերած հատուկատր երգին համեմատ՝ մի հրեղէն օդ է, որից ժայթքում է վայրենի գազանների համար մահաբեր թոյն : Սրանից երևում է թէ Աահագնի մարմնաւոր ուժի մէջ ժողովուրդը ոչ միայն մի վերացական, այլ և բարոյական զօրութիւն էր աննում, որովհետև դիւցադներ զգալով ու հասկանալով է գործ դնում իր ոյժը —

երկրի պաշտպանութեան համար: Աերջապէս  
կենդանական դիցարանութեան մնացած անձնա-  
ւորութիւնները յիշելու համար՝ հարկ է հար-  
ւանցի յիշատակութիւն անել մի տեսակ երկրոր-  
դական աստուածութիւնների վրայ, որոնք թէև կեն-  
դանական դիցարանութեան չեն պատկանում,  
բայց ինչպէս երևում է, այս խմբին վերաբորող  
աստուածների հետ մօտիկ կապակցութիւն ու-  
նին, — կամենում ենք ասել «Յաւերժահարսները»:  
Յաւերժահարսները կանանց պահապան աստուա-  
ծութիւններն էին, որոնք շրջում էին անտառների  
ու այգիների մէջ և աղբիւրների մօտ, բայց ա-  
ներևոյթ կերպով ներկայ էին զանազան հարսա-  
նիքի տեղերումը, կանանց սենեակներումը և բաղ-  
նիաներումը: Ս. յս աստուածութիւնների թիւը չը-  
կար, որովհետև կարծւում էր թէ ամենայն կին  
— մարդ իր յաւերժահարսը ունի: Յաւերժահար-  
սները, ինչպէս ինքը բառը ցոյց է տալիս, յաւիտեան  
պահպանում էին իրանց երիտասարդութիւնն ու  
զեղեցիկութիւնը, պառաւներից ոմանք կարծում  
էին թէ նրանք միշտ կոյս են մնում ու երբէք  
չեն մեռնում: Աւրիշները ընդհակառակն՝ կար-  
ծում էին թէ այս աստուածութիւնները մահկա-  
նացու են, և թէ նրանց հետ միասին կենում  
են մի մեծ բաղնութիւն զանազան տեսակ արու

աստուածներին, որ նոյնպէս մահկանացու էին: Ահա այս աստուածներից ոմանք թէպէտ մարդկային, կերպարանք ունէին, բայց բարձրահասակ հսկաներ էին և սիրում էին Յաւէրժահարաների հետ շրջել անտառների ու այգիների մէջ և քաղաքների ու գեղերի աւերակների վրայ • ուրիշները կէս մարդու, կէս կենդանու պատկեր ունէին, երրորդները եղջերուից ու նոխազից կազմուած մի խառնուրդ էին ձեւացնում և կոչվում էին «Նղջերուաքաղ» (1). ուրիշները դարձեալ անուանվում էին Պարիկ (պար եկող), ոմանք էլ Յուշկապարիկ (ձանր պար եկող (2):

---

(1) Ինչպէս շատ հեթանոսական հասկացողութիւն մովանդակող բառեր, այսպէս և եղջերուաքաղ, քրիստոնէութեան լոյսը տարածուելու ժամանակ՝ հակառակ ու արհամարհական նշանակութիւն ստացաւ. եւ լեզուներէն նշանակում է այժմ շնորհք-նորոգում, illusion, բայց պատահում է շատ անգամ որ հեթանոսական բառը քրիստոնէութեան ժամանակ էլ լաւ մտքով գործածուի ու ժողովուրդի հասկացողութիւնով առաջուայ առարկայի հետ նմանութիւն ունեցող առարկայի համար գործդրուի, ինչպէս յաւերժահասն — nymphe գործ է անվում երբեմն երկնային հոգիների համար:

(2) Յաւէրժահարաների գոյութեանը շատ տեղ մինչև այժմ էլ հաւատում են կանայք և տեսակ տեսակ առասպելների պատմում այս աստուածուհիների պար դալու, նրանց գեղեցկութեան ու երաժշտութեան վրայ. կանայք անուանում են նրանց ժեզե — շէկե: Հին ժամանակներից մնացած սովորութիւնով Հայաստանի մէջ տեղ տեղ մինչև այսօր տօն են կատարում

Կենդանական զիցարանու թեան այս ծանօթ  
աստուածները յիշելով, ընթերցողը արդէն դու-  
շակում է մեր նպատակը: Բացի մեր այժմեան այն  
զրոյցներէց, որոնց մէջ մարդկերանց հետ, կամ  
նրանցից անկախ, իբրև հերոս յիշվում են կեն-  
կենդանիները, և որոնց ծագումը խոր հնու թեան  
մէջ է ծածկուած, մենք Հայոց զիցարանու թեան  
հնագոյն ստեղծուածները մէջ բերինք, իբրև մի  
զօրաւոր փաստ կենդանական վէպի գոյութիւնը  
հաստատելու նրանց կեանքի մէջ: Աթէ կային  
կենդանի — աստուածներ, անշուշտ պէտք է այս  
աստուածներէ վրայ առասպելներ յօրինուած, հե-  
տեւաբար և զրոյցներ կազմուած լինէին: Աւ թէպէտ  
այս խմբի պատկանող աստուածները աւելի ժողո-  
վրդի երկրագործական կեանքի շրջանին են պատ-  
կանում, քան թէ որսորդական ու հովուական  
ժամանակներին, երբ առաւելապէս կազմվում են  
կենդանական զրոյցները, բայց պէտք է ասել որ  
վերևը յիշուած շրջանը շատ հեռու չէ վերջին-

---

այս աստուածուհիների պատուի համար, տարին երկու ան-  
գամ, Մայիսին և Հոկտեմբերին, բաղնիաների մէջ, որով-  
հետև բաղնիաները նրանց շատ սիրելի տեղերն են համար-  
վում: Այն օրերը միայն կանայք կարող են բաղնիա մանել,  
առաւօտեան վաղ ժողովում են և մինչև զիշեր պար դալով,  
լուացուելով ու կերուխումով են անցկացնում:

ներից, մանուսանդ հովուական կեանքից, որի հետ  
պինդ կապուած է երկրագործական կեանքը, այն-  
պէս որ ժողովրդական կեանքի այս երկու շրջ-  
ջանների պատկանող առարկաները երբեմն մի և  
նոյն անունն են կրում: Այսպէս, Հայոց «կով»  
բառը, որ իր արմատը Սանքրիտի մէջ է գրու-  
նում, փոքր ինչ փոփոխութիւն կրելով, այսինքն  
«ձայնաւորը»-ի փոխուելով — «կաւ», նշանակում  
է «հող» կամ «երկիր», ինչպէս որ «ցծ» Սան-  
քրիտի մէջ նշանակում է մի և նոյն ժամանակ և  
«կով» և «հող»:

Յուսանք թէ այս մեր առաջ բերած վաս-  
տերը բաւական համարի ընթերցողը կենդանական  
վէպի գոյութիւնը հաստատելու հին Հայոց մէջ:  
Հին Հնդկաց ու Յունաց կենդանական վէպը կո-  
րած է մեզ համար. բայց այժմ ոչ որ չէ տա-  
րակուում նրա նախնական գլխութեան վրայ:  
Ընդհակառակն՝ Եզոբոսին ընծայուած առակները  
հաստատում են արդէն կենդանական գրոյցների  
գոյութիւնը հին ազգերի մէջ, որովհետև պէտք  
է ասած՝ հին կենդանական վէպը հեպտեաէ փո-  
փոխութիւններ կրելով՝ վերջապէս առակի կեր-  
պարանք է ստացել: Միայն Եզոբոսի առակները  
կենդանական վէպի հատուկատրոսներն են. նրանց  
մէջ արդէն չեն երևում այն տեղական նկարա-

գրութիւնները, որ դիւցապնական վէպի նման կենդանականն էլ սիրում է: Սրա հակառակ՝ առակը մի պարզ այլարանական ձև ստացաւ, իր բարոյական եզրակացութիւնով: Փեղբոսի գրչի սակեղբոսի առակները աւելի էլ հեռացան իրանց սկզբնական ձևից և մի չոր ու ցամաք կերպարանք ստացան: Իսկ այս Վատին առակախօսից յետոյ՝ առակը քանի գնաց՝ մէկ կողմից իր առաջուայ զարդարանքներից մերկացաւ, և միւս կողմից բուրովին բաժանուեցաւ, հեռացաւ իր սկզբնական աղբիւրից — կենդանական վէպից: Առակախօսները սխեցին կամ եղբոսի ու Փեղբոսի առակները փոխարկել իրանց լեզուներում, կամ մի որ և իցէ անցք նիւթ առնել իրանց առակներին, իրանց գլխաւոր ու շաղբութիւնը բարոյականութեան վրայ դարձնելով: Այս կերպով վարդապետական(1) տարրը աւելի ու աւելի տիրապետեց առակների մէջ, որով բարոյականութիւնը համարուեցաւ հողի ամենայն առակի, իսկ բուն անցքը կամ պատմութիւնը երկրորդական զարդարանք:

Բայց եթէ գրաւոր գրականութեան մէջ կենդանական վէպը մեծ փոփոխութիւններ կրեց, բանաւորի մէջ ընդհակառակն քիչ շատ պահպանեց իր սկզբնական կերպարանքը, այնպէս որ նոր

---

(1) Didactique.



Ժամանակների կենդանական գրոյցները քննելով, կարելի է հենցի բնաւորութեան վրայ փոքր իշատէ հասկացողութիւն ունենալ: Ահա այս պատճառով կարծում ենք թէ աւելորդ չլինել այստեղ մի քանի խօսք ասել կենդանական վէպի վրայ ընդհանրապէս, և մեր այժմեան ժողովրդի մէջ պատմուած կենդանական գրոյցների վրայ մասնաւորապէս:

Կենդանական գրոյցների մէջ առաջին ուշադրութեան արժանի բանը այն է, որ կենդանիները իրանց բնական ազդեցութիւնների ու անասնական գործողութիւնների հետ ունին և մարդկային յատկութիւններ ու գործողութիւններ, որոնք մի որ և իցէ ստիպմութիւն առաջ եկած և դէպի մի նշանակեալ նպատակ են դիմում: Հարկ է կարծել թէ կենդանիները գրոյցների մէջ սովորական անասուններ են, և թէ նրանք մարդուն օտար են ու ոչինչ հոգեբնական կապակցութիւն չունին նրա հետ. թէ չէ, կենդանական կեանքը բանաստեղծութեան առարկայ չէր կարող լինել: Նրանք ՚ի հարկէ մարդիկ էլ չեն, որոնց բանաստեղծութիւնը իր ուղածին նայելով այս կամ այն գազանի դիւտան է հազցնում. թէ այդպէս լինէր, կենդանական գրոյցը մի ձանձրանալի այլաբանութեան կերպարանք կը ստանար: Մարդկային

ու անասնական կեանքի կատարեալ ու կենդանի միաւորութիւնն է, որ կենդանական գրոյցներին զխաւոր գեղեցկութիւն է տայի :

Ինչպէս դիւցապնական վիպասանութեան մէջ դործողութիւնը կատարվում է մարդկային հերոսների ձեռքով, այսպէս կենդանականին մէջ՝ կենդանի հերոսների ձեռքով է կատարվում : Բոյսերը և բնութեան անշունչ առարկաները զուրկ լինելով ազատ կամքից, առ հասարակ տեղիք չունին այս տեսակ գրոյցների մէջ : Բայց բոլոր կենդանիներն էլ հաւասար նշանակութիւն չունին, նրանք որ մարդու հետ մտիկ յարաբերութիւն ունին ու իր իշխանութեան տակն են գտնվում, ինչպէս նաև այն թռչունները որ իրանից շատ հեռու են և առ հասարակ երկրորդական կարգի անասունները զխաւոր հերոսների պաշտօն չեն կատարում : Հերոս լինում է սովորաբար ազատ ու գիշատիչ դապանը, ինչպէս է գայլը, աղուկը և արջը, որ գերմանական գրոյցների մէջ առաջին տեղն է բռնում, ինչպէս որ Յունաց մէջ առիւծին էր պատկանում այս պատիւը, որ մինչև այժմ էլ դադանների թաղաւորի անուն է կրում : Բոլոր միւսը կենդանիները և երկրորդական ու միայն օգնական անձնաւորութիւնների նշանակութիւն ունին և միշտ առաջին կարգի հերոսներից կտրւում ունին :

Հայոց կենդանական զրոյցները, որ դեռ այնպէս սիրով պատմվում են մեր պառաւներից ու մեծ բաւականութիւն են տալի գիւղացոց վաւերականութեանը. հին վիպատանութեան մնացորդներ են, որոնց մէջ զուարճալի տեսարաններով նկարագրվում են խորամանկութեան, հնարագիտութեան ու խելքի տարած յաղթանակները բթամտութեան վրայ: Ինչպէս միւս բոլոր աւանդութիւնները, այսպէս և կենդանական վէպը ժողովրդի բերանում ապրելով ու ցեղէ ցեղ աւանդուելով կորցրել է իր սկզբնական միութիւնը, և այժմ մնացին միայն շատ անգամ անորոշ ու անկապ հեքիաթներ, որոնց մէջ գլխաւոր իմաստը երբեմն մութ կերպով է բացատրվում: Չյիշելով այն զրոյցները, որոնց մէջ հանդէս են դուրս գալի ածգահաներ, դէեր, վիշապներ (ուշապներ), ծովի մէջ բնակող հրեղէն ձիեր և ուրիշ գերբնական էակներ, որոնց ծագումը խոր հնութեան մէջ թաղուած է, մեր այժմեան կենդանական զրոյցների մէջ գլխաւորապէս հանդիսանում են աղուէսը, գայլը ու արջը, աւրանն ու դափլանը (առիւծն ու վագրը) օձը, երբեմն էլ փիղը, որ հին ժամանակ շատ ծանօթ էր Հայոց: Աղուէսը ու գայլը մանաւանդ շատ անգամ են յիշվում, այնպէս որ այս վերջինը մինչև անգամ մարդու

կերպարանքով է նկարագրվում և մարդկային ա-  
նուն կրում — մարդագայր: Իսկ երկրորդական  
տեղը բռնող կենդանիներն են այծը, եղնիկը,  
խրբե քնքշութեան ու գեղեցիկութեան պատկեր,  
կովը, շունն ու կատուն: Քաջուններից յիշվում  
են արծիւը, սիրամարգը, աքլորը, ծիտը կամ  
ճնճողուկը: Չարմանալին այն է որ երբեմն բնու-  
թեան անշունչ առարկաներն էլ, ինչպէս ծառը,  
ծովը, քարերը, սարերը և այլն, լեզու բերան  
են ստանում ու կենդանիների նման ներգործում  
են զրոյցների մէջ:

## Ե.

Երգերի և զրոյցների վրայ խօսելուց յի-  
տոյ, հարկաւոր ենք համարում վիպասանական  
բանաստեղծութեան միւս տարրերի վրայ էլ եր-  
կու խօսք ասել: Ժողովուրդը միայն երգերի ու  
զրոյցների մէջ չէ պահպանուած իր աւանդութիւն-  
ները. հասկա նաև առանձին ասացուածների,  
ների մէջ, առակների կամ առածների, հանելուկ-  
օրհնէնքների ու անէծքների և առ հասարակ ամէն  
տեսակ աւելորդապաշտութիւնների մէջ, թէ և  
այս վերջինները շաւիաւոր խօսքով չեն բացատր-  
վում: Բոլոր այս տարրերը կամ անդամները միա-  
սին առած՝ կազմում են այն մարմինը, որ թէ-  
պէտ և ոչ մէկ ժողովրդական բանաստեղծութեան  
մէջ ամբողջ ու անբաժան կերպով չէ բացատրուել,  
բայց ամէնի սրտին սիրելի է եղել, իբրև հնու-  
թիւնից աւանդուած ճնողական ժառանգութիւն:  
Ս. յս վիպասանական բանաստեղծութեան անդամ-  
ներից և ոչ մինը առանձին ինքն իրան չէ աս-  
րում ժողովրդի մէջ, այլ ամէնն էլ փոփոխակի  
մէկզմէկու հետ խառնվում ու կրօնական սերտ  
կապերով կապվում են: Օրինակի համար՝ հա-

նելուկը շատ անգամ երդի մէջ անց է կենում, ինչպէս որ յետոյ պիտի տեսնենք. միւս կողմից երգը կրճատոււմ ու հանելուկի կերպարանք է ստանում: Առակը զրոյցից է առնում իր ծնունդը և վիպասանութեան անհրաժեշտ մասներից մինը դառնում, բայց զրոյցից կրճատուելով՝ առանձին էլ ման է գալի ժողովրդի բերանում: Այսպէս ահա մեր ժողովրդի մէջ մինչև այժմ գործածուած առածներից շատը՝ կամ ուղղակի կենդանական զրոյցներից առնուած են, և կամ՝ զրոյցները համառօտուելով ստեղծուած են՝ Նոյն բանը պէտք է իմանալ բանաւոր գրականութեան միւս տարրերի համար էլ: Քանք այժմ այս տարրերից իւրաքանչիւրի վրայ առանձին մի քանի խօսք ասելու:

Առակները կարճ կարճ ասացուածներ են, որոնք բացատրում են ժողովրդի կրօնական հասկացողութիւնները ու համոզմունքները: Առակները, իբրև ամենաճիշդ հայելի ժողովրդական կեանքի, ցոյց են տալի ազդի սեպհական բնաւորութիւնը, նրա վարք ու բարքը և սովորութիւնները, նրա հասկացողութիւնը Աստուծու, մարդու ու բնութեան վրայ, մէկ խօսքով, նրա հայեցումաձքը աշխարհի ու կեանքի վրայ: Այս կարճիկ ու համառօտ ասացուածները՝ բացի իրանց վիպասանական նշանակութիւնից, մեծ բարոյա-

կան նշանակութիւն էլ ունին ժողովրդի համար:  
Նրանք ոչ միայն երգերի ու զրոյցների մը գործ  
են դրվում իբրև զարդ, այլ ամբողջ ժողովրդի  
դարևոր փորձերի ու իմաստութեան պտուղ լի-  
նելով, իբրև բարոյական դասեր հիները աւան-  
դել են յետագայ սերունդներին: Աշխարհ տեսած  
ու փորձառու մարդը մի անխորձ երիտասարդի  
խրատելիս՝ երկար մտածմունքների կարօտութիւն  
չունէր. բաւական էր միայն հանգամանքի յար-  
մար մի առակ յիշել, որ իբրև մի ազդու խր-  
րատ՝ երիտասարդի մտքումը անջինջ մնում էր և  
ուղիղ ճանապարհումը պահում էր նրան. որով-  
հետև ամէն էլ առ հասարակ և իւրաքանչիւր  
մարդ մասնաւորապէս հաւատում և ընդունում  
էր՝ թէ «առակն անխտուելի է» և ծուռ ու սուտ  
բան չէ բովանդակում:

Ժողովրդական կեանքի երկու դիտաւոր ժա-  
մանակներին նայելով՝ առակները երկուսի են  
բաժանվում. առասպելական ու քրիստոնէական  
ժամանակների առակները: Առաջինները ժողո-  
վրդի նախնական կեանքի հանգամանքներին հա-  
մեմատ են տեղծուել իր գոյութեան առաս-  
պելական ժամանակներում: Վնչպէս բոլոր հին  
վիպատանական աւանդութիւնները քրիստոնէու-  
թեան ազդեցութեան տակ հետզհետէ կորցնում

են իրանց հեթանոսական նշանակութիւնը, այսպէս և հին առակները կամ առածները ժամանակ անցնելով կորցնում են իրանց հեթանոսական նշանակութիւնը ու կամ բողոքովին մոռացութեան մէջ են ընկնում, և կամ եթէ մնում են ժողովրդի յիշողութեան մէջ, միայն զուարճութեան համար յիշվում են ու իհարկէ բարոյական նպատակ չեն կարող ունենալ: Այս պատճառով ամենեւին զարմանալի չէ եթէ քրիստոնէական գրականութիւնը որ գիտէ երբեմն վիպասանական աւանդութիւններին դիմել, չէ պահպանել մեզ այս տեսակ առակներ: Դակ երկրորդ տեսակ առակները իրանց սկիզբը քրիստոնէութեան ժամանակները առած լինելով ժողովրդի ներկայ կեանքին օտար չեն, ուրեմն և կատարելապէս հասկանալի են նրան և յարմար դիպում են ներում գործ են ածվում: Գրականութեան պատմութիւնը միայն այն ժամանակ կարող է ցոյց տալ թէ այս կարգի առակներից որոնք իրանց վրայ աւելի խոր հնութեան կնիք են կրում, և որոնք վերջի ժամանակները ստեղծուել են (որովհետեւ առակները մինչև այժմ էլ ստեղծվում են ժողովրդեան մէջ), եթէ ուրիշ ազգային աւանդութիւնների հետ նրանք ժողովուրդին ու կարգի դրուէին: Գուցէ սրանց մէջ պատահին



և առասպելական հասկացողութիւն ունեցող առականեր, ինչպէս որ մինչև այժմ մնացած գրութեամբ ենք նոյն տեսակ հասկացողութիւն բովանդակող հանելուկներ :

Սակայն այս առասպելական ու քրիստոնէական առակաների մէջ տեղը բռնում են պատմական առակաները, որոնց գոյութեանը առիթ են տուել պատմական դէպքեր ու մարդիկ: Այս պատմական առակաները համեմատելով հնագոյն առասպելական առակաների հետ, այն առաւելութիւնը ունին այս վերջինների առաջ, ինչ առաւելութիւն ունին պատմական երգերը առասպելականների առաջ: Պատմական առակաները երգերի նման՝ մի հարուստ աղբիւր են բաց նում մեր առաջ Հայոց հին կեանքի շատ խորնգիւրները պարզելու, որոնց վրայ պատմութիւնը բողորովին լռում կամ մութ ու անորոշ կերպով է խօսում: Օրինակի համար, եթէ չիմանայինք թէ Ահհաստանի ու Մորտախայի Հայերը Հայաստանի որ կողմից և ի՞նչ պատճառով են դաղթել, նրանց այս կարծիք անացուածը որ մինչև այժմ էլ գործ է ածվում՝ թէ «ի՞նչ կի վաղիս — թաթրները չին էկի» (ի՞նչ ես շտապում, — թաթարները հօ՞ չեն եկել) — բաւական կը լինէր ցոյց տալու մեզ թէ նրանք Անեցիք են ու թա-

Թարաց անգթութիւնից ազատելու համար, յան-  
ձրն են առել իրանց քաղցրիկ հայրենիքից բա-  
ժանուելու օտար երկնքի տակ թափառելը այն  
ժամանակները՝ երբ ժողովրդի մեջ առաջ էր եկել  
այն հասկացողութիւնը՝ թէ « յիմաքները հայրե-  
նիք են ուզում, իմաստունները — հանգիստ »:

Արովհետեւ առակների նիւթ տուող ան-  
ձիւքը ու դիպուածները վանազան կողմից են  
նկատուում, այս պատճառով պատմական առակ-  
ները լինում են երբեմն ուրախական ու վովա-  
սանական, երբեմն էլ արտմական ու մեղադրա-  
կան, կամ նաև արհամարհական ու նախատական:  
Հէնց ինքը առակ բառը հնոււմը երբեմն վատ մտ-  
քով էր գործածուում՝ իրրե նախատինք, խայ-  
տառակութիւնս, — առակ նշանակի լինել: Այս-  
պէս է, օրինակի համար հին Հայոց մէկ ա-  
ռակը Շարա նահապետին վրայ, որ սատիկ  
շատակեր լինելուն համար՝ հայրը՝ Արմայիս նա-  
հապետը տնով տեղով ուղարկեց նրան Շիրակ  
գաւառը, որ իր առատ բերքերովը կարող էր  
կերակրել այս մեծ գերդաստանը: Աւստի և մի  
շատակեր մարդու պատահելիս՝ ասում էին մեր  
նախնիք.

« Թէ քո Շարայի որկորն է, միւ Շիրակայ սահարքն չեն քո 1 )

(1) Խոր Գլ Ա. ԳԼ. ԺԲ:

Թէպէտ և առակը վիպասանական երգերի  
անհրաժեշտ մասն է կազմում, բայց ոչ մէկ ժողովրդական բանաստեղծութեան մէջ առանձին  
երգով չէ երևում, որ հին Հայոց առակների մէկ  
սեպական ձևն է համարվում: Երգը այնքան սի-  
րելի է ժողովրդին, որ այս տեղ էլ ցոյց է տուել  
իր ազդեցութիւնը: Այս առակաւոր երգերը որ  
մեր նախնիքը «չէր» էին անուանում, ի հարկէ  
սովորական առակների նման կարճ ու համառօտ  
չպէտք է լինէին, թէպէտ և շատ բնդարձակու-  
թիւն էլ չէին կարող ունենալ, սպա թէ ոչ ա-  
ռակի ձևը կը կորցնէին: Այս տեսակ առակնե-  
րից է երևում Տրդատի վրայ ասած ու երգուածը.

«Իրբև դսէդն Տրդատ՝ որ սիդարոյն աւերեաց զթումբս դետոց,  
Եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալ իւրում զյորձանս ծովոցս 1):»

Մաղխարոսի տուած վիպութեանը նայե-  
լով այս առակաւոր երգերը շատ տարածուած  
էին իր ժամանակի Հայոց մէջ, որոնք սիրում էին  
ուսանաւորի վրայ առակ երգել «արուեստաւորեալ  
ի գովս և ի պարսաւս»: Արջին դարերի քերա-  
կան մեկնիչին միւր՝ կամենալով բացատրել թէ  
ինչ է Մաղխարոսի յիշած առակաւոր երգը, մի  
և նոյն ժամանակ նկարագրում է թէ ուր է

---

(1) Աղաթ. 1, 3:

ինչպէս էին երգում այն առակները իր ժամանակի  
Հայերը. «Չոր և այժմ Ղահուախանի (1) մանչերն  
առնոն ի ձեռս իւրեանց երկու փայտ, զոր չար-  
փալայ ասեն, և բախելով ընդ միմեանս իբր

Ծափս հարկանելով  
Եւ կաքաւեն յուով,  
Եւ մանս աննն պար գալով,  
Եւ ճօճնն ճեմելով  
Եւ տափս (2) հարկանեն ծընծայքով,  
Եւ խաղս խաղան թատերով,  
Չանդամն շարժեն խնճելով,  
Աւաղս յօրինեն ճօխ երգով» (3):

Առակների հետ հաւասար հնութիւն ու-  
նին, կամ թէ ասել առակներից էլ հին են հա-  
նելուկները կամ առեղծուածները: Իբրև ընկե-  
րական կեանքի իմաստութեան ասացուած, որ շատ  
անգամ այլաբանական ձևով է բացատրվում, ա-  
ռակը շատ դիւրին կերպով կարող էր միանալ հա-  
նելուկի հետ, որով հնութիւնը աշխատում էր  
բացատրել մարդկային խելքը ու հետաքրքրու-  
թիւնը: Նոյն խկ մեր քրիստոնէական գրականու-  
թեան մէջ առակը շատ անգամ դործ էր ած-  
վում հանելուկի մտքով իբրև մի մթին ասա-  
ցուած: Առակի ու հանելուկի այս փոփոխակի

(1) Խաճուէ խանէ: (2) Թմբուկ, տաճկ. Թ.Ն.Փ:

(3) Տես Բաղմավէտ, 1850, Յունի. 1:

գործածութիւնը երկու դիւանոր պատճառից կարող էր առաջ գալ . նախ՝ բովանդակութեան կողմից՝ առակն էլ, հանելուկն էլ. իբրև վիպասանական աւանդութեան տարրեր, որոց որդի ուցեղէ աւանդում էին հին կրօնական հասկացողութիւնները ու համոզմունքները: Երկրորդ, արտաքին ձևի կողմից՝ այլաբանական միտքը հանելուկի մէջ լուծվում էր հարց ու պատասխանով, իսկ առակի մէջ մի և նոյն այլաբանութիւնը հանդէս է գալի խորհրդաւոր ասացուածի կերպարանքով, որի մթութիւնը վսեմութիւն էր տալի առակին: Երգիչների ու փորձառու մարդկերանց հարց — պատասխանները ու խրատները ման էին գալի ժողովրդին մէջ ըստ մասին հանելուկի, և ըստ մասին առակի ձևով: Բացի սրբանից, կարելի ասել թէ հին հանելուկների պատասխանները, ինչպէս որ ցոյց են տալի մեր այժմեան ժողովրդական հանելուկները, թէ մտքի ու թէ ձևի կողմից ամենևին զանազանութիւն չուպէտք է ունենային առակներից, այն կարճ ասացուածներից, որոնց մէջ երևում է ժողովրդի իմաստութիւնը, նրա հայեցուածքը աշխարհի ու կեանքի վրայ:

Այս կարծիքը՝ թէ առակն ու հանելուկը մեկզմեկու հետ մտաիկ յարաբերութիւն ունին,

կարող է մութ ու անհասկանալի երևալ նրանց, որոնք հանելուկներին միայն այն նշանակութիւնն են տալիս, որ վերջին ժամանակները ստացել են նրանք, այսինքն շատ անգամ միտք չունեցող բառերի ու ձայների խաղ ու միաւորութիւն (1), որ ստեղծուել են ժողովրդի դատարկ ու անդորձ երևակայութիւնը զուարճացնելու համար: Բայց եթէ մեր ուշադրութիւնը դարձնենք ընդհանուր վիպասանական աւանդութիւնների հետոհետէ կրած փոխօխութիւններին, կը տեսնենք որ նրանք բոլորը նշանակութիւն ունեցող արարողութիւններից ու առասպելներից դատարկ զուարճութեան ու խաղերի փոխուեցան: Այսպէս, օրինակի համար, բոլոր այն սովորութիւնները որ վիպասանական ժամանակներումը մեծ նշանակութիւն ունէին, ինչպէս բոցավառ կրակի վրայից թռչելը, որ հետումը նշանակում էր մեղքերից մաքրուիլ, և այլն, այժմ իբրև մի անմեղ սովորութիւն շարունակ կատարվում են ժողովրդի մէջ:

Սակայն ժողովրդական կեանքի առասպելական ժամանակներումը՝ երբ վիպասանական արարողութիւնները ու բանաստեղծութիւնը իրանց ներքին նշանակութիւնը ունէին, առակը ու հա-

---

(1) Jeu de mots և jeu de sons.

նելուկը խրատելու ու բան սովորեցնելու նպատակ ունէին. նրանք վիպասանական բանաստեղծութեան վարդապետական մասն էին կազմում, որովհետեւ բովանդակում էին հների հետաքրքրութեան ու խմաստութեան արդիւնքները: Բայց որովհետեւ խրատելու ու սովորեցնելու համար հարկաւոր է նախ բան սովորելու իմանալ, այս պատճառով հանելուկը, որքան էլ մօտիկ յարաբերութիւն ունենայ առակի հետ, այսու ամենայնիւ այս վերջինից առաջ պէտք է ստեղծուած լինի, այն ժամանակ երբ խելքը ազատուելով բուռն երեւակայութեան կապերից, որն որ անդադար առաջնորդում էր մարդուն դէպի գերբնականը ու հրաշային, աշխատում էր լուծել բնութեան խորհրդաւոր զօրութիւնները ու երեոյթները: Բայց քանի խոր թափանցենք հնութեան մէջ, այնքան աւելի քիչ բաւականութիւն պէտք է ստանար ժողովրդի այս ձգտմուտը դէպի ճշմարիտը: Բնութիւնը մի այնպիսի դժուար հանելուկ էր մարդուս համար, որ դեռ նոր զարթնող խելքը առանց երեւակայութեան օղնութեանը բաւական չէր լուծելու նրա այս կամ այն երեոյթի ինչ լինելը և ինչի՛ց գոյացածը: Մարդկային խմաստութեան այս առաջին կայծերի մէջ է ծածկը-

վում հանելուկի ծագումը, ժողովրդական կեանքի  
հնագոյն ժամանակներում:

Առակի նման՝ հանելուկի հին ձևերից մինն  
է, ինչպէս երևում է, երբը խօսակցութեան ձևով  
երկու անձինքների միջ՝ զանազան մութ ու ան-  
յայտ բաների վրայ հարցմունքներ տալով և այն  
հարցմունքները լուծելով: Թէպէտ ոչ մէկ տեսակ  
հանելուկի օրինակ չունինք հնութիւնից մնացած,  
բայց մեր այժմեան աշուղների մէկգլմէկու առա-  
ջարկած ու լուծած հանելուկները, որոնցմով եր-  
գիչները միմեանց խելքը ու դիտութիւնն են չա-  
փում, ցոյց են տալի որ այս ձևը օտար չէր հին  
Հայոց երգիչ բանաստեղծներին: Այս հանելուկ-  
ները թէպէտ սովորաբար թուրքերէն են աւելում,  
բայց նրանց բովանդակութիւնը երբեմն խոր հը-  
նութեան հետքեր պարունակելով՝ անտարակոյս  
ժողովրդի մտածողութեան պատմութեան միջ կա-  
րող են շատ բան պարզել (1):

---

(1) Յուսանք թէ աւելորդ բան չհամարուիլ մեր կողմից  
եթէ այս տեսակ հանելուկներից մի քանիսը, որ մի ոչուղի  
բերանից լսուած ու նրանից թարգմանուած են, ճաշակի հա-  
մար գնենք այս տեղ ծանօթութեան միջ:

Կն ինչ թուղթ է որ գրիչ չի բռնի:

Կն ինչ գրիչ է որ նրա վրայ կը գրի:



Արովհետև հանելուկը առակի նման՝ ժողովրդի խնայողութեան դասերն է բովանդակում, այս պատճառով շատ բնական է որ կեանքի նըշանաւոր դիպուածներում դործածուէր: Աւրիշ աղգերի ժողովրդական բանաստեղծութեան մէջ պատահում են հարսանեկան երգեր, որոնց մէջ փեսան հարսին հանելուկներ է առաջարկում զանազան մութ ու անյայտ բաների վրայ. եթէ հարսը կարողանում է լուծել, նրա վրայ պսակվում է: Գուցէ այս սովորութիւնը մեզանումն էլ

---

Սիրան է կն թուղթը որ գրէչ չի բռնի,  
Լեզուն է կն գրէչը որ սրտի վրայ կը գրի:

---

Էն քնչ է որ շուանաս՝ չի դնա սեր,  
Էն քնչ է որ նրա չարա չի ըլի:

Վատ խօսքն է որ ինչքան շուանաս՝ չի դնա սեր,  
Մեռելն որ նրա խկի չարա չի ըլի:

---

Ինքը մէկ է, գլուխը շորս, աչքը երեք,  
Սրա չխմանողն քնչ չնորք ունէ:

Աստուած մէկ է, Աւետարանը շորս, երբորդու-  
թիւնը երեք,  
Սրա խմանողն էս չնորքն ունէ:

կար հետևի, որովհետև Հայաստանի մի քանի  
դիւղերում, ուր աւելի անխախտ են պահպանուել  
հին աւանդութիւնները, մինչև այժմ կայ դեռ  
այն սովորութիւնը, որ փեսան աղբիւրի մօտ կամ  
անտառում հարսնացուին պատահելիս՝ հանելուկ-  
ներ է առաջարկում նրան, և եթէ տուած հար-  
ցերը կարողանում է լուծել ամուսնանում է  
նրա հետ :

---

Էն ինչ ջաղաց է որ պտուտ դալու ցորեն չունի,  
Էն ուլ է որ սակոճեց երկու ջան-  
Իմացիր երկուսը քանի լեզու ունին :

Չարխ ու ֆալահն է (արեղակը) որ բանում է,  
չունի ցորեն :

Աստուած սակոճեց Ադամ ու Եւային ջան,  
Երկուսն էլ եօթանասուն երկու լեզու ունին :

---

Էն ինչ վարդ է որ ձմեռը կը բաց ըլի,  
Վաղէն թամամ ըլի՝ կը չմշկի, կերթայ :  
Էն ինչ է որ երևութ քին չղխմանայ,  
Ինքն իր խօսքին մայիլ կը դառնայ :

Չիւնն է էն վարդը որ ձմեռը կը բաց ըլի,  
Ամառը որ կը դայ կը չմշկի, կերթայ :  
Սատանէն է որ երևութ քի չղխմանայ,  
Ինքն իր խօսքին մայիլ կը մնայ :

Արա նման մի ուրիշ հին աւանդութիւն  
էլ կայ որ գրեթէ ամէն տեղ կատարւում է Հայոց  
մեջ մի և նոյն արարողութիւնով, տարին մէկ ան-  
գամ, Համբարձման օրը: Այս աւանդութիւնը  
կոչւում է «վիճակ» և արարողութիւնը «վիճակ  
հանել», որովհետև վիճակի ամանում ձգուած  
ու յետոյ առանձին արարողութիւնով հանուած  
խրաքանչիւր աղջկայ մտտանու, ծաղկի, կամ  
մի ուրիշ նշանի առիթով ասուած երգերից դու-  
շակւում է նրանցից իւրաքանչիւրի ապագայ վի-  
ճակը, բաղդաւորութիւնը կամ անբաղդութիւնը:  
Սրանից երևում է թէ ընտանեկան կեանքը ինչ  
մեծ ու խորհրդաւոր նշանակութիւն ունի:  
Վեհատանի ու Մողղաւխայի բարբառներում կինը  
իր ամուսինին «բաղդ» է անուանում: Մի ուրիշ  
ղեղեցիկ զուրցուածք կայ մեզանում, որով ամուս-  
նանալը կոչւում է «աշխարք մանել», որով-  
հետև յիրաւի մարդս ամուսնանալիս՝ նոր աշ-  
խարք է մտնում, երջանկութեան կամ դժբաղդու-  
թեան աշխարք:

Վիճակախաղերը առ հասարակ չորս տո-  
ղից են բաղկանում, թէ և պատահում է որ  
մի քանիսը վեց, ութը ու մինչև տասներկու տող  
ունին: Ս. ա. ջին երկու տողերը սովորաբար մութ  
են ու ոմանք հանելուկի ձև ունին, յաջորդ



տողերը լուծում են առաջարկուած հանելուկը :  
Գուցէ ոմանք աններելի սրբապղծութիւն համա-  
րին հնութեան տաճարի համար, գուցէ նրանց  
աղնուական ճաշակին ու փափուկ ականջներին  
անախորժ թուին այս մի քանի խօսքերը վիճա-  
խաղերի վրայ. բայց մենք՝ որ այս աշխատութեան  
ընթաց քում միշտ աշխատել ենք հինը նորով  
պարզելու որ հնութիւնը ոչինչ չէ թողել  
համարձակութիւն ենք առնում այս վիճակախա-  
ղերից մէկ—երկուսը առաջ բերել, որոնք որքան  
էլ ռամկական մտքի ծնունդ համարուին, բայց  
առ հասարակ շատ գեղեցկութիւններ են բովան-  
դակում ու ժողովրդական կեանքի հանդամանք-  
ներից շատը կարող են բացատրել : Յուսանք թէ  
այս մասին ընթերցողի դատասպարտութեան տակ  
ընկնելու չենք :

Գնացի ջուրը լուացք,  
Սապոնս էր ոկէջբած.  
Իմ հէրն ու մէրն ինչանեն,  
Ճակատիս էս էր գրած :

Իմ աղբերս ծառի տակին,  
Սաղմոսն կռան տակին,  
Սաղմոսն գիր է դառել,  
Ղեղուն բիւլբիւլ է դառել :

Յէրկընքէն մատանիքըմ լջաւ,  
Մատիս վրայ խաշուեցաւ.  
Ես դիտիմ թէ սղլինձ էր,  
Թալէհէս (1) ջալահիր դարձաւ:

Իսկ այն կարճ կարճ հանելուկները, որ ժողովրդի մէջ ամէն օր դործ են անվում, վիպասանական բանաստեղծութեան մնացորդներ են. նրանցից շատերը եթէ ոչ լեզուի՝ գէթ բովանդակութեան կողմից խոր հնաթեան կերպարանք ունին, ինչպէս է Նուեցոց այս հանելուկը, ուր երկնքի լուսաւորներին մարդկային պատկեր ու դործողութիւն է տրվում. «Քիր ու աղպէր մի դրդում քշեր ցերէկ յիրուր եղնա վապում են, ամա՛ հասնում չեն (Քոյր ու եղբայր մի տեղում մէկգլուխու ետեից վազում են, բայց չեն հասնում)» — Արեգակն ու Նուսինը: Հանելուկների մէջ կան շատ կեղտոտները, որովհետեւ վերջերը՝ վիպասանական նշանակութիւնը կորչող ժամանակներումը հասարակ ժողովուրդը զուարճութեան համար էր ստեղծում նրանց իր ազատ օրերումը: Այս պատճառով մեր քրիստոնեայ մատենագիրներից մինը պատուիրում չսովորել կրթէք «բունդն և պիղծ դրոյց հանելուկ»(2):

(1) Այսինքն բաղդիցս:

(2) Թէ ինչ է նշանակում Բունդ — որոշ լայտնի չէ. Նոր

Ինչպէս առտին ու հանելուկը, այսպէս և  
երդումը, որ հնէնքն ու անէծքը առասպելական  
ժամանակներում մեծ նշանակութիւն ունէին և  
վիպասանական բանաստեղծութեան էական մաս-  
ներն էին կազմում: Քէպէտ և Հայերը պատե-  
րազմի ժամանակ սովորաբար Նուանի անունով էին  
երդում տալիս, բայց ընկերական հանգամանք-  
ների մէջ աւելի սովորական էր արևով երդուել  
(երդնում յարև արքայի, և այլն): Ինչպէս որ բը-  
նութեան կենդանութիւն տուողը արևն է, որին  
Հայերը աչքի են նմանեցրել. — «արևդ — ակն» և  
«արև — ակն», այսպէս և մարդուս կեանք տուողը  
աչքն է: Այս պատճառով էլ աչքը շատ ան-  
գամ նմանեցվում է արեգակի, ինչպէս Վահագնի  
Ծննդեան երգի մէջ: Քնական է նոյնպէս՝ որ մեր  
հին լեզուի մէջ մեռնելու անդ գործածուէին  
երբեմն «անկանիլ յարևէ» բառերը, սպանելու  
տեղ՝ «հատանել զարև» կամ «յարևէ արկանել»,  
կեանք շնորհելու տեղ՝ «շնորհել զարև», և այլն:  
Այն մի քանի երդումները ու անէծքները որ

---

Բարդիւրը այս բառը չէ յիշատակում: Մեծ ք կարծում ենք  
թէ այս բառը, մի աննշան վրոխտութիւն կրելով՝ պահ-  
պանուել է Նոսեցոյ Բարդի մէջ, որ նշանակում է  
հանելուկ:

Մենք արդէն յիշեցինք և որոնք մինչև այժմ  
դործ են անվում ժողովրդի մէջ, ցոյց են տալիս  
որ շատ բան կարելի էր լինէր պարզել, եթէ այս  
վիպասանական մնացորդները ժողովրդի բերանից  
հաւաքուէին ու հրատարակուէին :

Թէպէտ և մեր աշխատութեան ընթաց-  
քում՝ առիթ ունեցանք այս տեղ այն տեղ հա-  
րեանցի յիշատակութիւն անել բանաւոր գրա-  
կանութեան ներքին յատկութիւնների վրայ, բայց  
հարկաւոր ենք համարում այս տեղ այն յատկու-  
թիւնների վրայ առանձին խօսել, ցոյց տալով միան-  
գամայն բանաւոր և գրաւոր գրականութիւնների  
մէջ եղած զանազանութիւնը: Այս զանազանու-  
թիւնը աւելի պարզ ցոյց կրտայ մեզ առաջինի սեպ-  
հական յատկութիւնները և նրա նշանակութիւնը  
ժողովրդի համար:

Սկզբնական ժողովրդային բանաստեղծու-  
թիւնը կամ գրականութիւնը իր բնաւորութիւ-  
նով բոլորովին զանազանվում է գրաւոր ժամանակ-  
ների գրականութիւնից: Առաջինը ընդհանուր  
ժողովրդի արդիւնքը ու սեպհականութիւնն է,  
որ իր մէջ պարունակում է ազգային կեանքի բո-  
ւոր տարրերը: Իսկ երկրորդի մէջ մասնաւոր ան-  
հատների բացատրում են իրանց առանձին զգաց-  
մունքները, առանձին հայեցուածքը բնութեան  
ու կեանքի վրայ:



Ժողովրդական կեանքի երեխայական շրջա-  
նում՝ երբ ընդհանուր ժողովուրդը մէկ մարմին էր  
կազմում ու այլ և այլ դասերի, կամ ինչպէս  
որ մենք սովոր ենք ասել, բարձր ու ստոր հա-  
սարակութիւնների չէր բաժանուել, երբ ազդի  
բոլոր անհասները մասնակից էին լինում այն  
դործողութիւններին, որոնք ոչ թէ մի որ և իցէ  
անձի կամքով, այլ ընդհանրութեան ձեռնտու-  
թիւնովն էին կատարւում, այն շրջանում, ա-  
սում ենք, իւրաքանչիւր մարդ մասնաւորապէս և բո-  
լոր մարդիկ ընդհանրապէս մի և նոյն հասկացո-  
ղութիւնները, մի և նոյն համոզմունքները ու  
ձգտողութիւնները ունէին: Տարակոյս չկայ որ  
ընդհանրութեան այս միակերպ զարգացման աս-  
տիճանը մի և նոյն զգացմունքները՝ ու հասկա-  
ցողութիւնները առաջ բերելով, պէտք է առաջ  
բերէր նոյն և մի եղանակ այն զգացմունքները ու  
հասկացողութիւնները բացատրելու: Ժողովրդա-  
կան կեանքի այս վիճակում բանաստեղծութիւնը  
և բանաստեղծը նոյն յարաբերութիւնը չունէին  
կեանքի հետ, ինչ յարաբերութիւն որ ունի գր-  
բաւոր ժամանակների բանաստեղծութիւնը ու բա-  
նաստեղծը իրողականութեան հետ: Ախպասանա-  
կան ժամանակներումը իսկապէս ոչ մի անհատ,  
ոչ առասպել, ոչ զբոյց, ոչ երգ էր ստեղծում,

բանաստեղծական ոգևորութիւնը իւրաքանչիւր մարդու և ամէնին պատիանում էր առ հասարակ։ Բանաստեղծը ամբողջ ազգն էր, որ իր բանաստեղծական աւանդութիւնները ստեղծում էր այլ և այլ դարերի ընթացքում։ Իսկ այն առանձին անհասաները, որոնց մէջ աւելի ներգործում էր բուն երևակայութիւնը ու բանաստեղծական ոգին, լոկ ազգային երգիչներ, այսինքն ընդհանուր ժողովրդի բերանն ու ձայնն էին։ Սրանց առաւելութիւնը միայն էնդուրն էր երևում, որ աւելի ճիշդ ու զեղեցիկ կերպով կարողանում էին երգել կամ պատմել այն երգերը ու զրոյցները, որ ամէնին առ հասարակ ծանօթ էին։ Աթէ հանձարեղ երգիչը իրանից մի բան էլ աւելացնէր, այդ էնդուր համար էր որ իր մէջ առաւելապէս ներգործում էր այն բանաստեղծական ոգին, որով բոլոր ժողովուրդը ոգևորւած էր։ Միայն այս համոզմունքը ստեղծելու կարողութիւն էր տալիս նրան, և միայն այսպիսի ըստեղծագործութիւնը ժողովրդին սիրելի ու ընդունելի էր։ Աւանդութիւնը լեզուի նման՝ ամբողջ ժողովրդի մէջ բնակում, և դարերով հաւասարապէս աճում ու զարգանում էր։ Մի մասնաւոր անձնաւորութիւն ստեղծագործութեան բոլորին չէր կարող հեռանալ դարեւոր ժամանակ-

ներից մնացած աւանդութիւններից ու կրօնա-  
կան կարծիքներից: Ախպասանական ժամանակնե-  
րում երգիչը կամ պատմիչը չէր կարող ստեղծել  
նոր անձնաւորութիւններ ու անցքեր, այսինքն  
առհասարակ այն՝ որ մենք անուանում ենք նիւթ  
բանաստեղծական արդիւնքների. թէ մինը և թէ  
միւսը մի որևիցէ դիւցազնի յատկութիւնները  
կամ մի անցք նկարագրելիս՝ միայն երկրորդա-  
կան հանդամանքներում մի քանի յաւելումա-  
ներ անելով պէտք է բաւականանար: Ազգային եր-  
գերից նրանք կարող էին ընտրել առաւելապէս  
այնպիսիները, որոնք աւելի մօտիկ էին ժողովրդի  
սրտին. զրոյցներից կարող էին ջոկել այնպիսիներ-  
ը, որոնք աւելի բաւականութիւն էին տալիս  
ժողովրդի բարոյական ու ճաշադիտական դրաց-  
մունքներին: Մինչև անգամ սրտի բուպէական ըզ-  
րացմունքները, ուրախութիւնն ու արտմութիւնը  
արասյայտող քնարական երգերը, ինչպէս արդէն  
նկատեցինք, սովորական խօսքերով էին բացատրու-  
վում. հարսանիքում՝ հարսանեկան երգերը, թաղ-  
ման հանդէսում՝ յուղարկաւորութեան մրմունջ-  
ները, ինչպէս որ մի անգամ անյիշատակ ժամանակ-  
ներում ստեղծուել էին այնպէս կրկնվում էին, ա-  
ռանց որ և իցէ հիմնաւոր վտիտիսութիւններ կրելու:  
Սրանից պարզ երևում է թէ իր ստեղծագործու-

Թեան մէջ բանաստեղծը դիւրին կերպով կոր-  
ցնում էր իր սեպհական անձնաւորութիւնը, որ  
լնդհանուր ազգի անձնաւորութեան հետ խառ-  
նըվում և այս կերպով բոլորովին անհետա-  
նում էր : Հէնց այս սլաոճառով վիպասանական  
երգիչները ու սլաոմիչները, այս փոքր ու ան-  
նրշան անձինքը, ինչպէս որ անուանում է նրանց  
մեր հնագոյն ժամանակագիրը (1), միշտ ու ամէն  
ազգի մէջ անյայտ են մնում : Գրականական փա-  
ռասիրութեանը անձանօթ լինելով նրանք երբէք  
չեն աշխատում իրանց անունը ապագային թող-  
նել, այլ իբրև հաւատարիմ սահասարաններ ազ-  
գային բանաստեղծական գանձերին, յաջորդ սե-  
րունդների յիշողութեանը պահ են տալիս հը-  
նութիւնից մնացած ժառանգութիւնները ու ի-  
րանք անցեալի մէջ անհետանում են : Այս կող-  
մից վիպասան—երգիչներին կարելի է համեմա-  
տել վերջին ժամանակների ժողովրդական աշուղ  
—երգիչների հետ, որոնք իրանց բոլոր կեանքը  
անյայտութեան մէջ անցնում են, շատ անգամ  
գիւղական կեանքի շրջանից դուրս չգալով ու  
հասարակ ժողովրդի կեանքի դառն բոպէները  
քաղցրացնելով իրանց երգերով, և եթէ նրանցից

(1) Մար—Արաս կատինա : Տես Խորենացուց ատաջ բե-  
րում հատուածը :

«Մի քանիսի անունները մնացել են, պատճառք  
զբաւոր գրականութեանը պէտք է տալ որ սկսել  
է զին գնել այս ազգային երգիչների երգերին,  
իրբև ճշմարիտ ոգևորութեան անկեղծ արդիւնք-  
ների, որոնք երբեմն բազմահատոր գրքերից շատ  
ճշմարտութիւններ են բովանդակում հաւաքուած  
կեանքի ու փորձառութեան դպրոցից :

Բայց վիպասանական երգիչները ու պատմիչ-  
ները կորցնում են իրանց նշանակութիւնը այն  
ժամանակ, երբ ժողովրդական զարգացումը մի նը-  
շանակեալ աստիճանի հասնելով՝ գրի դիւտն է ե-  
րեան հանում: Գիրը բոլորովին հակառակ ու  
թշնամի է յիշողութեան (1): Գրի գործածու-  
թիւնը մտնելով ժողովրդի մէջ, շատերը էլ շեն-  
ուղում հաւատ ընծայել թափառական երգիչ-  
ներին, որոնք մէկ ժամանակ միակ պահապան-  
ներն էին այն պատմական դանձերին, որոնցից  
կախում ունէին ազգային փառքը ու պարծան-  
քը: Երգիչների թիւը քանի գնում՝ փոքրանում  
է. կենդանի խօսքի տեղ բռնում է մեռած տառը,  
աւանդութեան տեղ՝ զբաւոր յիշատակարանը:  
Սրանից երևում է, թէ, տառերի դիւտն է որ բե-

---

(1) Թէ գրի դիւտը պատճառ է դառել յիշողութեան տկա-  
րանալուն, այդ ցոյց է տալի մեզ Պրատն իր Փեղրասի մէջ:

բանացի աւանդութեան յարդը կորցնել է տալի և  
ժողովրդի միութիւնը քանդում: Բայց այս դիւան  
էլ մի ուրիշ զօրաւոր պատճառի—լուսաւորու-  
թեան հետեանք է: Լուսաւորութիւնը առաջ  
դնալով ժողովրդի մէջ, առանձին անհատներ ի-  
րանց սեպհական աշխատութիւնով ընդհանրու-  
թիւնից բարձրանում են և մի նոր հայեցումաձք  
են կազմում աշխարքի վրայ, որ հակառակ է  
ընդհանուր ժողովրդի հայեցումաձքին ու հաս-  
կացողութեանը: Եւ ահա այն ժամանակ բանաս-  
տեղծութիւնը հանդիսանում է իբրև հետեանք  
առանձին անհատների հասկացողութեան ու ըզ-  
գացմունքների, որոնց մէջ աւելի կամ պակաս է  
երևում ստեղծական կարողութեան ձիրքը: Բա-  
նաստեղծական արդիւնքների մէջ զգալի կերպով  
երևան է զալի հեղինակի անձնաւորութիւնը,  
որի կրթութիւնը և ներքին ձգտումները, երբեմն  
բողորովին հակառակ են իր ժամանակի ժողովրդի  
կրթութեանը ու ձգտողութիւններին: Արանց մէջ  
էլ չեն նկարագրվում ժողովրդի դարևոր փոր-  
ձերը, ոչ էլ նրա հասկացողութիւնը բնութեան  
ու մարդուս վրայ, այլ առանձին անհատի փոր-  
ձերը, նրա անձնական հասկացողութիւնը: Յան-  
կալով դուր գալ ընթերցողին և նրա ուշադրու-  
թիւնը գրաւել, մատենագիրը ամէն ջանք ուճիղը

Թափուամ է իր միտքը գեղեցիկ կերպով բացա-  
տրելու, սրտաշարժ լեզու բանեցնում, կենդանի  
նկարադրութիւններ մէջ բերում, գրաւիչ պատ-  
կերներ յօրինում է: Ահպուի մէջ մտնում են շատ  
անդամ շինովի բառեր, օտար ոճեր ու ձևեր,  
մինչդեռ վիպասանական ժամանակներում՝ բա-  
նաստեղծը երգերի ու զրոյցների մէջ իւրաքան-  
չիւր առարկայի բացատրութեան համար գործ է  
դնում ընդհանուրից ընդունուած ու սովորական  
կղած ոճերն ու ձևերը, որովհետև մի անդամ  
ժողովրդից ստեղծուած խօսքը կամ զուրջուածքը  
այն քան յարմար էր, որ ոչ ոք կարօտութիւն  
չունէր նորը հնարելու: Գրաւոր ժամանակների  
բանաստեղծութեան մէջ մատենագրի սեպհական  
յատկութիւնները երևում են նաև իր գրուածքի  
արտաքին բացատրութեան մէջ, իւրաքանչիւր մա-  
տենագիր առանձին ոճ ունենալով, որ բոլորովին  
հակառակ է վիպասանական բանաստեղծութեան,  
ուր երգչի անձնաւորութիւնը երբէք չէ երևում  
երգի մէջ, ոչ էլ պատմչինը զրոյցի մէջ:

Բանաւոր ու գրաւոր գրականութիւնների  
այս ընդհանուր զանազանութիւնները ցոյց են տա-  
լի առաջինի երկու գլխաւոր յատկութիւնները,

հաւասարութիւնը ու հանդարտութիւնը (1) և  
բարոյականութիւնը : Բանաստեղծի անձնաւորու-  
թեան անհետ լինելը պատճառ է որ վիպասանա-  
կան արդիւնքները ազատ ու զուրկ են ամէն տե-  
ասկ նպատակից : Չկայ նրանց մէջ երգչի կամ  
պատմչի սեպհական քնարական զգացմունքներ ,  
ոչ էլ հեղնական ծիծաղ կամ արհամարհանք :  
Նրանք ժողովրդի այս կամ այն դասի բնաւորու-  
թիւնը նկարագրելու նպատակը չունին , յօգուտ  
մէկին և ի վնաս միւսին խօսելով : Մյս բոլոր  
նպատակները երևում են գրականութեան մէջ  
այն ժամանակ՝ երբ այլ և այլ անձնաւորութիւն-  
ներ ընդհանուրից դուրս են գալի , որոնց տեսու-  
թեան հորիզոնը ընդարձակուելով՝ նշմարում են  
ժողովրդի պակասութիւնները ու յատկութիւն-  
ները , և հեղնօրէն խօսում են առաջինների  
վրայ , համակրութիւնով երկրորդների վրայ : Ժո-  
ղովրդական կեանքի սկզբնական ժամանակներում ,  
երբ ընդհանրութեան բոլոր անհատները միեւնոյն  
հասկացողութեան տէր են , վիպասանական հա-  
ւասարութիւնը ու հանդարտութիւնը տիրապե-  
տում է բանաստեղծի երգածի ու պատմածի մէջ ,  
և այս հանդարտութիւնը լսողների վրայ էլ է

---

(1) Egalité, tranquillité.



ներգործում: Այս բանիս օգնում է շատ վիպիկ  
պատմական ձևը:

Մի և նոյն պատճառներից առաջ է գալիս  
վիպասանական բանաստեղծութեան մի ուրիշ  
յատկութիւնն էլ, այն է բարոյականութիւնը:  
Ի հարկէ վերջին ժամանակների ժողովրդական  
բանաստեղծութեան մէջ կարող են պատահել բարոյական  
գրագրուները վերաւորող երգեր, հանելուկներ  
և այլն, բայց եթէ յիշենք որ ժողովրդական  
հին վիպասանութիւնը ծագում ու շատ  
դարեր շարունակ ընդարձակվում է, թէ իւրաքանչիւր  
սերունդ սիրով պահպանում է նրան իր  
լե մի թանկագին սեպհականութիւն, և թէ  
վատ կամ անբարոյական ուղղութիւն ասածը առաջ  
է գալիս գրականութեան մէջ առհասարակ  
անձնաւորութիւնից, մասնաւորի կամքից, և  
ոչ թէ ընդհանուրի բարոյական ձգտողութիւնից,  
կարծենք թէ դժուար, մանաւանդ թէ անհնարին  
կը լինի ընդունել որ սկզբնական վիպասանական  
բանաստեղծութեան մէջ որ և իցէ անբարոյական  
ուղղութիւն տիրապետում լինէր: Քերականացի  
Քրիստ եղբարքը, որոնք իրանց կեանքը անց են կացրել  
անդադար ժողովրդական բանաստեղծութիւնով  
պարապելով, իրանց հրատարակած գերմանական  
գրոյցների յառաջաբանութեան մէջ հաստատում

են՝ թէ երբէք չէ պատահել իրանց սուտ ու  
խաբերայ բան գտնել ազգային երգերի մէջ (2) :  
Այս հերիք չէ վիպասանական բանաստեղծու-  
թիւնը ցոյց է տալի, որ ժողովրդին միշտ սիրելի  
է լաւն ու բարին, և ստելի վատն ու չարը :  
Շատ առասպելներ հիմնուած են չարութեան  
բնածին իործանմանը վրայ : Այսպէս մեր Աս-  
հապնը Յունաց Հերակլէսի նման՝ ոչնչացնում է  
հրաշալի գազաններին և մաքրում է Հայաստանը  
ամէն տեսակ վնասակար թշնամիներից : Այսպէս  
չատ անգամ մեր այժմեան զրոյցների, կամ աւե-  
լի պարզ ասել հեքիաթների մէջ, հերոսի քա-  
ջագործութիւնը պարունակվում է հրաշալի ու  
զերբնական կենդանիների ոչնչացնելումը, որոնք  
թշնամի են կեանքի ու մարդու : Բայց թէ ինչ-  
պէս է լինում որ մարդս, այս տկար արարածը  
կարողանում է այն զերբնական էակների հախիցը  
զալ, այս շատ հասկանալի է. ժողովրդական բա-  
նաստեղծութիւնը բարութիւնը միշտ ներկայա-  
ցնում է խելօք ու բանական, իսկ չարութիւնը  
յիմար ու տխմար : Բանի որ մարդս փոր-  
ձվում է, այնքան աւելի հասկանում է թէ խել-  
քը կարող է յաղթել այն բոլոր արդելքներին,  
որ բնութիւնը նրա առաջ հանում է և որոն-

---

(2) Deutsche Sagen, 1816

ցից մէկ ժամանակ գողում ու անհաճում էր :  
Բայց կայ յիմարութիւն որ առաջ է գալի ան-  
փորձութիւնից, և ժողովրդական բանաստեղծու-  
թիւնը անփորձութիւնից առաջ եկած յիմարու-  
թեանը միշտ համակրութիւն է ցոյց տալի : Մեր  
նոր զբոյցների մէջ, ուր սովորաբար քաջութեան  
աստարէզը երեք եղջոր առաջ է բացվում, գրե-  
թէ միշտ կրտսեր եղբայրը իր սրտի պարզութիւ-  
նով յաղթութեան պատկը տանում ու նախան-  
ձելու առիթ է տալի մեծ եղբայրներին : Այս բարո-  
յականութեան զգացմունքը՝ այնպիսի մեծ նշա-  
նակութիւն ունի, որ բարոյական խնդիրները միշտ  
աւելի զբաւում են լսողների ուշադրութիւնը քան  
թէ զբոյցների արուեստական իդէան : Հասարակ  
ժողովուրդը, առանց զանազանելու ճաշակագիտա-  
կան բաւականութիւնը բարոյականից, միշտ սիրով  
հետեւում է բարի ու վեհանձն հերոսի գործողու-  
թիւններին ու զգուելով երես է դարձնում չարից :

Վիպասանական բանաստեղծութեան մէջ  
բարոյական օգուաները պինդ կապուած են մտա-  
ւորական օգուաների հետ : Արդը պարունակում  
էր իր մէջ եղած ու պատահած անցքեր :  
Եթէ զբոյցը (այս բառը ընդարձակ մտքով  
հասկանալով) ճշմարիտ էր համարվում, որով-  
հետեւ ժողովրդի համար պատմութեան տեղ

էր բռնում, աւելի ճշմարիտ պէտք է համարու-  
էր առասպելը, իբրև հիմն ամէն տեսակ զրոյցի:  
Նրոքը սերունդից սերունդ աւանդում էր կեանքի  
փորձերից առաջ եկած գիտութիւնները ու հա-  
մոզմունքները, և այս պատճառով նոյնչափ բա-  
ւականութիւն էր տալի խելքին, որքան բարո-  
յական ու ճաշագիտական զգացմունքներին:

Գանք այժմ աւելի մանր հանգամանքներին:

Վիպասանական ժամանակներում բնու-  
թիւնը այնքան մեծ ազդեցութիւն ունի մար-  
դուս վրայ, որ նրա երևոյթները, երկնային լու-  
սաւորները, տարրերը, կենդանիները ու մինչ ան-  
գամ բոյսերը շատ հին ժամանակներում արդէն  
առտուածանում են ու մարդուս սէրը կամ վախը  
զրաւում: Բանաստեղծութիւնը որ նկարա-  
գրում է մարդկերանց կեանքը, ազատ չէ այս  
ազդեցութիւնից. արտաքին բնութիւնը դանում  
է իր նկարագրութիւնը ժողովրդի սկզբնական ար-  
դիւնքների մէջ: Բայց օրովհետև ասիական ազ-  
գերը, որոնց մէջ և Հայերը միշտ աւելի մօտիկ  
են եղել բնութեանը այս պատճառով և նրանց  
բանաստեղծութեան մէջ բնութիւնը աւելի տի-  
րապետող է, քան թէ յետագայ ազգերի բա-  
նաստեղծական արդիւնքների մէջ, ուր ընդհա-  
կառաին արուեստը զօրութիւն է ստանում ու

բնութեան ազդեցութիւնը զգալի կերպով թու-  
լանում է : Ախպասանական երգիչը կամ պատմիչը  
մարդկային կամ արտաքին բնութիւնը նկարա-  
դրելիս՝ նշանաւոր սեղ պէտք է տար նմանութիւն-  
ներին ու փոխաբերութիւններին, որոնք բնու-  
թիւնից առնուած շոշափելի պատկերներով բա-  
ցատրում են ժողովրդի բարոյական հասկացո-  
ղութիւնը : Նմանութիւնն ու փոխաբերու-  
թիւնը, որի աւելի ընդարձակ ձևն է այլաբանու-  
թիւնը, ասիական լեզուների ու բանաստեղծու-  
թիւնների հոգին ու կեանքն են : Արքան էլ կար-  
ճառօս լինին այն երգերի հասուկոտորները,  
որ հնութիւնը մեզ պահպանել է, բայց էլե-  
մի քանի օրինակներ սալիս են նմանութիւն-  
ների ու փոխաբերական ձևերի, որոնք հը-  
նումը դործ չէին գրվում միայն իբրև ոճի ար-  
տաքին զարդարանքներ, այլ ժողովրդի բնու-  
թեան վրայ ունեցած հասկացողութեան էական  
մասն էին կազմում : Արդէն յայտնի է մեզ Աա-  
հազնի «աչկունքն՝ արեգակունքի» նմանուելուն  
խոր միտքը ու նշանակութիւնը : Արտաշէսի գե-  
տի մէկ եզերքից միւսը Ալանաց բանակը անցնելը  
նմանեցվում է սրաթև արծուի թռչելուն .

«Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գեանս» :

**Մ**ի և նոյն Արտաշէսի ձին իր գոյնին նա-

յերով անուանում է բառ: Բայց աւելի դե-  
ղեցիկ օրինակներ ունինք փոխաբերական ձևերի,  
որով նման առարկան նմանեցում առարկայի տեղ  
է դործ դրվում: Փոխաբերական մտքով ասում է  
վիպասանը. «տեղ ոսկի տեղայր», կամ «տեղայր  
մարդարիտ», այսինքն՝ անձրևի նման թափում էր  
ոսկին ու մարդարիտը, «Վիշապազունք դողացան  
զմանուկն Սրտաւազդ, և դե փոխանակ կզին»,  
այսինքն՝ Վիշապազունքը պարկեշտ մանկանը մոլե  
արին, «և հանեալ (Սրտաշիտի) զոսկեօղ շիկափոկ  
պարանն», որ նշանակում է կարմիր մորթ, լայ-  
քա ու ոսկի: Այս վերջին այլաբանական ձևը  
մեզ բոլորովին անհասկանալի կը լինէր, եթէ բա-  
ցարութիւնը չդանէինք Մովսէս Խորենացու պատ-  
մութեան մէջ: Իսկ բուն այլաբանութեան օրի-  
նակ չունինք, որովհետև ունեցած հասուկատոր-  
ներս փոքր են ու ընդարձակ փոխաբերութիւն-  
ներ, այսինքն այլաբանութիւններ չէին կարող  
պարունակել իրանց մէջ:

Բացի նմանութիւններից ու փոխաբերու-  
թիւններից ուշադրութեան արժանի են վերա-  
դիր ածականները (1), որոնք նոյնպէս սկզբնական  
բանաստեղծութեան առանձին սեպհանութիւն

---

(1) Épithète.

են և առաջ են դալի վիպասանական ոգևորու-  
թիւնից ու հայեցումաճքից բնութեան վրայ :  
Չյիշելով այն բոլոր ածականները որ վիպասանա-  
կան երգերից հանուած են ու մեր հայկազուն  
նահապետների ու թագաւորների յատկութիւն-  
ներն են ցոյց տալիս , մենք օրինակի համար ա-  
ռաջ բերենք միայն այս երկուսը , իբրև հետեանք  
ժողովրդի նկատողութեան բնութեան երևոյթների  
վրայ . — « Տիրանի ծով և սրաթե արծուի » : Մո-  
վի ալիքները թափանցող և այսպէսով մի դաշ-  
նակաւոր Տիրանեգոյն կազմող արեգակի ճառա-  
գայթները , թռչունների թագաւորի սրատես աչ-  
քերը ու արագաթռիչ թռչող շէին կարող երգել  
նկատողութիւնից վասխել : Մինչև անգամ ա-  
ռանձին բառերի ու դուրցումաճքների մէջ երե-  
ւում է այն յարմարաւոր ներդաշնակութիւնը ,  
որոնց գործածութիւնը , նմանութիւնների ու  
փոխաբերութիւնների գործածութեան նման՝ շատ  
բնական են երգիչի համար , առանց մի որևիցէ  
ճարտասանական կանոն սովորելու : « Ուլունք Շա-  
միրամայ , կուել կոփել , ծուխ Տխանի , Տենչայ  
Սաթինիկ ափիին տենչանս զարտախոյր խաւարտ և  
զաից խաւարծի » բառերի ընտրութիւնը ու դե-  
ղեցկութիւնը իրարու հետ մրցում են : Սրանից  
սրակաս քնքշութիւն չեն տալի բառերին նուա-

զական (1) վերջաւորութիւնները . այսպէս են  
հետեւեալ բառերը . կարմրիկ, եղեղնիկ, պատա-  
նեկիկ, աշիունք, արեգակունք » :

Բանաւոր զրականութեան զխաւոր տար-  
րերի՝ երգերի ու զըոյցների յատուկ համարուած  
սեպհականութիւնն է նոյնպէս բառերի ու զուր-  
ցուածքների կրկնութիւնը : Այս կրկնութիւնները,  
որով նոյն բացատրութիւնը նոր դարձուածով կրր-  
կրնում է, առաջուայ իմաստի հետ նոր բառեր  
ու իմաստներ յարմարաւոր կերպով խառնելով,  
զրեթէ միշտ պատահում են մեր ունեցած հա-  
տուկտոր երգերի մէջ . ինչպէս .

Երկնէր երկին եւ երկիր  
Երկնէր եւ ծիրանի ծով . . . .

Ընդ եղեզան փող ծուխ ելանէր,  
Ընդ եղեզան փող բոց ելանէր . . .

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիտի,  
Տեղայր մարդարիտ ի հարսնութեանն Սաթմեկաննու :

Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,  
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն . . . եայլն :

Ասալ ու անրնական կարծիք է բոլորովին  
այս կրկնութիւնների պատճառը Երբայեցոց բա-

---

(1) Diminutif.



Նաստեղծութեան շախտանութեան (2) ու հաս-  
մեմատականութեան (3) մէջ գտնել, որովհետեւ  
նրանք ոչ միայն մեր և առ հասարակ աշխարհի,  
այլ և բոլոր ազգերի վիպասանական բանաստեղ-  
ծութեանը սեպհական են: Պեղեցիկ կերպով բա-  
ցատրու՞մ է այս կրկնութիւնների ընդհանուր պատ-  
ճառը ուսումնականին մէջը, որի խօսքերը  
աւելորդ չենք համարու՞մ մէջ բերել այս տեղ:

« Այն բաւականութիւնը որ դատարկ հե-  
տաքրքրութիւնը սիրու՞մ է ստանալ նորելուկ ու  
բազմակողմանի գուարճութիւններից, վերջին ժա-  
մանակների կարօտութիւն է, և անձանօթ է բո-  
լորովին վիպասանական կեանքի շրջանին: Երկայ-  
քը, ինչպէս նաև հասարակ ժողովուրդը մինչև  
այժմ էլ մի անկեղծ բաւականութեամբ պատ-  
րաստ են էլի նորից լսելու այն պոյցը, որ այն-  
քան լսել են, որ մինչև անգամ բերան դիտեն:  
Մի և նոյն հողեկան հանգստութիւնն է որ ստի-  
պու՞մ է ականջ դնողին ու շարժութեամբ լսել այն  
ոչ միայն կարճ խօսքերի, այլ և բաւական երկար  
պարբերութիւնների կրկնութիւնները, որ սով-  
որաբար պատահու՞մ են վիպասանական բանաս-

---

(2) Rythme.

(3) Parallélisme,

տեղծութեան մէջ: Արեւ ճշմարիտ նկարագրու-  
թիւն կեանքի, որի մէջ այնքան սովորական են  
մի և նոյն բանի հանապազօրեայ կրկնութիւն-  
ները, վիպասանական բանաստեղծութիւնը և բոլ-  
ջին էլ, ականջ գնողներին էլ համբերութիւն է  
սովորեցնուի իր շարունակ կրկնութիւններովը,  
որ այնքան անհնարին ու անբնական բան էր բաց  
թողնելը, ինչպէս որ անհնարին է դէն ձգել կեան-  
քից համբերութեան ու ակնկալութեան շրջ՝ ու-  
րախութեան հասնելու համար, կամ — ճանա-  
պարհից միակերպ դաշտը՝ զեղեցիկ տեսարանի  
հասնելու համար: Սյս պատճառով վիպասանա-  
կան կրկնութիւնները տանելի էին, իբրև մի ան-  
հրաժեշտ հարկաւորութիւն, որ բանաստեղծու-  
թեան ոյժը և բնութեան վրայ եղած հանդարտ  
ու հանդիստ հայեցումաձքը երգչի համար էլ,  
ականջ գնողների համար էլ հաճելի ու սիրելի  
էին անուամբ (1):

Մեր աշխատութեան վերջ տալուց առաջ՝  
մնաց մի նշանաւոր խնդրի վրայ խօսել, որ չէկարի  
անյիշատակ թողնել:

(1) Յ. Буслаевъ. Историческіе очерки русской народной сло-  
весности и искусства, Т. I, стр. 75. Մենք չէինք կարող սղուտ  
չքաղել երբեմն առաւ մատենադրի այս զեղեցիկ դրուածքից,  
որնոր իր կողմից շատ բան քաղել է Պրիմ եղբայրների և  
ուրիշ գերմանացի մատենադիրների գրուածներից:

Բոլոր այն գրազէտները առ հասարակ որոնք մինչև այժմ Հայոց վիպասանական երգերի վրայ դրել են, ցոյց տալով թէ ազգային նախնական պատմութիւնը ամբողջ երգերից հանուած ու նրանց վրայ հիւսուած է, պնդում են թէ այս երգերը ամբողջ վիպասանութիւնների հասուկատոր հասուածներ են, որ այլ և այլ ժամանակներում յօրինել են մեր վիպասան երգիչները: Այսպիսի վիպասանական քերթուած տեսնում են մանուաւանդ Արտաշէս Երկրորդի և նրա որդիերանց վրայ ստեղծուած երգերի մէջ, ուր երգվում էին նոյնպէս Տիգրան Առաջինի յաղթութիւնը Աթահակի վրայ, Մարաց զաղթականութեան Մասիսի ստորտոր բնակելը, Սաթինիկ տիկնոջ սէրը Արզամ Մուրացան նախարարի վրայ, և այլն, համարելով թէ այս առանձին հաղներգութիւնները Յունաց Իլիականի, կամ մանուաւանդ Պարսից Շահ — Նամէի նման ամբողջ արուեստաւոր վիպասանութիւն էին կազմում: Վստիւ այս ստեղ այն բանումն է, որ նրանք արտաքին միութիւնը ու ամբողջութիւնը խառնում են ներքին միութեան ու ամբողջութեան հետ: Վիզնական վիպասանական բանաստեղծութեան մէջ բանը արտաքին միութիւն դանելը չէ այնքան, որքան այն ազգայնութեան ներքին միութիւնը, որով ազգի կանոնա-

ւոր զարգացման իդէալները իրանց բացատրու-  
թիւնը գտնում են այլ և այլ ժամանակներում  
յօրինում և բրգերի մէջ : Ուր մնաց որ ժողովրդ-  
դական հին երգերը արտաքին ու արուեստական  
միութիւն չեն ունեցել երբեք և ոչ մէկ ազգի  
մէջ : Վիպասանական բանաստեղծութեան մէջ  
այդ արտաքին պատահական միութիւնը լինում  
է այն ժամանակ, երբ լուսաւորութիւնը մի նշա-  
նակեալ կէտի է հասնում ժողովրդի մէջ և ազ-  
գային երգիչների հազներգութիւններից արուես-  
տաւոր վիպասանութիւններ են յօրինվում : Նոյն իսկ  
Հոմերոսի ընծայում քերթումները՝ Նիականն ու  
Ողիսականը, բաց ի նրանից որ այլ և այլ հազ-  
ներգումների մտքի ծնունդ են համարվում, իրանց  
սկզբական կերպարանքը չեն պահպանել այլ Սո-  
լոնի, Պիսիատրատի և վերջապէս Սողեքսանդրեան  
Գալոսի ուսումնականների գրիչների տակ՝ փոփո-  
խութիւններ են կրել ու արտաքին արուեստա-  
կան միութիւն ստացել : Իսկ Յէրոդոսին իր վի-  
պասանութիւնը յօրինել է ազգային հին աւան-  
դութիւններին ու զրոյցներին արտաքին արուես-  
տական միութիւն տալով : Սրանով մենք չենք  
ուզում ասել թէ Հայերը չեն ունեցել այս տեսակ  
արտաքին միութիւնով արուեստաւորած վիպա-  
սանութիւններ, ընդհակառակն՝ մեր քերական

մեկնիչների տուած վկայութիւններից գիտենք, որ Դաւիթ անունով անձանօթ բանաստեղծին մէկը ազգային երգիչների հագներգութիւնների վրայ հիմնուելով, յօրինել է «Պատերազմն Հայոց և Մարաց» ասուած վիպասանութիւնը: Մինչև անգամ մի յունական վիպասանութիւն էլ է յիշվում վերջին դարերի գրուածների մէջ «Սուսայելք Արամազդայ և Հերմեայ», որ երևում է թէ յունարէնից թարգմանուած է, կամ գուցէ Հոմերոսի մէկ մասը լինի, որովհետև յոյն բանաստեղծի անմահ քերթուածի մէկ քանի տողերը հայերէն թարգմանուած հասել են մեզ հրատարակիչ:

Թէ ժողովրդական սկզբնական վիպասանութեան մէջ արտաքին միութիւնով յօրինուած ամբողջ վիպասանութիւններ չէին կարող լինել, հաստատում են նոյնպէս ո.ու.ս ուսումնականի հետեւեալ խօսքերը որով կնքում ենք մեր աշխատութիւնը (1):

«Տարակոյս չկայ որ ժողովրդական բանաստեղծական գրոյցների միութեան բերուելը (ի հարկէ արուեստական ու քիչ թէ շատ պատահան միութեան), ազգային բանաստեղծական գար-

(1) Вуслаевъ, стр. 406.—407.

դաջման ամենանշանաւոր ժամանակներէից մինն է  
կազմում • բայց այս ժամանակը արդէն զուրկ է  
վիպասանական շրջանի սկզբնական գեղեցկութիւ-  
նից, և միայն մի փոխանցական կէտ պէտք է հա-  
մարուի բուն ժողովրդական ստեղծագործութիւ-  
նից բանաստեղծական նիւթի արուեստական մշա-  
կութեանը՝ առանձին անհասանելի ձեռքով : Սր-  
բան աւելի հարուստ լինի որ և իցէ ազգի անա-  
բուստ (այսինքն ժողովրդական) բանաստեղծու-  
թիւնը, որքան աւելի ընդարձակ ու ամբողջ կեր-  
պով բացատրուին նրանում ժողովրդի առասպել-  
ները ու զրոյցները, այնքան աւելի բնական ու  
հեշտ կերպով է լինում այս փոխանցութիւնը,  
հատուածական հագներգութիւններէից ամբողջ  
վիպասանութեան, որի մէջ այս վերջինները դա-  
տաւորելով մի ամբողջ են կազմում : Եւ որքան ա-  
ւելի զօրաւոր կերպով զարգանայ ժողովրդի մէջ  
գեղեցիկի զգացմունքը, որքան աւելի լուսաւո-  
րութեան յառաջադիմութեան հետ կատարելա-  
գործութիւն ստանան երդիչները բանաստեղծական  
արուեստի մէջ, այնքան աւելի անհրաժեշտ է այս  
փոխանցումը առանձին ժողովրդական երգերից  
ամբողջ վիպասանութիւններէ : Ս. յարկսով թէ ընդ-  
հանուր կազմութեան և թէ արտաքին յօրին-  
ումածի կողմից, ոչ միայն միջնադարեան քերթո-

ւածները Նիբելունգների, Կարոլոս Մեծի կամ  
Սբթուրի վրայ, այլ և Նլիականն ու Ողիտականը  
ներկայացնում են արդէն մի օրս իզուարկա-  
ցութիւն, աւելի արուեստական հետեանք նա-  
խընթաց բուն ժողովրդական վիպասանական բա-  
նաստեղծութեան, արդէն այս, այսպէս ասել, է  
իր առաջին նոր ժամանակ անձնական շրջանի  
արուեստական ստեղծագործութեան: Նայելով ազ-  
գային լուսաւորութեան պայմաններին, այս տե-  
սակ քերթուածները միակերպ յարաբերութիւն  
չունին իրանց սկզբնական հիմունքների հետ: Մի  
քանիսը, ինչպէս օրինակի համալ, Հովերական  
քերթուածները շատ մաքուր պահպանեցին իրանց  
մէջ ժողովրդական բանաստեղծութեան մասուն-  
քը, ուրիշների մէջ, ինչպէս Նիբելունգների վրայ  
յօրինուած քերթուածների մէջ, շատ աւելի ե-  
րևում է արուեստականութիւնը. ուրիշների մէջ  
դարձեալ, ինչպէս Կարոլոս Մեծի և իր բախ-  
տակնդիր ասպետների վրայ յօրինուած զրոյցների  
մէջ, արուեստը կշիռ է ստանում ժողովրդական  
ստեղծագործութեան վրայ:


«Բայց մինչև անգամ այս բոլոր ազգային  
քերթուածների մէջ, որոնք քիչ թէ շատ մի տե-  
սակ արուեստականութեան տակ են դանվում,  
«վիպասանական միութիւն» ասածը մի լոկ ցնորք

է հինացած ճաշակագիտական նախապաշարմունք-  
ների : Ընդհակառակն՝ կարելի է անսխալ ասել  
թէ այս արուեստական միութիւնը, որ վիպասա-  
սանական բանաստեղծութեան հոգուն հակառակ  
է, միայն այն արուեստաւոր, անհոգի ու անկեն-  
դան քերթուածների սեպհականութիւնն է, ինչ-  
պէս «Ննէականը» կամ «Նրուսադէմ ազատեալը»,  
որոնց մէջ ամենից քիչ վիպասանական յատկու-  
թիւններ կան :

Ուրեմն ինչ է նշանակում, վերելի խօս-  
քերից յետոյ, այն դոված արուեստականութիւնը  
որից բոլորովին զրկում է ժողովրդական երգերին  
մեր ժամանակների ճաշակագէտը : Աշխատել ժո-  
ղովրդական վիպասանութեան մէջ արտաքին մի-  
ութիւն կամ շոշափելի անբողջութիւն զանել  
զբքի կարգ ու կանոնի տակ դնելով նրան, նշա-  
նակում է հասկանալ ամենեւին այն բարձր կեն-  
սական սկզբունքը, որով լի է ժողովրդական բա-  
նաստեղծութիւնը : Մի՞թէ իր երգերից բաւա-  
կանութիւն ստանալու համար՝ ժողովրդի համար  
նոյն բանը չէ թէ իր վիպասանութեան այս ա-  
ռանձին հագներգութիւնները աւելի կամ պա-  
կաս պինդ կապերով են կապվում մէկզմէկու հետ :  
Ինչպէս էլ լինի, ազգային երգը հատուած հա-  
տուած երգվում կամ լսվում է, բայց հասկացվում



է միշտ միայն ամբողջի հետ ներքին կապով կապուած : Սակայն այս ընդարձակ վիպասանական ամբողջութիւնը ոչ մէկ ազգի մէջ, ոչ նոյն իսկ Յունաց մէջ, ոչ Նիւականի, ոչ Ողիսականի մէջ երբէք չէ բացատրուելու չէր կարող բացատրուել արտաքին ձևով, մի ամբողջ ու ամէնքան բովանդակող քերթուած կազմելով : Ազգային վիպասանութիւնը ազգային լեզուի նման՝ ապրում է ամբողջ ժողովրդի բերանում : Ահայի ամբողջութեան և միութեան վրայ չէ կարելի դատել արտաքին ձևով, այլ բուն ազգայնութեան կանոնաւոր ամբողջութիւնով և նրա սեպհական միաւորութիւնով, ազգի այն բոլոր հոգևոր օգուտներով, որոնք կենդրոնացած են ժողովրդական ստեղծագործութեան առարկաների մէջ :



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

**Ա. ՆԱԽԱՇԱԽԻՂ:**—Գրականական պատմութեան իբրև գիտութիւն վաղուց ծագկիլը: Եւրոպացոց ջանքը ընդհանուր ազգերի գրականական պատմութիւնը գրելու: Հայոց լեզուի և պատմութեան մշակուիլը արևմտեան գիտնականների ձեռքով: Աննշան հետևանք այս մշակութեան: Ներկայ աշխատութեան նպատակը: Գրականութեան նշանակութիւնը և Հայոց գրականական պատմութեան վերաբերեալ գրքերի անկատարութիւնը: Յունաց գրականութիւնը իբրև ամենածիշղ պատկեր ազգային կեանքի: Հռոմայեցոց գրականութիւնը հելլենականին տկար հետևողութիւն լինելը: Քրիստոնէութեան ազդեցութիւնը ազգերի կեանքի վրայ: Եկեղեցու վարդապետների պատերազմը հին զեղարուեստների ու գիտութիւնների դէմ: Ֆանատիկոսական ժամանակների անցնելը և զեղարուեստների ու գիտութիւնների մշակուիլը Արևմաքում: Արևելեան Եկեղեցու խիստ բնաւորութիւնը: Արևմուտքի քրիստոնէութեան կաթողիկական ձևը: Միջնադարեան Ռօման-

տիզմը: Աեղծ—կլասիկական ժամանակ: Նոր—  
առօմանտիկական դարոց և ժողովրդական դրա-  
կանութեան մշակուիլը: Նոր հայեցումած քղը-  
րականութեան նշանակութեան վրայ: Հին Հա-  
յոց ժողովրդական կամ բանաւոր դրականու-  
թիւնը մշակելու հարկաւորութիւնը: Առանձին  
հատուկաւոր գրուածներ այս նիւթի վրայ:  
Ազգային կեանքը աստիճանաբար վարզանալով  
բանաւոր դրականութիւնը գրաւորի է փոխ-  
վում: Գրադիտական ժամանակ Հայոց: Հայոց  
գրաւոր դրականութիւնը քրիստոնէութեան  
հետ է սկսվում: Երեք խնդիր, որոնց վրայ հայ-  
կական դրականութեան սլատմիչը պէտք է ու-  
շադրութիւն դարձնէ: Մի քանի խօսք ընթեր-  
ցողին.

5-65

**Բ. ԱԵԶՈՒ ԵՒ ՆՐԱ ԲԱՐՁՐ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:**  
Մարդկային լեզուի նախնական միութիւնը:  
Լեզուների երեք դիւսաւոր դերդաստանները:  
Բանեան, Սեմեան և Յարեթեան: Հայոց լե-  
զուն Յարեթեան կամ Հնդկա—եւրոպական  
դերդաստանին է սլատկանում: Լեզու և ազգ,  
բարբառ և ժողովուրդ: Լեզուի բարձր նշանա-  
կութիւնը կամ ժողովրդի ձգտումը դէպի ճշ-  
մարիտը, դեղեցիկը ու իդէալականը: Գեղար-  
ուեստաների ծագումը: Խօսուն դեղարուեստը  
կամ բանաստեղծութիւնը, իբրև հիմն բանա-

ւոր գրականութեան: Վիպասանական բանաստեղծութիւնը և նրա տարրերը . 66-91

**Գ. ԵՐԳԵՐ:**—Երգերի ու զբոյցների մէջ եղած զանազանութիւնը: Երգերի նիւթը ու անուակները: Հայոց վիպասանական երգերը և նրանց պատմական նշանակութիւնը: Ի՞նչպէս կարող էին Հայոց բերանացի աւանդութիւնները Մար—Աբասի դրքումը տեղիք ունենալ: Գիցարանական երգեր: Գիւցաղնական երգեր: Աէս—դիւցաղնական ու կէս — պատմական ժամանակ: Համեմատութիւն Վահագնի ու Տորքի մէջ: Պատմական երգեր: Արտաշէս Առաջին, Սմբատ Բաղրատունի և Արտաւազդ Արտաշիսեան: Պատմական ու գիւցաղնական ժամանակների մէջ եղած զանազանութիւնը. Վարդգէս Մանուկ: Մեր ունեցած հատուկտոր երգերը ու վիպասանական աւանդութիւնները բաւական են ցոյց տալու հին Հայոց զարգացման երեք գլխաւոր ժամանակները: «Անձնական» կամ «անհատական» ժամանակը քրիստոնէութեան ազդեցութեան տակ ստանում է իր զարգացումը: Գիւցաղնական ժամանակներում կրօնական երգերը բաժանուիւմ են պատմականներից: Հայոց հին կրօնը երեք գլխաւոր տարրերից է բաղկանում. պարսկական՝ յունական և բուն հայկական: Հայոց Գիցարա-

նութեան գլխաւոր անձնաւորութիւնները և նրանց տօները : Օտարազգի դաղթականների աստուածները : Աստուածների պաշտօն մատուցանելու տեղերը : Հայոց հեթանոսական կրօնի ազդեցութեան հետքերը քրիստոնէական գրականութեան, լեզուի ու կեանքի վրայ ցոյց են տալի հեթանոսական երգերի մնացորդների գոյութիւնը : Արօնական երգերը պատկանում են քնարական բանաստեղծութեան : Քնարերգութիւնը բանաստեղծութեան անդրանիկ ծնունդն է, բայց վիպասանական բանաստեղծութիւնից յետոյ է ծաղկում : Քնարերգութիւնը բոլոր ազգերի սեպհականութիւն է : Աւանդութեան նշանակութիւնը քնարական երգերի մէջ : Աւիպասանական ժամանակներում երգը պարն ու խաղը ժողովրդի սիրած բաներն են : Աւարձակ երգիչներ ու երգեցուհիներ և նրանց նշանակութիւնը : Յուցք կամ Յցոց երգեր : Եղերամարք կամ Չայնարկու կուսանք և նրանց ողբերի բովանդակութիւնը : Գրամատիկական բանաստեղծութեան սկզբնական ձևը երգն է : Յունաց և Հնդկաց դրաման : Հայկական դրաման վերջանում է այն տեղ, որ տեղից սկսւմ է հեղինականը : Երգերի ձայնակից նուագարանները . . . . . 92-174

Պ. ԶՐՈՅՅՆԵՐ. Զրոյցների կրած փոփոխութիւն

ները : Հայոց հին զրոյցները և նրանց նշանա-  
կութիւնը ժողովրդի համար : Այլ և այլ ազ-  
գերի զրոյցների մէջ եղած նմանութիւնը և այս  
նմանութեան պատճառները : Արտաւազդի զը-  
րոյցի նմանութիւնը երկու յունական առաս-  
պելների հետ : Զրոյցների մէկ երկրից միւսը  
անցնելը : Վրաց քրիստոնեայ Ամիրանի վրայ  
պատմուած զրոյցը հեթանոս Արտաւազդի զը-  
րոյցն է : Պլատոնի էր Հայկազնի վրայ յիշած  
զրոյցը մեր Արա Գեղեցիկի առասպելական  
մահուան զրոյցն է : Երուանդ Արշակունու և  
Սանատրուկի մանկութեան վրայ պատմուած  
զրոյցների իրողականութեան հետ յարաբե-  
րութիւն ունենալը : Արծրունեաց դադթակա-  
նութեան մականուան առ իթով յիշուած զրոյ-  
ցը : Զրոյցների կրած փոփոխութիւնները ար-  
գելք են լինում ժողովրդական խղէալների կա-  
նոնաւոր դարգացումը դանել նրանց մէջ : Անն-  
դանական վէպ կամ կենդանական զրոյցներ :  
Աննդանական վէպի աղբիւրը կենդանական  
դիցարանութիւնն է : Հայոց կենդանական դի-  
ցարանութիւնը ժողովրդի հովուական ու երկ-  
րագործական կեանքին է պատկանում : Հին  
Հայոց կենդանական զրոյցների գոյութիւնը :  
Աննդանական վէպը դրաւոր գրականութեան  
ազդեցութեան տակ փոփոխութիւններ կրելով

առակի կերպարանք է ստանում: Բանաւոր  
գրականութեան մէջ կենդանական վէպը սրահ-  
սրահում է իր սկզբնական կերպարանքը: Կեն-  
դանական գրոյցների բնաւորութիւնը: Հայոց  
այժմեան կենդանական գրոյցները. . . 175-206

**Ե. ԲԱՆԱԻՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՒՍ ՏԱՐԻԵ-**  
**ՐԸ:—**Առակի նշանակութիւնը: Առասպելական ու  
քրիստոնէական առակներ: Պատմական առակ-  
ներ: Առակաւոր երգեր: Հանելուկի նշանակու-  
թիւնը. նրա մերձաւորութիւնը առակի հետ:  
Առակը ու հանելուկը վիպասանական բանաս-  
տեղծութեան վարդապետական մասն են կաղ-  
մում: Հանելուկի հին ձևը երգն է: Հանելուկի  
գործածութիւնը կեանքի նշանաւոր դիպուած-  
ներում: Մեր այժմեան վիճակախաղերը հա-  
նելուկի ձև ունին: Կարծառօտ հանելուկները  
վիպասանական բանաստեղծութեան մնացորդ-  
ներ են: Երգումների, օրհնէնքների ու անէծք-  
ների վիպասանական նշանակութիւնը. . . 207-25

**Զ. ԲԱՆԱԻՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԻՆ ՅԱՏ-**  
**ԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ:—**Բանաւոր և դրաւոր գրակա-  
նութիւնների մէջ եղած զանազանութիւնը: Վի-  
պասանական բանաստեղծութեան մէջ տիրա-  
պետած հանդարտութիւնը: Երգերի և գրոյց-  
ների բարոյական և մտաւորական նպատակ-  
ները: Նմանութիւնները ու փոխաբերութիւն:



ները վիսպասանական բանաստեղծութեան սեպ-  
հական յատկութիւններն են, Վերադիր  
ածականների նշանակութիւնը, Առանձին  
բառերի ու դուրսուածքների ընտրութիւնը,  
Նուաղական բառերի գեղեցկութիւնը, Նրդերի  
մէջ պատահած կրկնութիւնները, Վիսպաս-  
նական երգերի միութիւնն ու ամբողջութիւնը  
արտաքին ձևով չէ բացատրուում, Արտաքին  
արուեստաւոր միութիւնը ու ամբողջութիւնը  
աւելի վերջի ժամանակների քերթուածներին  
սեպհական է . . . . . 226-251  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ . . . . . 253-259

ՏՊԱԴՐՈՒԹԵԱՆ ՍԽԱԼՆԵՐ.

Երևաս.	Տող.	Տպած է	Պէտք է կարդալ
49	5	Թէև ցանցաղ	Թէև դանդաղ.
63	21	յայտարարութիւնը	բացատրութիւնը.
»	24	երու կամ երեք	երկու կամ երեք.
64	1	կառարաները	առարկաները.
121	14	լայքա ու կաշի	լայքա ու ոսկի.
136	ճան.	древнихъ Армянъ	языческихъ Армянъ.

